ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՔՆԱՐ
# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

*Ժողովածուն նվիրված է Մայր համալսարանի 100-ամյակին*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 821.19-1:378.4
ԳՄԴ 84(5Հ)-5+74.58
Ք 722

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հոբելյանական հանձնաժողովի կողմից:*

*Կազմող՝ բան. գիտ. թեկնածու Վ. Ս. Մաղայան*

Ք 722 Քնար համալսարանի: Ժողովածուն նվիրված է Մայր համալսարանի 100-ամյակին (Երկրորդ բարեփոխված և համալրված հրատարակություն)/Կազմող՝ Վ. Ս. Մաղայան: Եր., ԵՊՀ հրատ., 2019, 380 էջ:

Ժողովածուն ԵՊՀ 90-ամյակի առթիվ տպագրված գրքի բարեփոխված և համալրված վերահրատարակությունն է՝ նվիրված է Մայր համալսարանի դարակազմիկ հոբելյանին, որի մեջ ընդգրկված են համալսարանին ձոնված հիմներգեր, ներբողներ և քնարական բանաստեղծություններ՝ սկզբից մինչև մեր օրերը: Դրանց հեղինակները հիմնականում համալսարանի տարբեր տարիների սաներ են:

Սույն հոբելյանական հրատարակությունը համալրվել է հավելվածներով և այլ բաժիններով, որոնք հարստացնում են գրքի բովանդակությունը և այն դարձնում ավելի հետաքրքիր:

ՀՏԴ 821.19-1:378.4
ԳՄԴ 84(5Հ)-5+74.58

ISBN 978-5-8084-2375-6

© ԵՊՀ հրատ., 2019
© Կազմողի համար, 2019

# ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

*Երևանի պետական համալսարանի հիմնադրումը 1919 թ. մայիսի 16-ին խոշոր իրադարձություն էր Հայաստանի նորաստեղծ հանրապետության կյանքում: Առաջին իսկ օրերից համալսարանն իր սաների համար դարձավ անանց սիրո խորհրդանիշ, ստեղծագործական ներշնչանքների կենարար աղբյուր, թռիչքի ամուր թևեր տվեց ու բանաստեղծական կայծեր ծնեց նրանց սրտերում՝ ուղի հարթելով դեպի իմացության խորքերը: Եվ նրա սաներից շատերը Հայոց Ալմա մատերի նկատմամբ ունեցած իրենց երախտիքի զգացումը և սրտի իղձերն ու սերը արտահայտեցին քնարական զեղումներով՝ հոգեբուխ երգեր ու ներբողներ ձոնելով նրան:*

*Այստեղ են կրթվում ու դաստիարակվում և մեծահամբավ ու պատկառազդու ուսուցչապետների հովանու ներքո իրենց դրական առաջին քայլերը կատարում հայ նորագույն գրականության շատ ու շատ նշանավոր դեմքեր: Բավական է հիշել, որ Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի) 1920 թ. հունվարի 31-ին իր դռները լայնորեն բացած Երևանի համալսարանի առաջին ուսանողների շարքում էր արդեն լուրջ համարում ունեցող երիտասարդ բանաստեղծ Եղիշե Չարենցը, որը պատմալեզվաբանական ֆակուլտետի ունկնդիրների ցուցակում երկրորդն էր «Եղիշե Սողոմոնյան» անուն-ազգանունով: Խորհրդային կարգերի օրոք՝ 1920 թ. դեկտեմբերի 17-ին վերակառուցված Երևանի ժողովրդական համալսարանում դարձյալ մենք հանդիպում ենք Ե. Չարենցի անվանը:*

*1923 թ. արդեն Երևանի համալսարանի ուսանողներ էին մեր մյուս անվանի գրողները՝ Նաիրի Զարյանը, Գուրգեն Մահարին, մի փոքր ուշ՝ Սողոմոն Տարոնցին, Վահան Արամունին, Խաչիկ Դաշտենցը, Սարմենը և այլք: Այնուհետև, մինչև Հայրենական*

*մեծ պատերազմը, Երևանի պետական համալսարանն ավարտել են՝ Մարո Մարգարյանը, Մկրտիչ Կորյունը, Սիլվա Կապուտիկյանը, Հովհաննես Շիրազը, Միքայել Հարությունյանը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ:*

*Սկսվում է Մեծ հայրենականը: Պատերազմի առաջին իսկ օրերին համալսարանից ռազմաճակատ են մեկնում բազմաթիվ ուսանողներ ու դասախոսներ, որոնց թիվը շուտով հասնում է 869-ի: Նրանցից երկուսը՝ Անդրանիկ Ղազարյանը (Ռազմագիտության ամբիոնի վարիչ) և Սուրեն Սարգսյանը (Ֆիզմաթ ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող) մարտերում ցուցաբերած արիության համար արժանանում են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման: Սակայն, դժբախտաբար, բազմաթիվ համալսարանականներ զոհվում են մարտերում: Զոհվածների թվում էին 10-ից ավելի խոստումնալից գրողներ ու գրականագետներ: Նրանցից մեկն էր դոցենտ Գրիգոր Կուլօղլյանը, որը, այդ օրերին լինելով Մոսկվայում, մեկնում է ռազմաճակատ, մասնակցում Մոսկվայի պաշտպանությանը և Տուլայի մոտ մղվող ծանր մարտերից մեկի ընթացքում՝ 1942 թ. հունվարի 28-ին, քաջաբար զոհվում: Նույն դառը բախտին են արժանանում Գուրգեն Ավետիսյանը, Գառնիկ Ոսկանյանը, Մուշեղ Բալասանյանը և Թևան Խաչյանը, որոնք նախքան զորակոչվելը սովորում էին ասպիրանտուրայում: Իսկ Դերենիկ Չարխչյանը և Հմայակ Նալբանդյանը դեռ չէին հասցրել հանձնել վերջին պետական քննությունները...*

*Նույնը կատարվեց նաև մեր օրերում: Երբ հնչեց Արցախյան ազատամարտի փողը, շատ համալսարանականներ, թողած ուսանողական լսարանները, կամավոր նետվեցին մարտի դաշտ՝ պաշտպանելու հայրենի հողը: Նրանց մեջ նույնպես կային ստեղծագործողներ, որոնցից էին պատմաբան Թաթուլ Կրպեյանը, բանասեր Սամվել Գևորգյանը, լրագրող Նորայր Մարությանը և ուրիշներ: Թ. Կրպեյանը ետմահու արժանացավ Հայաստանի ազգային հերոսի, իսկ ռադիոֆիզիկոս Պետրոս Ղևոնդյանը (Պետո) Արցախի հերոսի բարձր կոչումներին, իրավաբան Վարդան Ստեփանյանը (Դուշման) և զոհված մյուս շուրջ երեք տասնյակ համալսարանականները իրենց անունները փառքով պսակեցին*

*և հավերժացան Արցախյան ազատագրական պայքարի պատմության էջերում:*

***

*Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին Լեզվագրական ֆակուլտետ է ընդունվում պատանի բանաստեղծ Պարույր Ղազարյանը (Սևակ), որը հետո պետք է դառնար հայ նորագույն պոեզիայի փառքը: Ապա 1943 թ. նույն ֆակուլտետի սան է դառնում ռազմաճակատից նոր վերադարձած վիրավոր Վահագն Դավթյանը: Պատերազմի ծանր օրերին համալսարանը շարունակում է իր գործունեությունը: Հետպատերազմյան տարիներին համալսարան են մտնում վառոդի ծխով բուրող զինվորական շինելները դեռ չհանած Վաչագան Վարդանյանը, Գրիգոր Մանուչարյանը, Վռամ Հովսեփյանը և ուրիշներ: Նրանց հետ միասին և նրանցից հետո համալսարանի ուսանող են դառնում Արարատ Այվազյանը, Արտաշես Յավրյանը, Վարդգես Պետրոսյանը, Նանսեն Միրքայելյանը, Համլետ Կարճիկյանը, Ալեք Խաչունցը, Հարություն Հովնաթանը և այլք: Ապա մայր կրթօջախում ուսանելու է գալիս գրողների մի նոր սերունդ, որի ճանաչված ներկայացուցիչներից են Թաթուլ Բոլորչյանը, Յուրի Սահակյանը, Արևշատ Ավագյանը, Հենրիկ Էդոյանը, Արտեմ Հարությունյանը, Դավիթ Հովհաննեսը, Հովհաննես Գրիգորյանը, Անահիտ Պարսամյանը, Էդվարդ Միլիտոնյանը և ուրիշներ:*

*Այսօր ևս համալսարանի տարբեր ֆակուլտետներում սովորում են երիտասարդ շնորհալի շատ ստեղծագործողներ ու թարգմանիչներ:*

* * *

*Երևանի պետական համալսարանի գոյության տասը տասնամյակների ընթացքում նրա կամարների ներքո կրթված ու դաստիարակված գրողներից շատերը սրտառուչ ձոներգեր ու ներբողներ են նվիրել Մայր կրթօջախին, նրա անվանի դասախոսներին ու իրենց ուսանողական ընկերներին: Այդ ստեղծագործություններից շատերը ժամանակին տպագրվել են մամու-*

*յում, տարբեր հանդեսներում ու ժողովածուներում, առանձին գրքերում և այլուր։*

*Մենք, երեքուկես տասնամյակ (1971-2006 թթ.) լինելով «Երևանի համալսարան» շաբաթաթերթի և համատեղության կարգով շուրջ տասը տարի (1991-2000 թթ.) նաև «Հանդես Երևանի համալսարանի» գիտաինֆորմացիոն լրատուի գլխավոր խմբագիրը, տարիներ շարունակ ուսումնասիրել ենք ժամանակի հայ մամուլը և քաղել բոլոր այն բանաստեղծությունները, որոնք նվիրված են եղել Երևանի պետական համալսարանին։ Մի քանի անվանի հեղինակների խնդրել ենք՝ եթե ունեն նման բանաստեղծություններ, տրամադրեն մեզ՝ տպագրելու նպատակով։ Ձեռք բերված այդ անտիպ գործերի մի զգալի մասը տպագրել ենք մեր խմբագրած պարբերականներում, իսկ մի որոշ մասն էլ՝ հանրապետական մամուլի էջերում։ Երևանի համալսարանին նվիրված որոշ բանաստեղծություններ էլ, մեր խնդրանքով, գրել են մայր կրթօջախում սովորող և թերթի ու հանդեսի շուրջ համախմբված երիտասարդ բանաստեղծները, որոնցից շատերն այսօր դարձել են անվանի գրողներ։*

***

*Ժողովածուն բաղկացած է հինգ բաժնից և Հավելվածից։ Առաջին բաժնում ընդգրկված են Երևանի պետական համալսարանին նվիրված հիմներգերը։ Դրանք թվով երեքն են. առաջինը ներկայումս գործող հիմներգն է, որի հեղինակն է ԵՊՀ շրջանավարտ, բանաստեղծ Հովիկ Հովեյանը (երաժշտությունը՝ Ռ. Ամիրխանյանի), երկրորդը շուրջ երեք տասնամյակ առաջ ճանաչված բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի հեղինակած հիմներգն է (երաժշտությունը՝ Խ. Մեյխանեջյանի), իսկ երրորդը հայ ուսանողների երգն է, որն ավելի քան կես դար առաջ գրվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի եվրոպական լեզուների ու գրականության բաժնի ուսանող, հետագայում անվանի բանաստեղծ Նանսեն Միքայելյանի կողմից (երաժշտությունը՝ Է. Արիստակեսյանի)։ Այս բաժնում նպատակահարմար ենք գտել զետեղել նաև «Ուսանողների միջազգային միության հիմնը», որի հեղինակն է*

*ռուս անվանի բանաստեղծ Լև Օշանինը (երաժշտությունը՝ Վանո Մուրադելու): Այս հիմնը 1951 թ. առաջին անգամ հայերեն է թարգմանել ԵՊՀ ժուռնալիստիկայի բաժնի 2-րդ կուրսի ուսանող, հետագայում անվանի գրող Վարդգես Պետրոսյանը:*

*Գրքի երկրորդ բաժինը, որ կրում է «Ներբողներ, ձոներգեր ու քնարական բանաստեղծություններ» վերտառությունը, բացվում է Ե. Չարենցով: Չնայած նա համալսարանին նվիրված առանձին ստեղծագործություն չունի, բայց նրա բանաստեղծությունների, տաղերի ու խորհուրդների մի զգալի մասը հասցեագրված է ուսանող երիտասարդությանը՝ որպես դարերի պատգամ: Ուստի, մենք նպատակահարմար ենք գտել գրքում զետեղել Ե. Չարենցի՝ այդ բնույթի ստեղծագործություններից երկուսը՝ նկատի ունենալով նաև, որ նա եղել է նորաբաց հայկական համալսարանի առաջին սաներից մեկը:*

*Նույն սկզբունքով են ընտրվել նաև Ն. Զարյանի, Գ. Մահարու, Ս. Տարոնցու և Պ. Սևակի բանաստեղծությունները, որոնք նրանք գրել են իրենց սովորելու տարիներին, և սերտորեն առնչվում են ուսանողության ու երիտասարդության կյանքին ու աշխատանքին: Եվ այսօր դրանք, որքան էլ հնացած լինեն, դարձյալ մնում են հետաքրքիր ու ուսանելի:*

*Այս բաժնում տեղ են գտել նաև մի քանի ոչ համալսարանական հեղինակների՝ համալսարանին նվիրված բանաստեղծությունները, որոնք ժամանակին գրվելով այս կամ այն առիթով, մասնավորապես ԵՊՀ հոբելյանների կապակցությամբ, տպագրվել են մամուլում ու հեղինակային ժողովածուներում:*

*Ժողովածուի երրորդ բաժինը, որն ունի «Նրանք ընկան՝ երգը շուրթներին» խորագիրը, ընդգրկում է Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում զոհված թվով տասը համալսարանական բանաստեղծների ստեղծագործությունների ընտրանին: Այդ բանաստեղծություններն անմիջականորեն նվիրված չեն համալսարանին, սակայն դրանց հեղինակները եղել են նվիրյալ համալսարանականներ և իրենց կյանքը զոհաբերել են հանուն հայրենի հողի:*

*Այդ բանաստեղծությունները գրվել են թեժ մարտերի կար-*

*ճատև դաղարների պահերին՝ շինելներն ուսերին գցած, զենքի ու զինամթերքի ծանր պարկերին թիկնած, քնի համար հատկացված թանկ ժամանակից խլված կարճատև րոպեների ընթացքում: Գրվել են խոնավ ու խոր խրամատներում ու գետնափոր ապաստարանների խավար խորշերում, տանկերի և մեքենաների խցիկներում, գնդակների տարափի ու սուլոցների, արկերի պայթյունների ու շառաչող ռումբերի հրացոլքերի տակ՝ ճմռթված լրագրերի անկյուններում ու զինգրքույկների քրքրված էջերին, ծխախոտի մրոտ տուփերին և նույնիսկ մաշված թաշկինակների վրա, որոնցում նկարագրվել են իրենց տեսածը, ապրածն ու զգացածը: Դրանք գրվել են կյանքի ու մահվան սահմանագծում, որոնց ժլատ տողերում արտահայտված են մահապարտ զինվորի իղձերն ու ցանկությունները, սերն ու կարոտը, վիշտն ու թախիծը, հույսն ու հավատը, վրեժն ու ցասումը, թշնամուն հաղթելու անսասան կամքն ու կորովը և հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի ու պատասխանատվության խորին զգացումով:*

*Մեզ հասած այդ պատառիկները մեր մարտիկ ուսանողների վերջին ստեղծագործություններն են, նրանց վերջին պատգամներն ու կտակները՝ ողջ մնացողներին ու իրենցից հետո ապրողներին: Դրանց ամեն մի տողն ու բառն արյունով են օծված ու արյան պես թանկ են մեզ համար: Եվ այսօր մեր պարտքն է զոհված համալսարանականներին (և ոչ միայն նրանց) հիշելն ու նրանց ստեղծագործությունները գալիք սերունդներին փոխանցելը: Մի բան, որ մենք սիրով ենք կատարում՝ ներկա ժողովածուում առանձին բաժին հատկացնելով նրանց հայրենաշունչ ստեղծագործություններին:*

***

*Ժողովածուում ընդգրկված բոլոր հեղինակները չեն, որ հանրահայտ են: Մեծանուն բանաստեղծների կողքին տեղ են զբաղեցնում նաև քիչ հայտնի և նույնիսկ անծանոթ անուններ, որոնց թիվը այնքան էլ մեծ չէ: Համալսարանին նվիրված նրանց բանաստեղծությունները գրված են սիրով ու ջերմությամբ, աչքի են ընկնում իրենց պարզությամբ ու անկեղծությամբ, անմիջական են ու*

*սրտաբուխ: Հեղինակները գովերգում են մայր կրթօջախը, նրան մե՛րթ տեսնում իբրև մատաղ հոգիները սնուցող մայր, մե՛րթ հում կավից չքնաղ սափորներ պատրաստող հանճարեղ բրուտ, մե՛րթ անմշակ նյութին գեղեցիկ ձև ու կերպարանք տվող հմուտ դարբին, մե՛րթ իմաստության սրբազան տաճար և երգի բագին…*

*Գրքում զետեղված բոլոր բանաստեղծությունները չեն, որ ունեն գեղարվեստական բարձր արժեք: Այստեղ կան նաև թույլ գործեր: Նույնիսկ անվանի գրողների՝ համալսարանին ձոնված ստեղծագործությունների մեջ նկատվում են պարզունակ ոտանավորներ: Բայց չէ՞ որ այդ ստեղծագործությունները նրանք գրել են իրենց գրական արշալույսին, շատերը դեռևս ուսանող եղած տարիներին, պատանության շրջանում: Համենայն դեպս, այդ բանաստեղծություններն այսօր ունեն ճանաչողական կարևոր նշանակություն և ընթերցողին ընդհանուր պատկերացում են տալիս համալսարանի գրական ավազանում մկրտություն ստացած սերնդի անցած ճանապարհի մասին:*

***

*Ժողովածուն կազմելիս հիմք ենք ընդունել ժամանակագրական կարգը: Հեղինակները ներկայացված են՝ ըստ համալսարանն ընդունվելու և ավարտելու տարիների: Նրանց ստեղծագործությունները ևս դասավորված են ժամանակագրական սկզբունքով՝ ըստ գրության թվականների: Իսկ բանաստեղծությունների տակ թվագրության բացակայության դեպքում նպատակահարմար ենք գտել դրանք խմբավորել ըստ թեմատիկայի: Բացառություն են կազմում միայն մի քանի՝ դեպքեր, երբ որոշ հեղինակներ համալսարանն ավարտել են 1930-1940-ականներին, բայց մայր կրթօջախին նվիրված իրենց բանաստեղծությունները գրել են ավելի ուշ՝ 1950-1960-ականներին: Ընդունված ընդհանուր սկզբունքը չխաթարելով՝ դրանք ևս գրքում դասավորել ենք՝ ըստ հեղինակների ու ուսումնառության տարիների:*

*Ժողովածուի չորրորդ բաժինը, որն ունի «ԵՊՀ 100-ամյակին նվիրված երգեր» խորագիրը, ընդգրկում է Մայր բուհի հոբելյանին նվիրված երգերն իրենց նոտաներով:*

*Հինգերորդ բաժինը՝ «Անկախության սերնդի ձայնը», ընդգրկում է ԵՊՀ երիտասարդ ստեղծագործողների բանաստեղծությունները՝ նվիրված ՀՀ և ԼՂՀ անկախության 25-ամյակներին:*

*Ժողովածուն եզրափակվում է «Հավելվածով», որն ընդգրկում է Միքայել Նալբանդյանի ուսանողությանը նվիրված բանաստեղծություններով և XIX դարի կեսի նշանավոր բանաստեղծ Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմից մի հատվածով: Հեղինակը Երևանի համալսարանի հիմնադրումից դեռևս վեց տասնամյակ առաջ չափածո խոսքի միջոցով ու պատկերավոր լեզվով ցույց է տվել կրթության և գիտության կարևոր նշանակությունը ժողովրդի առաջընթացի գործում, որի համար նա առաջադրել է ազգային ակադեմիա՝ համալսարան ստեղծելու անհրաժեշտությունը: Ս. Շահազիզի մտքերն այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը, ուստի և մենք նպատակահարմար ենք գտել պոեմի այդ հատվածը զետեղել սույն ժողովածուում, որը համահունչ է նրա բովանդակությանն ու նպատակներին:*

*Վերջում ավելացնենք, որ Երևանի պետական համալսարանին նվիրված այս ժողովածուն մասամբ կարելի է համարել մայր կրթօջախի գեղարվեստական տարեգրությունը, նրա պատմության մի կարևոր էջը:*

**Վ. ՄԱՂԱԼՅԱՆ**
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

## ՀԻՄՆԵՐԳ
## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Խոսք՝ **Հովիկ Հովեյանի**
Երաժշտություն՝ **Ռոբերտ Ամիրխանյանի**

*Լուսածին մայր տաճար հայրենի,*
*Տիրոջ սուրբ լույսով օծված,*
*Դու՝ սեգ ճառագայթ մեր բորբ արևի,*
*Զինջ մեր Հայկյան երկրի:*

*Դու՝ վեհ Արարատ մեր նոր հավատի,*
*Հևքն ես դու մեր երազի:*

*Քաջ որդիքդ հաղթության երգով անցան,*
*Լույս անունդ շուրթերին հայրենյաց հերոսներ*
*դարձան:*

*Փա՜ռք քե՜զ, դպրանոց մեր կենարար,*
*Մեր սեգ դպրության տաճար:*
*Փա՜ռք քեզ, փա՜ռք, Զվարթնոց մեծահանճար,*
*Դեպի լույս կանչող աշխարհ:*

***Կրկներգ***
*Մաշտոցի երգ երգող հանգ ու բառ,*
*Վարք մեծաց ձայնիվ,*
*Եղի՜ր միշտ վեր, հույսի նոր գարուննե՜ր, գարուննե՜ր,*
*Քո փառքով հզոր:*

*Դու հար ցնծալու ես քո վարար լույսով շողակնյա,*
*Հայոց համալսարա՜ն:*

*Դու՝ ճախրի մեր արծիվ յոթնաթև,*
*Որ ճյուղն ես ծառի խաչթև,*

*Դու՝ հին մագաղաթ մեր մայր տաճարի,*
*Մեր նորօրյա Տաթև:*
*Սրտի՛կ հարատև մեր հին բարբառի:*
*Սյունն ես մեր Հայոց Մեծ Տան:*

*Դարերից եկած դեռ նոր դարեր կանցնես,*
*Այր Մեսրոպ Մաշտոց - Սահակ Պարթևի*
*լույսերով օծված:*

*Փա՛ռք քե՛զ, Դպրանո՜ց, դու մեր կաճա՛ռ,*
*Մեր սեգ դպրության տաճար:*

*Փա՜ռք, քեզ փա՛ռք, Զվարթնոց մեծահանճար,*
*Դեպի լույս կանչող աշխարհ:*

**Կրկներգ**
*Մաշտոցի երգ երգող հանգ ու բառ,*
*Վարք մեծաց ձայնիվ,*
*Ելի՛ր միշտ վեր, հույսի նոր գարուննե՜ր, գարուննե՜ր,*
*Քո փառքով հզոր:*

*Դու հար ցնծալու ես քո վարար լույսով շողակնյա,*
*Հայոց համալսարա՜ն:*

***2004***

## ՁՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Խոսք՝ **Ռազմիկ Դավոյանի**
Երաժշտություն՝ **Խորեն Մեյխանեջյանի**

*Մեսրոպյածին տառերի երթ,*
*Մեր հոգու սյուն, մեր հույսի բերդ,*
*Գլաձորյան մտքի անիվ,*
*Որ ընթանաս հայոց բանից:*

***Կրկներգ***
*Համալսարա՜ն, համալսարա՜ն,*
*Բաբախող սիրտ, ցոլանք արյան,*
*Իմաստության լույս անվարան:*

*Մեզ պահպանիր և ուժ տուր մեզ,*
*Դու մեր գլխին երկինք բեհեզ,*
*Մեր ոտքի տակ հայրենի հող,*
*Դու ինքդ հայ, մեզ հայ պահող:*

***Կրկներգ***
*Համալսարա՜ն, համալսարա՜ն,*
*Բաբախող սիրտ, ցոլանք արյան,*
*Իմաստության լույս անվարան:*

*Դու մեզ համար վահան ու սուր,*
*Մեր մտքի ծառ, հոգու մսուր:*

*Ապրիր դարեր դու հավիտյան,*
*Մեր սիրելի համալսարան:*

***Կրկներգ***
*Համալսարա՜ն, համալսարա՜ն,*
*Բաբախող սիրտ, ցոլանք արյան,*
*Իմաստության լույս անվարան:*

***1981***

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԳ

Խոսք՝ **Նանսեն Միքայելյանի**
Երաժշտություն՝ **Էմին Արիստակեսյանի**

*Միշտ երգենք խինդով պայծառ,*
*Մեր ազա՜տ-ազատ աշխարհին անծայր,*
*Մեր ճամփին երկիրը մեր*
*Բյուր լույսեր վառել է անմար*
*Ու սիրով մեր հոգուն ջահել*
*Տվել է խնդության ջահեր,*
*Որ կերտենք, կերտենք*
*Լուսե գալիքը մեր պայծառ:*

***Կրկներգ***
*Հույզերը մեր, դասերը մեր ու սերը մեր*
*Տալիս են մեզ թևեր ամուր,*
*Ու մեր ճամփին վառվող պայծառ լույսերը մեր*
*Ժպիտն են մեր գարնանաբույր:*
*Հույզերը մեր, դասերը մեր ու սերը մեր*
*Տալիս են մեզ թևեր ամուր,*
*Ժպտում է մեզ գալիքը մեր*
*Երջանկաբույր:*

*Մենք կյանքում հաղթող ենք միշտ,*
*Թե ուսում լինի և թե գոռ պայքար,*
*Չենք տեսնի թախիծ ու վիշտ,*

*Հայրենի երկրում մեր արդար*
*Մեր դեմ բյուր ճամփաներ կան բաց,*
*Խինդով լի ուսանող ենք մենք*
*Ու դեպի մի նոր լուսաբաց*
*Կյանքը կտանենք:*

***Կրկներգ***
*Հույզերը մեր, դասերը մեր ու սերը մեր*
*Տալիս են մեզ թևեր ամուր,*
*Ու մեր ճամփին վառվող պայծառ լույսերը մեր*
*Ժպիտն են մեր գարնանաբույր:*
*Հույզերը մեր, դասերը մեր ու սերը մեր*
*Տալիս են մեզ թևեր ամուր,*
*Ժպտում է մեզ գալիքը մեր*
*Երջանկաբույր:*

***1956***

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԸ

Խոսք՝ **Լև Օշանինի**
Երաժշտություն՝ **Վանո Մուրադելու**
**(Հովհ. Մուրադյան)**

*Մեր երգն է թնդում արար աշխարհով մեկ,*
*Ձեռք ենք մեկնում մենք ջահել սրտերին,*
*Զինջ մեր երկինքն ու պայծառ մեր արևը*
*Չե՛նք թողնի ծուխն ու կրակը ծածկեն:*

*Մեր կամքն է կուռ,*
*Ջերմ ու ամուր,*
*Նա ուժե՛ղ է, քան թնդանոթ և ռումբ.*

*Հույսով լցված,*
*Սիրով անպարտ*
*Ջահելությունն է մղում ազնիվ պայքար,*
*Լույսով լցված,*
*Սիրով անպարտ*
*Մե՛կ է մեր կյանքի ուղին պայծառ:*

*Ով համառորեն սովորել է ձգտում,*
*Թող պայքարի և անվերջ աշխատի:*
*Փառք գիտությանն այն, որ նոր կյանք է կերտում,*
*Մեզ է կանչում ապագան աշխարհի:*

*Պայքարի բոցում բարեկամ դարձանք մենք,*
*Հիշում ենք հողը՝ ներկված արյունով,*
*Մեծ քննության ելե՛ք, ուսանողնե՛ր,*
*Խաղաղության և կյանքի անունով:*
*Մեր կամքն է կուռ,*
*Ջերմ ու ամուր,*
*Նա ուժեղ է, քան թնդանոթ և ռումբ.*
*Հույսով լցված,*
*Սիրով անպարտ*
*Ջահելությունն է մղում ազնիվ պայքար,*

*Լույսով լցված,*
*Սիրով անպարտ*
*Մե՛կ է մեր կյանքի ուղին պայծառ:*

*Ռուսերենից թարգմանեց՝ ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

## ՋԱՀԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԸ

*Մենք այն սերունդն ենք, որ պիտի քայլենք*
*Ուղիներով լայն պայծառ գալիքի,*
*Մենք ջահակիր ենք կյանքի մեծ ծովում,*
*Ու հողմերի դեմ գիտենք մաքառել։*

*Մենք այն սերունդն ենք, որ պիտի անցնենք*
*Արշալույսները լուսավոր կյանքի,*
*Մենք՝ երիտասարդ, բայց այսօրվանից*
*Ուզում ենք կյանքին համընթաց քայլել։*

*Մենք այն սերունդն ենք, որ գիտենք ճախրել*
*Մեր երազների թևերին թառած,*
*Մենք այն սերունդն ենք, որ կուզենք կիսել*
*Անհունը չքնաղ տիեզերական։*

*Մենք այն սերունդն ենք, որ գիտենք ապրե՜լ*
*Մեր նոր օրերի շռինդով տարված,*
*Եվ ամեն գործում փառքով պսակել*
*Անունը մեր վեհ՝ կոմերիտական։*
***1968***

# ՆԵՐԲՈՂՆԵՐ, ՁՈՆԵՐԳԵՐ, ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ**

## ՅՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱԼԻՔԻ ԵՐԳԱՍԱՆՆԵՐԻՆ

*Բազում ուղիներով ու հերկերով անցած,*
*Եվ ճաշակած արդեն իմաստության*
*Դառնապատիր պտուղը,– ահա տալիս եմ այս*
*Խորհուրդները ես ձեզ, ո՜վ մեր վաղվա անհաս*
*Երգասաններ փառքի ու վեհության։–*

*Ահավասիկ, ո՜վ դուք, իմ առաջին*
*Խորհուրդը, որ գալիս է կյանքից ու դարերից.–*
*Չմոռանա՛ք երբեք, երբ հյուսելու լինեք ձեր երգը շառաչուն,*
*Որ երգը երկրի՛ց է աճում, և ո՛չ թե ձայներից կամ բառերից։*

*Երկրորդ խորհուրդը, որ տալիս եմ ձեզ ահա,*
*Օ՜, անհողդո՛ղդ պահեք իբրև պատգամ.–*
*Երգը – ընթացք է ու հուն, և՛ տեգ է, և՛ ոգու ադամանդյա*
*վահան,*
*Ե՛վ բարիք է, և՛ շնորհ անանձնապատկան։–*

*Երրո՛րդ խորհուրդը ձեզ, ո՜վ գալիքի*
*Երգասաններ.– դարե՛րն են ձեզ հետևում.–*
*Թեկուզ դարն է ծնում և երկիրն է տալիս երգին շունչ ու*
*ոգի–*
*Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում։*

*Ուրեմն, ո՜վ գալիքի երգասաննե՜ր,*
*Որքան էլ վեհ լինի ձեր ներկան–*
*Չմոռանա՛ք, որ դուք պիտի սերմեր ցանեք,*
*Որ լինեն դարից ձեր – երկար:*

*Եվ իմացե՛ք ուրեմն, որ ո՛չ մի աշխատանք*
*Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը.–*
*Ի սկզբանե էր բանը, և բանն էր ճիգ ու ջանք,*
*Եվ ջանքին առընթեր էր – երգը:*

*Ուրեմն, ո՜վ գալիքի երգասաննե՛ր,*
*Ձեր ոգու տեգերով զրահավորված՝*
*Տքնեցե՛ք տքնաջան ու հնչյուններ ցանեք՝*
*Հերկելով հերկերն անցյալի՝ հանուն գալիք օրվա:–*

*Եվ ասում եմ ահա – ձե՛զ, որ պիտի երգեք՝*
*Կարդալով մատյանն այս խորախորհուրդ.–*
***Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը,-***
*Եվ ա՛յս է իմ խորհուրդը յոթերորդ...*

***16.02.1933***

## ***ՏԱՂ՝ ՁՈՆՎԱԾ ԳՐՔԵՐԻՆ***

*Օ՜, գրքերի աշխարհը – տիեզերք է անեզր: –*

*Արևների նման բազմապիսի.*
*Ե՛վ աստղերի նման, և՛ շողերի –*
*Ես սիրում եմ գրքերը, որ աշխարհի մասին*
*Բարբառում են անձուկ ու մտերիմ:*

*Տարփանքով, ինչպես պատանին,*
*Որ սիրում է իր լույս ընկերուհուն փարվել –*
*Ես սիրում եմ գրքերը թե՛ նոր, թե՛ հին,*
*Թե արվեստով գրված, թե անարվեստ:*
*Բայց և կամքով անշեղ, ինչպես ղեկավարը,*
*Ինչպես ա՛յրն է հասուն ձգտում սիրած գործին,–*
*Ես սիրում եմ գրքերի աշխարհը*
*Իմ խոհերի վսեմ այրուձին:–*

*Նրանք շա՜տ են ու բազմապիսի, տարբեր ու գունագեղ,*
*Ծնված զանազան դարերում ու երկրներում,*
*Յուրաքանչյուրը բերում է մի առանձի՛ն պարգև,*
*Յուրաքանչյո՛ւրն իր մեջ մի աշխարհ է կրում:–*
*Մեր կյանքի երկար ճանապարհին*
*Հանդիպում են նրանք հետզհետե,*
*Եվ դառնում են ընկեր ու մտերիմ,*
*Կամ մնում են անցած տարիների ետևը:*
*Ուղեկից են դառնում մինչև ի մահ*
*Մի քանիսը միայն՝ անդավաճան հավետ,–*
*Եվ այնպիսի՛ գրքեր կան, որ չարքերի նման*
*Հալածում են մեզ մինչև վե՛րջ:*
*Գրքեր կան, որ կյանքում մի ակնթա՛րթ միայն*
*Մեզ ժպտալով՝ անցնում են ու կորչում,*
*Բայց նրանցից մնում է մեր սրտերում մի բան,*
*Որ տարինե՜ր ենք մենք անրջում:*
*Գրքեր կան, որ խոժոռ են ու խստաղեմ,*
*Ինչպես ուսուցիչը, կամ առաջնորդը,–*
*Եվ այնպիսի՛ գրքեր ես գիտեմ,*
*Որ համրերի նման անհաղո՛րդ են:*
*Աղջիկների նման սեթևեթ*

*Կան կարկաչուն գրքեր, որ հանդիպում են մեզ,*
*Հրապուրում, գերում – և մոռացվում հավետ…*

*Օ՜, գրքերի աշխարհը – տիեզերք է անեզր: –*

*Նրանք շա՜տ են ու բազմապիսի,*
*Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է ուրույն,*
*Եվ պատմում են նրանք մեզ աշխարհի մասին*
*Խոսքերով անկրկնելի և անագորույն:–*
*Կան անզգեստ գրքեր, կան պճնազարդ*
*Ֆոլիանտներ, որոնք սնամեջ են, ինչպես*
*Աստղական արքա Բալթասարը,*
*Որ պճնում էր իրեն պչրուհու պե՜ս:*
*Եվ անարվեստ գրքեր կան, որ բնության նման*
*Խառնիխուռն են թվում, խառնիճաղանջ,*
*Բայց գերում են, կապում մինչև ի մահ,*
*Եթե անխոնջ ոգով և տքնությամբ ջանաս*
*Խորասուզվել, բանալ գաղտնիքները նոցա,*
*Նոցա ներքին դաշնությունն հասկանալ, –*
*Այդ գրքերը խոհի ամրոցներ են գոցած,*
*Եվ կբացվեն քո դեմ, եթե լինես անահ: –*
*Գրքեր կան, որ դրսից նման են հոյաշեն*
*Դղյակների, սակայն ներս ես մտնում դու երբ –*
*Գաղջ՝ շնչում է դեմքիդ ամայության փոշին*
*Եվ սեղմում է կոկորդդ մի մեռյալ ձե՜ռք:*
*Անտառների նման գրքեր կան թանձր ու մութ,*
*Կան օվկիանի՜ նման անհուն գրքեր,*
*Կան զեփյուռի նման, նման քամո՜ւ,*
*Կան, որ զգվում են մեզ, ինչպես ձեռքեր:–*
*Ե՜վ սրինգի ձայնով, և՜ շեփորի,*

*Ե՛վ որոտի ձայնով կան գրքեր,*
*Եվ կան անձա՜յն գրքեր, որ լռին*
*Սրսկում են մեր սիրտը եղերական կրքեր...*

*Օ՜, գրքերի աշխարհը – տիեզերք է անեզր։*

*Ես սիրում եմ նրանց բազմախորհուրդ*
*Այս ինքնությունը դաշն, անկրկնելի,*
*Նրանց միջև եղած տարբերությունն այս խոր,–*
*Եվ բոլո՛րն են նրանք ինձ սիրելի։*
*Արեգակի բոլո՛ր երանգների նման,*
*Տիեզերքի նման բազմալեզու–*
*Ես սիրում եմ նրանց երփներանգ*
*Այս հուրերը կիզուն*
*Եվ բնության բոլո՛ր ձայների,*
*Եվ մարդկային կյանքի բուրմունքների բոլոր*
*Այս ճառագո՛ւմն եմ ես սիրում վերին,*
*Այս բո՛ւյլը մշտահոլով։*
*Եվ այս ամենը՝ մեծ մի դաշնություն կազմած,*
*Կազմած ուրույն մի կյանք, մի ինքնամփոփ աշխարհ–*
*Մեր տների փայտյա դարակներում բազմած՝*
*Ապրում են լո՛ւռ կյանքով և կենդանի են հար։*
*Ես սիրում եմ նրանց լաբիրինթոսն այս լուռ,*
*Երանգների՜, գույնի՜ շռայլությունն այս մեծ,*
*Ինձ սիրելի միշտ բազմազեղումն այս խոր...*

*Օ՜, գրքերի աշխարհը – տիեզերք է անեզր։ –*

***2.06.1933***

## ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

### ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔԸ

Նվիրում եմ Հայաստանի համալսարանի
գյուղատնտեսական ֆակուլտետի 1924-25
ուստարվա III կուրսի ուսանողներին

*Հեյ-հե՜յ,*
*Ջրանցքը Շիրակի –*
*Երակի պես կապույտ*
*Կը կապի:*

*Արտերի տոնն է,*
*Ջրաբուք*
*Կապույտ կիրակին:*
*Շիրակի չոլերը հին*
*Չիման չէին,*
*Անջո՜ւր,*
*Անջրդի՜,*
*Շիրակի չլուտ չոլերը չոր էին:*

*Օգո՜ւտ չկար,*
*Թեկուզ չուլթը չանգոտեր,*
*Թեկուզ տրակտորը շուռ տար:*

*Հեյ-հե՜յ –*
*Շիրակի չոլերը ոսկեհե՜ր*

*Հոռ ու ծուռ են,*
*Թե վերից արևը համբուրի,*
*Վարից՝ ջուրը։*

*Դաշտերումը եռում է*
*Եռանդը գյուղացու։*
*Իսկ վաղը կգա*
*Անիվների հաղթական բանակը,–*
*Ծուխ,*
*Ծուխ,*
*Ծուխ,*
*Գոլորշի,*
*Շին գորշահեր*
*Կբարձրանա գոռ*
*Կամպանիա,*
*Արևի դեմ կը բռնի,*
*Արևը կապշի։*
*Մի զարկ էլ,*
*Մի զարկ էլ, ընկե՛ր,*
*Քլունգդ լրիվ խրի երկրի քունքերին,*
*Քանդի՛ր,*
*Քանդի՛ր,*
*Քանդիր հանդը հան թունելի տուտը,*
*Ու ելի՛ր դուրս։*

*Տե՛ս,*
*Որքան որ ծանր էր աշխատանքդ,*
*Այնքան ծարավ հանդերն անթիվ։*

*Տե՛ս,*
*Որքան որ ջուրը ջրանցքում*

*Հորդում է,*
*Որքան լույսերով հղի,–*
*Այնքան գյուղեր կան կույր,*
*Այնքան մթությունը՝*
*Խի՛տ:*

*Դի՛ր –*
*Թող դռռա ռնգաhուր մոտորը.*
*Շիրակի դարավոր գիշերում*
*Թող բերի*
*Էլեկտրալամպերի միտինգ:*
*Էլեկտրադիկտատուրա:*
*Տո՛ւր հա,*
*Տո՛ւր, ընկե՛ր, մի քլունգ էլ,*
*Մի զարկ էլ հաղթական տակտով,*
*Հետո գա թող տրակտորը*
*Տենդոտ,*
*Ինքն իրեն բանի,*
*Թափթափի,*
*Թող թնդան հանդերն*
*Աշխատանքի թափից:*

*Հեյ-հե՜յ,*
*Մի զարկ էլ...*
*Արտերն արդեն արթնանում են,*
*Մնում են՝*
*Գա, գրկի կանալը:*
*- Ելի՛ր, ելի՛ր, ելի՛ր –*
*Երգում է դաշտերի*
*«Ինտերնացիոնալը»:*

***1922***

**ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ**

## ՎԵՐՋԻՆԸ

*Վերջին պոետն եմ, լսեցե՛ք ինձ,*
*Վերջին կարոտն եմ նաիրաբաղձ…*
*Ինձանից հետո վիհ կբացվի,*
*Սահմանագիծը կլինի պարզ։*

*Վերջին պոետն եմ, որ եկել եմ*
*Հողի բուրմունքից, հողից, հերկից.–*
*Այնպես հորդում է իմ երկիրը,*
*Ու այնպես խորն է հունն իմ երգի։*

*Կմարի երգերիս վերջին մարխը,*
*Վերջին զանգը խուլ կզնգա,*
*Միայն ես կզգամ նրանց վախը,*
*Նրանց տագնապը լոկ ես կզգամ։*

*Կքայլեմ հետո դեպի քաղաք,*
*Ու հին սրինգը նետելով դեն,–*
*Կվերցնեմ շեփոր բազմաղաղակ,*
*Պղնձե երգեր հետո կերգեմ։*

*Իսկ ինձնից հետո վիհ կբացվի,*
*Սահմանագիծը կլինի պարզ.–*
*Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ,*
*Վերջին կարոտն եմ նաիրաբաղձ…*

***1924***

## ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԾԱՌԵՐԻՆ

*Տասնվեցամյա աղջիկների պես*
*Նրանք պայծառ են, նրանք անուշ,*
*Հաճախ նրանց հետ զրուցում եմ ես,*
*Լսում են նրանք ու գլխով անում:*

*Գիտե՞ք, ասում եմ, ձեզ հետ միասին*
*Ես էլ տնկեցի իմ երգի ծառը,*
*Ձեզ հետ բարձրացավ և իմ աքասին,*
*Ձեզ նման նա էլ թարմ ու պայծառ է:*

*Հետո, ասում եմ, դուք դեռ կերկարե՜ք,*
*Կդառնաք վեհ ու սաղարթախիտ,*
*Ձեր շուրջը ուրի՜շ ոտներ կպարեն,*
*Ուրիշ սեր կլինի, ուրի՜շ թախիծ:*

*Դուք դեռ այնքան շատ տարիներ ունեք...*
*Քամին կտանի ձեր նոր հունդերը,*
*Կփոխվի ջուրը, կփոխվեն հուներն,*
*Բայց ձեզ կսիրեն նոր սերունդները:*

*Ժպտում են նրանք թարմ ու լիասիրտ,*
*Ու ես նրանց հետ, սրտով պայծառ եմ,*
*– Գիտե՞ք, անուշնե՜ր, ձեզ հետ միասին*
*Ես էլ տնկեցի երգերիս ծառը...*

***1926***

## *ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ*

## ԵՐԳ ՈՒԺԻ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ

*Ահավասիկ գրի՛չն իմ առած՝ թաթախած խինդո՛վ ցողաթույմ,*
*Գրիչ, որ սիրերգնե՛ր է սրնգում և երկնում է երգե՛ր*
*մարտական,*
*Ես, որպես ո՛ւժի և գեղեցկության կարմրասիրտ մի քուրմ՝*
*Երգում եմ գունդագունդ այս երթը հաղթական,*

*Դո՛ւք, երկրիս չքնաղ աղջիկնե՛ր, և դո՛ւք, տղաներ խնդուն,*
*Ո՜վ անընկճելի սերունդ ներկայի մեր արևավա՛ռ,*
*Շառաչում եք ինչպես շեփորները շեկ ու թնդում՝ ինչպես*
*թմբուկները թնդուն,*
*Եվ քայլում դասա՛կ առ դասակ, ինչպես տեղահան անտառ:*

*Ձեր ամեն մեկի շուքի՛ հետ քայլում է կենսախինդ մի գարուն,*
*Ամե՛ն մի նազանի՜ աղջիկ՝ հուլիսյան ամա՜ռ է հուրհուր,*
*Ամեն մի մկանուտ տղայի շնչե՛ղ թոքերում*
*Շնչում է մեր կյանքի շռի՛նդը և ամբողջ մեր խի՛նդը ոսկեհուռ:*

*Դուք խինդի անսահման ծո՛վ եք և ուժի անցամաք օվկիա՛ն,*
*Եվ քայլող արշալույս ներկայի, որ դեպի գալի՛քն է գնում,*
*Դուք պայքա՛ր եք, և՛ երգ եք, և՛ սե՛ր եք, և՛ կյա՛նք,*
*Եվ կյանքի սկի՛զբ ու ընթա՜ցք անհատնում:*

*Եվ ես, նայելով ձեր երթին, Ուժի՜ և Գեղեցկությա՜ն,*
*Խորհում եմ, որ չե՜ն ունեցել այսքան վեհությո՜ւն ու կի՜րք –*
*Եվ ո՜չ ոլիմպյան խաղե՜րը, որից թնդում էր Հելլա՜դան,*
*Եվ ո՜չ էլ մո՜ւտքը Կեսարի՝ հաղթական կամարի տակից:*

*Ձեր զորասյուներից ճերմակ թնդում են քաղաքները մեր,*
*Եվ խայտում գյուղե՜րն հեռավոր և խլիրտ գյուղե՜րը մոտիկ.*
*Եվ ամբողջ մի անծայր երկիր դառնում է Ո՜ւժ, Գեղեցկությո՜ւն ու Սե՜ր,*
*Եվ կապում իր մեջքին կանա՞չ և կարմիր գոտի:*
*Քայլեցե՜ք, չքնաղ աղջիկնե՜ր և դո՜ւք, տղանե՜ր՝ վստահ,*
*Թող սարսի՜ անարգ թշնամին ձեր երթից հզո՜ր, առնակա՜ն,*
*Քանզի շողում է գալիքի հորիզոնը բյուրեղի՜ց հստակ,*
*Քանզի ձե՜րն է կյանքը, ձե՜րն է սերը և ձե՜րն է պայծա՜ռ ապագան:*

## ԳՈՎՔ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

*Ո՜վ իմ երկրի աղջիկներ ճկուն ու վա՜ռ,*
*Եվ տղանե՜ր, դուք մկանուտ և ամրակամ,*
*Ահա երգում եմ ձեզ իմ այս երգը ընկերաբար,–*
*Իմ երգը խրո՜խտ և առնակա՜ն:*

*Դուք չքնա՞ղ հասակներ, ձեր անցյալը մռայլ,*
*Եվ ներկան ձեր իմաստուն, և ապագան՝ հրաշալի,*
*Ահա իմ երգը լցված ձեր սիրո՜վ շռայլ,*
*Եվ ձեր փոթորկածին կյանքերով լի:*

*Դո՜ւք, օ՜, երջանկությո՜ւն ունեք այսօր,*
*Ե՜վ սե՜ր, և՜ աշխատանք, և՜ երգ,*
*Դո՜ւք եք, դուք անկրկնելի այն սերո՜ւնդը հզոր,*
*Որ պիտի բարձրացնի հատուցման սուրը մերկ:*

*Եվ բա՜խտը, բախտը շռայլ է ձեզ համար,*
*Ձե՜զ է վիճակված տեսնել պայքարը ձեր տարեկիցների,*
*Այնտեղ, ուր կան շենքե՜ր ոսկեբուրգ և շենքեր*
*մարմար,*
*Եվ կան սպանող կացիններ, և թոկեր խեղդամահների:*

*Այնտեղ՝ անդուլ պայքարում են տարեկիցները ձեր,*
*Եվ ցնցվում է ագահ ոսկեհորթը խռովահույզ,*
*Նրանք պայքարում և մեռնում են բազում ու*
*բազմաձև,*
*Մեռնում անաշխատա՜նք, մեռնում անսե՜ր, բայց*
*ապագայով լիահույս:*

*Եվ այժմ, ձեր տոնին թախծո՜վ եմ երգում նրանց մահը,*
*Եվ երգում, ո՜վ իմ երկրի ջահելնե՜ր, ձեր կյանքը սիրո՜վ,*
*Ձեր ուժը, որ անվախճան ու անմահ է,*
*Եվ պսակված է երգով ու սրով:*

*Ձե՜րն է հնձանը խաղողի, և արտը ոսկեհասկ,*
*Ե՜վ գործարանը վիթխարի, և՜ արշալույսն անբիծ,*
*Ձե՜րն է վերջալույսը ծիրանագույն, և՜ երկինքն անհաս,*
*Ե՜վ երկրիս հորիզոնները անպարագիծ:*

*Արդ, իմ երկրի աղջիկնե՜ր, ճկուն ու վառ,*
*Եվ տղանե՜ր, ամուրմեջք և ամրակազմ,*

*Երգեցե՛ք կարմիր հաղթանակի ձեր ե՛րգը սրավար,*
*Քանզի ձե՛րն է կյանքը, ձե՛րն է սերը, և ձե՛րն է չքնաղ*
*ապագան:*

## ՄԵՐ ԵՐԿՐԻ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

*Օ՜, դուք, որ ճկուն եք, ինչպես ուռին,*
*Մատաղ, ինչպես մորճը, կանաչ, ինչպես ծի՛լը գարնան,*
*Ահա լսում եմ ձեր ծիծաղը՝ ինչպես գուռի,*
*Ինչպես ավազանի մեջ թափվող շատրվան:*

*Դո՛ւք եք զվարթությամբ լցնում դաշտերը բամբակի,*
*Ե՛վ ցորենի արտերը մեր անսահման,*
*Ե՛վ գործարանները մեր ահագին,*
*Ե՛վ ճամփաները մեր ոսկեման:*

*Դո՛ւք եք զարդարում քաղաքն ու դաշտը, կյանքը և*
*սիրտը մեր,*
*Եվ ոչ մի գարուն այնքան գեղեցիկ չէ և հրապուրող,*
*Որքան ձեր նազա՜նքը, ձեր քնքշությո՛ւնը, ձեր սե՛րն*
*անմեռ,*
*Որ լցված է բոլո՜ր գարունների բույրով:*

*Դո՛ւք, անխուսափ երազն եք երիտասարդների,*
*Եվ տալիս եք կարոտներ ու ձգտումների գրգիռ.*
*Նրանց սիրտը կախում գանգրագանգուր ձեր*
*օղակներից,*
*Եվ մերթ հեռու եք լինում երկի՛նքն ինչպես, և մերթ*
*մոտ՝ ինչպես երկիր:*

*Դո՛ւք, կարոտալի կարո՛տ եք, և աստղանման գիշե՛ր,*
*Շլացուցիչ ցերեկ և ժա՜մ ցանկալի,*
*Գոյության գրավական, և աննինջ հո՛ւշ եք,*
*Սափորներ՝ բնության տարերքով լի։*

*Եվ ձեզ բոլորի՜դ է վիճակված լինել հարսներ,*
*Պտղաբարձ ծառեր լինել ամառային.*
*Լինել կյանքի շենքը ամուր և հար պահող սյուներ,–*
*Եվ միշտ նորոգել կյանքը հի՛ն։*

*Օ՜, ապագա մայրեր մարտիկների բյուր և անքանակ,*
*Դուք ճկո՛ւն եք, ինչպես մորճը, ինչպես ուռին։*
*Քանի արև՛ը կա, և քանի կա՛ք դուք՝ ո՛չ մի խորշակ*
*Չի՛ դիպչելու կյանքի կանա՜չ ծառին։*

***ՍԱՐՄԵՆ***

## ԻՄ ՀՈՒՇԵՐՈՒՄ

*Իմ հուշերում դու կմնաս*
*Որպես անշեջ մի լուսարձակ,*
*Որ փարոսեց կյանքիս ճամփան*
*Ու ինձ տարավ դեպի կատար,*
*Իմ դեմ բացեց հեռաստաններ՝*
*Եվ լուսազարդ, և լայնարձակ,*
*Ու ծաղկունքի, երազանքի*
*Մի պերճ անտառ։*
*Երախտագետ հոգով ահա*
*Նայում եմ քո կամարներին,*
*Որ նորացած, շքեղացած*
*Քո հայաոճ գեղեցկությամբ,*
*Փափագում եմ, որ հարկիդ տակ*
*Երգը հնչի դարը-դարին,*
*Եվ ուղեկիցը դառնաս դու*
*Անընդմիջող անմահության,*
*Քեզանով հար հպարտանա*
*Հայրենի հողը՝ Հայաստան։*

***1970***

**ԱՇՈՏ ԳՐԱՇԻ**

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՍԵՐ

*Ծառերի կանաչ վրանների տակ*
*Ուսանողները դասեր են սերտում,*
*Վիճում են, երգում և՛ կրքոտ, և՛ տաք,*
*Ներշնչանք, կրակ կան իրենց սրտում:*

*Մի թուխ ուսանող սիրած աղջկան*
*Առաջին սերն է շշնջում խնդուն.*
*-Իմ սիրո նման պայծառ սեր չկա,-*
*Համբույրով է նա խոսքը հաստատում:*

*Զարկերին սիրող դալար սրտերի*
*Ակացիներն են ունկնդիր լինում,*
*Եվ թափում ձյունը ծաղկաթերթերի*
*Նրանց մազերին նուրբ մետաքսավուն:*

*Նայում եմ նրանց, քեզ մտաբերում,*
*Ուսանողական սե՛ր իմ, ա՜խ, անցած,*
*Ծաղիկ ես փռել դու իմ տետրերում,*
*Իմ կանաչ-կանաչ գարուն անձրևաց:*

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

*Դիտիր հիմա, ընկեր, Երևանի*
*Չինարները դալար, նրբահասակ,*
*–Աղջիկների նման Հայաստանի*
*Գեղեցիկ են, ուրախ, նորապսակ:*

*–Նրանց գարնանային շրթունքները թովիչ*
*Սկսվում են ահա նորակառույց*
*Կանաչ այս փողոցից Կիրովի,*
*Վար են իջնում ապա նայվածքներում գարուն,*

*Դեպի վար ձգված վիթխարի պողոտայով,*
*Եզերքներով որի*
*Վար են հորդում կանաչ ալիքներով*
*Ու ողջունում բոլոր անցորդներին:*

*Չինարների ճյուղքին շողերով ողողուն,*
*Ձնճղուկներն են տալիս համերգ մի անթախիծ,*
*Հովերում, զովերում ստվերախիտ*
*Մանուկներն են խաղում ու ճռվողում:*

*Սաղարթներն են շրշում թևերի տակ հովի,*
*Լսենք նրանց երգը, թարմ սիմֆոնիան,*
*Հայացքները հառած երկնի մովին,*
*Ուր ամպերն են լողում ձյունաերամ,*

*Չբոսնում են զմրուխտե կամարների տակով*
*Աղջիկներ, տղաներ թուխ, սևաչյա,*
*Ես տեսնում եմ նրանց հաճախ-հաճախ,*
*Անց են կենում նրանք երգով ու կատակով:*

*Շտապում են նրանք համալսարան,*
*Տետրերով, գրքերով, դիսերտացիաններով.*
*Թե պոետ ես, գրիր նրանց քնարական*
*Եվ կամ էպիկական քո տողերով:*

*Երգիր երազները նրանց անզուգական–*
*Մեկը կամենում է դառնալ ճարտարապետ,*
*Մեկը՝ աստղագետ, մեկը՝ լեզվաբան կամ՝ պոետ,*
*Մեկը՝ իրավաբան, մեկը՝ դեսպան:*

*Ես ուսանողական թաղամասը սիրում եմ նրանց*
*Սիրում եմ ջերմ, ինչպես տունը իմ հարազատ,*
*Ուսանել եմ ես էլ այստեղ և արդ*
*Կարոտով եմ հիշում տարիներն իմ անցած:*

*Հանրակացարանը ահա այս տուֆաքար,*
*Դուրս են հորդում որի ծանոթ դռներից*
*Ուսանողները ալիքներով կայտառ–*
*Հայրենի տան նման հարազատ է միշտ ինձ:*

*Ես ապրել եմ այստեղ, այն սենյակում,*
*Որի լուսամուտում ծաղկաման է դրված ,*
*Վառվում են վարդերը բոսորագույն,*
*Որպես մի խուրձ կրակ:*

*Ով է բնակիչը հիմա այն սենյակի,*
*Լեռների՞ց է եկել նա ինձ նման,*
*Արարատյան հովիտի՞ց, թե՞ ձորակից*
*Գետի իր մանկության:*

*Որդի՞ն է նա հովվի սրնգահար,*
*Զավա՞կն է մաճկալի կամ ծեր պարտիզանի,*
*Թոռնիկն է բանվորի, երկրաբանի–*
*Ողջունում եմ նրան մտերմաբար:*

*Ով էլ լինի, որպես որդին ժողովրդի,*
*Նա է գիտության դուռը բախում,*
*Աչքը հառած հավետ նրա վեհ գագաթին–*
*Հայրենիքը կերտելու ջանքին շողշողուն:*

*Նա դեռ կտա իր պայծառ շրջապատից*
*Նոր Ալիխանյաններ, նոր Համբարձումյաններ,*
*Հանդուգն ուրիշ գիտուններ, որ կբերեն պատիվ*
*Մայր հողին մեր սուրբ հայ երկրին այս մեր:*

## ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

### ԻՄ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

*Աբեղյանն էր, Մանուկ, լսարան մտնում լուռ,*
*Քուռկիկ Ջալալու սանձից բռնած,*
*Եվ Լեոն էր գալիս՝ մի անամոք մրմուռ*
*Իր նոր խոհերի պարսին խառնած։*

*Ղափանցյանն էր, Գրիգոր, մեզ գրաբար կարդում,*
*Գիրն Եղիշեի լուսահանճար,*
*Աճառյանն էր, Հրաչյա, շքամուտքից ելնում՝*
*Որպես շարժական լեզվի տաճար։*

*Տերտերյանն էր, Արսեն, որ ամեն օր անդուլ*
*Քաղաքն էր շրջում հոգեխռով,*
*Մանանդյանն էր, Հակոբ, մեր գունդն առաջնորդում*
*Տիգրանակերտից մինչև Հռոմ։*

*Օ՜, Խանզադյան Ցոլակ, ցոլա իմ հուշերում,*
*Հայ կաճառում վառված մոլեգին լույս,*
*Քեզ եմ հիշում, Սիմոն, բազմակարծիք ծերուկ,*
*Միջամուխ, դժբախտ մեր Պոլոնիուս։*

*Ասատուրն էր, Գևորգ, իր շուրթերով դալուկ*
*Շշնջում Խայյամ ու Ֆիրդուսի,*
*Արարատովն էր մեզ զորաշարժի տանում՝*
*Ղարսի հրացանը կապած ուսին։*

*Օ՜, Թոթովենց ՎաՀան, առյուծաբաշ դու խալդ,*
*Թավ ծիծաղիդ բոցով սիրտ վառած,*
*Եկուր խոնարհ ծնկեմ որպես Օսկար Ուայլդ,*
*Վեհ բագին դարձած ոգուդ առաջ:*

*Եվ Գյուլլին էր գալիս՝ մի զուսպ ժպիտ դեմքին,*
*Հեգելական քայլով ծանրաբարո,*
*Շավարշյանն էր իջնում մի վառ լապտեր ձեռքին՝*
*Իգդիրի խաժակ ճանապարհով...*

*Ինձ սեղմել են պատին իմ հուշերը ծալ-ծալ,*
*Օ՜, Վռամ Կոստան և Կարո-Մելիք,*
*Եվ Էդիլյան Գուրգեն – դուք ածանցյալ անցյալ,*
*Դուք հավերժում կորած աստղածաղիկ:*

*Եվ Դրաստամատն է վեհ, քաջայրը փարպեցի,*
*Հուշերիս մեջ հպարտ վեր բարձրանում,*
*Ես ո՞ր մեկիդ հիշեմ այս հուզմունքիս պահին,*
*Օ՜, դասախոսներ իմ քաղցրանուն:*

*Եվ, ասում են, Ստեփան Մալխասյանն էր գալիս,*
*Բայց չեմ լսել ես քեզ, այր վեհաշուք,*
*Համալսարանի դեմ ծեր բարդիներ կային*
*Ու մի վարար աղբյուր՛ լավ եմ հիշում...*

*Եվ Անժուրի պոռթկուն ծիծաղն է հնչում կեզ*
*Հարակից մի լսարանի դռնից,*
*Այս հուշերգը գրեց Խաչիկ Դաշտենցը՝ ես,*
*Պատմագրական բաժնից...*

***1947-1965***

**ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻ**

## ԼՍԱՐԱՆՈՒՄ

Իմ ուսուցիչ, պրոֆեսոր
**Ա. Տերտերյանի** հիշատակին

*Այնպես արագ է ծիծաղն հանգչում,*
*Ու դադարում են աղմուկ ու ձայն,*
*Մեր դասարանն է խորը շնչում,*
*Երբ որ մտնում է նա լսարան:*

*Մենք լուռ լսում ենք, պատմում է նա*
*«Վերքի» մասին այն, և մեզ ահա*
*Այնպես է թվում, թե ուր որ է –*
*Աբովյանը մեզ այցի կգա:*

*Ու նա պատմում է: Նալբանդյանը*
*Մեր դեմ կանգնում է ըմբոստ ոգով,*
*Մեզ թվում է, թե նրա ձայնը*
*Հեռվից հասնում է երգ ու վերքով:*

*Կամ Թումանյանն է բարի ժպտում*
*Աղայանի հետ Լոռում իր պերճ,*
*Ու մեզ են կարծես ձեռքով անում...*
*Իսկ մենք լսում ենք, լսում անվերջ:*

*Ու նա պատմում է, հայրենախոս*
*Աղբյուրի նման սիրտն է մեր դեմ,–*
*Ա՜խ, օրեր անցած, հազար ափսոս,*
*Որ հուշ եք դարձել հիմա արդեն:*

***1954***

***ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

## ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳ

«... Իմանալ զբանս հանճարոյ»
**Մեսրոպ Մաշտոց**

*Այո, դեռ երեկ էր, որ ղողանջեց հանկարծ,*
*Վերջին, վերջին զանգը պատանության,*
*Սարսռեցնող մի քիչ, մի քիչ այլեկոծված,*
*Մի քիչ էլ մեղավոր ու տագնապաձայն:*

*Այսօր, այսօր ահա մեզ կանչում են վերից*
*Վեհաշուք դռները դպրանոցի մեր նոր՝*
*Նոր մի ակնածանքով ու տագնապով խորին*
*Մինչ իմացության խորանը փառավոր:*

*Դեռ ինձ վեր կտանեն ձեռքերը Մաշտոցի,*
*Ձեռքեր, որ մագաղաթ են սրբագրել մի օր:*
*Խոնջացած մատյաններ, ուր դարերից անծիր*
*Ժամանակն իր ձայնն է արձանագրել մոլոր:*

*Նայում են թափանցող, ուղիղ իմ աչքերին*
*Խորենացին հեռո՜ւ, հեռո՜ւ պատմությունից,*
*Շնորհալին՝ պայծառ ժպիտով երկնային,*
*Մխիթար Հերացին՝ իր հին ճեմարանից:*

*Հին խռովքն է նորից իր տագնապով ծանոթ,*
*Երբ բացվում են դռները նոր դպրության,*
*Համալսարա՛ն, նորից դողանջներում ե՛ս քո*
*Արձագանքն եմ լսում իմ մանկության:*

*Ոսկե դողանջիդ մեջ, ծնծղայիդ մեջ այսօր*
*Երազիս թևերը թող ճախր առնեն նորից,*
*Ինձ զորավիգ դարձե՛ք, վարդապետնե՛ր լուսո,*
*Ձեր հանճարի ազնիվ բարձունքներից...*

***1969***

## *ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ*

# ԽՈՍՔ ՀԱՄԱԼՍՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

**1**

*Բարեկամնե՛ր, իմ նոր և հին,*
*Սիրտս՝ լեցուն սեր ու հույզեր,*
*Նվիրական ձեր այս տոնին*
*Բերում եմ ես որպես նվեր:*
*Կյանքի կանաչ կածանը ձեր*
*Չի՛ լինելու հարթ և դյուրին,*
*Վարդերի տեղ գուցե փշեր*
*Հանդիպեն ձեր ճանապարհին:*
*Բայց հույզերով անկեղծ ու հորդ,*
*Թե սիրեք հող ու Հայրենիք,*
*Թե խելքն անեք ձեզ առաջնորդ,*
*Սերն ու սիրտը՝ ձեզ զորավիգ:*
*Թե սիրեք կյանքն անհուն սիրով,*
*Լինեք անխոնջ, ազնիվ մշակ,*
*Նա մոր նման սիրագորով*
*Կտա ձեզ վարդ ու մանուշակ:*
*Ուր էլ լինեք, ինչ լուսնի տակ,*
*Կամ ինչ օտար երկնի ներքո,*
*Եղե՛ք արի, եղե՛ք գիտակ,*
*Խիզախ եղե՛ք և անձնազոհ:*
*Հիշեք զարմին մեր դյուցազուն*
*Տիգրան Մեծից մինչ Բաղրամյան,*

*Հերոսներ է ծնել բազում,*
*Որ աստղերն են ողջ մարդկության,*
*Որ մայր հողը ձեզ մայրաբար*
*Գգվի ու ձեր վերքը բուժի,*
*Եղե՛ք նրա զավակն արդար,*
*Ժառանգորդը նրա ուժի:*
*Կյանքի ուղին և երթը ձեր*
*Թո՛ղ հավիտյան լինի բարի,*
*Իմ ջերմ սիրտն էլ որպես նվեր*
*Տարեք ձեր լույս ճանապարհին...*

***1963-1974***

**2**

*Իմ հոգու սաներ, ուզում եմ այսօր*
*Երգել ձեզ նման առույգ ու ջահել,*
*Թո՛ղ սրտի երգը ձեր ավագ եղբոր*
*Հնչի ձեր անվանն արժանավայել:*
*Դուք սիրո սոխակ բողբոջող վարդի,*
*Հայրենի հողում արմատ նետած տունկ,*
*Ջերմ սիրո տավիղ ու անթեք բարդի,*
*Դուք՝ գալիք օրվա լուսավոր բարձունք,*
*Հողմերի դիմաց դուք բաց առագաստ,*
*Ըմբոստ նավաստու սրտով սիրավառ,*
*Ոսոխի դիմաց սուր եք ահասաստ,*
*Ընկերոջ համա՛ր անխորտակ պատվար:*
*Դուք և՛ սերմնացան, և՛ արտ բարեբեր,*
*Խինդոտ ու խանդոտ ձեր սիրտը ջահել,*
*Սերը անարատ, հորդ հույզերը ձեր*
*Հայրենի երկրին նվեր եք բերել:*
*Դուք պիտի սերեք սերունդներ բազում,*

*Երկնքից աստղեր վար բերեք գետին,*
*Հրեղեն խոսքը ձեր մեսրոպագուն*
*Տանեք տիեզերք, հանեք Ծիր-Կաթին:*
*Ամեն տեղ ցանեք սիրո սերմերը*
*Սասունցի Դավթի, Վարդանանց ուժի,*
*Հիշեցե՛ք, եթե չսիրեք ձերը,*
*Երբեք չեք կարող սիրել ուրիշին:*
*Իմ հոգու սանե՛ր, թո՛ղ ձեզ հետ այսօր*
*Երգեմ ձեզ նման առույգ ու ջահել,*
*Թո՛ղ սրտի երգը ձեր ավագ եղբոր*
*Հնչի ձեր անվանն արժանավայել:*

***1984***

## ***ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

### ԵՐԵԿ ԷՐ ԱՍԵՍ

Իմ անմոռաց դասընկեր
**Գառնիկ Ոսկանյանի** հիշատակին

*Երե՜կ էր ասես՝ քո կողքին նստած*
*Ուսանում էի քեզ հետ միասին,*
*Տեսնում եմ ահա հայացքդ հստակ*
*Բոցավառվելիս պատմության դասին:*

*Տեսնում եմ ասես, տեսնում եմ ահա*
*Ինչպես խզմզած կոնսպեկտ ես հանում,*
*Կիսաժպիտդ շուրթերում պահած*
*Դասախոսների հետ վիճաբանում:*

*Իսկ մի օր էլ մեծ դասամիջոցին*
*Պատուհանի մոտ հեգնանքով ասիր՝*
*Երգեր ես գրում նուրբ ու գեղեցիկ,*
*Ա՜խ, գրի՜ր, գրի՜ր նաև իմ մասին:*

*Հիմա պատահմամբ երբ անցնում եմ ես*
*Սուրբ շենքի մոտով համալսարանի,*
*Կարոտով լցված ես հիշում եմ քեզ*
*Ժպտալիս փեղկում մեր լսարանի:*

*Կանգնում եմ մի պահ պատերի տակին,*
*Թվում է նորից գնում եմ դասի.*
*Այս անգամ արդեն առանց կատակի*
*Ասում ես՝ գրի՛ր, գրիր իմ մասին:*

*Չէ՞ որ գնացիր ողջ թերի թողած,*
*Որ մնա շենքը Համալսարանի,*
*Որ ուրիշ դեմքեր ժպտալով շողան*
*Լուսավոր փեղկից մեր լսարանի:*

*Մենք խոսում էինք հաճախ քո մասին,*
*Գուշակում էինք դիրքեր մեծանուն.*
*Հավաքվում էինք մենք ազատ դասին*
*Ու քեզնից թաքուն տետրերդ բանում:*

*Հրճվում էինք քո՝ տետրերում ցրած*
*Մտքերով խիզախ, խելոք ու խորունկ.*
*Զարմանում քո ջինջ պարզության վրա*
*Ու նստում էինք երկար մտորում:*

*Որոշում էինք գիտնական լինես,*
*Կամ դատավոր՝ խիստ ու խարազանող,*
*Սիրում էինք քեզ աստղերով զինել*
*Եվ հպարտանալ, հրճվել քեզանով:*

*Բայց թողիր ինչ որ մեզ էր հմայել՝*
*Եվ չընտրեցիր դու մեկն այն բոլորից,*
*Ընկար ջերմ ու ջինջ քո հոգուն վայել՝*
*Զինվորի շորում դիրքեր փորելիս:*

*Մի բան, որ անհոգ տարիներին այն*
*Չէինք ունեցել մեր նախատեսած,*
*Բայց դու դրանով, դրանով միայն*
*Ամենաբարձր բարձունքին հասար:*

*Գիտնական ես դու հիմա շատ խորունկ,*
*Ե՛վ զինվոր խիզախ, և՛ ընկեր բարի,*
*Ա՜խ, դու ամեն օր դիրքեր ես փորում*
*Առաջին գծում մեր հուզաշխարհի:*

***1948***

## *ՄԻՆԱՍ ՍԱՐԵՆՑ*

### ՈՒՍԱՆՈՂ ԸՆԿԵՐՈՋՍ

*Ինչպես վառ գարնան հորդառատ մի գետ,*
*Հոսելով առաջ ափերն է քերում,*
*Ընթացքով ուժգին քարերը իր հետ*
*Դեպի փոթորկվող օվկիանն է տանում:*

*Այդպես, ընկեր իմ, ընթացիր և դու*
*Կյանքի քո լուսե ճամփով աներեր,*
*Ու քո վաստակած գանձերը լցրու*
*Մեր նոր գիտության օվկիանն անեզր:*

*Ընկե՛ր իմ, ուսի՛ր, որ փառքով հասնես*
*Մեր դարին արժան մարդու բարձրության,*
*Ու կյանքով լեցուն քո սրտով հրկեզ*
*Դիր քարդ ամուր մեր մեծ շինության:*

***1936***

## ***ԽԱԺԱԿ ԳՑՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ***

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

*Համալսարանն ահա,*
*Կամարներով քարե,*
*Ժանյակազարդ քարեր*
*Կամարների վրա:*

*Համալսարանն ահա,*
*Մտածում է ինքն էլ,*
*Թե որքան է գրկել*
*Պատանություն թռած:*

*Ներս ես մտնում թեթև,*
*Աչքդ աչքին հառած,*
*Սիրտդ սիրով վառած,*
*Սիրտդ արած կանթեղ:*

*Ու ելնում ես արդեն*
*Խոհուն մի մարդ դառած,*
*Եվ նոր ավյուն առած*
*Ընկնում քո նոր ճամփեն:*

***1943***

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

* * *

*Երբ ես էլ մտա համալսարան,*
*Ամեն ինչ այնպես պարզ էր թվում,*
*Կյանքն ինձ թվում էր մի երգարան,*
*Եվ միտքը՝ կղզի՝ սիրո ծովում:*

*Բայց երբ խորացա խոհերի մեջ,*
*Իմ սիրո ծովը կղզիացավ,*
*Եվ ծովանալով իմ միտքն անվերջ*
*Սիրո կղզու շուրթն օվկիանացավ...*

*Տեսա, որ կյանքը հատակ չունի,*
*Ու ես կաթիլի ափին եմ դեռ,*
*Եվ սերունդները՝ այս անհունին՝*
*Մինչև գերեզման՝ ուսանողներ...*

*Եվ հիմա տիեզերքն է մշտահոս*
*Մայր համալսարանն իմ լուսաբեր,*
*Լուսինն էլ ճաղատ մի դասախոս,*
*Եվ աստղերն ինձ հետ ուսանողներ...*

***1948***

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Ջուր ծախողի լացող կուժս, որ քեզ բերի մանուկ հույսով,*
*Դու դարձրիր մտքի սափոր, երբ թրծեցիր ինձ քո լույսով:*

*Բայց կուզեի այնքա՜ն խմել քո հանճարեղ աղբյուրներից,*
*Որ գտնեի անմահության դեղը անհայտ ծաղկի բույրից:*

*Մատաղ, ծարավ ուղեղները կաղապարիր իմաստությամբ,*
*Որ մարդը սար անուն թողնի, երբ ինքն անցնի որպես մի ամպ:*

***1961***

## ԻՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Չգիտեմ՝ երգով մարդ դառա՞, թե՞ ոչ,*
*Ի սեր իմ ազգի մասիսահառաչ*
*Բայց խոնարհում եմ գլուխս դողդոջ,*
*Իմ համալսարան, քո լույսի առաջ:*

*Քանզի դու ես ինձ երկնել մոր նման,*
*Վայրենի կավս քեզնով սափորվեց,*
*Ո՜վ մտքի բրուտ, իմ համալսարան,*
*Երգս քո լույսով վեր ծիածանվեց...*

*Բայց կուզենայի դեռ այնպես բուրեն*
*Քնարիս դաշտերն հայրենահույսով,*
*Որ ողջ ազգերը քեզ վարդեր բերեն,*
*Քեզ քո Մասիսը բերեն քո լույսով,–*

*Իմ համալսարա՜ն, իմ հայ ժողովուրդ,*
*Բախտդ կավ, դու միշտ հանճարեղ բրուտ...*

***1965***

***ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

*Երևանի՞ց, հեռվի՞ց – միևնույն է,*
*Կանգնիր դռանն իբրև օտարական.*
*Այս հոյակապ շենքը, որ քո տունն է,*
*Դեռ թվում է նա քեզ անհյուրընկալ:*

*Դեռ քննություն ունես – ոչ մի ներում,*
*Արդյոք կանցնե՞ս կամուրջն իմաստության.*
*Մնացել ես անլուր տագնապներում,*
*Իմանալ ես ուզում, ի՞նչ հարց կտան:*

*Շիկնած, ինչպես հնձվորն ամռան արտում,*
*Ու ողողված արդար մի քրտինքով,*
*Իմ աչքերի առաջ կանգնում ես դու՝*
*Քննությունից ելած հաղթանակով:*

*«Հինգ» է, այո, սակայն ինչ-որ մի տեղ*
*Հարցերն ասես մի քիչ քեզ նեղեցին.*
*Ուզում էիր խոսքդ լիներ հյութեղ,*
*Երգի նման սահուն ու գեղեցիկ...*

*Ամեն կողմից կանչեր՝ ի՞նչ ստացար,*
*Դու ժպտում ես անգոհ ու հեռանում*
*Մինչդեռ մեկը այնտեղ բարձրաձայն*
*Քո անունն է արդեն փառաբանում:*

*Այսպես բաց է մուտքը, բայց ոչ ազատ,*
*Նոր բարձունքներ կանցնես այսօրվանից.*
*Էլ ինչո՞ւ ես կոչվում երիտասարդ,*
*Էլ ինչո՞ւ ես եկել լեռնաշխարհից:*

## ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Կանգնեց մայրը*
*Ուղիղ շենքի դիմաց*
*– Մեծ դպրոցը սա՞ է...*
*Հարցնում է մարդկանց.*
*– Համալսարա՞նն, ահա.*
*– Այս սև շենքն է, մայրիկ...*
*– Սև մի ասա, տղա,–*
*Ու ժպտում է բարի,*
*Ասես մայրն է եկել*
*Ոչ մի որդու միայն,*
*Այլ ողջ Երևանի...*
*Մայրը հանդարտ մտնում*
*Ու նայում է չորս դին.*
*Գիտնական են թվում*
*Աչքին բոլոր մարդիկ...*
*Աստիճաննե՜ր, հարկե՜ր.*
*Ա՜յ, քեզ համալսարան,*

*Ա՜յ, քեզ քաշած պատկեր,*
*Տես, ո՜ւր հասավ տղան…*
*Մայրը քայլեց առաջ,*
*Նոր էր եկել ուշքի,*
*Դեռ երկու քայլ չարած,*
*Զանգը զնգաց ուժգին,*
*Ուսանողներն ահա*
*Դուրս թափվեցին միջանցք,*
*Քարացել է մայրը՝*
*Աչքերի մեջ հիացք:*
*– Մայրիկ, ո՞ւմ եք ուզում…*
*Հավաքվում են, գալիս,*
*Մանկան նման հուզվում*
*Ու հարցեր են տալիս:*
*– Որտեղի՞ց եք եկել,*
*Սիսիա՞ն, Ղափա՞ն, Գորի՞ս…*
*– Անհամբե՛ր եք, տղե՛րք,–*
*Մայրը ժպտաց նորից,–*
*– Ղարաբաղից… դուք մեր*
*Ավանեսին գիտե՞ք:*
*– Վա՛յ, նման է, տղե՞րք,*
*– Ծո Օնիկին գտեք…*
*– Երկրաբա՞նը… գիտե՛նք..*
*– Աչքալուսա՜նք, ուռա՜*
*Ու ցրվում են կրկին*
*Ամեն կողմի վրա:*
*Մինչդեռ հեռվից ահա*
*Երևում է որդին.*
*Կապած փայլուն ու լայն*
*Երկրաբանի գոտին…*

*Ուսադիրներ փայլուն,*
*Սանրած – սիրուն մազեր.*
*Զայլամի պես քայլում,*
*Քիչ էր մնում վազեր...*
*Էլ չիմացավ մայրը*
*Ինչպես հասավ նրան.*
*Ասես հազար տարի*
*Չէին տեսել իրար...*
*– Համբուրում է հայրդ,*
*Շատ էր ուզում որ գար,*
*Հալևորը լավ է,*
*Ես էլ, էսպես, դեռ կամ...*
*Ու վերջացավ կարծես.*
*Մի՞թե էլ բան չկա,*
*Մինչդեռ հազար հարցեր*
*Ու կարոտներ այնքան...*
*– Գնանք, մայրիկ, – ասաց, –*
*Վերջին ժամն է, ոչինչ...*
*Զարմանում է մայրը,*
*Ո՞նց թե ժամն է վերջին...*
*– Վերջին ժամն էլ մի դաս՝*
*Մի նոր բան է ասում,*
*Դու գործիդ կաց, տղաս,*
*Ես կսպասեմ դրսում:*
*Ու չիմացան ինչպես*
*Զանգը զնգաց նորից,*
*Սրտում կարոտն իրկեզ,*
*Նա հեռացավ մորից...*
*Հառաչում է մայրը...*
*Հինգից սա է միայն,*

*Չորսը կորան կռվում.*
*Չորսն էլ ջահել-ջիվան...*
*Լռություն է շուրջը,*
*Բոլոր հարկերն հանգիստ,*
*Լոկ մայրական սիրտն է*
*Որդուց ծածուկ լալիս...*
*Պետք չէ, պետք չէ, մայրիկ*
*Ծուրջդ որդիք այնքան,*
*Դու սպասիր մի քիչ,*
*Ծուտով զանգը կտան:*
*Այստեղ խաղաղ մի հարկ,*
*Նրանք դասի նստել,*
*Ու քանի՜ տան ճրագ,*
*Քանի՜ հույս կա այստեղ:*
*Եվ մայրն ինչպես պահակ*
*Ներս ու դուրս է անում,*
*Ուշքը-միտքը թողած*
*Որդու լսարանում:*

**ԵՐԳ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ**

*Երիտասարդ ընկեր, չգտնված դու ծով,*
*Դու չբացված բարձունք, դու դեռ անհայտ անուն.*
*Մաքառում ես անդուլ քեզ գտնելու հույսով,*
*Ու որոնման ճամփան դեպի գիրք է տանում:*

*Երազաթև հոգով սավառնում ես անվախ,*
*Որ նոր աստղեր գտնես տիեզերքում անհուն,*
*Սակայն հենվիր հողին ու հասկացիր, որ նախ՝*

*Գագաթների ճամփան դեպի գիրք է տանում...*

*Գրքի էջերն ասես աստիճաններ լինեն,*
*Կարդալով ես ելնում՝ ձեռքիդ պայծառ մի լույս.*
*Ո՞վ կարող է մարդուն իմաստությամբ զինել՝*
*Ինչպես գիրքը, երգը, մի լավ տողը թեկուզ...*

*Սակայն հանքը գրքի հորատելով անքուն.*
*Դու չես գտնի մաքուր իմաստության ոսկին.*
*Թե չիմացար կարդալ, ինչ չի գրվում գրքում.*
*Ինչ ասվում է մարդուն հաճախ առանց խոսքի...*

*Գիրքն իր կազմով կարծես մի աշխարհ է փակում.*
*Եվ դու մատով բացում, տիրանում ես նրան.*
*Ժամանակն է արդեն այս վաղանցուկ կյանքում*
*Դու էլ գործով մնաս մի լավ գրքի նման...*

## ԼՍԱՐԱՆՆԵ՜Ր, ԼՍԱՐԱՆՆԵ՜Ր

*Լսարաններն ասես նավեր,*
*Դասախոսներն առնում-տանում,*
*Ու սուզվում են հետզհետե*
*Իմաստության հեռաստանում...*
*Սիրում եմ ձեր աղմուկը տաք*
*Եվ անսպառ վեճերը ձեր.*
*Մրրիկներ կան, թռիչք ու թափ*
*Ձեր հարկի տակ, լսարաննե՜ր...*
*Լսարաննե՜ր, լսարաննե՜ր,*
*Երազներ են այստեղ ծնվում,*

*Լցվում սրտերն հայրենասեր*
*Եվ ասպազեն մարտի նետվում...*
*Լսարաննե՜ր, որքան աստղեր*
*Վառեցիք դուք իրով անմար.*
*Եվ առաջին սերն է այստեղ*
*Բացվում բեղուն ծաղկի նման...*
*Կթողնեն ձեզ կարոտագին,*
*Քանի՜ արծիվ, օ՜, զուր չեկան,*
*Ու կճախրեն նրանք կրկին*
*Դեպի լեռներն հայրենական...*

## ԴՅՈՒԹԱՆՔ

*(Պատահար պատմության ժամին)*

*Լուկուլլոս ու Դարեհ,*
*Հելլեսպոնտոս, Իրան...*
*Հին ու միջին դարեր*
*Դու խառնեցիր իրար...*
*Ողջ քարացան մի պահ*
*Ակնթարթում անգին,*
*Երբ շողացին քո դեմ*
*Մի զույգ վառվող հակինթ...*
*Օ՜, ի՜նչ աչքեր... աշխա՜րհ,*
*Ա՜խ, ինչպես են նայում.*
*Էլ ի՞նչ թագ ու իշխան,*
*Էլ ի՞նչ պարսիկ կամ հույն...*
*Թողեք ի սեր աստծո*
*Պատմություններն օտար,*
*Կապույտ աչքեր, օ՜, ծով,*

*Միրտս գիրկը քո տար...*
*Ու մինչ տարված նրա*
*Աչքերին ես նայում,*
*Պատմությունը հազար*
*Թագավոր է թաղում:*
*Թող գրողը տանի*
*Արքաներին այդ խենթ,*
*Կովարար ու վայրի*
*Անհեռատես, անխելք,*
*Ես ուզում եմ սուզվել*
*Այս աչքերը լազուր*
*Ու հայացքը այս վեհ*
*Հասկանալ եմ ուզում...*
*Պատմություն կա այնտեղ,*
*Որ չի գրվում թղթին,*
*Հեշտ է այդպես նայել,*
*Հասկանալն է խրթին...*

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

*Աղջիկը չի ասելու՝*
*Սիրում եմ ես քեզ.*
*Հասկանո՞ւմ ես, միայն դու,*
*Դու պիտի ընտրե՛ս:*
*Քո ասելուց հետո նա*
*Դեռ կմտածի՝*
*Արժե՞, որ քեզ մոտենա*
*Սիրով կանացի:*
*Հավատա՞ քեզ, թե այնպե՛ս,*

*Մեր ես խաղում լոկ.*
*Ցավի – մահի հանդիպես՝*
*Ընկե՞ր ես արդյոք:*
*Երազներ կա՞ն քո հոգում,*
*Կրակնե՞ր կան վառ.*
*Թե՞ ապրում ես այս կյանքում*
*Միայն քեզ համար:*
*Ում սիրում ես – սիրում է,*
*Մեկն է քեզ տրվում.*
*Դու ասում ես սիրում եմ,*
*Բայց նա է ընտրում:*

## «ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ»

*Մայրը տատի մոտ թողեց իր որդուն*
*Ու գնաց նոր տուն, մայրացավ նորից.*
*Զոհված զինվորի որբուկը տրտում*
*Խռովեց կարծես բոլոր մայրերից:*
*Ի՞նչ արած, տատը մայրիկից լավն է*
*(Թե ի՞նչ է մայրը, ինչպե՞ս իմանար).*
*Սրտում ծրարեց որբության ցավը*
*Եվ ժպտաց... միայն տատիկի համար:*
*Ողջ գյուղը սիրեց զինվորի որդուն,*
*Քանիսը նրան հայր ու մայր դարձան,*
*Ու թեկուզ կյանքն էր գետի պես հորդում,*
*Քարի պես մնաց վիշտը մանկության:*
*Նա համալսարան բերեց իր հոգսը,*
*Ուսանողները ոչինչ չիմացան,*
*Ճակատին վշտի խորունկ ակոսն էր,*

*Թեկուզ դեմքին միշտ ժպիտ կար պայծառ...*
*Թող ընկերները բեռն իր չկրեն,*
*Թող կարծեն ոչ մի հոգս չունի տղան,*
*Շատ են վշտերը և առանց իրեն,*
*Ոչինչ մի հարցնեք, կատակեք միայն:*
*Ու կատակում են, հաճախ էլ կոպիտ,*
*Երբեմն խաբում, տուն են ուղարկում,*
*Աչքերին քաշում խունացած կեպին,*
*Նստարանի տակ թաքցնում վերարկուն...*
*Բայց նա գտել էր երջանկությունն իր,*
*Գիշեր ու ցերեկ գրքերի ծարավ.*
*«Հանրագիտարան» դարձավ անունը,*
*Եվ չկար մի այլ հարմար մեծարանք:*
*Գրադարանում, երբ էլ որ գնաս,*
*Նստած է միշտ էլ միևնույն տեղում,*
*Ասես գիտության հետախույզ է նա,*
*Մարդկային մտքի հանքերն է պեղում...*
*«Հանրագիտարան», չեմ մոռանա քեզ,*
*Թեկուզ գիտնական դարձար մեծանուն,*
*Մնացել ես նույն մանուշակն համեստ.*
*Բույրը կա, ինքը՝ դեռ չի երևում...*

## ԵՐԳ՝ ԳՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

*Կարդում եմ, սակայն էջերի վրա*
*Տեսնում եմ այնքան հարազատ դեմքեր,*
*Տառերը մի պահ խառնվում են իրար,*
*Որտե՞ղ եք հիմա, իմ լավ ընկերներ...*

*Ոտքի եմ ելնում լուռ ու գլխահակ,*
*Ինձ հետ շարժվում են բոլոր գրքերը,*
*Շարվում կողք-կողքի՝ ոնց պատվո պահակ.*
*– Ո՞ւր են լուսատենչ իմ զավակները...*
*Թերի են թողել երազանքները,*
*Այստեղ էր նստում զվարթ այն տղան,*
*Նա սովորել էր գծագրելը*
*Եվ պիտի կերտեր մի նոր Երևան...*

*Չկա՜ն... էլ չկա՜ն, իսկ գրքերն ահա*
*Մնացել են, կան հարազատ այնպես,*
*Ծանոթ դեմքեր են էջերի վրա,*
*Մատների հետքեր, աչքեր բոցակեզ...*

*Բայց ահա եկան, եկան նորերը,*
*Նահատակները ժպտացին նրանց.*
*– Վերադարձրեք, ինչ որ կորել է,*
*Ինչ մեր կյանքի պես անավարտ մնաց:*

*Ուսանողներ են մտնում նորանոր,*
*Կիսատ գրքերն են ձեռքից ձեռք անցնում,*
*Եվ ինձ թվում է լռության մեջ խոր*
*Խաղաղությունն է քննություն հանձնում:*

## ԺԱՄԱՆԱԿԸ

*Սովորելու հինգ-վեց տարին*
*Մեկ էլ տեսար թռավ.*
*Եղբայրաբար, մոտիկ արի,*

*Լավ հասկանանք իրար:*
*Դու ոչնչով հարուստ չէիր*
*Ժամանակից բացի.*
*Այն էլ թեթև շռայլեցիր,*
*Ավա՜ղ, միայն «հացիվ»...*
*Դու մայթից մայթ ու սրտից սիրտ...*
*Թափառել ես հանգիստ,*
*«Երկուսներ» ես առել դասին,*
*«Հինգ» պահանջել կյանքից...*
*Ոտքերիդ տակ որքա՜ն գանձեր,*
*Չնայեցիր անգամ,*
*Մնացել ես դատարկաձեռն*
*Ու աղքատ ես այնքան:*
*Ափսոսանքի խայթը թունոտ*
*Դու ինչո՞վ ես հանել.*
*Այստեղ, այնտեղ տրված գինով.*
*Է՜հ, «պատիվ են արել»...*
*Այսպես տարին, հինգ-վեց տարին*
*Մի վայրկյանում թռավ.*
*Եղբայրաբար, մոտիկ արի.*
*Լավ հասկանանք իրար:*

## «ՀԱՏՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

*– «Հայո՜ցն» եկավ, «Հայո՜ցն» եկավ, տղե՜րք.*
*Իրարանցում մի պահ լսարանում,*
*Դասախոսն է ահա՝ պատմությունը պեղել,*
*Դարերից են հանել այս ծերունուն...*

*Վերջին ժամն է, վաղը թոշակի է գնում,*
*(Նորից թոշակ, ուսանող է կարծես)*
*Սիրտն ուզում է մնալ, ափսո՜ս, շատ է հոգնում,*
*Պատմությունը հայոց ծանր է այնպես...*

*– Չի վերջանում ինձնով պատմությունը հայոց,–*
*Կատակում է մարդը, ժպտում հազիվ,–*
*Բայց դժվար է ասել Վարդան, Մեսրոպ Մաշտոց,*
*Այս թույլ սրտով խոսել Հայկի մասին:*

*Եվ ուզում է, ուզում մի պահ շարժվել առույգ,*
*Զուր մի հուզվի, նայիր այստեղ ահա*
*Մաշտոցներ կան զվարթ և Վարդաններ առույծ,*
*Պատմությունը հայոց չի վերջանա...*

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Համալսարա՜ն, դու մի մայր ես,*
*Որ հասնում է թոռներին.*
*Որդիներիդ որքան սիրես,*
*Միշտ տենչում ես նորերին:*
*Քո տվածը ով հասկանա,*
*Ծովից գանձեր կհանի,*
*Ով գալիս է, թող լիանա,*
*Ով գնում է, թող տանի...*
*Դու անհատնում մի գանձատան,*
*Դու ոսկեբուռ սերմնացան,*
*Որքան հասկեր հասուն արտում՝*
*Վրան բախտի ծիածան:*

*Հազար ափսոս, որ սերմը սուրբ*
*Մերթ ընկնում է չոր քարին*
*Ու կորչում է, անցնում իզուր*
*Շռայլ բերքի հինգ տարին...*
*Ձեզ հետ եմ ես, ձևամոլնե՛ր,*
*Թող ձեզ կյանքը մշակի.*
*Հինգ տարվա մեջ չեք ճաշակել*
*Քաղցրությունը թոշակի:*
*Համալսարա՛ն, սիրեք գիտես,*
*Հանդիմանել՝ մոր նման,*
*Ով տենչում է բարձունքը վես,*
*Թև ես տալիս դու նրան:*

## ՀՐԱԺԵՇՏ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

*Համալսարա՛ն... ահա կանգնած մայթին ծանոթ*
*Քեզ եմ նայում արդեն անհամարձակ.*
*Մի՞թե ես եմ և կամ, մի՞թե դու ես, այո՞,*
*Համալսարա՛ն, ինչպես օտարացանք...*

*Լսարաններն ամեն, աստիճաններն անգամ*
*Ու միջանցքներն այնքան աղմկալից,*
*Խորթացել են կարծես, չկա՛մ՝ այնտեղ չկա՛մ,*
*Եվ իզուր եմ փնտրում ես ինքս ինձ...*

*Չգիտեի որ քեզ այսքան պիտի սիրեմ,*
*Գանձ, վատնել եմ հաճախ աննպատակ,*
*Դասախոսներ անգին, մեզ լույսով եք զինել,*
*Որ մենք շողանք հանուն հայրենի տան:*

*Ինձ լսո՞ւմ եք արդյոք, ձեզ եմ կանչում կրկին՝*
*Ընկերներ իմ, հոգով պարզ ու բարի,*
*Թեկուզ մեր մեջ, ավա՜ղ, և կայեններ կային.*
*Որոնց գուցե կյանքը դարձի բերի…*

*Ու լսում եմ… զանգը՝ ծանոթ մի ելևէջ.*
*Ինձ համար չէ, ոչ ոք ինձ չի ուզում,*
*Բայց աղմուկը՝ նույնը, հավերժական մի վեճ,*
*Ինչքան կրակ ու կիրք և ընդվզում…*

*Իսկ ես էլ չեմ վիճում, բայց ծարավ է հոգիս,*
*Ա՜խ, ոչ մի բառ, մինչդեռ հարցե՜ր ունեմ այնքան,*
*Էլ ժամանակ չկա իզուր ասվող խոսքի,*
*Ինձ տանում է գետը դեպի օվկիան…*

*Համալսարա՜ն, օ՜, մայր, և թող փունջը երգիս*
*Որդիական սիրով քեզ նվիրեմ.*
*Նույն խստությամբ բարի գնահատիր դու ինձ.*
*Պատժել գիտես դու խիստ և ջերմ սիրել…*

***1961***

## ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

### ԳԵՂՈՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Ինձ պատիվ է շնորհված Երևանի պետական համալսարանի այս հոբելյանին խոսք ասելու նրա հազարավոր սաների կողմից, նրանց կողմից, որոնք համալսարանի զանգի առաջին ղողանջների հետ միասին, հունվարյան մի առավոտ, կիսամաշ հագուստների մեջ, ցրտից սրթսրթալով, բայց հոգիները տաք ու երջանիկ, առաջին անգամ բացեցին Աստաֆյանում գտնվող լրջատես շենքի դռները ու ակնածանքով ուղևորվեցին դեպի լսարան,– և նրա՛նց կողմից, որոնք առողջ, կենսուրախ ու գեղեցկատես, անցյալ տարի հունիսին՝ իրենց հետևից վերջին անգամ փակեցին Այգեստանի զվարթագույն առանձնաշենքերի դռները և գնացին կյանքին խառնվելու:*

*Ողջույն ու շնորհավորա՜նք քեզ, մեր գիտելիքների մայր օջախ, մեր զարթնող մտքի դայակ ու խորհրդատու, մեր պատանեկան երազների վկա և ուղենիշ, սիրելի՛ համալսարան:*

*Հարյուրամյակներ շարունակ հայերեն գեղեցիկ ու բարեհնչյուն համալսարան բառին նախորդել էր Պետերբուրգի, Դորպատի, Սորբոնի, բայց ո՛չ երբեք Երևանի երկու բառերի երազելի համակեցությունը, Երևանի համալսարան:*

*Դու հիմնվեցիր ծանր ու դժվարին ժամանակներում: Զվարթնոցի նման փլատակվել էր մեր ժողովուրդը: Կարմիր բանակի զորամասերին հանձնվել էր թշնամին, բայց ցուրտը, քաղցը և անօթևանությունը դեռ չէին հանձնվում: Եվ չնայած այդ ամենին, Հայաստանի հեղկոմը քաղաք մտնելուց հազիվ տասը օր*

*անց քո կյանք մտնելու վճիռը արձակեց: Կիսաքանդ ու կավաշեն քաղաքը քեզ տվեց իր լավագույն շենքը, ժողովուրդը՝ մտքի իր լավագույն մշակներին: Եվ հայ աշխատավորը առաջին անգամ քո սանդուղքներով բարձրացավ դեպի բարձրագույն կրթության վերնահարկը, Երևանի բանվորագյուղացիակա՛ն համալսարան:*

*Մեր արյունով ու արցունքով շաղախված ձյուն-սառույցների տակից առաջինը դո՛ւ ծլարձակեցիր՝ ավետելով, որ ցրտահարված չէ մեր հոգևոր բերքը: Դո՛ւ եղար այն առաջին կետը պատասխանի, որ իր հետագա կյանքով հայ ժողովուրդը տվեց ճակատագրին՝ ջարդին, եղեռնին ու ավերումին հակադրելով իր կառուցող, խորհող ու ստեղծագործող ոգին: Քո կամարների տակ նոր մի ուժգնությամբ ղողանջեցին Սանահինի, Գլաձորի և Տաթևի դպրանոցների դարերով համրացած զանգերը: Մովսես Խորենացուց, Դավիթ Անհաղթից, Անանիա Շիրակացուց շառավիղվող մեր գիտական միտքը, հովանավորված պետությամբ ու պետականությամբ, նոր մի փայլատակումով ճառագեց քո տանիքի տակ, Երևանի պետակա՛ն համալսարան:*

*Ամենո՛ւր են քեզնով սնված ու հարստացված քո շրջանավարտները, Մոսկվայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտում ու Երևանի հաշվիչ մեքենաների գործարանում, Ղարաբաղյան բարձրաբերձ Տումի գյուղի դպրոցում և Շամշադինի շրջանային թերթի խմբագրությունում, Սուխումի գրական միավորման մեջ և Բյուրականի աստղադիտարանում: Եվ ամենուր նրանք հայրենի ժողովրդին են հաղորդում այն լույսը, որ քեզնի՛ց են առել: Ու թեև մեր ժողովուրդը հետագայում շատ ինստիտուտներ ու գիտական հաստատություններ ունեցավ, բայց դո՛ւ մնացիր ամենից թանկն ու նվիրականը, դու՝ առաջնեկը որդիների մեջ, մեր հարազա՛տ համալսարան:*

*Թո՛ղ միշտ ծաղկառատ լինեն քո գարունները, որ սկսվում են*

*ամեն աշուն սեպտեմբերին, և թող գիտելիքներով ծանրացած ու պտղավոր լինեն քո աշունները, որ վրա են հասնում ամեն գարուն՝ պետական քննությունների օրերին:*

*Թո՛ղ, ուրեմն, այսուհետև ոչ մի արհավիրք ու պատերազմ չխափանի քո զանգերի հաջորդականությունը, հարատևես դարե՛ր, և թող 2920 թվականին քո բյուրավոր շրջանավարտներից մեկը նույն լեզվով, բայց առավել գեղեցիկ ողջունի քո 1000-ամյա հոբելյանը, մեր սոցիալիստական վերածննդի անդրանիկ վկայագիր, մեր նոր ոսկեդարի ամենահին դպրանոց, Երևանի՛ համալսարան:*

***1961***

# ՀԱՐԱԶԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՍ

*Այսօր, հիսնամյակիս օրը, բազմերանգ զգացումներով եմ հիշում մեր սիրելի համալսարանը, որտեղ անցել են կյանքիս հինգ, եթե ոչ լավագույն, ապա ամենից բախտորոշ, քաղցր ու դառը հիշատակներով լցված տարիները:*

*Հիրավի, փոթորկալից եղավ այդ հինգ տարին: Մենք առաջին անգամ համալսարանի սանդուղքներով բարձրացանք, երբ աշխարհում 36-37 թիվն էր... Իսկ երբ, վերջին պետական քննությունը տված՝ իջանք նրա սանդուղքներից, կյանք մտնելու փոխարեն, մտանք ռազմադաշտ, մտանք Երևանի լուսարձակված փողոցները՝ մռայլված սառցահար հերթերով ու հենակավոր զինվորներով...*

*«Տեր կանգնելով» անցած հիսուն տարիներիս յուրաքանչյուր վայրկյանին անգամ, այնուհանդերձ, համալսարանի նորօրյա ուսանողներին ցանկանում եմ ավելի լուսավոր մուտք և ավելի երջանիկ ելք՝ դեպի իսկական, խաղաղ ու ստեղծագործ կյանք:*

*Թող նոր ժամանակների բարերար շնչի տակ առավել զորանա և բողբոջակալի մեր երիտասարդությունը՝ մեր բազմադարյան արմատի կենդանությունը վկայող կանաչ ու կենսալի շիվերը:*

***1969***

## *ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Ուսանողական շրջանի բանաստեղծություններից

### ՄԵՌԱԾ ՊՈԵՏԻՆ

***Չարենցի հիշատակին***

Այնտեղ ամեն ոք կար, եղածի՛ց էլ ավել,
Միայն դո՜ւ րկայիր այդ ժխորում.
Լույս էր, տոն էր այնտեղ ու սիրալիր հրավեր,
Միայն քո՜ սրտից էր արյուն ծորում:

Այնտեղ խրախճանք էր. դռներն էին փակել,
Որ ներս չմտներ քո ստվերն հանկարծ,
Ահեղ շառաչելով քո աստղն էր ընկել,
Հանգել ոտքերի մոտ չնչին մարդկանց:

Ծողո՜ւմ էին դեմքերն ու ժպիտները գոհ,
Քո ստվե՜րն էր քայլում փողոցներով,
Չկար նրանց համար խրախճանքի մի գոհ,
Զոհվել էին դու քո մաքո՜ւր սիրով:

Կանչել էին նրանք բոլո՜ր գույնի մարդկանց,
Չէին հիշել միա՛յն, միա՛յն որբիդ,
Նրանք հրճվում էին ուրախությամբ անանց,
Կույր՝ քո տեսքի առաջ և խուլ՝որբիդ:

Կային այնտեղ լաքած ջենտլմեններ բազում,
Տպարված ու շքեզ շա՜տ մադամներ,
Նրանց ձեռքերում կար և՛ ձիթենի, և՛ սուր,
Նայած ո՛րը պիտի ի ցույց հանվեր։

Մեկն այնտեղ էր ընկել քծնանքով իր համառ,
Մեկը՝ իր սիզիֆյան համբերությամբ,
Մեկն՝ իր հույժ ու հատո՜ւկ ծառայության համար,
Իսկ մյուսն էլ այնպե՜ս, բախտի բերմամբ։

Կայինայնտեղ մարդիկ, որոնց խիղճն է զարթնում
Ո՛չ թե քնից առաջ, այլ քնի՛ մեջ.
Իսկ դու ստվեր դարձած՝ շրջում էիր անտուն,
Էլեգիական դեմքով, ճակատով պերճ։

Ցնծո՜ւմ էին նրանք, իրար բարձր երգում,
Իսկ դու վախճանն էիր սգում բախտիդ,
Նրանց համար փառքի լիություն էր կյանքում,
Ոչի՛նչ չէր մնացել քեզ, աղքատի՛դ։

Նրանց փոքրիկ սիրտն էր պայքում որսից հաջող,
Իսկ քո բանտված սիրտը զարկո՜ւմ էր թույլ,
Նրանք մտել էին այն սրահները ճոխ,
Իսկ քո դիմաց լո՜ւյս էր շուշանաթույր։

Իսկ քո դիմաց փայլով արևոտ ու չքնաղ
Ճանապարհներն էին ո՜ղջ աշխարհի.
Դու զնդանից ելած՝ քայլում էիր դանդաղ
Դեպի գագաթնե՜րը քո մեծ դարի։

***1940, 26 նոյեմբերի***

* * *

Ես երազում եմ չքնաղ մի գալիք,
Երբ աղմուկները չեն հուզի հոգիս,
Երբ սրտիս պինդը կդառնա մեղմիկ,
Երբ կմեղմանա ցավը մորմոքիս:

Երբ այս անդադար դեգերումներից,
Որոնումներից լուռ կհեռանամ,
Երբ վեհ ու պայծառ, անհոգ ու անբիծ,
Խաղաղ ու խորունկ, խոհուն կդառնամ...

Ախ, կգա՞ արդյոք գալիքն այդ լուսե,
Երբ իբրև օրոր, իբրև ամոքում,
Թումանյանի պես ի լուր ինձ ասեմ՝
Խաղաղությա՜նն եմ հասել իմ հոգու:

***1941***

## ՊԱՏԵՐԱԶՄ

Պայթեց պատերազմը...
Մնաս բարև, սե՜ր իմ,
Որ Զանգվի զառ ափին քաղում էիր վարդեր,
Վայրի, ճերմակ վարդեր...
Իմ լո՜ւյս, իմ մտերի՜մ,

Թողնում եմ քեզ ափին, հեռանում եմ արդեն,
Պայթեց պատերազմը...
Մայր իմ, մնա՜ս բարի,
Չհառաչես անհույս, արցունք դու չթափես,

Թող քո օրհնությունը ինձ հոգեպինդ պահի,
Թող ձյուն չիջնի գլխիդ, մինչ կիսեմ ես քեզ:

Պայթեզ պատերազմը...
Իմ հայրե՜նի երկիր,
Սո՛ւր տուր, հո՛ւր տուր դու ինձ և առաքիր ի մարտ.
Սիրտ իմ, չթալկանաս տանջանքից ու վերքից,
Մահից անգամ այս սուրբ, այս թանկ հողի համար:

Թայլատակի՛ր, սուր իմ, եռա՛, ջահել արյուն
Ցասում, հորդիր վարար, քո ափերից ժայթքիր,
Ահ, չքացի՛ր անդարձ, մահ, հեռացիր հեռու,
Ելի՛ր ահեղության տիտանական ոգի:

Զանգու, սեր իմ, մայր իմ, իմ հայրենի տնակ,
Մնա՜ք բարև...
Ողջո՜ւյն, փոթորիկ ու վրեժ,
Սլա՛ցիր մարտ, սիրտ իմ, զենք իմ, տեղա՛ կրակ,
Մահ ոսոխին զազիր, կյանք՝ մեր հողի՜ն հավերժ:

***1941, հունիս***

## ԶՈՆ
## Երևանի պետական համալսարանին

*Արդ ես քո սանն եմ, դու իմ հոգում*
*Հեղի՛ր նեկտարը քո զորության,*
*Տո՜ւր ինձ այն հուրը,*
*Որ դեռ հնում*
*Պրոմեթեոսն այն տիտանական*

*Բերեց քեզ համար երկնքից սեգ:*
*Իմ Այմա Մատեր, տո՛ւր ձեռքն իմ*
*Դպրության ջահը, որ ես երբեք*
*Չխարխափեմ իմ ճանապարհին:*

***1938***

**ԱԼԲԵՐՏ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**

## ԵՐԳ՝ ԳՐՎԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ

*Ո՜վ հանճարեղ Նյուտո՛ն, Դեկա՛րտ,*
*Եվ դուք՝ Էյլե՛ր, Շիրակացի՛,*
*Գիտության մեծ հայրեր հպարտ,*
*Եղեք այսօր մեծահոգի...*

*Շատ եմ տքնել, չեմ հասկացել*
*Ես ձեր լեզուն սինուսազարդ,*
*Եվ անդունդ են իմ դեմ բացել*
*Ֆորմուլները ձեր այդքան բարդ։*

*Հասկացել եմ աշխարհանուն*
*Պոետների երգերն հրկեզ։*
*Աա՛, ինչո՞ւ չեմ հասկանում*
*Ես քո լեզուն, բարի տանգես։*

*Քունս կտրած՝ անգիր արի,*
*Ինչքան թիվ կար, ալֆա, սինուս,*
*Մնացել եմ հիմա լցված*
*Ու չեմ գտնում փրկության հույս։*

*Հասել եմ ես իմ մուրազի*
*Երազային դուռը շքեղ,*
*Այս կամուրջն է մնում մազի,*
*Մի քար է պետք, մի ոտքի տեղ։*

*Մի՞թե պիտի ընկնեմ ես վար,*
*Ու ծուխ դառնա իմ կյանքը բոց,*
*Թաղեմ սրտիս հույզերն անմար,*
*Մնան բախտիս դռները գոց:*

*Ո՜վ հանճարեղ Նյուտո՜ն, Դեկա՜րտ,*
*Եվ դուք՝ Էյլե՜ր, Շիրակացի՜,*
*Ազատեցեք թվերից բարդ,*
*Ֆորմուլներից այս անհոգի...*

***1939***

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ**

## ՓՆՏՐՈՒՄՆԵՐ

*Երգի ստեպում հազար շավիղներ,*
*Հազար արահետ, ճամփաներ բազում,*
*Ինչքա՜ն սեգ քնար, քանի՜ տավիղներ,*
*Ինչքա՜ն հնչյուններ, մտքեր երազուն:*
*Բայց այդ բազմուղի լաբիրինթոսում,*
*Ուղիներում այդ հեշտին ու դժվար*
*Ընկած երգերի հերկած ակոսում,*
*Դարձըրել եմ ինձ խոհերի ավար,*
*Խոհերի առաջ՝ թեքած պարանոց,*
*Խոհերի առաջ՝ մի նվաստ հոգի,*
*Խոհերի առաջ՝ խեղճ ու վարանոտ,*
*Խոհերի առաջ՝ բարդ ու անմեկին...*

*Կյանքն էլ է այդպես անընդգրկելի...*
*Նրա սկիզբը – բազմատրոփյուն,*
*Ներկան – մահվան պես հար, անհերքելի,*
*Նրա առօրյան – պայքար ու կոփում:*
*Կյանքն էլ է այդպես դժվար ու հեշտին*
*Վերխոյացումով, վարիջումով լի.*
*Կյանքն էլ ողջույնի և հրաժեշտի*
*Համբույրներով է անհիմանալի:*
*Կյանքն էլ է նրբին, կյանքն էլ պահանջկոտ,*
*Կյանքը կարոտ է իր երգը լսել,*

*Կյանքը – պճնըված, բայց նաև բոկոտն,*
*Կյանքը – մշուշոտ, կյանքը – վառ, լուսե ...*

*Ու այդ կյանքն ահա ինչպե՞ս ընդգրկել,*
*Ծավալը չափել երգի մենզուրով...*
*Երգերը՝ գրված երգերից գրքե,*
*Կարո՞ղ են միթե անձրևաջրով*
*Օծանել կյանքի դեմքը բազմանիստ,*
*Պատկերել նրան... դողանջը զոնե*
*Որպես ցոլք ու փայլ սըփռել հանգիստ,*
*Որպես եղածի նկար անգունեղ*
*Մատներով վարպետ լավ ուրվագծել,*
*Այնպես, որ կյանքը չըայլանդակվի,*
*Որ չըխառնվեն բծեր ու գծեր*
*Եվ կյանքն անկաշկանդ, գեթ չըվանդակվի...*

*Ու դրա համար իմ մանուկ հոգով,*
*Իմ անվարժ գրչով, թույլ ուժերով իմ,*
*Իմ հայրենիքի երկնքի ներքո*
*Պիտի երգեմ նորը բոլորովին:*
*Պիտի կաշկանդված իմ հոգին սուրա,*
*Ինչպես հողմը խենթ փոթորկի ժամին,*
*Թափառի անհաս եզերքի վրա,–*
*Պայծառ գալիքի սեգ ճանապարհին:*
*Պիտի իմ երգը ծնվի կյանքի մեջ,*
*Կյանքի գրկի մեջ... Կյանքից գոյացած*
*Պիտի որ դառնամ կյանքի բանաստեղծ,*
*Կյանքի զորությամբ բարձր խոյացած:*
*Ու դրա համար ծառանամ պիտի*
*Հին անեծքային օրենքների դեմ,*

*Որ երգս կապի ծիածան-գոտի,*
*Որ հոգիս դառնա խնդության եդեմ:*
*Ու պիտի շուռ տամ գլուխս հպարտ*
*Բյուր ճամփաներից, շավիղներից բյուր,*
*Ինչպես աքսորից փախած թիապարտ՝*
*Թափառումներին տամ հազար համբույր…*
*Պիտի ջարդոտեմ ամեն մի կապանք,*
*Ամեն մի շղթա՝ հոգիս կաշկանդող,*
*Որ կյանքը երգիս մեջ էլ մնա կյանք,*
*Որ չլինեն տողեր՝ խոհերիս բանտող…*

*Եվ ահա հոգիս այս հուզումով լի*
*Կանգնած է ահա լուռ ու վարանոտ*
*Բյուր ճամփաներում անիմանալի,*
*Քայլելու համար գեթ ուղու կարոտ…*

*Կանգնած է նա լուռ… Ու չի ընտրի նա*
*Բյուր ճամփաներից ո՛չ մի արահետ,*
*Այդ ճամփաներից և ոչ մի ճամփա,*
*Չի ձուլի նրան վառ գալիքի հետ:*
*Ու կանգնած է նա… կուրծքը բաց արած*
*Անհայտ կողմերից եկող հողմերին,*
*Թափառող ու սուր հայացքը հառած*
*Դեռ անտես, անգո, վես ճանապարհին…*

*…Հին ճամփաների լաբիրինթոսում*
*Որպես գնացող անտես իոններ,*
*Տենչանքներն իմ, արդ, հեռու են հոսում,*
*Իսկ ես, որպես մի խիզախ պիոներ –*
*Ձեռքիս գրիչ մի՝ դեռ անփորձ, անվարժ,*

*Հոգուս մեջ – ձգտում, գլխիս մեջ – խոհեր,*
*Որպես շեփորման մի նոր Բեթհովեն:*
*Իսկ եթե հանկարծ հրացանը իմ*
*Դեռ չըկրակած անօգուտ պարպի,*
*Թող այս երգը իմ՝ հոգուս մտերիմ,*
*Դառնա իմ հոգու երգը կարապի...*

***[1941]***

## ՎԱԿԽԱՆԱԼԻԱ
## (Մահվան հանդեպ)

«Եթե մահը մեր բժիշկն է,
Մենք էլ կունենանք մեռնելը
դեղատոմս...»
**Վ. Շեքսպիր**

### I

*Մ՛րդ, երբ խինդով է երեկոն իջնում,*
*Եվ ա՛րդ, երբ պիտի շուտով ես գնամ,*
*Երկնող խոհերը այս երգն են ծնում,*
*Որ հոգու թռիչք, բայց և երգ է նա...*

*... Ես նոր մի պոետ, անհայտ տակավին,*
*Խոհերի անտես մակույկին նստած,*
*Չըգիտեմ արդյոք կլինի՞ քամի,*
*Որ առաջ մղի իմ առագաստը,*
*Թե՞ ինքս պիտի շապիկն իմ՝ կայմին*
*Առագաստ շինեմ, նոր լինեմ վստահ,*
*Որ երգն իմ նորեկ, նավը իմ գանձի*

*Պիտի ընթանա օվկիաններ ի վեր*
*Եվ փոթորկածուփ ծովերում անծիր –*
*Որպես գայլիքի անմարմին նվեր,*
*Պիտի շնչով իր անանձնապատկան*
*Վառվի որպես վես, սրբազան պատգամ…*
*Խոհերիս վրա վստահ եմ… նրանք*
*Ոգուս Ծիր-Կաթնի աչքին են հառնում,*
*Բայց անզորությամբ – անհուր, անկրակ –*
*Նրանք խամրում են, մոխիր են դառնում,*
*Քանզի լեզուն մեր խոհերի հանդեպ*
*Վառվում է ցրտին սառնությամբ անգույն,*
*Անզոր – հայտելու խոհեր բազմադեմ՝*
*Այրվում է նրանց աննյութ կրակում:*
*Խամրում է խոհը, մարում, թրթռում,*
*Ինչպես ջրահեղձ խռխռում երկար…*
*Նա այնքան հարո՜ւստ… բայց իմ թերթերում*
*Նա քարշ է տալիս իր աղքատ ներկան:*
*Ահա թե ինչո՛ւ եմ ես անվստահ*
*Եվ ահա ինչո՛ւ եմ ես վարանում,*
*Որ գուցե երգս չլինի վարարուն,*
*Կամ չըգա՝ խրտնած նժույգն իր նստած…*

*Բայց ի լուր համայն սրտերին բոլոր,*
*Սրտերին բազում և բազմալեզու,*
*Արդ, խոհերը խոր ու մշտահոլով*
*Իրենց ջահերով իմ սիրտն են կիզում…*
*Նրանք իրենց խոլ ձիերին բազմած*
*Օղակել են ինձ, ուզում են կարծես*
*Անտես, աննկատ դաշնություն կազմած*
*Խեղդել ինձ իրենց ճիգերով անձև…*

*Եվ եթե երգս չլինի վառված*
*Հոգիս հրկիզող ջահերով ջերմին,*
*Թող ներեն բոլոր սրտերը – հառված*
*Իմ այս տողերի խորունկ աչերին…*

**II**

*Ե՛վ ահեղ, և՛ մառ օրեր են բացվում*
*Իմ երկրի վրա՝ խնդությամբ արբած…*

*Օրերն այդ մի հին անեծք են, Աստծո՝*
*Ծեր ժամանակի շրթներից թափած…*
*Անեծք մի, նման կարոտին անձուկ,*
*Նման հայեցող ոգու մորմոքին,*
*Որ սպասումով մեր սիրտն է խանձում.*
*Եվ չի հայտնվում սակայն ոչ ոքի…*
*Եվ այդ անեծքը հասել է, արդ, իր*
*Կատարման վերջին, մեն-միակ կեռին,*
*Որով աշխարհը պիտի որ արդեն*
*Դադարի լինել անեծքին գերի…*

*Բայց վերջին կեռը, վերջին կեռը, օ՜…*
*Վերջին կեռը, օ՜, շատ է մահաբեր…*
*Մի աստվածային անգո, սին կեռով*
*Կախվել կարող են միլիոն և ավել*
*Հոգիներ… թեկուզ, թեկուզ հանճարեղ…*

*Ահա նույն կեռից կախվել են օրեր*
*Ե՛վ արյունալի, և՛ ահեղ կարի,*
*Ցանկալով մահվան թույնով վրդովել*
*Հանգիստը երկրի մեր չնաշխարհիկ…*

*Եվ ելել ենք մենք մեր այգաբացով,*
*Մեր ուժով համակ, վաստակով արդար,*
*Ջնջելու չարիքն այդ արյունացոլք,*
*Կոտրելու վերջին կեռը այդ խարդախ,*
*Վերջին տերերին այն ժանտաբարո*
*Եվ իշխաններին բոլոր այն արբշիռ*
*Խեղդելու իրենց իսկ արնակարոտ*
*Հատուցման ծովում – անտես, անկշիռ...*

*Այդ բախումն է խոլ այն իրարամերժ*
*Զույգ աշխարհների, խավար ու լույսի,*
*Կենաց ու մահվան բախումը հավերժ,*
*Բախումը կյանքի և մեռնող հույսի...*
*Այդ բախումով է լի ուղին կյանքի,*
*Եվ կյանքի ուղին ինքնին բախում է.*
*Բախումը միշտ էլ հոգու գրկանքի*
*Պտուղն է հասած, և բաբախում է*
*Կենաց ու մահվան, ծեր ու մանուկի,*
*Հար գոյության ու անգոյության հետ,*
*Որպես արգասիք հար ժամանակի,*
*Բարիք՝ չարիքի շպարով անհետ...*

*Արդ ժամն է հասել, գնում եմ ես էլ*
*Դեպ մարտնչող մեր այն բազմագունդը,*
*Ուր մահը անվախ սրտեր է տեսել,*
*Ուր ուռճանում է հաղթության հունդը...*
*Գնում եմ ես էլ ցանեմ մի հատիկ*
*Այն գալիքնահունձ լայն մարգագետնում,*
*Որ չըդառնա մեր աստղը մահատիպ,*
*Ժանտաժանտ, դժնի աշխարհի մթնում.*

*Որ անծիր երկնում մեր բազումաստեղ*
*Օտար մի թռչուն խենթ չըսավառնի.*
*Որ Կարմիր Ոգուն մեր չըպատվաստեն*
*Ոչ մի գոսական ճյուղ, ոստ եղեռնի.*
*Որ կապուտաչյա ջրերում մեր ջինջ,*
*Օվկիանոսներում անգամ սառցանիստ*
*Ո՛չ մի խորթ մակույկ, առագաստ ոչ մի*
*Չըլողա, այնտեղ չգտնի հանգիստ.*
*Որ հայրենիքիս արդարավաստակ*
*Հողը մի օտար ոտք չըտրորի,*
*Որ այնտեղ մարդը՝ հոգով անկաշկանդ,*
*Գալիքի հազար հույսեր օրորի...*

*Այդպես, ուրեմն, գնում եմ ես, ա՛րդ,*
*Դեպի մարտնչող մեր բազմագունդը,*
*Ես – անհայտ պոետ մի երիտասարդ,–*
*Դեպ այնտեղ, ուր մեր հաղթության հունդը*
*Ուռճացած պիտի ծլի հողմածեծ*
*Օրերից հետո... օրերի մուժում,*
*Որ թշնամական հույսը մահամերձ*
*Երբեք ու երբեք չգտնի բուժում...*
*Ու գիտեմ սակայն պարզությամբ վերուստ*
*Եվ մշուշապատ խոր գիտակցությամբ,*
*Գիտեմ, որ հանգիստ, անմահ, անկորուստ*
*Չէ, որ կըծլի հունդը հաղթության...*
*Գիտեմ, որ մահը շռայլ է այնտեղ*
*Իր դառնապատիր գգվանքների մեջ,*
*Եվ տևողությամբ մի ակնթարթե*
*Շատ կարելի է գտնել մահվամբ վերջ...*

*Ուրեմն գունատվի՞ հերոսությունն իմ,*
*Մին գոյությունն իմ դառնա՞ մի առանցք –*
*Վախկոտության հին մազութով յուղված...*

*Ուրեմն դալկանա՞ մահվան սառն շնչից*
*Արհամարհանքն իմ՝ սին մահվան հանդեպ,*
*Եվ մոլեգնակամ վրնջող իմ ձին*
*Դառնա՞ նապաստակ – վախկոտ ու անդեմ...*

*... Թո՛ղ որ ես լինեմ Կապլան էսերկան –*
*Իմ Առաջնորդի կյանքի դեմ դավող՝*
*Եթե առկա է երգիս շեփորին*
*Այսօր կեղծիքի շպար կամ օքսիդ,*
*Եթե անապակ երգիս սափորին*
*Կաթում է անջինջ, պղտորող մի շիթ...*

*Ուրեմն զգացմամբ մի անկեղծ ու խոր,*
*Մի վերջին սիրով,– ամենայն ուրույն՝*
*Որպես մաքառող անհանգիստ մի խոհ –*
*Գնում եմ դեպի մի անագորույն,*
*Դաժան մի հանդես, ուր մահն է դյութում*
*Բյուր հոգիների, ուր ընկերներն իմ*
*Խեղդվել են հսկա ջրապտույտում –*
*Անզոր – ուժի դեմ՝ դժխեմ, ոխերիմ...*

*Գնում եմ այնտեղ և սարսում չունեմ*
*Ես մահվան հանդեպ – մոլի և անգութ...*
*Եվ անվախության սրտերն աճում են*
*Իրար հաջորդող օրերի հանգույն...*
*Գունատվի՛ր, ո՛վ մահ... Չարագույժ ագռավ,*

*Դո՛ւ աներևույթ, անտես բորենի,*
*Անգոյության հուր – աննյութ, անկրակ,*
*Դու թունոտ անչար, տեսքով ցորենի…*
*Դու, որ անտես ես, դու, որ աննկատ,*
*Դո՛ւ, որ անձև ես չար կասկածի պես,*
*Խանդի պես սնվող – անստինք, անկաթ,*
*Վրեժի նման անվրե՜պ այնպես…*
*Դո՛ւ, որ կասկածի, վրեժի, խանդի*
*Նման շարժվում ես աննըկատ, անկանգ,*
*Սակայն նրանց պես, ի հնուց անտի*
*Արևի պես վառ, հայտնի ես դառնում*
*Ինչպես և նրանք*
*Որպես հետևանք…*
*Նման ասուպին – երկնքով անցնող –*
*Աչքերի հանդեպ անտես, աննըկատ,*
*Բայց հետևանքով՝ իրենից ծնող –*
*Վառ, տեսանելի և ռոշնական…*

*Գունատվի՛ր, ուրեմն, դալկացի՛ր, սողա*
*Խյուրդի նման կամ ինչպես սողուն,*
*Եվ իմ (օ՜, ո՛չ, մեր) շնչից դողդողա՝*
*Մալարիայից են ինչպես դողդողում…*

*Դո՛ւ, որ գոյության բյուր հազար կանթեղ*
*Մարել ես դաժան քո սառըն շնչից,*
*Դո՛ւ, որ եղել ես հաղթական, քան թե*
*Քո որդին – կյանքը՝ քո հանդեպ շնչին,*
*Արդ պիտի փոխենք հին դերերը մենք*
*Ներդաշնակությամբ օրինածնիչ*
*Եվ պիտի դողաս ինձանից, ո՛վ նենգ,*
*Ինչպես կանթեղը սառն ածխածնից:*

*Քանզի ես ահա գալիս եմ քո դեմ*
*Հոգուս մեջ ծիծաղ, բաքոսյան խնջույք,*
*Մի Վակխանալիա, մի ուրախ հանդես,*
*Մի աստվածային խրախճահաճույք...*
*Քանզի գալիս եմ դեպի քեզ, անգո՛ւթ,*
*Գիտցած լինելով ինչո՞ւ եմ գնում –*
*Մեռնելու հավետ, կորչելու անփույթ,*
*Գիտցած լինելով ինչո՞ւ եմ հագնում*
*Քո քղանցքը սև և իրանապիրկ,*
*Ինչո՞ւ եմ այսքան շատ վաղ հավաքում*
*Դեռ նոր բաց արած ծիրանահագի*
*Առագաստը իմ, այս ուրախ կյանքում...*
*Քանզի գիտեմ ես, որ գնում եմ դեպ*
*Մի մահ, որով ես մահից խուսափում*
*Եվ գալիքնագա օրերի հանդեպ*
*Մնում եմ անմեռ, ապրում եմ, ապրում...*

*Քանզի գիտեմ ես, որ մահն է բժիշկ*
*Այսօր, հաղթական այս պատերազմում*
*Եվ վախճանական մեռնելն իսկ և իսկ*
*Դեղատոմսային կույտեր է կազմում...*
*Ուրեմն մեռնելը բարիք է այսօր –*
*Հագած չարիքի լպրծուն մորթի,*
*Եվ մահը դաժան ազդակ է հզոր –*
*Աշխարհ բերելու մի անմահ որդի,*
*Երկունքի գահին նստեցնելու*
*Ծեր ժամանակին, որի արգանդում*
*Մի դեպք է միայն մնում ծնելու –*
*Աշխարհասասան նոր ուժով անդուլ...*

## ՍՈՆԵՏ
## (XXX)

Սիրելի **Սուսաննային`** սիրով

*Երբ կարդան տողերս, կկարծեն, թե շատ եմ շռայլ,*
*Առատ են ձոներս քեզ և շատ եմ ձոնում «սիրով»*
*Եվ իմ շռայլության հանդեպ, կասեն, լուռ է սիրող*
*Սիրտըդ, համր է կանչիս և լուսո հանդեպ իմ մռայլ:*

*Չէ՞ որ, կասեն, պոետն է միշտ զեղումներով շվայտ,*
*Զգայաբարի զույգ ոտներով ամենուր թառած,*
*Եվ սիրով, ոնց սերը կաթի,– հազար սրտի վրա սառած,*
*Այդ ամենը, իհարկե, ճիշտ է, և բնավ զրպարտանք չէ այդ:*

*Ես երջանիկ եմ, որ ունեմ միջոց սիրտս տալու,*
*Որ հազար այլ սրտեր դիտեն նրան սիրով, ոխով,*
*Սակայն ինչպե՞ս հայտնես դու սերդ, առանց ժպտալու...*
*Եթե նրանք իջնեն սրտիդ խորքերը խո՜ր, անպա՜րփ,*
*Սիրուս տաճարի քուրմ, հավետ մաքրամաքուր իմ քույր,*
*Կըզգան, թե որքա՞ն եմ ժլատ, դեռ որքա՜ն եմ պարտ...*

## ԶՂՋՈՒՄ

*Ճաշակած մայրական գգվանքի հետ կարոտիդ լեղին,*
*Մարմնական հանգստի հետ՝ հոգու խռովք,*
*Թույլ տուր այսօր, քույր իմ, դարձնել քեզ արնոտ*
*կառափնատեղի,*
*Եվ ինձ մորթել այնտեղ մեղանչման և զղջման անագորույն*
*սրով...*

*Քանզի դու էիր միայն՝ հասկացար ապրումներս խելագար,*
*Անկումներս՝ թռիչքից առաջ, դժգոհ հայացքս՝ թռիչքից*
*հետո.*
*Տեսար միտքս – գայլի պես անկուշտ, գայլի պես ագահ,*
*Լսեցիր տիրական ճախրանքը ոգուս, որ զարկվում է լոկ*
*հանճարի նետով:*

*Քանզի դու էիր՝ անսարսուռ իջար հոգուս վիհերն ի վար,*
*Հոգուս անհունները – մռայլ, ահալի, անհատակ,*
*Ուր լպրծուն են ծերպերը, քարանձավներն – ամայի,*
*քարափները – խավար,*
*Ուր պատահմամբ ընկածին կյանքս թվում էր անմիտ և*
*երգս՝ անախորժ կատակ:*

*...Սակայն դու անհատակ վիհերից այդ ելնելով անելարան,*
*Երջանիկ և գոհ ժպիտով մի, որ հատուկ է գանձեր պեղող*
*մարդուն,*
*Հասկացար, որ հրաշք էր կյանքս – անհունորեն հարուստ և*
*գերառատ...*
*Տեսար այնտեղ արարիչներ – երկնող, արքաներ –*
*անթագակիր և դևեր – մշտարթուն:*
*Ըմբոշխնեցիր ցավով՝ անդառնալի հաճույքի հետ միասին,*
*Քաղցր ու դառն շիճուկներն իմ՝ սրբագործված արյունիս*
*մեջ,*
*Սերս հավերժորեն խոստումնալից և վայրկենապես*
*խաբուսիկ,*
*Հոգիս, որպես հավերժ մատյան և մարմինս՝ նրան*
*գրքակալ...*
*Չխնդացիր, երբ հիվանդ էի հոգով՝ առանց պատճառի և*
*անցավ,*

*Չլքեցիր, երբ լքեցի քեզ-անգետ, քո հոգուն, քո լույսին*
*կույր,*
*Եվ խոստումի ու սիրո, և դրժման ու լքման մեջ ինձ*
*հասկացար,*
*Կեղտով ապական հոգիս դիտելով՝ անբիծ ու մաքուր...*

*Եվ հիմա ես, անցած անվերադարձ ճանապարհի կեսից*
*Ետ նայելով, քույր իմ, ի՞նչ խոսքերով արդյոք արդարացում*
*հայցեմ,*
*Ինչպե՞ս հասցրնեմ քեղ զղջման երգն այս իմ,*
*Երբ սերըս – սուրհանդակ՝ անհանգրվան անցել*
*Եվ իր հետ տարել է սրտիդ մերձենալու անկրկնելի*
*հասցեն...*

***1942***

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ

*Սիրելի իմ, հարազատ իմ, ընկեր իմ,*
*Որ հանգչում ես այժմ անհայտ մի խորշում,*
*Զահել սրտով, անկնճիռ ու անխորշոմ,*
*Դու իղձերիս, ապրումներիս մտերիմ:*

*Ես – եղբայրդ՝ տվայտանքով քո հոգու,*
*Ես – ընկերդ՝ սրտիդ զարկով բաբախող,*
*Հարազատըդ փարված կրծքիդ սրախող,*
*Մի վառ հույսով խոր վերքերդ եմ ամոքում:*

*Գուցե վաղը ես էլ թաղվեմ մի խորշում*
*Կույր ու դաժան մի գնդակով՝ բութ արճիճ,*
*Թաղեմ ճակատն իմ անկնճիռ, անխորշոմ:*

*Ու թող մեռնենք, եղբայր, սիրով ու անճիչ,*
*Վառ հավատով, որ սերունդները անցավ, –*
*Կկերտեն մեզ փառքի անմահ հուշարձան...*

***[1942]***

## ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

### ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐ

**Հրանտ Թամրազյանին**

*Մեզ պետք չէր ոչինչ – գիննետան թախիծ,*
*Իսկ հետո՝ կապույտ քո հայացքը, Տեր,*
*Տողեր էին պետք չարենցյան տաղից*
*Ու երևանյան ամայի մայթեր...*

*Շներն էին պետք՝ անտեր ու անտուն,*
*Որ մեր հետքերով լուռ ու մունջ գային,*
*Ու երբ նստեինք, նստեին տրտում,*
*Ու երբ ոռնայինք, մեզ հետ ոռնային:*

*Իսկ մեր ոռնոցը շատ էր ահավոր,*
*Իսկ մեր արցունքը շատ էր անարատ, –*
*Առաջին սիրո թախիծն էր նա որբ,*
*Եվ հանճարների մահվան պատարագ:*

*Մեզ պետք չէր ոչինչ – մի բուռ ծխախոտ,*
*Որ կուշտ ծխեինք գիշերվա կեսին*
*Եվ դառնությունն այդ անզոր մի ոխով*
*Փչեինք այս նենգ կյանքի երեսին:*

*Զնգում նաիրյան արծաթե առուն,*
*Աստղերի ցողն էր մեզ վրա կաթում,*
*Այնքան էինք մենք տխրորեն հարուստ,*
*Որ լուսաբացն իսկ չէինք նկատում:*

*...Ի՞նչ է կատարվել, չգիտեմ, ներիր,*
*Հին մայթերն արդեն մեզ չեն ճանաչում,*
*Իսկ որբությունն այն անտուն շների*
*Մեր այս որբության վրա է հաչում...*

***1990***

## ԱՐԵՎ ՇԱՏՅԱՆ

### ԵՐԳ ՀՐԱԺԵՇՏԻ

*Մարդկանց կյանքերի թելերը անտես*
*Ոլորապտույտ ճամփեքի նման*
*Ձգվում են տարբեր հորիզոններով՝*
*Մերթ մոտենալով, մերթ հեռանալով,*
*Մերթ կյանք - ընթացքի ինչ-որ հատվածում կազմելով*
*հանգույց...*
*Հաղթահարելով խոչընդոտները անդուլ վերելքի՝*
*Հասել եք արդեն ձեր ուղիների*
*Ճամփաբաժնին այն հեքիաթային,*
*Որից կձգվեն ապագա տանող*
*Կարմիր թելերը ձեր ստեղծագործ արևշող կյանքի...*
*Արդ, իրավունքով այն սերմնացանի,*
*Որ առատ բերք է լոկ ակնկալում,*
*Որպես արգասիք անդուլ տքնանքի,*
*Այս հանդիսավոր, սրբազան պահին*
*Հայտնում եմ սրտանց խորհուրդները իմ.*
*«Ձեր արևաբաղձ երթի ընթացքում,*
*Թե արգելքների հանդիպեք հանկարծ՝*
*Լարեք ձեր միտքը ու կամքը համառ*
*Ամեն խութ ու կապ անցնելու համար,*
*Քանզի ետդարձը ուղիով անցած*
*Ճիգ ու ոգորում և իմաստություն երբեք չի հայցում...*
*Խոսքն օգտագործեք դուք զենքի նման՝*

*Գործածելով այն միայն անվրեպ նշանառությամբ:*
*Քանի որ խոսքը ճշմարտություն է դառնում զորավոր,*
*Թո՛ղ ձեր խոսքը միշտ լինի ծանրալիցք ու զրահավոր...*
*Ուր էլ որ լինեք՝ հեռու թե մոտիկ,*
*Մանուկների հետ, թե ծերերի մոտ,*
*Շրջանում մարդկանց, ծանոթ-անծանոթ,*
*Եղե՛ք կենսուրախ, եղե՛ք կրակոտ,*
*Եվ հայրենասեր, և հայրենասեր...»:*

***1981***

## ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՆ ՇԵՆՔՈՒՄ*

Էն զիլ ձեներն են մենակ
Իմ ականջում մնացել...
**Հովհ. Թումանյան**

*Լսում եմ ծանոթ ձայներ ու ծիծաղ,*
*Տեսնում եմ դեմքեր՝ վաղուց հեռացած,*
*Եվ հին օրերի պատրանքը չքնաղ*
*Հայացքիս հանդեպ հառնում է հանկարծ:*

*Չորս կողմս աղմուկ և անվերջ շարժում,*
*Ալիքներ անցնող-դարձող խմբերի, –*
*Ամեն ինչի մեջ զգում եմ, շնչում*
*Գորով ու թրթիռ ջահել սրտերի:*

* Ինչպես շատ ավագ համալսարանականների, այնպես էլ ինձ համար Երևան պետական համալսարան հասկացությունը կապվում է նախևառաջ այն եռահարկ սև-տուֆակերտ շենքի հետ, որը գտնվում է Աբովյան փողոցի վերին մասում: Այդ շենքը խորհրդանշում է իմ սերնդի երիտասարդությունը և այն ամեն գեղեցիկը, ինչ հատուկ է մարդկային կյանքի այդ հասակին:
Վերջերս ես եղա այդ շենքում, որը, համալսարանին վերադարձվելուց հետո, դեռ գտնվում է կիսավեր վիճակում, սպասում է հիմնական վերանորոգման: Շրջեցի դատարկ միջանցքներում, կանգնեցի փակ լսարանների առջև, որոնց հետ կեսդարյա վաղեմության շատ անմոռաց հուշեր են կապված: Այս ամենը ինձ խորապես հուզեց, և երբ ես ցանկացա այդ մասին գրել, զգացի, որ իմ ապրումները կարող են համարժեք արտահայտվել միայն չափածո ձևի մեջ: Մի պահ կարծեք արթնացան իմ պատանեկան տարիների բանաստեղծական հակումները, և ծնվեցին այսպիսի տողեր (ծանոթ.՝ հեղինակի):

*Թվում է՝ այժմ էլ դռներից այն կողմ*
*Սևեռուն դեմքեր լսում են, գրում,*
*Հարցեր են քննում և վիճում կրքով*
*Մինչ գիշեր ձգվող ժողով-նիստերում:*

*Բայց ոչ. շուրջս մեծ լռություն է դեռ,*
*Եվ... չքանում է տեսիլքը արդեն,–*
*Միայն փակ դռներ, խունացած պատեր,*
*Որ սառն ու խոժոռ կանգնած են իմ դեմ:*

*Եվ, պատրանաթափ անցած հուշերից,*
*Հայացքս տխուր ներկայից շրջած,*
*Ես փայփայում եմ երազ մի ուրիշ,*
*Որ ապագան է բերելու ընծա:*

*Տեսնում եմ ահա լուսահորդ մի օր,*
*Երբ որ կբացվեն այս դռները փակ,*
*Եվ պատանեկան շունչը թևավոր*
*Կճախրի այս հին կամարների տակ:*

***1998***

## ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ

*Վաղուց եմ օրոցքս թողել մանկան,*
*Ու չինջ պատանությունն իմ երազուն,*
*Այս կյանքն իմաստուն է ու խորն այնքան,*
*Եվ ես ուսանում եմ նրա լեզուն:*
*Լսարանն իմ մեծ է՝ մի ողջ աշխարհ,*
*Իմ առջև օրերն են բացվել խաղաղ,*
*Եվ գրում եմ նրանց թերթերին վառ*
*Մեր անծիր երկրի մասին անվախ:*

*Նորից իմ քրտինքն է առատ հոսում,*
*Ելնում են շենքերը մեր բազմահարկ,*
*Հարազատ մուրճիս լեզվով խոսուն*
*Քննություն եմ հանձնում և ստուգարք,*
*Որ վաղն ինձ իրավունք տրվի հաստատ՝*
*Ուսանելու կյանքի կուրսում հաջորդ,*
*Որ վաղն հրճվանքով, հոգով հպարտ*
*Ես գալիքի ձեռքը սեղմեմ կրքոտ:*

*Իսկ երեկ, երբ ամբողջ հողագնդում*
*Դոփում էր նժույգը պատերազմի,*
*Զինվորիս հաղթական երթն էր թնդում*
*Դեպի Բեռլին, դեպի որջը ռազմի.*
*Ավտոմատիս ձայնով հատու ու զոռ*

*Կրկին ես քննություն էի հանձնում,*
*Խոսքս հրեղեն էր, խոսքս հզոր,*
*Եվ դիպուկ էր... հարցրեք այդ թշնամուն:*

*Վաղուց հասկացել եմ կյանքի լեզուն,*
*Նրա դառնությունն եմ ճաշակել խոր,*
*Իսկ ոռնոցից մահի ես չեմ սարսում,*
*Եվ դա ստուգված է մինչև այսօր:*
*Ու կարող եմ ցույց տալ ես աշխարհին*
*Ստուգման գրքույկս – սիրտս ահա:*
*– Կարդացե՛ք, էջերում՝ գրված է «հինգ»,*
*Եվ բացել եմ արդեն էջը վաղվա:*

***1948***

## ԱՐՏԱՇԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ

### ԻՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

*Այնքան վաղուց չէ, որ խոյացել են*
*Շենքի հարկերը այս լուսաշող,*
*Այստեղ իմ հայրը մի օր գործել է*
*Եվ այս քարերն է տաշել ողորկ:*

*Հենց օրերում այն նա երազել է*
*Այս քաղցր պահը, որ չունի վերջ,*
*Եվ զգացել է այս եռուզեռը*
*Իր մուրճի խրոխտ ձայների մեջ:*

*Սա հարազատ իմ համալսարանն է,*
*Որ կառուցել է հայրս մի օր,*
*Ու ես մտնում եմ իմ լսարանը՝*
*Որպես բաղձանքն իմ երջանիկ հոր:*

*Ընդմիջման պահն է, բայց ինձ պատում է*
*Խոր համոզմունքը, ու դեռ հանդարտ*
*Իմ դասախոսը կարծես պատմում է,*
*Որ Աբովյանը գնաց Դորպատ:*

*Եվ րոպեները գալիս անցնում են*
*Եռուզեռի տակ մի սրտահույզ,*
*Ես պատուհանը նորից բացում եմ,*
*Եվ իմ մտքերը թռչում են դուրս:*

*Ու Աբովյանը վերից ժպտում է՝*
*Մեզ իր հայացքը հառած հպարտ,*
*Եվ նա գիտե, որ սա իր լույս տունն է,*
*Որ թոռներին իր պետք չէ Դորպատ:*

*Եվ ինձ թվում է՝ բոլորն ինձ հետ են...*
*Իսկ իմ մտքերը այս վեհ ժամին*
*Ասես մի խորունկ ու հորդուն գետ են,*
*Որ պիտի կյանք տան Հայաստանին...*

***1951***

## ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

### ԶՈՀՎԱԾ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

*Հայրենական կռվից հաղթանակով դարձել,*
*Ուսանող եմ ես արդ հայոց մայր կաճառի,*
*Արյան ծովերով ու բոցերով եմ անցել,*
*Ընկերներով իմ քաջ որջն եմ փակել չարի:*

*Ու երբ մտքիս մեջ խորասուզված մի պահ*
*Նորից հայրենական մարտերն եմ ավարտում,*
*Այն վայրերն եմ հիշում, այն արնաներկ ճամփան,*
*Ուր ընկերներս ընկան հերոսական մարտում:*

*Նրանք ընկան հպարտ փառքի վեհ դիրքերում,*
*Իրենց աչքերը վառ դեպ հաղթանակ հառած,*
*Նրանք ընկան, երբ մեծ այգն էր շառագունում՝*
*Արյան կաթիլներից իրենց ծնունդ առած:*

*Մենք թաղեցինք նրանց ցավով ու կսկիծով,*
*Լռկ խաչափայտ դրինք շիրիմների վրա,*
*Եվ մեզ հետ տարանք մենք նրանց զայրույթը ծով,*
*Մինչև ընկավ վերջին դահիճը հիտլերյան:*

*Հաղթանակով դարձին նույն վայրերը մեր դեմ,*
*Նույն գետերն էին մեզ ճամփա տալիս կրկին,*
*Սակայն մենք չտեսանք հուշախաչերն այնտեղ,*
*Մեր դեմ կանգնած էին շիրմարձաններ փառքի:*

*Արձանացանք մի պահ այդ կոթողների տակ,*
*Այդ կոթողների պես անխոս ու գլխաբաց,*
*Եվ հյուսեցինք մի-մի փարթամ ծաղկեպսակ,*
*Նրանց արյան պես վառ՝ նվիրեցինք նրանց…*

*Արդ գարունն է գրկել խաղաղ իմ լեռնաշխարհին,*
*Եվ հնչում է ուժգին երգը աշխատանքի,*
*Ես հիշում եմ կրկին զոհված ընկերներիս,*
*Որոնց թափած արյամբ հասանք հաղթանակի:*

*Շատ են հեռու ինձնից շիրիմները նրանց,*
*Բայց մոտիկ են սրտիս և հարազատ այնքան,*
*Որ թվում է՝ այստեղ գրկում եմ ես նրանց*
*Բրոնզե կոթողները վեհ ու հավերժական:*

*Նրանք ասես ինձ հետ հաճախում են դասի*
*Եվ ամեն օր ինձ հետ մատյաններն են թերթում,*
*Երեկ հաղթում էինք մարտում մենք միասին,*
*Իսկ այսօր գիտության դասերն ենք սերտում:*

***1951***

## *ՀԱՄՈ ՀԱՐՅԱՆ*

### ԽՈՍՔ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՅԳՈՒՆ*

*Գուցե հետո շրջեմ աշխարհն անծայր,*
*Անթիվ պարտեզ, անթիվ պուրակ տեսնեմ,*
*Գիտեմ, սակայն, դո՛ւ կմնաս դարձյալ*
*Նվիրական, ինչպես առաջին սեր...*

*Կմնաս միշտ այդպես կանաչ ու ճոխ,*
*Այդպես գգվող, քնքուշ ու նազելի,*
*Ջահել սրտի խինդով ու հառաչով,*
*Խոյանքներով պայծառ երազների։*

*Կհիշեմ այս բարդիները սեգ,*
*Որոնք հարբած իրիկնային հովից՝*
*Այնքա՜ն գաղտնիքներ են շշնջացել*
*Եվ անանուն տենչով լցրել հոգիս։*

*Ահա այս չինարը գեղազանգուր,*
*Ինձ հետ շա՜տ է շիկնել վերջալույսին,*
*Երբ այն աղջիկն այնպես մեղմ ու քնքուշ*
*Գլուխն հանկարծ խոնարհում էր ուսիս...*

*Հաճախ կանգնել եմ լուռ ու մտախոհ,*
*Նայել խիզախ այս պատանուն քարե,*

---

* Բանաստեղծությունը նվիրված է համալսարանի հիմնադիր շենքի դիմացի այգուն, որը կրում է Ղուկաս Ղուկասյանի անունը։

*Եվ հորդել է հոգիս տենչանք մի խոլ –*
*Ապրել նրա նման ու պայքարել...*

*Իսկ երբ հոգուս ամպ է իջել մռայլ,*
*Կամ հոգնեցրել են ինձ գիրք ու խոհեր,*
*Քո գիրկն եմ ինձ նետել որպես մայր,*
*Դու զով ձեռքով իմ ճակատն ես շոյել...*

*Եվ բաժանվել եմ ես քեզանից գոհ,*
*Չհեռացած՝ կարոտե՜լ եմ ասես,*
*Իսկ երբ ետ եմ նայել՝ դալար ձեռքով*
*Ինձ բարի ես մաղթել ու ժպտացել...*

*Այո՜, թեկուզ շրջեմ աշխարհն անծայր,*
*Անթիվ պարտեզ, անթիվ պուրակ տեսնեմ,*
*Բոլորի մեջ դո՜ւ կմնաս դարձյալ*
*Նվիրական, ինչպես առաջին սեր...*

***1953***

## ԱՐՏԱՇԵՍ ՅԱՎՐՅԱՆ

### ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԸՆԿԵՐՈՋՍ

*Վերջին անգամ ես դու լսում հիմա*
*Զանգի ղողանջը համալսարանի,*
*Ղողանջն ուրիշ է այսօր քեզ համար,*
*Մոր հրաժեշտի խոր հուզում ունի:*

*Մի պահ չափում ես անցած քո ուղին,*
*Որ կարճ է եղել, վերելքը՝ դժվար,*
*Քեզ ժպտում են լուռ ու շողում կրկին*
*Անցած օրերիդ հուշերը պայծառ:*

*Գնում ես արդեն հաստատ, անվարան*
*Կյանքի զանգերի կանչով զրնգուն,*
*Դեպի նոր դպրոց, նոր համալսարան,*
*Ուր ամեն օր են հանձնում քննություն:*

***1951***

### ԺԱՄԱՆԱԿ ՉԿԱՐ

*Տղան խոստովանեց իր սերը,–*
*Լսեց պատասխանն աղջկա.*
*– Քանի կան ուսումը, դասերը,*
*Այդ հարցին ժամանակ չկա:*

*– Շուտ կանցնի քո կյանքի ամառը,*
*Կթոշնեն ծաղկունքը վառման,*
*Իսկ վարդը գարունքվա համար է, –*
*Կատակով ասում է տղան:*

*Աղջիկը ժպտում է երբեմն,*
*Չի գտնում պատասխան հարմար,*
*Ակամա կրկնում է իրենը՝*
*Զղջալով ասածի համար…*

*Գիշերը կարճ է ու անուշ է,*
*Զրույցը տևում է երկար,*
*Աղջիկը չի ասում թե՝ ուշ է,*
*Իսկ չէ՞ որ ժամանակ չկար…*

***1953***

**_ԱՐԱՐԱՏ ԱՅՎԱԶՅԱՆ_**

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԵՍ ԵԿԱ

*Ջերմ հրաժեշտ տվեցի բարդիներին սլացիկ,*
*Այգիներին հովասուն ու մայրիկին իմ պառավ,*
*Եվ այն խոնարհ աղջկան՝ թխածամ ու գեղեցիկ,*
*Համալսարան ես եկա՝ ծով գիտության խոր ծարավ:*

*Վերջին անգամ նայեցի մեր արտերին անսահման,*
*Ուր ես հողն եմ քարքարոտ իմ ձեռքերով մշակել,*
*Ուր ինձ համբույր են տվել զեփյուռները վաղորդյան,*
*Եվ ուր արդար քրտինքով ես իմ հացն եմ վաստակել:*

*Համալսարան ես եկա, բայց հիշում եմ ժպտադեմ*
*Արտերի թուխ աղջկան ու մայրիկին իմ բարի,*
*Կսովորեմ ես այստեղ և գերազանց կավարտեմ,*
*Հայրենի գյուղ կդառնամ, երբ որ անցնի հինգ տարի:*

*Հայրենի գյուղ կդառնամ, կտամ կյանքս ես նրան,*
*Ընկերներիս հետ մեկտեղ մեր նոր գյուղը կկերտեմ...*
*Թեև արագ են անցնում տարիները իմ ուսման,*
*Բայց շտապում եմ դարձյալ, թե ե՞րբ պիտի ավարտեմ:*

*Երբ մեր գյուղը ես գնամ՝ սիրտս տված անուրջին,*
*Նստեմ կանաչ արոտում, աղբյուրի մոտ պաղպաջուն,*
*Դարձյալ, ինչպես լսարանում, կինչեն իմ ականջին.*
*«Գիտությունը արդ մարդուց իր ողջ կյանքն է*
*պահանջում»:*

***1951***

## ՍՐՏԻ ԽՈՍՔ

Նվիրում եմ ԵՊՀ 30-ամյակին

*Գյուղից եկավ եղբայրս ուսման սիրով անհատակ,*
*Երեք տարի սովորեց քո լուսավոր հարկի տակ,*
*Երիտասարդ իր սրտում պայծառ հույզեր ու կարոտ,*
*Նա գալիս էր ամեն օր լսարանն այդ արևոտ:*
*Նստած շարքում առաջին, իր հայացքը երազուն,*
*Ալեհեր ու իմաստուն դասախոսին էր լսում...*
*Համալսարան սիրելի, նա սովորեց քո գրկում,*
*Ծողում էին «հինգերը» իր ստուգման գրքույկում,*
*Սերը կապել էր նրա սրտում պայծառ ծիածան,*
*Սակայն կռիվ նա գնաց՝ կիսատ թողած ամեն բան,*
*Հայրենիքի համար նա կռիվ գնաց կամավոր,*
*Որ դասերը չընդհատվեն քո գրկի մեջ լուսավոր,*
*Որ դու կանգուն միշտ մնաս, համալսարան արևոտ,*
*Մեր մտքերին թռիչք տաս, մեր սրտերին՝ տենչ-կարոտ...*

*Իմ եղբորը հարազատ ես հիշում եմ ջերմ սիրով,*
*Հիշում եմ դեմքը նրա մտահոգված դասերով,*
*Կարծես տեսնում եմ նրան, քայլում է նա միջանցքով,*
*Աղջիկներին է ժպտում մտերմական հայացքով,*
*Կարծես տեսնում եմ նրան՝ իմ եղբորը քաջարի,*
*Որ այն մարտում արյունոտ ընկավ ափին Դնեպրի...*
*Համալսարան, նա ընկավ՝ սրտում սերդ լուսաշող,*
*Եվ մինչև վերջ մնաց նա քեզ արժանի ուսանող:*

*Այժմ ես եմ եկել ջերմ՝ ուսման սիրով անհատակ,*
*Որ գիտություն սովորեմ քո հարազատ հարկի տակ:*
*Սեղանի մոտ միևնույն, ուր իմ եղբայրն էր նստում,*

*Դասախոսին եմ լսում ալեհեր ու իմաստուն,*
*Լսարանն եմ միևնույն ես հաճախում ամեն օր,*
*Շարունակում կիսավարտ գրառումներն իմ եղբոր:*
*Հարազատ ես դու այնպես, համալսարան, իմ հոգուն,*
*Սիրում եմ ես երազել քո ծաղկավետ պուրակում,*
*Հայրենական դու իմ տուն, նվիրական, թանկագին,*
*Քո շեմից ներս մտնելիս վեհանում է իմ հոգին,*
*Սիրում եմ կյանքն ավելի, և գարունն այս, ապագան,*
*Եվ հորդում են երգերս խաղաղության, խնդության:*

*Մեկ այլ բաղձանք ես չունեմ ավելի վեհ, լուսաշող,*
*Քան այն, որ հար լինել վեհ, քեզ արժանի ուսանող:*

***1951***

## ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՄԻՋՈՑԻՆ

(«Ուսանողական երգեր» շարքից)

*Ինչպես բարակ մատիտներ՝ պատուհանից ներս ընկած*
*Արեգակի շողերն են սեղաններին երկարում,*
*Բոլորը դուրս գնացին, լսարանում նա մնաց,*
*Եվ ավարտված այդ դասի վերջին բառերն էր գրում:*

*Դասամիջոցը երրորդ մի քիչ տևում է երկար...*
*Մոտենում եմ ես նրան, նա՝ շիկնելով քնքշագին,*
*Դեպի ինձ է դարձնում իր հայացքը սիրավառ,*
*Հմայելով երազուն երիտասարդ իմ հոգին:*

*Եվ ասում է նա թախծոտ. «Դասախոսը մեր գիտուն*
*Իմ եղբոր հետ հարազատ մի օր Օդերն է անցել,*

*Հայրենիքի համար նա հերոսացել է մարտում,*
*Խաղաղության հետ մեկտեղ այս լսարանն է դարձել:*

*Իսկ եղբայրս քաջարի նախագահ է կոլխոզում,*
*Ստանում է նա կրկին մեր դաշտերից առատ բերք,*
*Այնտեղ՝ գյուղում, ուր կանաչ բարդիները երազուն*
*Կատարներն են օրորում կապույտի մեջ անեզերք...»:*

*Դասամիջոցը երրորդ մի քիչ տևում է երկար.*
*Ու խոսում է աղջիկը երջանկալից, ժպտադեմ,*
*Նա ասում է. «Մեր հոգում որքա՜ն հույսեր կան պայծառ,*
*Համալսարանն այս տարի քեզ հետ ես էլ կավարտեմ:*

*Ու կաշխատենք, որ հավերժ խաղաղությունը փռի*
*Իր թևերը մայրաբար հողագնդում բովանդակ,*
*Վիետնամցի մանուկը, որ դպրոցում սովորի,*
*Կորեացին կառուցի տունն իր դարձած փլատակ:*

*Մենք կաշխատենք, որ դառնա հայրենիքը մեր հզոր,*
*Կյանքի համար լուսավոր կմաքառենք՝ առած թև,*
*Եղբորս մոտ կգնանք, կտեսնես մեր գյուղը նոր*
*Ու կթռչի մեր հոգին երազներով ոսկեթև:*

*Հայաստանն է բռնկվել անմար տենդով կառուցման,*
*Սպասում է մեր ուժին ու մեր կամքին՝ միշտ տոկուն,*
*Որքան լավ է կյանքը, երբ արևի տակ անսահման,*
*Խաղաղությունն է տիրում երազներով վարդագույն»:*

*Երազում էր աղջիկը խոհերով լուսառատ,*
*Հանկարծ հնչում է զանգի ղողանջն անուշ ու ծանոթ,*

*Այնքան բան կար խոսելու, որի համար կարճ էր շատ*
*Դասամիջոցը երկար, դասամիջոցը երրորդ…*

***1951***

## ՈՒՍՄԱՆՈՂՈՒՀԻՆ

*Կես գիշեր է հիմա հայրենական գյուղում,*
*Ջահել այգեպանը երգ է ասում հուզված,*
*Հիմա նստել ես դու ու տետրերն ես ուղղում*
*Լուսամփոփի ներքո մենակ, խորասուզված:*

*Օրորում է բարդին կատարն աստղերի մեջ*
*Պատուհանիդ հանդեպ՝ փեղկերը բաց,*
*Հովը ներս է մտել ու շոյում է անվերջ*
*Քո հարազատ դեմքը արդեն հոգնած:*

*Նայում ես տող առ տող ու սխալն ընդգծում*
*Դու կարմիր թանաքով, համբերատար,*
*«Անահիտը լավ է խնդիրները լուծում,*
*Սուրիկը թվերն է խառնում իրար…»:*

*Քո ուսերի վրա բրդյա շալին անփույթ*
*Սև մազերից փայլուն հյուսքերն են փռված,*
*Նայում ես, տետրերը հարազատ են հոգուդ*
*Լայն լուսանցքով տողերն անվարժ գրված:*

*Երեխաները սովորում են հիմա,*
*Նրանց հաջողությամբ խնդում է քո հոգին,*
*Ձեր այդ աշխատանքով վաղը հոգեհմա*
*Կզարդարվի մրգով միչուրինյան այգին:*

*Անահիտը գուցե դառնա ճարտարապետ,*
*Իսկ Սուրիկը դառնա դաշտում բրիգադիր,*
*Դու կերտում ես նրանց ապագան լուսավետ,*
*Երբ ուղղում ես նրանց տետրերը ուշադիր:*

*Ուղղում ես տետրերն, ու ժամերն են հոսում,*
*Նստած սեղանի մոտ լուռ ու խորասուզված,*
*Իսկ այդ պահին պայծառ սիրո երգ է հյուսում `*
*Քո կարոտով անմար՝ ջահել սիրտս հուզված:*

***1954***

## ՇՐՋԱՆԱՎԱՐՏԸ

Ընկերոջս՝ **Մելքոն Մանվելյանին**

*Երբ նոր երգ եմ գրել, կարդացել եմ քեզ,*
*Քննադատել ես դու՝ ինչ եղել է թերի,*
*Կիսել ենք իրար հետ թե հաց, թե ծխախոտ*
*Հանրակացարանում արդեն քանի տարի:*

*Տարիներն արագ, երազի պես անցան,*
*Ահա սիրտդ տված լուսեղեն անուրջին,*
*Ահա դեմքիդ վրա՝ ժպիտը ծիածան,*
*Դու հանձնում ես այսօր քննությունը վերջին:*

*Շուտով պիտի դառնաս տեսուչ դպրոցական,*
*Ինքնավստահ քայլով մտնես ժողկրթբաժին*
*Կգնաս Ոսկեվազ, Աշտարակ, Օշական,–*
*Գանգուրներիդ վրա ճանապարհի փոշին:*

*Ապագան քո հանդեպ ահա գիրկն է բացում,*
*Անցած տարիները անհոգ, պատանեկան,*
*Կպարապես դասեր հարազատ դպրոցում,*
*Ցուցումներ կտաս այնտեղ մեթոդական:*

*Կլսեն ուշադիր ուսուցիչները քեզ,*
*Կսովորեն խոսքդ՝ աշխատանքին օգնող,*
*Երբ վերջալույսը փովի դաշտին բեհեզ,*
*Ինչպես գետափին կանաչ՝ մարգարտացող:*

*Դու կհիշես, չես մոռանա հավետ,*
*Համալսարանը մեր հայրենի քաղաքում*
*Ղուկաս Ղուկասյանի պուրակը բուրավետ*
*Ու նստարանը՝ ակացու շվաքում:*

*Կհիշես դու կրկին, երբ որ գամ քեզ հյուր,*
*Նոր երգը քո ջահել ընկեր բանաստեղծի,*
*Կգնանք միասին դեպի Կապույտ աղբյուր,*
*Դեպի զով լանջերը կանաչ Արագածի:*

***1954***

***ՎՌԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ***

## ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻՆ

*Երբ նայում եմ, սիրով ժպտում*
*Այս ուսանող աղջկան,*
*Հաճախ հիշում եմ իմ ժպտուն*
*Ընկերուհուն մարտական:*
*Նա էլ այսպես մի հուզմունքով`*
*Իր սրտի մեջ ապագան,*
*Քննություն էր հանձնում «հինգով»*
*Առարկայից մարտական:*
*Սակայն ընկավ զենքը ձեռքին*
*Այն աղջիկը դիրքերում,*
*Հերոսության վերքը կրծքին,*
*Հաղթանակը` աչքերում...*
*Հաղթանակը ինձ տուն բերեց,*
*Համալսարան մտա ես,*
*Ուր մի նոր սեր սիրտս գերեց*
*Այն աղջկա սիրո պես...*
*Եվ թվաց ինձ, թե նա դեռ կա,*
*Նա չի ընկել գոռ մարտում,*
*Այլ ապրում է այս աղջկա*
*Հայացքի հետ իմ սրտում:*
*Ու քայլում է ինձ հետ այստեղ*
*Երազներով իր անշեջ,*
*Ինչպես երեկ կռվում ահեղ,*
*Այնպես այսօր` ուսման մեջ:*

***1951***

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԳ

*Զանգը դեռ չեղած ամեն օր ահա,*
*Երբ ներս եմ մտնում այս դռնից ծանոթ,*
*Ձեր լսարանն եմ աչք ածում մի պահ՝*
*Իմ հոգում այնքան տենչեր ու կարոտ:*

*Սակայն դու գուցե չե՞ս էլ կռահում,*
*Թե ինչպես հեռվից երազում եմ քեզ,*
*Որ փնտրում եմ քեզ ամեն սրահում,*
*Իսկ հանդիպելիս շիկնում եմ այնպես...*

*Ու այսպես, ահա, իմ սրտում ջահել,*
*Եվ այն էլ օրը մի քանի անգամ,*
*Գուցե ճշտապահ, քան ավագը ձեր,*
*Նշում եմ ես քո ներկա-բացական:*

***1953***

## ԵՐԿՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

*Կրկին հուզված ու անհամբեր*
*Լսարանի շեմին կանգնել,*
*Կրկին վստահ ու մեծ հույսով*
*Քննություն ես հանձնում այսօր:*

*Ա՜խ, ես էլ եմ կանգնել հիմա*
*Քո աչքերի հրի դիմաց,*
*Բայց այսօրվա քննությունն իմ*
*Դժվար է շատ, դժվար քոնից...*

*Սերն էլ արդյոք չի՞ պահանջում*
*Թե քննության և թե զիջում,*
*Բայց ո՞նց հանձնեմ ես այն հիմա*
*Քո աչքերի իրի դիմաց…*

*Վերջին անգամ իրար նայում,*
*Ներս ենք մտնում մենք միասին,*
*Դու հանձնում ես մի քննություն,*
*Իսկ ես՝ քեզ ու դասախոսին:*

***

*Գիտեմ, կրկին «հինգ» կստանաս*
*Ու գոհ սրտով կժպտաս ինձ,*
*Ու կդառնաս կրկին երազ՝*
*Հյուսված իմ վառ անուրջներից…*

*Բայց թե հանկարծ լավ չհանձնես,*
*Եվ աչքերիդ ամպը իջնի,*
*Իսկույն սիրով կփոխփի քեզ*
*Ուղեգիրը մեր դեկանի…*

*Սակայն եթե ես քեզանից*
*«Վատ» ստանամ խոստման պահին,*
*Էլ ո՞վ կտա ուղեգիր ինձ*
*Իմ խենթ սիրո ճանապարհին:*

***1954***

## *ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

### ԼԻՐԻԿԱԿԱՆ

*Հանդիպեցի քեզ, անծանոթ իմ քույր,*
*Մեր Արարատյան դաշտում ծաղկավետ,*
*Երբ բամբակ էիր այնտեղ հավաքում,*
*Օղակիդ զվարթ աղջիկների հետ:*

*Դու լուռ ժպտացիր ինձ ջերմ հայացքով՝*
*Հանց արարատյան արևը պայծառ,*
*Ու ես հեռացա փոթորկված հոգով՝*
*Իմ սիրտը թողած արտերում անծայր...*

*Անցան ամիսներ այն չքնաղ օրից,*
*Ուսանող դարձա՝ գիտության կարոտ,*
*Բայց դու սիրալիր ժպտում ես նորից*
*Դաշտերում հեռու և այնքա՜ն ինձ մոտ:*

*Համալսարան եմ գնում ամեն օր՝*
*Քո լույս պատկերը հոգուս մեջ հստակ,*
*Այստեղ լսում եմ դասեր նորանոր,*
*Եվ թվում է, թե կողքիս ես նստած:*

*Թվում է՝ դու էլ ինձ հետ միասին*
*Լսարանում այս ամեն ինչ գրում,*
*Ներկա ես լինում ամեն մի դասին,*
*Բայց քեզ ինչո՞ւ են բացակա դնում:*

***1951***

## ԵՐԳ՝ ԳՐՎԱԾ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՅԳՈՒՄ*

*Սոսափում է այգին խաղաղ,*
*Ինչպես սիրտս՝ երգով,*
*Սպասում եմ ես քեզ ահա –*
*Ակացիայի ներքո:*

*Ինձ այստեղ են բերել ծաղկուն*
*Տեսքն ու բույրը գարնան,*
*Սիրահարվել է այս այգուն*
*Գարունն էլ ինձ նման:*

*Երեկոն այս լուսնի շողով*
*Գեղեցիկ է այնքան,*
*Որ քաղցր է թվում սիրո*
*Սպասումը անգամ:*

*Գիտե՞ս, որ մեր սիրո հարցը*
*Ժողովում չենք լուծի,*
*Իսկ երբ սերը փոխադարձ է,*
*Ինչո՞ւ չգալ այգի:*

*Մի՛ կարծիր թե ես չեմ ուզում*
*Գերազանցիկ լինել,*
*Բայց որ սեր կա, սիրո հուզում –*
*Պետք է նաև սիրել...*

*Սպասում եմ... Ահա եկար,*
*Մոտենում ես թեթև,*

---

* Տե՛ս սույն գրքի 90-րդ էջի ծանոթագրությունը:

*Լուսինն էլ մեզ նայեց երկար,*
*Պահվեց ամպի հետև։*

*Գուցե երկնի այդ ճամփորդը*
*Սիրող սրտերի դեմ,*
*Զգաց խսկույն, որ երրորդը*
*Ավելորդ է արդեն...*

***1953***

## ԽՈՍՔ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻՆ

**I**

*Դուք գարնան պես եկաք վարար՝ ձեր հույզերով հորդ ու արձակ,*
*Եկաք սրտով ձեր պատանի ու հրաշքով հասունացած,*
*Եկաք բույրով ձեր վարդենի, հայացքներով՝ հուր ու գարուն,*
*Իմաստության խոստումնալից ներշնչանքը ձեր աչքերում,*
*Միանգամից դարձաք հասուն, դարձաք խոհուն միանգամից,*
*Դեպի կյանքը բարձրանալով դպրոցական նստարանից.*
*Իմ ողջույնը՝ անզարդ մի երգ, ահա սիրով ձեզ եմ հղում,*
*Կյանքի գարունն եմ երգում ես՝ աշնան բերքի ծիլը հողում։*

**II**

*Մենք էլ մի օր ձեզ պես էինք... ինչպես անցավ, ո՞վ է հիշում,*
*Հինգ գարուններն արևազարդ, հինգ բեղմնավոր բերքի աշուն...*
*Մեզ էլ մի օր ընդունեցին այս հյուրընկալ դռները բաց,*
*Ոսկե հովիտ պատանության, քո երազի ափը թողած։*
*Հիշում եմ ես, ձեզ պես էինք, դեռ նոր մտած համալսարան,*

*Լսարանն էլ չէինք գտնում, հարցնում էինք սրան-նրան,*
*Անսովոր էր ողջըն այստեղ, անսովոր ու հրաշալի,*
*Ինչ-որ լավ ու խորհրդավոր, գալիքի պես խոստումնալի,*
*Միայն զանգի ձայնն էր հնչում առաջվա պես մտերմական*
*Ու հիշեցնում դպրոցն անցած և օրերը դպրոցական:*
*Որքան բարդ էր, որքան դյուրին սիրո հույզն ու սերն առաջին,*
*Մտերմանում էինք իսկույն՝ անսալով մեր սրտի կանչին,*
*Ուզում էինք ընկեր լինել ընկերական կյանքում մեր պերճ,*
*Մեր կյանքն էլ տալ լավ ընկերոջ՝ դժվարության թե խինդի մեջ,*
*Ուզում էինք պատմել մարդկանց, աշխարհին մեր խինդը*
*ասել,*
*Ինչպես համբույրըն առաջին, ինչպես անզուսպ առաջին սեր:*

### Ill

*Մենք էլ, այո՛, ձեզ պես էինք, միշտ երազուն ու միշտ հպարտ,*
*Ամեն մեկս ապագայի մեծ բանաստեղծ կամ քննադատ...*
*Քանի անգամ հենց ես՝ ինքս հատորներ եմ տպել մտքում,*
*Ուրախացել, երբ տեսել եմ իմ անունը ծանոթ գրքում:*
*Թև է տվել երազանքն ու մղել է աշխատանքի*
*Եվ մեր ներսում ուժ է դառել ցոլացումը երազանքի,*
*Ղուկասյանի այգու խաղաղ սոսափյունի հետ միասին*
*Զգտումների, խիզախումի երգն է հյուսվել մեր երազին,*
*Եվ ի մի են ձուլել միշտ մեզ համախմբման տենչով մոլի,*
*Ժողովները, ժողովները, ժողովները կոմսոմոլի:*

### IV

*Ուսանողի հախուռն օրեր, ուսանողի օրեր պայծառ,*
*Հանգստավետ երեկոներ, երեկոներ խենթ ու անծայր...*
*Երբ դասերը վերջանալիս հորձանքի հետ դուրս ես ելնում,*
*Ասես տոն է, ծաղկահանդես մեր հարազատ Աբովյանում,*

*Զույգեր, խմբեր ջահելների՝ ջահելության հույզից գինով,*
*Օ՜, հոսում են նրանք ահա դեպի թատրոն, դեպի կինո:*
*Ինչ փույթ, թե դու ընկերներով այդպես էժան տոմսեր առած՝*
*Ներս ես մտնում բոլորից ուշ և դահլիճում նստում առաջ...*
*Բայց երբ թոշակ ես ստացել՝ չես հարցնում ձերն ու մերը,–*
*Քոնն են կարծես բոլո՜ր-բոլոր պաղպաղակն ու կոնֆետները...*
*Որքա՜ն ենք մենք տղաներով թոշակի հետ ամեն անգամ*
*Հավաքվել ու հանպատրաստից խնջույք սարքել ընկերական:*
*Բավական էր մի շիշ գինին, որ ամեն մեկն իր թասն առած՝*
*Իր մտքում մի կենաց խմի՝ մի թանկ անուն սրտում պահած:*
*Եվ ճիշտն ասած, այդ պատճառով մինչև հիմա հիշյալ օրից*
*Խմել ենք, բայց չենք իմացել, թե ինչ բան է ալկոհոլիզմ...*
*Ուսանողի հախուռն օրեր, ուսանողի օրեր պայծառ,*
*Տխրության հետ ծիծաղ ու երգ, խնդության հետ կարոտ անձայր...*

**V**

*Անմոռաց են օրերն այս, որ ձեզ համար նոր են գալու,*
*Մեր առաջի՜ն կուրսեցիներ, հայացքներով հուր ու գարուն,*
*Դուք եկել եք գարնան նման, իսկ գարունը տենչով է լի,*
*Ձերն է ներկան այս իմաստուն ու ապագան հրաշալի,*
*Ձերն են երգերը մեր բոլոր և երազները մեր հավետ,*
*Ձերն է կյանքը, ձերն է սերը ու գալիքը երջանկավետ:*

***1954***

***ՄԵՍԻԱ ԷՍԿԻՃՅԱՆ***

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Համալսարա՛ն, համալսարա՛ն,*
*Դու սուրբ տաճար իմաստության.*
*Բազո՜ւմ, բազում ճաճանչասեր*
*Պատանիներ և աղջիկներ*
*Լցվում են արդ քո քրմերի*
*Գանձերով սուրբ ու սխրալի…*

*Համալսարա՛ն, համալսարա՛ն,*
*Դու վառ օջախ իմաստության.*
*Որքա՜ն, որքան ճաճանչասեր*
*Պատանիներ ու աղջիկներ*
*Խմում են բոցն իմաստության*
*Քո հրերից անապական…*

*Համալսարա՛ն, համալսարա՛ն,*
*Դու լուսաղբյուր իմաստության.*
*Անթի՜վ, անթիվ ճաճանչասեր*
*Պատանիներ ու աղջիկներ*
*Ըմպում են լույսն իմաստության,*
*Որ հար վառվի ջահը մեր տան:*

***1981***

***ՆԱՆՍԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Աչքերիս մեջ կյանքի խնդությունը լուսե,*
*Եվ սրտիս մեջ այնքան հույզ ու կարոտ,*
*Ես քո գիրկը եկա երազներով վսեմ*
*Սեպտեմբերյան պայծառ մի առավոտ:*

*Թվաց թե կանչում է իմ մայրիկը բարի,*
*Երբ հնչեց առաջին զանգը հոգուս հաղորդ,*
*Վառվեցին նոր լույսերը կյանքիս ճանապարհին,*
*Սեպտեմբերյան պայծառ այն առավոտ:*

*Քո մեջ խոյանք տեսա, քո մեջ երազ ու երգ,*
*Ու բուրեց քո գրկում սիրուս վարդը շաղոտ,*
*Տեսա իմաստության օվկիանը անեզերք*
*Երիտասարդ կյանքիս ամեն մի առավոտ:*

*Ղողանջում է կրկին, հնչում ձայնը զանգիդ,*
*Նոր սրտեր են գալիս գիրկը քո արևոտ,*
*Դու հայրենի տան պես հարազատ ու անգին,*
*Դու միշտ թարմ ու պայծառ, հանց առավոտ:*

*Ու կերկարի քո մեջ սերունդների շղթան,*
*Կղողանջեն կրկին քո զանգերը ծանոթ,*
*Դու կշնչես հավերժ ուժով ջահելության*
*Դարերի մեջ ամեն, ամեն մի առավոտ:*

***1954***

## ԶԱՆԳԸ

*Խաղաղություն է զանգը բերում,*
*Լռում են միջանցք ու լսարան,*
*Կրկին սուզվում ես դու խոհերում,*
*Դու, հարազատ իմ համալսարան:*

*Բայց նորից զանգը զվարթաձայն*
*Քեզ բաժանում է քո խոհերից,*
*Ուրախ ձայներ են հնչում դարձյալ,*
*Դու խնդությամբ ես լցվում նորից:*

*Եվ մոռանալով մի վայրկյան քեզ,*
*Դու ալիքվում ես, հուզվում, եռում,*
*Դու շունչ ես քաշում, որ միշտ քայլես,*
*Քո իմաստության ուղիներում:*

*Զանգով դառնում ես խենթ պատանի,*
*Զանգով՝ իմաստուն ու լրջախոհ,*
*Ուզում եմ կյանքս քեզ պես լինի,*
*Այդքան խինդ իր մեջ և այդքան խոհ:*

***1955***

## ԴԵՊԻ ԳՅՈՒՂ

Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի
շրջանավարտ **Մերուժան Քերոբյանին**

*Վերջին զանգերի լույս ղողանջներով*
*Ջերմ հրաժեշտի երգեր են հնչում,*

*Դու գյուղ ես գնում վարար հույզերով,*
*Հիմա քեզ ուրիշ զանգեր են կանչում:*

*Տարիներն ուսման հեքիաթով անցան,*
*Որքա՜ն փոխվեցիր այստեղ հինգ տարում,*
*Երազներդ անբիծ իրական դարձան,*
*Քո անուրջները գտար աշխարհում:*

*Արդ կանչում է քեզ լեռնաշխարհը մեր,*
*Կանչում է ծաղկած դաշտերի հեռուն,*
*Արևից շիկնած խնդուն մանուկներ*
*Քո մեջ ներշնչման աստղեր են վառում:*

*Դու քաղաք եկար, անուրջներիդ մեջ*
*Ջինջ վաղորդայնի հնչյուններ խորին,*
*Ու ետ ես դառնում քաղաքի անշեջ*
*Աղմուկը ձուլած հոգուդ անդորրին:*

*Նույնն են հույզերդ՝ առվակի պես խենթ,*
*Այլ են խոհերդ, երազներդ՝ այլ,*
*Լույսի, գիտության զանգեր տար այնտեղ*
*Եվ լույսի նման եղիր միշտ շռայլ:*

***1956***

## ՔԵԶ ԿԱՆՉՈՒՄ ԵՆ

Սիրով ընկերոջս՝
երկրաբան **Ս. Ծահվերդյանին**

*Կանչում են հեռվից ձեռքերով անտես*
*Լույս եզերքները քո մայր աշխարհի –*

*Կապույտ գետերը քնարների պես,*
*Թավ անտառների նազանքը վայրի:*

*Քեզ փայփայել է հայրենիքը մայր,*
*Տվել իր մտքի խորհուրդները խոր,*
*Դե՜, պարզի՜ր նրա կանչին ոսկեվառ*
*Ջահել քո սրտի տենչերը բոլոր:*

*Տափաստաններով անցիր դու անծայր,*
*Որ ցրտում անշեջ խարույկներ վառես,*
*Որ սրտիդ վառած լույսերով պայծառ*
*Ժպտա հայրենի մեր աշխարհը քեզ:*

*Կփարվի սրտիդ կյանքը երգերով,*
*Քեզ կգուրգուրի անվերջ, անդադար,*
*Մայրական անո՜ւշ, անո՜ւշ ձեռքերով*
*Քեզ օրոր ասող Հայրենիքը մայր:*

*Հավատա նրան՝ ուր էլ որ տանի,*
*Ուր էլ որ կանչի՝ հավատա նրան,*
*Դու օջախ ունես այստեղ հայրենի*
*Եվ երազների դյութող հանգրվան:*

*Հազար ձեռքերով քեզ կյանքն է կանչում,*
*Քայլիր քո ճամփան խնդությամբ անհաս,*
*Եվ այնժամ միայն թախծիր աշխարհում,*
*Երբ կյանքում կանչող մի ձեռք չունենաս:*

***1957***

## ԴՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՅԳՈՒՄ

*Ծաղկանց սիրով է արբել արևը,*
*Վարդերը խինդն են պատմում հողի,*
*Մեզ օրորում են կանաչ ծառերը*
*Երազների հետ ուսանողի:*

*Անուրջն է փնտրում իր լույս պատկերը,*
*Այստեղ խոհերն են միշտ սավառնում,*
*Ուսման ճամփեքում հոգնած մտքերը*
*Մի պահ այստեղ են հանգիստ առնում:*

*Պահում են կանաչ ծառուղիները*
*Ջահել սրտերի շշուկներ վառ,*
*Այնտեղ ծնվել է մեկի խոր սերը,*
*Բացվել է մեկի լեզուն ճարտար:*

*Եկել, անցել է թռվիչ գարունը,*
*Բայց նա մայիս է պարզ ու անամպ,*
*Պատանության պես միշտ դալարուն է,*
*Հավերժ լեցուն է պատանությամբ:*

*Ա՜խ, ուր էր տանի ինձ բախտի ձեռքը,*
*Ծառե՛ր իմ այգու, նազուն ծառեր,*
*Կշողա իմ մեջ գարնան ձեր երգը*
*Անմոռաց, որպես առաջին սեր:*

***1957***

## ԽՈՍՔ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Գարնան նման բացվում ես դու սրտերի դեմ գարուն,*
*Ու կանչում ես սերունդներին դու մոր նման բարի,*
*Ամեն անցնող տարին քեզնից ծաղիկներ է տանում*
*Եվ ծաղկունք է քեզ նվիրում ամեն եկող տարին:*

*Ու երազներ է որոնում, քո լույս գիրկն է գալիս,*
*Այդպես գարնան կարոտ անուշ բյուր հավքեր է քաշում,*
*Ամռան նման երկրին հասուն քո մտքերն ես տալիս,*
*Ջահելություն է քեզ բերում ամեն եկող աշուն:*

*Դու կապված ես սրտերի հետ ամենաթանկ լարով,*
*Իմաստությամբ խորն ու գերող, պատմությամբ դալար,*
*Ամենքի հետ դուրս ես գալիս խնդուն քո աշխարհով*
*Եվ ամենքն են մնում քեզ հետ կարոտներով անմար:*

*Արդ բաժանման խորհուրդներով քո զանգերն են հնչում,*
*Երազներով, երազի պես տարիներն են սահել,*
*«Գնա՜ս բարով», – ասում մեկին, մեկին ասում՝ «Ողջո՜ւյն»,*
*Ու մնում ես դու աշխարհում կյանքի նման ջահել:*

***1957***

## ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՌԱՎՈՏ

*Նորից աշուն ես բերել իմ լույս աշխարհին,*
*Սեպտեմբերյան առավոտ քաղցր ու երազուն,*
*Հիմա որպես հարազատ մոր ձայնը բարի,*
*Ես լսում եմ մտերիմ զանգերիդ լեզուն:*

*Ես լսում եմ առաջին ղողանջները խոր*
*Որ նվագում երգերով հնչում են դարձյալ,*
*Մերթ շոյելով իմ հոգու անուրջները նոր,*
*Մերթ հեքիաթներ հուշելով օրերից անցյալ:*

*Ահա գալիս են քո զիլ ղողանջների տակ*
*Պատանիներ կենսուրախ, աղջիկներ նազուն,*
*Պատանիներ՝ սրտներով արևի պես տաք*
*Եվ աղջիկներ՝ հովերից նուրբ ու երազուն:*

*Նրանք բերում են ամռան գույները թովիչ,*
*Անշեջ հուրերն արևի, հողի բույրը թաց,*
*Կապո՜ւյտ-կապույտ երկնքի անհունը ծավի,*
*Խինդը կարմիր վարդերի ու բույրը ծաղկանց:*

*Ամռան արևն են բերում, որ օրերում ցուրտ*
*Վառվեն, վառվեն արևի բոցերի պես վառ,*
*Եվ բերում են դաշտերի առավոտը լուրթ,*
*Որ աշխարհում միշտ լինեն անխռով ու կայտառ:*

*Ու պատկերներն են բերում ծովերի անծայր,*
*Որ խորությամբ ծովերի սիրեն ու ատեն,*
*Հավքերի երգն են բերում հանդերից պայծառ,*
*Որ սրտերը երբևէ ամպով չպատեն...*

*Ծաղկանց բույրի ու երգի անուշ աշխարհով*
*Լսարանները մի պահ լցվում են ասես,*
*Պսակվում է մեր սրտում գիտության հրով*
*Մայր բնությունը ջահել սիրահարի պես:*

*Սեպտեմբերյան առավոտ, քաղցր ու երազուն,*
*Հիմա սրտերը բոլոր լի են քո երգով,*
*Ես սիրում եմ մտերիմ զանգերիդ լեզուն,*
*Ես սիրում եմ այս աշնան խորհուրդները քո...*

***1957***

## ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳ

Իմ համալսարանին

*Արևազարդ այս մայթերով որպես գրկում հայրենի տան,*
*Հրաժեշտի երգեր շուրթիս՝ անցնում եմ ես վերջին անգամ,*
*Տարիների ամպի տակից ու երազից պատանեկան*
*Առավոտն է լազուր ու լուրթ բացվել իմ դեմ ամռան հրով–*
*Որպես ճամփա, որպես ճամփորդ ու ճամփորդին*
*ճանապարհող:*

*Հիշում եմ ես օրերն անցած ու լուռ մի պահ միտք եմ անում,*
*Ի՞նչ եմ բերել այստեղ մի օր, ի՞նչ եմ հիմա ինձ հետ տանում,*
*Չէ՞ որ ամեն քո տվածով դու ավելի ես բարձրանում*
*Ու խորանում ու նորանում ու ծաղկում ես ամեն տարով,*
*Որպես ճամփա, որպես ճամփորդ ու ճամփորդին*
*ճանապարհող:*

*Իմաստ ունի քո աշխարհում ամեն, ամեն մի ակնթարթ...*
*Ներս եմ մտել այս դռներով, խինդով անցել ուղիս անհարթ,*
*Ջահելությո՜ւնս ես քեզ թողել, ջահելացած գնում եմ արդ,*
*Որքա՜ն օրեր, որքա՜ն հուրեր սրտի հուշ են դարձել մարող՝*
*Անդա՜րձ ճամփա, անցած ճամփորդ ու ճամփորդիս*
*ճանապարհող:*

*Կյանքը հիմա կանչում է ինձ իր հեքիաթով գալիքների,*
*Որ միշտ լցնի հոգիս նորով ու լրացնի ճամփաս թերի,*
*Թող ես հալվեմ ու զուլալվեմ նման հույզի ու եթերի,*
*Դառնամ քեզ պես խորն ու խնդուն, դառնամ քեզ պես լույս*
*արարող –*
*Արդա՛ր ճամփա, ազնիվ ճամփորդ ու ճամփորդներ*
*ճանապարհող:*

***1958***

## ԳՆԱ՛Ս ԲԱՐՈՎ

*Ամռան օրն է շիկնել հիմա բորբ արևի անմար հրից,*
*Կյանքն է կանչում ոսկեհմա ձեզ հայրենի հեռուներից:*
*Այգիներն են կանչում նազով և դաշտերի հեռուն անծայր,*
*Գարունները կանաչ ու զով՝ երազներով ջինջ ու պայծառ:*

*Մեկիդ լեռն է կանչում փառքի՝ բարձունքներով իր*
*փառապանծ,*
*Մեկիդ՝ հողը՝ իր ընդերքի հարստությամբ հազարագանձ,*
*Հայրենի գյուղն է սպասում մեկիդ ուրախ վերադարձին,*
*Որ գիտությամբ դառնա հասուն վաղվա հպարտ քաղաքացին:*

*Եվ կանչում է հազար աչքով կապույտ-կապույտ երկինքը բաց,*
*Որ կանաչի մի հրաշքով հողը քնից նոր արթնացած,*
*Թող ձեր սրտում խինդը վառվի, ընկերնե՛ր իմ, գնաք բարով,*
*Թող հայրենիքը զարդարվի ձեր գիտությամբ ու պայքարով:*

***1959***

**ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
**(ԿԱՐԱՅԱՆ)**

## ՄԵՐ ՍԵՐՆԴԻՆ

Նվիրում եմ ԵՊՀ-ի շրջանավարտներին

*Մանուկ օրերիդ հեքիաթի պես*
*Այնքան կարճ տևեց քո հինգ տարին,*
*Արդ, այնպես խոհուն, ճակատդ վես,*
*Կանգնել ես կյանքի ճանապարհին:*

*Հեշտ չէ ու խաղաղ ուսման ճամփան,*
*Հեքիաթում ձգվող ճամփա չէ նա,*
*Անհոգ հույզերով պատանեկական*
*Նրա դռները դու չես բանա:*

*Նա մի անվախճան խարույկ է բորբ,*
*Որի մեջ պիտի սիրտդ վառես,*
*Ու Դանկոյի պես կյանքում մեր նոր*
*Մեծ գործի համար քեզ սպառես:*

*Եվ նրանով է մեր կյանքն էլ թանկ,*
*Որ կա աշխատանք ու ցնծություն,*
*Սիրտդ լցվում է խինդ ու բերկրանք,*
*Երբ մեծ գործից ես դառնում դու տուն:*

*Դե՜, գնաք բարով հույզերով վառ,*
*Եղբայրնե՛ր, քույրե՛ր իմ օրերի,*
*Դուք կյանքին տվեք եռանդ վարար,*
*Նա ձեզ իսկական փառք կբերի։*

***1957***

## ԻՄ ԿՐՏՍԵՐ ԸՆԿԵՐՈՒՀՈՒՆ

Նվիրում եմ առաջին կուրսեցի
ընկերուհուս՝ **Սվետլանա Գևորգյանին**

*Թողած դպրոցի զանգը դյութական,*
*Թողած տատիկի հեքիաթները հին,*
*Կանգնել ես այսօր, իմ նոր բարեկամ,*
*Ուսանողական մեծ ճանապարհին,*

*Թեթև չէ, անհոգ մեր ուսման ճամփան,*
*Պիտ հոգնես, հուզվես ծովում գրքերի,*
*Բայց հոգնությունը գիտե՞ս, թե որքան*
*Քո սրտին հանգիստ ու խինդ կբերի։*

*Ամե՛ն, ամեն օր դասերից հետո*
*Կիջնես մոտակա այգին հովանազ,*
*Կխորհես անվերջ, կցանկաս, որ դու*
*Ուսման մեջ հավերժ ուսանող մնաս։*

*Համալսարանը հույզերի մի ծով,*
*Ո՞ր մեկը պատմեմ, իմ լավ բարեկամ,*
*Խնդության խորին ողջույն տանք սիրով*
*Քաղցր օրերի ուսանողական։*

***1957***

**_ՀԱՄԼԵՏ ԿԱՐՃԻԿՅԱՆ_**

## ՈՂՋՈ՜ՒՆ ՔԵԶ, ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Ողջո՜ւյն քեզ, ողջո՜ւյն, իմ համալսարան, քո գրկում եմ ես,*
*Քո իմաստության ակունքների մոտ ծունկի եմ իջել,*
*Դու որքա՜ն, որքա՜ն ինձ համար դալար գարուններ ունես,*
*Ես որքան պիտի նրանց կենարար բուրմունքը շնչեմ:*

*Այսօր իմ կյանքը լեռներից իջնող խենթ գետ է վարար,*
*Դու պիտի սանձես նրա հորձանքը փոթորկաշառաչ,*
*Դու պիտի գտնես նրա խորքերից գանձեր անհամար*
*Ու աշխարհ հանես, ինչպես անթառամ գարուն մի կանաչ...*

*Ողջո՜ւյն քեզ, ողջո՜ւյն, իմ համալսարան, դո՛ւ մայր իմաստուն,*
*Հավատով հաստատ քո դուռն եմ եկել՝ առանց պատրանքի,*
*Տա՛ր ինձ գիտության ջինջ բարձունքներով, տո՛ւր զենքե՜ր հատու,*
*Տո՛ւր թևեր արծվի, տո՛ւր թափ ու թռիչք, մղիր սխրանքի:*

***1954***

## ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

* * *

*Քննություն է... միջանցքում՝*
*Զարկեր, զարկեր սրտերի,*
*Ու այդ խորունկ զարկերում*

*Կյանքի երգն է անթերի*
*Ծնվում, ինչպես խնդություն,*
*Ինչպես քաղցր մի տենչանք,*
*Ու փոթորկում սրտերում*
*Երազներ ու անրջանք...*

* * *

*Դեմքին գույնը վարդերի,*
*Վարդերի բույրը՝ հոգում,*
*Ու հուզումը հրդեհի*
*Պահած ժպտուն աչքերում,*
*Լսարանից քննական*
*Դուրս է ելնում մի տղա,–*
*Շրջապատում են նրան*
*Ու չեն թողնում, որ գնա...*
*Ովքեր դեռ չեն «մկրտվել»,*
*Հարցի տարափ են տեղում,*
*Ու նա ժպտուն՝ կանգ առել,*
*Մոլորվել է իր տեղում...*

* * *

*Հոգում՝ հազար երազանք,*
*Սրտում՝ սերը աներեր,*
*Իսկ ցուցակում՝ «գերազանց»*
*Նա բերել է քեզ նվեր:*
*Դու շիկնել ես ամոթխած...*
*Դու ասում ես թե. «անցանք»,*
*Ես էլ ունեմ «գերազանց»,*
*Իմ սեր, իմ փառք, իմ պարծանք:*

* **

*Քննությունը երբ վերջին*
*Մենք հանձնում ենք «հինգերով»,*
*Տրված կյանքի անուրջին*
*Ջահել, ուրախ խմբերով:*

*Գնում նստում ենք խաղաղ*
*Ղուկասյանի պուրակում,*
*Հրաժեշտի խանդավառ*
*Ջերմ խոսքերը մեր հոգում...*

*Չինարենին օրորվում,*
*Լուռ սոսափում է բարդին,*
*Ու մեզ անվերջ օրորում*
*Երազներով քնքշագին:*

*Մեզ ստվերում է այգին*
*Իրիկնային մշուշում,*
*Մենք մի տարվա մեր կյանքի*
*Պայծառ էջերն ենք հիշում:*

*Ծիծաղում ենք ու երգում,*
*Զրուցում ենք ջերմ սիրով,*
*Ու բաժանվում ենք, գնում*
*Տարբեր, տարբեր կողմերով:*

***1955-1956***

## ՀՈՒՇ

**Անահիտ Չարենցին**

*Հիշո՞ւմ ես գյուղը... չանաքից հետո*
*Մենք շրջում էինք ամեն երեկո,*
*Գյուղական գինուց խենթորեն հարբած,*
*Ընկերների հետ մեր խանդավառված,*
*Հեռու՝ քաղաքից,*
*Դասերի հոգսից,*
*Իրար թև-թևի երգում էինք մենք*
*Ու անցնում ուրախ փողոցներ մեկ-մեկ...*
*Տուն էինք դառնում պարով, աղմուկով,*
*Դյութված, կախարդված աստղերի ցոլքով...*
*Ինչքան լավ էին օրերն այն մաքուր,*
*Բոլորս՝ եղբայր ու բոլորս՝ քույր...*

***1958***

## ԵՐԳ ՈՒՍԱՆՈՂ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

(Նոր տարվա առթիվ)

*Շնորհավո՜ր, շնորհավո՜ր ձեր Նոր տարին,*
*Եվ նոր տարվա առատ ու ճոխ այս սեղանին*
*Ձեզ իմ սրտից պայծառ երազ, ոսկե հույզե՜ր,*
*Ձեզ իմ սրտից ընկերական կարոտ ու սեր...*
*Եկեք հավետ սրտով մնանք վեհ ու մաքուր,*
*Լինենք ազնիվ, լինենք եղբայր ու լինենք քույր...*
*Իսկ երբ գա օրն անջատումի խնդաթախիծ,*
*Խնդությունը թող ձեզ լինի, թախիծը՝ ինձ...*

*Թող բորբոքվի խնջույքը թեժ մեր սեղանին,*
*Ու թող երգենք, «Ամպի տակից ջուրն է գալիս»,*
*Ու թող պարենք, երբ պարելը դուր է գալիս...*
*Ու թող հիշենք խնջույքում մեր ընկերական*
*Այս հինգ անցան տարիների դեպքերն այնքան,*
*Դեպքերն այնքան՝ հաճախ նաիվ, հաճախ՝ չնչին,*
*Բայց մեզ համար նրանք բերին խինդն առաջին.*
*Խինդն առաջին... ծնված գարնան շողից, սիրուց,*
*Խինդը՝ ծնված մեկտեղ երկա՜ր սովորելուց...*
*Խինդը՝ ծնված Ազատավան ծաղկող գյուղից՝*
*Բամբակենու դաշտերում մեր օգնությունից...*
*Եվ նրանից, որ դասերից ազատ ժամին,*
*Մենք նստել ենք Ղուկասյանի այգում լռին*
*Ու երազե՜լ, ու երազե՜լ, ու երազե՜լ,*
*Կարոտի վառ երազներով աշխարհ հյուսել...*
*Կամ այցելել Գառնի-Գեղարդ՝ երգ ու ճիչով՝*
*Մտքով քայլել հին դարերի փոշու միջով...*
*Իջել ձորեր ու ձորերից վեր բարձրացել...*
*Հաճախ խմբով Զանգվի ափերն ենք գնացել,*
*Որ կարծես թե երգ է երգել մեր սրտերում,*
*Թե լույս տալուց լավ բան չկա այս աշխարհում...*
*Շնորհավո՜ր, շնորհավո՜ր ձեր նոր տարին,*
*Եվ նոր տարվա առատ ու ճոխ այս սեղանին*
*Ձեզ իմ սրտից պայծառ ողջույն, պայծառ հույզեր,*
*Ձեզ իմ սրտից ընկերական կարոտ ու սեր...*

* * *

*Ղուկասյանի պուրակում կնստենք մի օր,*
*Ղուկասյանի պուրակում, զով ծառերի տակ,*
*Էլ չես լինի խուսափող՝ վիթի պես շորոր,*
*Կյանքի խայտանքը կզգաս ու սերս կրակ:*

*Մենք կհիշենք կարոտով օրերը անցած,*
*Թե ինչպես ես ինձ տանջել... դու կժպտաս լուռ,*
*Մեր հայացքները շիկնած կփարվեն հանկարծ,*
*Ամեն ինչ խոր կլինի, ամեն ինչ մաքուր...*

*Ղուկասյանի պուրակում ծառեր կան դալար,*
*Ղուկասյանի պուրակում կնստենք մի օր,*
*Ծառերը մեզ կնայեն, կժպտան իրար,*
*Ու խնդությամբ բռնկված՝ կերգենք օրոր...*

***1959***

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

(Խոսք հոբելյանական)

*Ի՞նչ երկյուղով ուխտավորի*
*Մենք քո դուռն ենք եկել մի օր,*
*Երազներով մեր անթերի,*
*Կարոտներով մեր բորբ ու խոր,*
*Եվ դու սրտով լույս Մաշտոցի,*
*Խորենացու խոհով բեղուն*
*Մեկնել ես մեզ առեղծվածի*
*Գաղտնիքները հազարանուն...*

*Գուրգուրել ես քո գրկի մեջ*
*Գժված սերը մեր սրտերի,*
*Հուն տվել մեր հույզերին պերճ,*
*Լցրել տենչով գագաթների:*
*Ներել ես միշտ փոքր ու թեթև*
*Մեղքերը մեր ջահելության,*
*Կոփել ես մեզ ու տվել թև՝*

*Մղել անթիվ նոր հայտնության...*
*Ավարտելուց հետո՝ կյանքում,*
*Ուր էլ գնում, ինչ էլ անում,*
*Քո իրղեհած գիտությամբ ենք*
*Օրը օրի հզորանում,*
*Քո անթեղած խինդն է մեր մեջ*
*Լուսավորում օրերն անբիծ,*
*Քո պարգևած լույսերն են պերճ,*
*Ցրում ամեն հոգս ու թախիծ:*
*Դու մեր արյան երակներում*
*Հազարամյա հուր ես վառել...*
*...Թրծել խոհի կրակներում,*
*Հայորեն ես թևավորել...*
*... Ուր էլ գնում, ինչ էլ անում,*
*Քեզ ենք զգում մեր թիկունքին,*
*Քեզանով ենք կարողանում*
*Լույսի ցոլքեր բերել կյանքին...*

*Մեր սրբազան համալսարան,*
*Հիսունամյա հոբելյանիդ*
*Լույսերի մեջ այս հուրհրան –*
*Անցած, գալիք սերունդներիդ*
*Երազներն են աստեղանում,*
*Առնում թևեր իմաստության*
*Որ դարերի հեռաստանում*
*Ցոլա թագը հավերժության:*

***1970***

## ՍՈՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

* * *

*Դու հասկանում ես երգիս լեզուն,*
*Թեև ասում են՝ «ֆիզմաթցի ես չոր»,*
*Ես սիրում եմ քո հոգին երազուն,*
*Հայացքդ հպարտ, գերող ու անդորր:*

*Դու գիտես հուզել, մորմոքել սրտեր*
*Ու քննել մարդու ներաշխարհը խոր,*
*Զգալ ավելին, ավելի, քան ես,*
*Թեև ասում են՝ «ֆիզմաթցի ես չոր»:*

* * *

*Ինձ մոռացե՞լ ես, թե՞ հիշում ես դեռ,*
*Մի պա՞հ ես սիրել, թե՞ սիրում ես դեռ,*
*Արդյոք ո՞ր ճամփում, ո՞ր փողոցի մոտ*
*Մենք կհանդիպենք սրտերով կարոտ:*

***1957***

### ԱՐԵՎԵԼՔ ՄԵԿՆՈՂ ԸՆԿԵՐՈՋՍ

*Հիմա ուրիշ են ճամփաները մեր,*
*Քեզ է կանչում քո ապագան փայլուն,*
*Ու թողած ինձ մոտ հազար խինդ ու սեր՝*
*Դու հեռանում ես կարոտով անհուն:*

*Գնա, իմ անգին, տար սերս քեզ հետ,*
*Կառուցիր կյանքդ ինձանից հեռու,*
*Կավարտեմ ես էլ տարիներ հետո*
*Ու քեզ մոտ կգամ նոր կյանք կերտելու:*

*Հիմա ուրիշ են ճամփաները մեր,*
*Թեև մեր սրտում նույն կարոտն է վառ,*
*Բայց քանի սերն է մեզ տվել թևեր,*
*Մեկ է, սիրելիս, կգտնենք իրար:*

***1958***

## ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՅԳՈՒՄ

*Երբ հոգնել ենք դասերից, երբ թախծել կամ ցնծացել,*
*Հանգստացել ենք նորից փոքրիկ այգում հարազատ,*
*Ուր մեր զնգուն ծիծաղից Ղուկասյանն է արթնացել*
*Ու փարվել է կարոտով Հայաստանին իմ ազատ:*

*Ու տարիներ են չվել, ուսանողներ նրանց հետ,*
*Դարձյալ նույնն է մեր այգին՝ մշտաօրոր, ծաղկավետ,*
*Միայն շիվերն են մեզ հետ հիմա այնքան մեծացել,*
*Որ այս գարնանը արդեն հազար բողբոջ են բացել:*

*Ու դեռ ինչքան պիտի գան հազար-հազար հույսերով*
*Ու մեր այգին օրորեն սիրակարոտ հույզերով...*

***1959***

## ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

*Խառնվել են սեր ու դասեր,*
*Ոչ դասն է դաս, ոչ սերն է սեր...*
*Գրաբար են մարդիկ սերտում,*
*Մինչդեռ դու ես լոկ իմ սրտում:*

*Ու միտքս միշտ այդպես մոլոր՝*
*Չի ըմբռնում բայ ու հոլով,*
*Ա՜խ, ի՞նչ անեմ, ա՜խ, ո՞ւր գնամ,*
*Դասերս բարդ ո՞նց հասկանամ:*

*Ասա՛, սե՛ր իմ, ես ի՞նչ անեմ,*
*Ռեկտորատի՞ն գուցե դիմեմ,*
*Սիրո համար ռեկտորատում*
*Չե՞ն տա արդյոք ինձ տարկետում...*

***1959***

**ԳՐԻԳՈՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Ամեն տարի սեպտեմբերին զանգիդ ձայնն է երբ ղողանջում*
*Ու գիտության ծարավներին գոհ ժպիտով գիրկդ կանչում,*
*Հիշում եմ ես աշնանային առավոտն այն արևավառ,*
*Երբ ոտք դրի ես քո շեմին, իմաստության դու բա՜րձր սար:*
*Ոտք գրեցի... դու ասացիր. «Այնչափ բարձր է գագաթը իմ,*
*Ապառաժներ, նեղ կածաններ միշտ կտեսնես դու քո ճամփին,*
*Կլինի պահ, երբ վարանած կկամենաս չբարձրանալ,*
*Կկարոտես ձեր դաշտերին, անտառներին ու ջրերին պարզ ու զուլալ:*

*Բայց թե հանկարծ դու վախենաս, չմագլցես ժայռերս ի վեր,*
*Չեմ տա ես քեզ կյանքում ազատ սավառնելու ամուր թևեր...»:*
*Ես լսեցի խորհուրդը քո, իմ մեջ գտա կամք ու կորով,*
*Ընկերներիս հետ միասին վեր ելա քո կածաններով,*
*Դժվար էր շատ, բայց հաճելի ու ցնծալի ընթացքը մեր...*
*Ու բարձրացանք քո ճամփեքով, մագլցեցինք ժայռերդ ի վեր:*
*Դու տվեցիր մեզ գիտություն՝ կյանքի ոսկե թանկ բանալին,*
*Որով հիմա մենք ճամփա ենք հարթում գալիք սերունդներին...*

*Սեպտեմբեր է նորից: Աշո՜ւն: Քո դժվարանց լանջերն ի վեր*
*Դեպի գագաթ են բարձրանում անթիվ տոկուն ուսանողներ,*
*Ու... Նայիր ցած, տե՛ս, նորերն են եկել երկրի ամեն ծայրից,*
*Որը գյուղից, որը հանքից, որն էլ մոտիկ գործարանից...*

*Վեր են ելնում...*
*Նրանց ասա. «Այնքան բարձր է գագաթը իմ,*
*Ապառաժներ, նեղ կածաններ միշտ կտեսնեք դուք ձեր*
*ճամփին,*
*Սակայն անվախ վեր բարձրացեք քրտինքով ու*
*աշխատանքով,*
*Գիրքը՝ միշտ էլ ձեզ օգնական, չընկճվեք երբեք հոգով,*
*Համառ կամքով ու եռանդով թե մագլցեք ժայռերն ի վեր,*
*Կտամ ես ձեզ կյանքում ազատ սավառնելու ամուր թևեր...»:*

*Իմ սիրելի համալսարան, զանգդ հավերժ թող ղողանջի*
*Ու գիտության ծարավներին գոհ ժպիտով գիրկդ կանչի:*

***1958***

**_ՍԵՐԳԵՅ ԱԹԱԲԵԿՅԱՆ_**

## ԵՐԳ՝ ԳՐՎԱԾ ԸՆԹԵՐՑԱՍՐԱՀՈՒՄ
(Չափածո ակնարկ)

*Մեկը կարդում է շատ խորասուզված,*
*Կարծես լողում է մտքերի ծովում,*
*Մեկը գրիչն է կրծում շատ հուզված,*
*Ու լայն ճակատից հարցեր են ծորում:*

*Մեկը մտել է հինգերորդ դարը,–*
*Ի՞նչ արյուն եղավ մեր Ավարայրում,–*
*Վարդանն է ընկնում, ընկնում արդարը...*
*«Դո՛ւ, Քերթողահայր, ինչպե՞ս ես այրում»:*

*Մեկը նայում է կողքի նստածին*
*Ու Նարեկացու նվագն է լսում,*
*Թաքնված դո՛ւ սեր, դո՛ւ ողբ նորածին,*
*Աստղերն են այսօր միայն քեզ հասնում...»:*

*Մեկը չգիտե՝ ինչպես մշակի,*
*Թանաքոտ մատը բերանն է տանում...*
*Մեկը ուրախ է, ուրախ կրկնակի՝*
*Սայաթ-Նովայով է հպարտանում:*

*Մի սևուկ աղջիկ՝ գրքերն առաջին,*
*Մատներն է խրել մազերի մեջ սև,*

*Կարծես ասում է՝ լսե՛ք իմ կանչին,*
*Գրքերն են տալիս ինձ թռիչք ու թև:*

*Լռությունը խոր մեկը խախտում է,*
*(Քանի՞սը կորցրին կարդացվող տողը),*
*Լա՜վ, մի՛ նախատեք, դե սա էլ տուն է,*
*Ա՜յ, տե՛ս, ներում է ինքն՝ աշխատողը…*

*Մեկը կարդում է «Սասունցի Դավիթ» –*
*«Դավիթը միշտ էլ քաջ է, մնացել,*
*Վեհ է մնացել, մարդուն՝ զորավիգ,*
*Եվ արևով է նա լոկ տաքացել»:*

*Օ՜, իմ ժողովո՛ւրդ, դո՛ւ արևատենչ,*
*Արևաբերող դու ուժ ու ավիշ,*
*Դու գարնան մարտիկ և ամռան դու տենդ,*
*Մնում ես դու միշտ կախարդ ու թավիշ…*

*Խոր, ճշմարտասեր պատմիչները մեր,*
*Դարեր են բերել, բացել մեր առաջ,*
*Ու մեկի սրտից բխում է մեծ սեր,*
*Մյուսի հոգուց անզուսպ մի հառաչ:*

*Մեծերն աշխարհի բացվել են այստեղ,–*
*Առաջնորդում է Հոմերոսն արթուն,–*
*Նրանք դարե՜ր են, կրա՜կ են, անթե՜ղ,*
*Խոհ են, գիտելիք, նաև քննություն…*

***1962***

## ***ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***

***

*Թողած աշխարհը ուսանողական*
*Թողած քաղաքի ժխորը ծանոթ,*
*Կրկին կարոտով մի նվիրական*
*Մանթաշի ձորով գալիս եմ քեզ մոտ:*

*Ու նույն ջերմությամբ փարվում է, ա՜խ, ինձ,*
*Հայրենի սարի զեփյուռն հովասուն,*
*Դո՜ւ, միայն դու ես փոխվել կարոտից*
*Իմ բարի՜, իմ լա՜վ, մա՜յր իմ սիրասուն:*

***1960***

## ԱՐՏԱՇԵՍ ՂԱՀՐԻՅԱՆ

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Երգս կարկաչեց հույզերից հորդած,*
*Եվ սիրտս ծփաց սրբազան դողից,*
*Երբ արևաշող խոհերով տարված*
*Քո գիրկը եկա հայրենի գյուղից:*

*Շեմքիդ երդումի խոսքեր են մի պահ*
*Ծնվում իմ հոգում այրող պաթոսով,*
*Իմ համալսարան, մտքի անշեջ ջահ,*
*Գրկեցիր դու ինձ գիտության լույսով:*

*Արդ ես հպարտ եմ և այնպես կարոտ*
*Կյանքի լուսաշող էջերին գալիք,*
*Կամարներիդ տակ վեհ ու լուսահորդ*
*Ես վաղվա օրն եմ տեսնում երջանիկ:*

*Օ՜, սիրում եմ քեզ, իմ համալսարան,*
*Գիտության տաճար, կյանքի ոսկե դուռ,*
*Մաքառմամբ պիտի լողամ անսահման*
*Ծովիդ մեջ, տեսնեմ գաղտնիքն ամենուր:*

***1956***

***ՍԵՐԳԵՅ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

## ԱՅՍ ՍՅՈՒՆԵՐԻ ՎՐԱ

Նվիրում եմ համալսարանի համալիրը
կառուցողներին

*Հիշում եմ, մի օր այս շենքի պատին*
*Հղկում էր քարը մի ջահել տղա,*
*Վարդագույն փոշին եղյամի նման*
*Իջնում էր դեմքին, ուսերին նրա:*

*Ու թեև նրան էլ չեմ հանդիպում,*
*Բայց լավ հիշում եմ հայացքը նրա,*
*Կոշտացած ձեռքի հետքերն եմ տեսնում*
*Այս անբիծ ու վեհ սյուների վրա:*

***1960***

***ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ***
***(ՏԻԳՐԱՆ ԲԱԿՈՒՐ)***

## ԻՄ ԱՎԱՐՏՈՂ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

*Կանչում է հեռվից կապույտ ապագան,*
*Ձեզ, իմ ընկերներ, երկնի ժպիտով,*
*Դուք պիտի մտնեք քայլով հաղթական*
*Մեր վճիտ կյանքի գիրկը հոգեթով:*

*Համալսարանը որպես սուրբ կարոտ,*
*Ձեզ պիտի կանչի հուշերով անուշ,*
*Երանի կտաք բոլոր երազկոտ*
*Օրերին այն հին, որ դարձել են հուշ:*

*Բայց պատանեկան իղձերը գունեղ*
*Իրականացած՝ ձեզ պիտի թովեն,*
*Իմ լայնատարած երկրում ամեն տեղ*
*Դարձյալ կհիշեն հարազատորեն:*

*Այս նվիրական լսարաններում*
*Թողել են ձեզնից ոմանք երազներ,*
*Ոմանք՝ մտքերի աշխարհներ խռհուն,*
*Ոմանք՝ վայրկյաններ անրջանքաբեր:*

*Կանչում է հեռվից կապույտ ապագան,*
*Ձեզ, իմ ընկերներ, երկնի ժպիտով,*
*Դուք պիտի մտնեք քայլով հաղթական*
*Մեր վճիտ կյանքի գիրկը հոգեթով:*

***1957***

ՀՈՄԵՐ ԵՐԻՑՅԱՆ

## ԻՄ ԱՆՄՈՌԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Թող սրբազան Մայր Վանքը մեր՝*
*Ձեռքերը լայն վեր կարկառած,*
*Քեզ մաղթի վեհ, շքեղ օրեր՝*
*Արարատի աչքի առաջ:*

*Սարդարապատ մեր սուրբ ճիգի՝*
*Մեր մեծ ճիգի տարերքն առած,*
*Ելար խորքից՝ դժվար կյանքի՝*
*Արարատի աչքի առաջ.*
*Ելար, որպես կանչ՝ մեր արյան,*
*Ծո՜ղ նորածագ, Համալսարան:*

*Հայոց լույսին՝ ցրիվ, անտեր,*
*Աշխարհով մեկ, համատարած,*
*Դարձար ակունք և դարձար տեր՝*
*Արարատի աչքի առաջ.*
*Իմաստության ծով-ծփարան,*
*Արև՜ առատ, Համալսարան:*

*Պատվո սրահ… անգին մեծեր՝*
*Քե՜զ արարած, քո՜ արարած,*
*Ասես լռին խորհում են դեռ*
*Արարատի աչքի առաջ.*

*Խոր խոհերի երթ անվարան,*
*Ղողա՛նջ լույսի, Համալսարան:*

*Երազ էր, երբ սանն էի քո՝*
*Կյանքս ուսում ու սեր արած,*
*Մասսյաց վսեմ շուքի ներքո,*
*Նվիրյալներիդ աչքի առաջ.*
*Կարոտներիս սուրբ գանձարան,*
*Իմ անմոռա՛ց Համալսարան:*

*Լույսո՛վ հյուսվի ամեն տարիդ,*
*Եվ ջահդ հար պայծառ վառած,*
*Շողարձակես սերունդներին՝*
*Արարատի աչքի առաջ,*
*Մեծեր կերտես լերան-լերան,*
*Կերտողամայր Համալսարան:*

*Եվ ծնունդիդ խորհուրդը թանկ՝*
*Նվիրական երդում արած,*
*Գործեր գործես խոյանք-խոյանք՝*
*Արարատի աչքի առաջ.*
*Մեր հոգու ջինջ, աստղաշարան*
*Իղձերի հե՛ք Համալսարան:*

*Թող փունջն այս հույզ ու խոհերի՝*
*Սրտիս խորքից քե՛զ բարբառած,*
*Լինի սիրով ընդունելի՝*
*Արարատի աչքի առաջ.*
*Հույզի՛ս օրրան, խոհի՛ս օրրան,*
*Սրտի՛ս նման Համալսարան:*

**ԱԼԵՔ ԽԱՉՈՒՆՑ**

## «ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԽՈՊԱՆՈՒՄ» ՇԱՐՔԻՑ

### ԱՌԱՎՈՏԸ ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ

(Պատկեր)

*Հրից շիկնել են հորիզոնները,*
*Երկինքն անամպ է ու անթախիծ,*
*Շողիկ մատներով պայծառ արևը*
*Ցողն է հավաքում ծաղիկներից:*

*Հովի նվագով արտը պարում է,*
*Արևը արտի շուրթն է վառել,–*
*Կոմբայնի ծուխը մեղմ գալարվում է,*
*Դեռ հազիվ է մի պտույտ արել:*

*Շիկնել է երկնի կապույտ սավանը,*
*Հալվում է մեգը լայն դաշտերի,*
*Հեռվից շողում է փոքրիկ ավանը,*
*Ծուխ է բարձրանում օջախներից...*

*Բաց են աչքերիդ ճանապարհները,*
*Ուր նայես՝ արտ է – մարդը միջին, –*
*Իմ ընկերների թուխ գանգուրները*
*Ոսկով է օծել հարդափոշին:*

*Հացի շեղջերը կալած շողում են՝*
*Ամեն մեկը՝ մի ոսկե բլուր,*
*Ծերուկ Աքբայը խինդից դողում է*
*Եվ օրհնում է մեր վաստակը լուռ...*

*Արտի ճամփերով մեքենաները*
*Կալերից պահեստ բերք են տանում,*
*Եռում է կյանքը, ծփում արտերը:*
*Երբեմնի խոպան տափաստանում:*

*Հրից շիկնել են հորիզոնները,*
*Վերից ժպտում է երկինքը լուրթ,-*
*Պայծառ արևն էլ ասես ելել է*
*Տքնաջան մարդկանց համբուրելու...*

***1958***
*(Ղազախստան, Կուստանայ)*

## ԵՐԳ ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ

*Վերջին աստղերն են մեկ-մեկ մարում,*
*Լույսը կռվում է խավարի դեմ,-*
*Ու թևածում է տափաստանում*
*Հայկական անո՜ւշ, անուշ մի երգ:*

*Երգը լռում է... ու աննահանջ*
*Մրցման են մտնում տղերքն անխոս,*
*Խիղճը դառնում է խստապահանջ,*
*Խիղճը դառնում է մի դասախոս...*

*Մեկը դարձած ժիր կոմբայնավար,*
*Թել-թել մազերը տված քամուն,*
*Ոչ գիշեր գիտե, ոչ լուսաբաց,*
*Անծայր արտերից բերք է քամում:*

*Դեղին ցորենը արձակ կալում*
*Դարսում են սիրով տղերքը մեր,–*
*Ու սեգ սարերի նման Հայոց՝*
*Ցորենի շեղջերն են խոյանում վեր:*

*Ես հանդից պահեստ բերք եմ բերում,*
*Փույթ չէ, բեռան տակ թե կորանամ,–*
*Թող խաղաղության պահեստներում*
*Իմ Երևանն էլ սերմ ունենա...*

*Ջրհոր են փորում մի խումբ տղերք,*
*Ջուր հանում գետնի խոր հատակից,*
*Որ թողնեն որպես հիշվող նվեր,*
*Հեռու-հեռավոր Հայաստանից:*

*Ու երբ երեկոն անտես ձեռքով*
*Մանում է մութը թևատարած,*
*Մենք վրաններ ենք դառնում երգով՝*
*Կովող լույսի պես հաղթանակած:*

*Նորից գիշեր... ու մութն է հալվում,*
*Լույսը կռվում է խավարի դեմ,–*
*Ու թևածում է տափաստանում*
*Հայկական անո՜ւշ, անուշ մի երգ:*

***1958***

## ՈՒՍԱՆՈՂ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

*Այստեղ ամեն օր, ջինջ աստղակաթին*
*Լորերի կանչը ինձ արտ է տանում,–*
*Ու ես տեսնում եմ արտերի միջին*
*Ծաղիկն ինչպես է քնից արթնանում...*

*Տեսնում եմ՝ ինչպես արտերի ծովում*
*Կոմբայնն է լողում՝ ինչպես մի նավակ,*
*Եվ ընկերներն իմ՝ հպարտ ու խոհուն,*
*Հնձում են ոսկի արտերն անպարփակ:*

*Շշունջն արտերի երգեր են դառնում,*
*Սիրտս լցվում է բարությամբ անծայր,*
*Ու խոր հույզերս լեզու են առնում,*
*Կյանքը դառնում է ավելի պայծառ:*

*Հոգիս ուզում է բոլորը մեկեն՝*
*Սոսափն արտերի, ծաղկունք ու արոտ,–*
*Ջերմ ու կենսախինդ երգերի փոխել*
*Եվ ուղարկել ձեզ՝ որպես մի կարոտ:*

*Բայց այստեղ այնքան ծաղկունք անթառամ,*
*Արտեր կան նազող, անտառներ կան պերճ,*
*Ո՞րը գովերգել... Շուտով ես կգամ՝*
*Բոլորն ամփոփած իմ աչքերի մեջ...*

*Բայց մինչ իմ գալը՝ որպես մի նվեր,*
*Երգս եմ ուղարկում՝ արտի մեջ գրած,–*
*Նրա մեջ հուզված մի սիրտ եմ դրել*
*Եվ զգվանքներն իմ՝ հովերից խլած:*

***1958***

## ՌԻՍՄԱՆՈՂԱԿԱՆ

*Ես ծաղիկներ եմ բերել քեզ համար,*
*Երկար պատմել եմ նրանց քո մասին,*
*Փնջել եմ սիրով, բերել լսարան,*
*Սակայն, ինչ արած, չես եկել դասի:*

*Չի հնչել անուշ ղողանջը զանգի,*
*Դեռ աղջիկները երգում են հուշիկ,*
*Քեզ համար քաղած ծաղիկն, իմ անգի՛ն,*
*Սիրտս արգելեց, որ տամ ուրիշի:*

*Իսկույն բռնկվեց շշուկն անմեկին,*
*Այդ պահին այնքա՜ն աչք կար ինձ նայող…*
*Եվ հայտնի դարձավ այդպես ամենքին*
*Մեր գաղտնի սերը՝ քո բացակայով:*

***1961***

## *ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ՀՈՎՆԱԹԱՆ)*

### ԽՈՊԱՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

*Գիտեմ, հարուստ եք հուշերով այնքան,*
*Հոգով հպարտ եք այսօր ետ եկել,*
*Պատմեք, ինչ գիտեք, իմանամ ես էլ,*
*Գիտեմ, հարուստ եք հուշերով այնքան:*

*Ու ձեր սրտերում տրտունջներ չկան,*
*Ամենքդ մի-մի աշխարհ եք բերել,*
*Գիտեմ, հարուստ եք հուշերով այնքան,*
*Հոգով հպարտ եք այսօր ետ եկել:*

***1958***

### ՎԵՐԱԴԱՐՁ

*Անհոգ խաղով եկա քաղաք,*
*Առվի տաղով եկա քաղաք*
*Եվ երազով լի,*
*Բայց միշտ գյուղիս օրը պայծառ*
*Իմ մանկության ձորը դարձյալ*
*Մնաց սիրելի:*

*Հիմա կյանքին սիրտս բացած*
*Ու խոհերով հարստացած*

*Եվ հոգով խնդուն,*
*Իմ մանկության գետի ափով,*
*Եվ մեծացած ինչ-որ չափով,*
*Ես գնում եմ տուն:*

*Ահա տունն իմ թթենու տակ,*
*Որ բարակ ծուխն իր կապուտակ*
*Խառնում է ամպին:*
*Վերադարձիս լուրը առել,*
*Այդ մայրս է կրակ վառել*
*Նայում է ճամփիս:*

*Դեզին աքլորն է մեր կանչում,*
*Եվ մեր շունն է ինձ ճանաչում,*
*Երբ մտնում եմ տուն:*
*Ես այնպես եմ խինդից հալվում,*
*Երբ ջերմությամբ ինձ է փարվում*
*Մի բարի անուն...*

***1962***

## ԱՐՄԵՆԱԿ ՂԱԶԻՆՅԱՆ

### ՎԵՐԱԴԱՐՁ

*Մտնում եմ նորից հարազատ շեմքից,*
*Ծեր դռնապանին բարևում սրտանց,*
*Խնդության շողն է փայլում իմ դեմքին,*
*Ցնծում է սիրտս կարոտով անանց:*

*Ծանոթ աղմուկն է գերում ինձ էլի*
*Վաղուց մոռացված լավ երգի նման,*
*Սեղմում եմ ձեռքերն իմ ընկերների,*
*Ու քաղցր է այնպես ժամը հանդիպման:*

*Սկիզբ են առնում կատակ, հարց ու վեճ,*
*Իսկ ինչ-որ տեղից երգեր են հնչում,*
*Եվ զվարթաձայն այդ աղմուկի մեջ*
*Զանգի ղողանջը դասի է կանչում:*

***1959***

### ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

*Պատուհանից խուժում է ներս,*
*Նորեկ գարնան զեփյուռը զով,*
*Հեռվից ասես կանչում է քեզ*
*Բարդիների շարքը նազող:*

*Բայց նստել են բոլորն այստեղ՝*
*Հասակավոր, թե պատանի,*
*Խորասուզվել գրքերի մեջ,*
*Խորհրդավոր, հնամենի…*
*Մեկն այնպես է հակվել գրքին,*
*Որ նա կարծես ջուր է խմում,*
*Մեկն ապշել է խոր զարմանքից,*
*Եվ բիբերն են, ասես, լայնանում:*
*Մեկը շրջում թերթը գրքի*
*Ու ժպտում է բեղերի տակ,*
*Մոտ է քաշում մեկը կրկին*
*Նշումների մի հին տետրակ:*
*Մեկը թեքվում իր սեղանին*
*Ու ծիծաղն է հազիվ զսպում,*
*Ամպ է իջել մեկի դեմքին,*
*Արցունքներն եմ ես նկատում:*
*Մեկը քաղց է զգում թեթև,*
*Բայց չի ուզում գիրքը թողնել,*
*Մեկն ուզում էր կինո գնալ,*
*Սակայն արդեն միտքը փոխեց:*
*Եվ բոլորն էլ անանց սիրով*
*Լռության մեջ այս խորհիմաստ*
*Հեռացել են մտքի թևով*
*Նոր աշխարհներ մինչ այդ անհայտ:*
*Ու երբ նրանք գրքից հոգնեն,*
*Պիտի ելնեն թեթևացած,*
*Չէ՞ որ դատարկ մտան այստեղ,*
*Դուրս են գալիս հարստացած:*

***1962***

## *ՍՈՒՐԵՆ ԽՈՋԱՅԱՆ*

### ՔԱՐՏԱՇԸ

Ի հուշ ԵՊՀ շենքի շինարարներին

*Տաշում է, հղկում վարպետը ջահել,*
*Տաշում է քարը ու քանդակում այն,*
*Քրտինքի շիթն է ճակատից կախվել,*
*Փոշի է նստել մազերին նրա:*

*Այնպես է տաշում վարպետը հպարտ,*
*Մի մագաղաթ է ասես նա քերթում,*
*Ասես ազգային պատմիչ է անմահ,*
*Կյանքն է դրվագում որպես պատմություն:*

***1961***

### ՏԱՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

*Հազար գյուղից ու քաղաքից, հազար ոսկի հանք ու արտից,*
*խոստումնալից, սիրով անբիծ հավաքվե՛լ եք, ուսանողներ,*
*Ե՛վ կենսալի, և՛ հուսալի, և՛ հուզալի, և՛ լուսալի՝*
*լույս թևերին երազների, դուք եկե՛լ եք, ուսանողներ,*
*իմաստալից ձեր անցյալից, ձեր օջախից, տուն ու տեղից,*
*այն ամենից չկան նորից, ինչ բերե՛լ եք, ուսանողներ,*
*Դարձած թախիծ, մերթ էլ՝ կսկիծ, կանչ սրտակից՝ ձեր ետևից,*

*և՛ ձեզ կանչող այդ հուշերից դուք արդ վե՛ր եք, ուսանողներ:*

*Պետք է լարվել է՛լ առավել՝ ձիրք չթողնել, գիրք չթողնել,*
*ձեզնից անցել, գոհ մնացել ու հիացել-այդպես է դա.*
*Դուռ եք բացել, սան եք դարձել, ձեզ հետ մրցել, ձեզ ածանցե՛լ*
*սա իղձն էր ձեր, աչք եք դարձել, մարմնացել հանուն վաղվա,*
*Պետք է լարվել է՛լ առավել՝ ձիրք չթողնել, գիրք չթողնել,*
*քունը սեղմել, ցավը մեղմել ու մնալ տեր լուսյի օրվա,*
*Դեռ էն գլխից քննավախից անցնել հեռվից ու անթախիծ,*
*երգել նորից, վեր բոլորից, դուք երգե՛ր եք, ուսանողներ:*

*Կյանքն այս անհուն, լիահորդուն, որ խլրտում մարդկանց*
*սրտում,*
*սիրով խնդուն գիրկն է առնում ու վեր տանում գիտուններին,*
*Դուք քուն-արթուն, մարդիկ՝ արտում, մարդիկ՝ հանքում, և*
*օրն ի բուն*
*հաց են հայթում, ուղի հարթում, որ հասնեք դուք հեռուներին,*
*Եղեք խոհուն, որ հացն ուտում, դիրք եք կարդում, խաղաղ*
*պառկում,*
*երկրի մարդուն հիշեցեք դուք, նա իր հոգում ձեզնով է լի,*
*Եղեք խորհուն մարդկայնության, իմաստության գանձեր*
*ներհուն,*
*սեր-սրբություն՝ տվեք հոգուն, դուք վառ սե՛ր եք, ուսանողներ:*

*Կգա մի օր, որ լուսավոր, մտահզոր ձեր տանն այս նոր*
*դուք բախտավոր ու թևավոր «մնաս բարով» կասեք սրտանց,*
*Ձեր դեմ նոր օր, դուք հաղթ-հզո՛ր, գանձաբեռով ու փառավոր,*
*երախտավոր ձեր հոգևոր հնքով հրե ու թևաբաց,*
*Կամքով անկոր, խոսքով ձեր նոր, ձեր նորերով մեր ամեն օրն*
*է՛լ լուսավոր, է՛լ թևավոր, արգասավոր հարստացած...*

*Բայց դեռ հոգով, դարձեք լի ծով, լցրե՛ք լույսով երկիրն անծիր,*
*մնում է, որ դուք գաք սիրով, դուք ձեռքե՛ր եք, ուսանողներ:*

*Եվս մի բան. աշխարհին համայն ճամփա չէ լայն ու անսահման,*
*ու աշխարհում ամեն բան չէ, որ ձեր սրտով տեղում է իր,*
*Դեռ քարեր կան, դեռ սարեր կան՝ շուռ պետք է տանք ինչպես*
*հսկան,*
*բան է՝ հանկարծ ձեր դեմ կելնեն մարդիկ անկամ ու անպատիր,*
*Կյանք է անհո՜ւն, ինչե՜ր չկան, թերթեք որքան գիրք ու*
*մատյան,*
*միշտ չէ որ կա կուռ պատասխան՝ խոսք մոգական ու լիցքակիր,*
*Ձեր մեջ, սակայն, խոսքեր շատ կան լուռ, ոսկեգամ...եղեք ձեր*
*տան*
*ճորտն ու արքան հզորակամ, դուք հույսե՛ր եք, ուսանողներ:*

***1962***

**_ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ_**

## ԵՐԲ ՄՏՆՈՒՄ ԵՍ ԴՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Գարուններ առած՝ դու վստահ քայլում,*
*Սիրտդ հուզվում է ծովի նման,*
*Քեզ ավելի է մեր կյանքը փարվում,*
*Երբ մտնում ես դու համալսարան:*

*Ասես թե առած սավառնում ես դու*
*Դեպի երկինքներն աստղավառման,*
*Քո գարուններն ես այնտեղ տանում,*
*Երբ մտնում ես դու համալսարան:*

*Ու քաղցրանում է կյանքը գեղատես,*
*Իր գիրկն է բացում անուշ մոր նման,*
*Քեզ լույսն է գտնում ու գրկում է քեզ,*
*Երբ մտնում ես դու համալսարան:*

***1961***

**ՎԻԳԵՆ ԲԱԲԱՅԱՆ**

## ԹՈ՜Ղ ԲԱՐԻ՜ ԼԻՆԻ ՔՈ ՃԱՆԱՊԱՐՀԸ

(Շրջանավարտ ընկերոջս)

*Դու կյանք կտանես խինդը աչքերիդ,*
*Քո դեմ կբացվի մեր նոր աշխարհը,*
*Պայծառ հույզերից կցնծա հոգիդ,*
*Թո՜ղ բարի՜ լինի քո ճանապարհը:*

*Որպես իր ջահել որդում լուսաշող,*
*Քեզ գիրկը կառնի մեր լույս աշխարհը,*
*Դու էլ լույսդ տար մարդում երազող,*
*Թող բարի լինի քո ճանապարհը:*

*Երբ խինդակորով բարձունքներ հասնես,*
*Հասնես գալիքի թովիչ աշխարհը,*
*Այդ կատարներից ինձ ձեռքով կանես,*
*Քո ճամփով կանցնի իմ ճանապարհը:*

*Իսկ ես կկանչեմ մարդուն, ամենքին,*
*Նոր խինդով լցված աշխարհը արար,*
*Հզոր խոյանքից կցնծա հոգիս,*
*Բարի՜ ճանապարհ, բարի՜ ճանապարհ;*

***1960***

***ՔԵՐՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

## ***ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐ***

*Դու ծնվել ես արշալույսին Հայաստանի*
*Մեր նաիրյան բորբ արևի շողերի տակ,*
*Եվ գիտությամբ, ինչպես կամար ծիածանի*
*Զարդարում ես հայրենիքը իմ բովանդակ:*

*Ո՜վ գիտության փայլուն տաճար, համալսարա՜ն,*
*Ստեղծագործ մտքի շողն ես Հայաստանի,*
*Ողջո՜ւյն քեզ, իմ համալսարան Երևանյան,*
*Մեծ գիտության դրոշդ թո՜ղ հար ծածանվի:*

***1961***

***ԹԱԹՈՒԼ ԲՈՒՈՐՋՅԱՆ***
***(ԳԵՂԱՊԱԾՏ)***

## ԱՅՍ ԱՌԱՎՈՏ

*Խնդությունն է իմ մեջ խոսում*
*Եվ երազիս գարունը տաք,*
*Սիրտս մի նոր երգ է ասում*
*Սեպտեմբերյան արևի տակ:*

*Առավոտն է երգում ահա*
*Եվ շողաշատ կանչում է ինձ,*
*Կարոտի պես գալիք օրվա*
*Զինջ աստղերն են ժպտում հեռվից:*

*Դեպի բարձունք են արշավում*
*Զահելության խոհերն անսանձ,*
*Գիտեմ նրանք ուր են գնում՝*
*Գարունների խինդով արբած:*

*Այս առավոտ սրտի անհուն*
*Հրճվանք ու խինդ ես զգացի,*
*Այս առավոտն է ինձ տանում*
*Դեպի լույսերն այգաբացի:*

***1960***

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

*Միայն լույսերն են վառվում միջանցքի,*
*Հոգնած քնել են ուսանողները,*
*Ես լույսն եմ մարում վերջին սենյակի,*
*Ննջում են խաղաղ իմ ընկերները:*

*Մեկն իր նոր գիրքը դեռ չկարդացած,*
*Գլխի տակ դրել, քնել է անուշ,*
*Մեկը մատիտն է ձեռքից գցել ցած*
*Եվ փայփայում է երազում մի հուշ:*

*Վերցնում եմ մատիտն ու մի պահ խորհում,*
*Գնում եմ կողքի աթոռի վրա,*
*Ապա մի պահ ձեռքս երկարում,*
*Ուղղում եմ ընկած վերմակը նրա:*

*Նրանք, որ անվերջ գրքեր են կարդում,*
*Քնել են վաղվա հույսերով լցված...*
*Ա՜խ, ինչքան լավ է այս դալար կյանքում,*
*Երբ մարդիկ միայն քնում են հոգնած:*

***1961***

## *ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱԿՈԲՅԱՆ*

### ԿՅԱՆՔԻ ՍԱՆԴՈՒՂՔՆԵՐՈՎ

*Բարձրանում են, իջնում, բարձրանում են նորից,*
*Նրանց շարժումն ասես սիմֆոնիա է մի մեծ,*
*Օ՜, այստեղ են եկել գյուղ ու քաղաքներից,*
*Կազմել նոր ընտանիք՝ ապրումներով անեզծ:*

*Ահա լսարանում դասախոսը ազդու*
*Կյանքի նոր էջեր է բացում նրանց առաջ,*
*Նա իր խոսքերի մեջ խինդն է դնում հոգու,*
*Որ ծաղկի պես փթթի գիտությունը ճաճանչ:*

*Հոգ չէ, որ դեռ այսօր նրանք գիտեն շատ քիչ,*
*Որ անհայտ է նրանց բախտի գալիք ճամփան…*
*Բայց, օ՜, պետք է հուսալ, որ սրտերում այս ջինջ*
*Երազներ կան կյանքի ու ձգտումներ այնքան:*

*Ջերմ հույսեր կան կյանքի՝ լույսերով շաղախված,*
*Ապրումներ օրերի, որ պիտի մարմին առնեն,*
*Ու գանձեր կան կյանքի խոր ընդերքում թաղված,*
*Այդ բոլորը նրանք պիտի լույս աշխարհ հանեն:*

*Բարձրանում են, իջնում, բարձրանում են նորից,*
*Հոգիներում նրանց՝ անմարելի կորով,*
*Օ՜, պայծառ է նրանց ուղին ու խնդալից,*
*Քանզի բարձրանում են կյանքի սանդուղքներով:*

***1961***

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Դու ինձ համար անհաս բարձունք ես եղել*
*Ու մի բերդ ես թվացել ինձ անառիկ,*
*Բայց իմ հոգում թռչունի թև ես առել*
*Ու միշտ քեզ եմ ես տենչացել, իմ գալիք:*

*Քո կարոտը այնքան կիզիչ է եղել՝*
*Հեռու գյուղից ինձ բերել է Երևան,*
*Գյուղում մայրս, նորահարսը իմ ջահել,*
*Ու ես քո գիրկն եմ եկել, իմ համալսարան:*

*Եվ երբ այսօր մտնում եմ քո դռներով,*
*Հազար գլխով երջանկանում եմ նորից,*
*Ծափ է զարկում սիրտն իմ խորին աշխույժով,*
*Ու թվում է՝ ողջ աշխարհին են տվել ինձ…*

*Ու թե մի օր բաժանումի պահը գա,*
*Վերջին անգամ հրաժեշտ տամ բոլորին,*
*Հավատա դու, սանիդ խոսքերը վկա,*
*Սրտիս մասը ես կթողնեմ քո շեմին:*

*Ու կգնամ՝ խորհուրդներդ իմ հոգում,*
*Որպես համեստ սերմնացանդ գալիքի,*
*Կգուրգուրեմ կյանքիս բոլոր երգերում…*
*Դու՝ ուղեգիր, դու՝ ուղեկից իմ կյանքի:*

***1962***

## ՌԽՄԱՆՈՂԱԿԱՆ

*Սրտիս մտերիմ իմ լավ ընկերներ,*
*Եկել եք նորից,*
*Նորից լսում եմ հարազատ ձայներ*
*Ձեր սրտի խորքից.*
*Եկել եք այսօր կարոտով ջերմին,*
*Հույզերով վառման,*
*Խնդությամբ լցրել իմ սիրտն ու հոգին,*
*Բակ ու լսարան...*
*Մեկդ շիկնել է արևի հրից*
*Հեռու ծովափում,*
*Մեկիդ բյուրեղյա խոսուն հայացքից*
*Զեփյուռն է խայտում...*
*Ուր էլ եղել եք՝ մոտիկ ու հեռու՝*
*Զգտել եք լավին,*
*Ու բաց ճակատով, ձեր կամքին հլու*
*Դավել եք դավին*
*Սրտներդ նետած ձեր երազներին*
*Քայլում եք առաջ,*
*Նժարում կյանքի վեհն ու թերին*
*Քայլելուց առաջ:*
*Ճանապարհների խաչմերուկներում*
*Կամքով միշտ արի*
*Դուք զարկ եք դառնում թույլ երակներում,*
*Որ նա չմարի,*
*Դաշինքի նման ամրակուռ ու ջերմ*
*Կյանքով արբեցած,*
*Դուք ձգտում եք վեր, դեպ նոր բարձունքներ՝*
*Լույսով բռնկված...*

*Ու նորից եկել այս մեծ հարկի տակ,*
*Ոնց քույր ու եղբայր,*
*Ձեր սրտերում երգ, հազար խինդ ու սեր,*
*Ձուլվել եք իրար:*

***1963***

## ԵՐԳ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ

«Ուսանողները Ղազախստանում»
շարքից

*Մեր հանդիպումը բաժանման պես էր,*
*Հանդիպման պես էր մեր բաժանումը,*
*Այն կար ու չկար, և դա այդպես էր,*
*Կարոտի պես էր մեր խնդությունը:*
*Հիմա մենք այնքան հեռու ենք ու մոտ,*
*Եվ այնքան մոտ է այդ հեռվությունը,*
*Ե՛վ ղազախական երկիրն արևոտ,*
*Ե՛վ տափաստանի խոր լռությունը:*

*Մեր բաժանումը հանդիպման պես էր,*
*Նոր հանդիպում էր մեր բաժանումը,*
*Մեր բաժանումը գուցե և պետք էր,*
*Որ անխախտ մնա մեր միությունը:*

***1965***

## ***ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ***

### ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԵՐԳԸ
(«Ուսանողական երգեր» շարքից)

*Մենք ուժեղ ենք, ջահել ու բարի,*
*Մենք ա՛յս օրն ենք ու վաղը դարի:*

*Մենք գալիս ենք, փնտրում ու փորձում,*
*Կասկածում ենք, համոզվում, գործում:*

*Մենք ժլատ չենք, տալիս ենք, առնում,*
*Եռում ենք և ուժեղ ենք դառնում:*

*Մենք թրծվում ենք կյանքի հնոցում,*
*Մենք գալիս ենք, փնտրում ու փորձում:*

*Մենք ուժեղ ենք, ջահել ու բարի,*
*Մենք ա՛յս օրն ենք ու վաղը դարի:*

***1962***

***ԱԼԲԵՐՏ ՕՐԴՅԱՆ***

## ԶԱՆԳԻ ԵՐԳԸ

*Հուզաթաթավ մի մանուկ, սիրտս դպրոց էր տենչում,*
*Անուշ մի ձայն հեռավոր ինձ միշտ իր մոտ էր կանչում,*
*Թողած խաղերը հուզիչ, մեր ջինջ առվակը թողած,*
*Սիրտս, հոգիս հրդեհված այդ ձայնի կողմը գնաց:*

*Դա ինչյուն չէր հասարակ, ե՜րգ էր, երգ էր սրբազան,*
*Անուշ ղողանջն էր զանգի, միշտ սիրելի, անբաժան,*
*Հազար անգամ լսել եմ, հազար անգամ երազել:*
*Օ՜, էլի՜, էլի եմ ուզում այդ անուշ ձայնը լսել:*

***1961***

## *ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ*

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### ԳԻՇԵՐ

*Բարձր աշտարակներին հնչեցին զանգերը:*
*Մայթերի վրա ծառերից թռչուններ թափվեցին ցած:*
*Գազանանոցում մի քանի կենդանիներ խավարից վախեցած երկար ոռնացին:*
*Մենք սարսռացինք,*
*բայց սեղմվեցինք իրար և մեր շուրթերի մեջ խմեցինք խավարը:*
***1965***

### ՀԻՆ ԵՐԳ

*Անձրևն ահա կաթկթում է մայթերին,*
*Անձրևն ահա կաթկթում է մայթերին,*
*Որպես անդարձ կորած երազ, որպես հուշ,*
*Անձրևն ահա կաթկթում է մայթերին:*

*Ես նայում եմ լուռ, ինքնամփոփ շենքերին,*
*Ես նայում եմ լուռ, ինքնամփոփ շենքերին,*
*Կանգնած աղոտ լույսերի մեջ փողոցի*
*Ես նայում եմ լուռ, ինքնամփոփ շենքերին:*

*Անձրևն ահա կաթկթում է մայթերին,*
*Անձրևն ահա կաթկթում է մայթերին,*
*Որպես անդարձ կորած երազ, որպես հուշ,*
*Անձրևն ահա կաթկթում է մայթերին:*

***1965***

* * *

*Լուսամփոփի մեջ*
*օրը հանգչեց:*
*Ապակուց այն կողմ ստքեր են երևում*
*անշտապ: Լուռ:*
*Ես այդ ոտքերի տակ հետքեր չեմ տեսնում,*
*Ես այդ ոտքերի տակ հետքեր չեմ տեսնում,*
*ապակուց այն կողմ, ոտքերի*
*տակ հետքեր չեմ տեսնում:*

***1965***

## ՍԱ ՔՈ ԵՐԵԿՈՆ Է

*Սա քո երեկոն է, բայց նրանը չես դու:*
*Նրբացած ջղերով լապտերները դողում են*
*քո ոտքերի տակ:*
*Դու անցնում ես*
*հիվանդության պես դեղին գույների միջով:*
*Հեռավոր խշշոցը աստղերի*
*հասնում է մինչև ծառերի կատարները,*
*ծառերը լողում են ինքնախաբեության*
*նույն տեսլիքի մեջ:*

*Սա քո ապաշխարանքն է,*
*սա քո՛նն է,*
*հագի՛ր:*
***1966***

* * *

*Ես հաճախ գրում էի բանաստեղծություն,*
*բայց օդը կլանում էր այն իր մեջ:*
*Այսպես, անընդհատ: Այժմ ոչ օդ կա,*
*ոչ էլ գրքի մեջ բանաստեղծություն:*
***1966***

## ԱՅՍՔԱՆ ԱՌԱՎՈՏՆԵՐԻՑ ՀԵՏՈ

*Այսքան առավոտներից հետո*
*ցերեկը դատարկ է մնում:*

*Ցերեկը, որի վրա*
*դու ուզում ես կարել քո խոսքը,*
*փշրվում է քո դեմ,*
*և մնում է խոսքը,*
*միայն խոսքը, որից*
*փախչում ես դու:*

*Դու փողոցում կորցնում ես*
*քո հարստությունը*
*և աղքատունում:*

*Հետո*
*փողոցի վրա կարելով քո աղքատ դեմքը*
*դու հեռանում ես:*

*Ցերեկը նորից դատարկ  է մնում*
*առանց քեզ:*

***1967***

## ԷԼԴՈՐԱԴՈ

*Այսքան քայլերից հետո,*
*երբ բոլոր անտառների*
*զաղտնիքներով անցանք,*
*զգացինք, որ միայն դու ես*
*Էլդորադոն -*
*թաքնված քո անվան*
*անտառներում,*
*և մենք փնտրել ենք*
*ոչ թե քեզ, այլ միայն*
*այս բառը - Էլդորադո,*
*այս բառը, որ հանգչում է*
*մի սառը երազի մեջ*
*ինչպես անշարժ քամին:*

***1967***

## ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ

### ԵՍ ՈՒՍԱՆՈՂԻՑ ԴԱՐՁԱ ԶԻՆՎՈՐ

*Երեկ ուրիշ էր կյանքը ինձ թվում,*
*Ուրիշ է թվում կյանքն ինձ այսօր,*
*Ա՜խ, ժամանակն այս ինչ շուտ է չվում,*
*Ես ուսանողից դարձա զինվոր:*

*Դեռ նոր եմ հագել այս զորշ շինելը,*
*Սիրտս թռչում է ինչ-որ մի տեղ,*
*Ու չեմ հասկանում իմ ով լինելը,*
*Ես որ տեղ էի, հասա որտեղ:*

*Դեռ պիտի ինձ հետ ծեր գեներալը*
*Հանդիպի վաղը ու փորձի ինձ,*
*Որոնի իմ մեջ վատը և լավը,*
*Որոշում հանի կյանքի փորձից:*

*Ես գիտեմ՝ իմ մեջ կտեսնի լավը,*
*Չէ՞ որ ինքն էլ է ինձ պես եղել,*
*Երբ նրան մի օր իր գեներալը*
*Ժպտացել է ու ձեռքն է սեղմել:*

***1962***

## ՀՐԱԺԵՇՏ ԿՏԱՄ ՇՈՒՏՈՎ ԵՍ ՁԵՆՔԻՆ

*Արդ ես զինվոր եմ այս ցուրտ հյուսիսում,*
*Եվ օրերն այստեղ անցնում են դժվար,*
*Եվ դաժան բուքն է իմ դեմքը կիզում,*
*Զյան մեջ թաղում երազներն իմ վառ:*

*Գրչի տեղ հիմա զենք է իմ ձեռքին,*
*Գրքի փոխարեն՝ նռնակ ուական,*
*Շարքի մեջ կանգնած հուզմունքով ներքին*
*Օրերն եմ հիշում ուսանողական:*

*Տագնապի փողն է այստեղ միշտ հնչում,*
*Մեզ քնից հանում գիշերվա կեսին,*
*Մեր գունդն է ոտքի կանգնում մի շնչում,*
*Եվ ուսապարկն եմ հավաքում ես իմ:*

*Նրա մեջ որպես հոգու լույսն անշեջ,*
*Եվ որպես վաղվա հույսն իմ մուրազի,*
*Պարույր Սևակի «Մարդը ափի մեջ»*
*Եվ վեհ «Քնարն» եմ պահում Շիրազի:*

*Նրանց էջերի արանքում դրված*
*Մորս նկարն է՝ խունացած համակ,*
*Եվ իմ երգերն են՝ դեռ անվարժ գրված,*
*Ու հեռվից թևած սիրո մի նամակ:*

*Մասունքներն այդ թանկ շալակիս պահած՝*
*Հեշտությամբ կանցնեմ այս դժվար ճամփան,*
*Եվ նույնիսկ կապրեմ անջուր ու անհաց,*
*Բայց առանց դրանց չե՜մ մեռնի անգամ:*

*Եվ ամեն անգամ դադարի պահին*
*Ես այդ գրքերն եմ խնդությամբ կարդում,*
*Նոր ուժ եմ առնում գրերից մեր հին,*
*Եվ երգն է վառվում կրծքիս տակ արթուն:*

*Եվ ջերմ տառերն ու բառերը հայոց*
*Այս հեռո՜ւ-հեռվում փարվում են սրտիս,*
*Խոսում են ինձ հետ, դառնում անթրոց,*
*Եվ հոգուս հուրն են բորբոքում ցրտին:*

*Այդ հրով կելնեմ ես լե՜ռն էլ վերջին*
*Ու առաջինը կհասնեմ կատար,*
*Եվ կանգնած նրա երկնահաս քերծին՝*
*Պարտքս կատարած նոր կառնեմ դադար:*
*Ու սեգ կատարից կնայեմ հեռուն,*
*Կգրկեմ ծագող այգը ոսկեջինջ,*
*Չէ՞ որ բարձունքից լավ է երևում,*
*Եվ պարզ տեսնում ես շուրջդ ամեն ինչ:*

*Զինվորի կյանքը այսպես է անցնում.*
*Մի օր բարձունքին, անդունդում մի օր,*
*Մերթ նրա սիրտը բերկրանքով ցնծում,*
*Մերթ էլ լցվում է տխրությամբ մի խոր:*

*Ե՛ս էլ եմ տեսել և՛ խինդ, և՛ թախիծ,*
*Եվ ունեցել եմ վերելք ու անկում,*
*Ու չեմ երկնչել տագնապի վախից*
*Իմ զինվորական դժվարին կյանքում:*

*Հրաժեշտ կտամ շուտով ես զենքին*
*Եվ գիրկդ կգամ, ի՛մ համալսարան,*

*Ու նախկին սանդ՝ շիկնանքը դեմքին,*
*Կմտնի նորից ծանոթ լսարան:*

***1965***

***

Սիրով ուսանողական ընկերոջս՝
**Կորյուն Սիմոնյանին**

*Ես ուզում էի մի լավ երգ հյուսել*
*Ու քեզ նվիրել՝ քո սրտին հանգույն,*
*Որի նմանը դու չէիր լսել*
*Ու երբեք չէիր լսելու կյանքում:*

*Երբ Երևանն էր քուն մտնում խաղաղ*
*Ու զով զեփյուռն էր շնկշնկում բուրյան,*
*Լուռ քայլում էինք մենք լուսաշաղախ*
*Քո այնքա՜ն սիրած փողոցում Տերյան:*

*Լսարաններից, գրքերից հոգնած՝*
*Մենք չէինք նայում ջրին ու հացին,*
*Շիրակացին էր քո հոգում քնած,*
*Իմ հոգում՝ Շիրազն ու Նարեկացին:*

*Քո հոգում ոսկի դաշտն էր Շիրակի,*
*Իմ հոգում՝ արծաթ Խրամն իմ մանկութ,*
*Մեզ համար չկար տոն ու կիրակի,*
*Մեզ թախծությունն էր ուղեկցում անգութ:*

*Մենք ելնում էինք, թափառում քաղցած,*
*Ու Աստծուն էինք մեր հույսը տածում,*
*Դու նայում էիր երկնքին ծաղկած,*
*Ես երգիդ մասին էի մտածում:*

*Մենք շրջում էինք... ու ամեն պահի*
*Սիրտս ծփում էր այդ անուշ երգով,*
*Որ դառնալու էր երգ ճանապարհի՝*
*Հեռվից քեզ կանչող մայրական ձեռքով:*

*Սիրտս երգում էր առանց բառերի*
*Կարոտի երգն այդ անուրջով հյուսված,*
*Եվ ոչինչ չկար նրանում թերի,*
*Նրա մեջ հուզված քո սիրտն էր սուզված...*

*Այդ երգն ինձ համար երազ էր դառել,*
*Մտքիս չէր տալիս հանգիստ ու դադար,*
*Ես նրան հարմար չգտա բառեր,*
*Եվ իղձս այդպես մնաց անկատար:*

*Անմարմին մնաց բաղձանքն իմ լուսե,*
*Ու մնաց սուտակ աստղի պես անհաս,*
*Ես անկար եղա այդ երգը հյուսել,*
*Դրա խորհուրդը լոկ դու կիմանաս:*

***1966***

## ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Դու իմաստության սրբազան տաճար,*
*Հայ մտքի կաճառ, մա՜յր համալսարան,*
*Մի լույս առավոտ հուզմունքով անափ*
*Քո գիրկն եմ եկել ես ուսման ծարավ:*

*Ու քո վեհաշուք կամարների տակ*
*Խոսքերն եմ լսել մեծ Խորենացու,*
*Որ մեր անցյալն էլ հարուստ է ու թանկ,*
*Թեպետ հույժ քիչ ենք ու փոքր ածու:*

*Որ մեր հոգին էլ կարող է վառվել*
*Ու լույս տալ երկնի խավար աստղերին,*
*Եվ անհունի մեջ հավերժ սավառնել*
*Ու լուծել անհաս խորհուրդներ վերին:*

*Ես քո գրկի մեջ սերտել եմ ուշիմ*
*Մեր հավերժության խորհուրդն իմաստուն,*
*Որ մութը երբեք չի հաղթի լույսին,*
*Եվ դու այդ լույսն ես վառել իմ սրտում:*

*Դու իմ հոգին ես հավատով կռել,*
*Եվ ինձ օծել ես անուշ բարությամբ,*
*Շռայլությամբ ես ամեն ինչ տվել,*
*Բայց ես վերցրել եմ մեծ դժվարությամբ:*

*Եվ խենթ եմ եղել ես մի քիչ եթե,*
*Լոկ չեմ հասկացել, եղիր դու ներող,*
*Արդ, ես գնում եմ իմ ճամփան թեթև՝*
*Քո տված ծանր գանձերի բեռով:*

***1968***

## ԴՈՒ ՄԻՇՏ ԵՂԵԼ ԵՍ

*Դու հիմա հիսուն տարեկան ես. այսօր բոլորեց քո կյանքի կես դարը, մեր հարազատ համալսարան: Հիսուն տարի է, ինչ գոյություն ունես դու և ծաղկում ես հայոց հինավուրց հողում: Բայց դու հիսուն տարեկան չես, դու ավելի տարե՜ց ես ու ավելի հին, այնքա՜ն հին, որ երևակայելն անգամ դժվար է:*

*Դու գոյություն ես ունեցել Մաշտոցից էլ շատ առաջ: Դու եղել ես Հայկ Նահապետի օրոք, նրա նետի սլացքում, ու նրանից հետո, ապա և Տիգրան Մեծի հաղթական արշավների ժամանակ: Դու միշտ եղել ես իմ ժողովրդի հոգում, ուժ ես տվել նրան, ապրելու կամք ու կորով, ստեղծագործելու ձիրք ու ավյուն: Դու եղել ես մեր հին գուսանների գողթան երգերում ու նրանց բամբիռների թնդյուններում խրոխտ: Դու եղել ես մեր հեթանոսական տաճարների մեհյաններում խոր ու Զվարթնոցի սրաթռիչ արծիվների թևերին քարե: Դու եղել ես մեր վանքերի զարդաքանդակ խորաններում ու մագաղաթյա մատյանների ծաղկազարդ էջերում, և դարեր շարունակ քո լույսն է ցոլացել մեր ճգնակյաց վանականների ու դպիրների հոգիներում խոր, որ իր շողքն է նետել ժողովրդի սրտում...*

*Սակայն դու միշտ մնացել ես որպես մի կապտաջինջ անուրջ ու երկնային ասուպ, ինչպես Լուսավորչի կանթեղն անմար: Քո ձայնն է հնչել Խորենացու «Ողբում» ու Փարպեցու «Թղթում», Կորյունի «Վարքում» ու Եզնիկի «Եղծում», ինչպես նաև Եղիշեի ոսկեղենիկ երգի հայրենաշունչ խոսքում: Եվ դու փայլատակել ես մեր խենթ Դավթի կայծակնաշեղբ թրի սայրին սուր ու Նարեկացու սրտի խորախոր հեծեծանքներուն, Ֆրիկի ահեղաձայն գանգատներում դառնահեծ ու Աբովյանի «Վերքում» մշտամրմուռ: Ու մերթ մնալով իբրև երազ ու մերթ էլ մարմին առնելով՝ դարձել ես Ամարաս ու Սիս, Տաթև ու Գլաձոր, Գոշա-*

*վանք ու Անի, Հաղպատ ու Սանահին և այլ դպրանոցներ ու քո շողերն ես սփռել մեր լեռներին բարձր, և այդպես քո հոգեբուխ ճառագայթները լուսավորել են իմ ժողովրդի մաքառումներով լի ուղին ու առաջնորդել նրան դեպի հուսո ափ: Եվ նա, անցնելով դաժան դարերի խավար ու մահաաարսուռ ճանապարհներով ու մի կերպ թոթափելով օտար բռնակալների լուծը, հասել է իր երազած հանգրվանը: Այստեղ էլ մարմին է տվել իր հոգու մաքրաջինջ երազին ու... ծնվել ես դու:*

*Դու հիմա հիսուն տարեկան ես, մեր Մայր համալսարան: Եվ հիսուն տարի է, ինչ անընդմեջ ղողանջում են քո իմաստության զանգերը զիլ: Եվ այդ զանգերի արծաթ ղողանջներր բյուրավոր ուսումնատենչ սրտեր են գերել ու բերել քո գիրկը: Դու նրանց գուրգուրել ես գթառատ ու սիրասուն մոր նման, քո ջերմագին գորովով օծել ես բոլորի հոգիները ու իմաստնության կենարար խյուսով սնուցել նրանց սրտերն ու ճանապարհել դեպի կյանք: Նորանոր լուսատենչ ու հուզաթրթիռ հոգիներ են եկել երամով ու ծվարել քո ջերմ գրկում և քո մայրական անուշ կաթով զորանալով՝ ամուր թևեր են առել ու թռել՝ լույսի ու գիտության հունդեր ցանելու հայրենի երկրի հերկերում բերրի: Եվ այդպես կես դար շարունակ:*

*Դու հիմա հիսուն տարեկան ես: Բայց ո՜չ, դու ավելի տարեց ես ու ավելի հին, ավելի մեծ ես ու ավելի վեհ... Դու եղել ես ու կլինես հար...*

***17.12.1970***

## ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ԵՐԲ ՆՈՐԻՑ

Սիրով՝ ***պրոֆ. Հրանտ Թամրազյանին***

*Ամեն անգամ երբ նորից նա մտնում էր լսարան,*
*Մեր աղմուկն էր համրանում ու հավատն էր ամրանում,*
*Ու գալիս էր մեր աչքին տեսիլների մի շարան,*
*Եվ սրտերում մեր մաքուր ծով թախիծն էր ծանրանում:*
*Մեր քերթության քուրմերն էին խոսում նրա շուրթերով,*
*Եվ պատմության գետն էր հոսում ՝ մերթ վճիտ ու մերթ պղտոր,*
*Ու շառաչով աներկյուղ լողում էր նա մինչև ծով,*
*Անդունդներն էր մխրճվում, հատակն հասնում լայն ու խոր:*

*Եվ անցյալն էր ետ դոնում ու մեզ տանում մի հին դար*
*Ու այնտեղից թափ առնում, վերադառնում նոր դարին,*
*Հոգու հերկի ու մտքի մեր մշակներն անդադար*
*Վառում էին ու մարում մոմերն իրենց հանճարի:*
*Սուրբ Սահակն իր տեսիլքով մութ գալիքն էր գուշակում,*
*Եվ Մաշտոցն էր տեսնում պարզ միակ ելքը փրկության,*
*Վռամշապուհ հեռատես արքայի հետ մշակում,*
*Հունդերն էին սերմանում նրանք հայոց դպրության...*

*Լսարանում՝ մեր այն մեծ, Պատմահայրն էր բարբառում,*
*Նարեկացին էր հառնում իր Մատյանով սրտակեծ,*
*Եվ մոգում էր իր երգով Կոմիտասը կարկառուն,*
*Ու հանճարեղ լոռեցու խոհերն էին շրջում գոց:*
*Նա խոսում էր, իսկ մենք լուռ լսում էինք վերացած,*
*Ժամերն էին աննկատ թռչում ինչպես ակնթարթ,*
*Ու մեր դասն էր ներառում մեզնից վաղուց հեռացած*
*Սահմանները դարերի, անմահների երթը բարդ:*

*Եվ ելնում էր մշուշից ինչպես լույսի մի տեսիլք,*
*Եղերական Չարենցը՝ ձեռքին մի վեհ Տաղարան,*
*Ու վեր պարզած լուսածիր ճանապարհի իր Գիրքը՝*
*Գնում էր նա մահապարտ դեպի վերջին կախաղան:*
*Եվ Բակունցն էր նայում մեզ բիլ աչքերով թախծամած,*
*Ու նվագում իր կերկեր անուշ փողը ծիրանի,*
*Որի համար մի օր նա երկնքի տակ կարկամած*
*Զոհը դարձավ մաղձամած չնչին մարդկանց ճիրանի...*

*Ամեն անգամ այսպես նա լսարան էր երբ մտնում*
*Ու դասերն էր իր տալիս թռիչքներով երկնաբարձ,*
*Եվ մենք ասես նրա հետ փնտրում էինք ու գտնում*
*Խոր դարերի ծալքերում կորուստները մեր անդարձ:*
*Ու փարվում էր մեր հոգուն հեռավոր մի լույսի շող,*
*Մեր պատմության քառուղու մութ խորշերն էր նորոգում,*
*Ու սրտերում մեր մաքուր թևում էր մի հույսի դող*
*Եվ մեր անմար կարոտի կրակներն էր բորբոքում...*

***1976***

## ՌՈՄԱՆՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ

### ԶՈՆԵՐԳ

*Համալսարա՜ն, իմ մայր, իմ տուն,*
*Դու լույս փարոս ճանապարհի,*
*Իմ երազն ես եղել արթուն*
*Ու ինձ կանչել քանի՜ տարի,–*

*Գիրկդ եմ եկել՝ թևեր առած,*
*Որ քեզանից առնեմ ոգի,*
*Որ գալիքին աչքս հառած՝*
*Քո գիտությամբ ինձ նորոգեմ,–*

*Ու դու դարձար ինձ ապաստան,*
*Իմ լուսաստղը դարձար բարի,*
*Որ քայլ գցեմ ես հաստատուն,*
*Որդին դառնամ ես իմ դարի:*

*Ինձ տվեցիր սեր ու ուսում,*
*Դարձար հոգուս մայր Հայաստան,*
*Ինձ քո բախտն էր անվերջ հուզում.*
*Որ գիտության դառնաս ոստան:*

*Ահա ինչու քեզնով հպարտ՝*
*Կուզեմ քեզ տալ ես ամեն ինչ,*
*Միայն լինեմ երախտապարտ.*
*Քեզ տամ ողջը, իսկ ինձ՝ ոչինչ…*

*Ես որդիդ եմ, համալսարա՛ն,*
*Իսկ դու՝ մայրս, սերս վերջին,*
*Ուր էլ լինեմ՝ ես անվարան*
*Քո պատկերն եմ պահելու ջինջ…*

***1965***

## ՌԱԶՄԻԿ ԱՐՏԵՄՅԱՆ

### ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Տուֆե այս կարմիր սյուների մեջ*
*Իմ արյան մակարդումը կա՝*
*Ունքերիս հեծած կնճիռների*
*Ծանր իմաստությամբ:*

*Այս սյուների մեջ կա բարձր*
*Ու գեղեցիկ մի նոր աշխարհ,*
*Որտեղից սկսվում են տիեզերք տանող*
*Բոլոր իմ ճամփաները:*

*Այս սյուների տակ այն հողն է,*
*Ուր երեկ ձյան տակ կքած*
*Մանուշակի աչքերի մեջ*
*Արեգակը շնչահեղձ էր լինում*
*Եվ ձեռքերս ցրտից*
*Դառնում էին բռունցք՝*
*Սեղմած իրենց մեջ մրրիկն արևի:*

*Այս սյուների տակ այն հողն է,*
*Որի վրա աճած խաղողի գինով*
*Օտարները հարբել ու*
*Ինձ քաշել են սրի:*
*Ի՞նչ փույթ թե՝*

*Հողն այս սիրել եմ այնպես,*
*Ինչպես շուրթերը՝ սրինգ:*

*Այս սյուների տակ այն հողն է,*
*Ուր երկար նստելով*
*Դարերի փոշոտ աթոռին,*
*Իմ ոտքի կանգնելով՝*
*Այդ աթոռին թողեցի դրոշմն իմ մաքուր:*
*Ես, լինելով մարմնե մարմին փոխանցված*
*Որդին Վարդանի,*
*Իմ քրտինքով լվացել եմ հողն այս*
*Ոտնահետքերից անմաքուր:*
*Եվ հիմա բարձրացել են*
*Սյուներն այս իմաստության,*
*Որպես տիեզերք ձգվող ուղեցույցներ:*

***1966***

**ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐ**

## ՋԱՀԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԸ

(Նվիրում եմ ԵՊՀ-ի ուսանողությանը)

*Ջահելությունը կյանքի գինին է,*
*Առաջընթացն ու շարժումը դարի.*
*Նա որքան նոր է, այնքան էլ հին է,*
*Նա է զորավոր բռունցքն արդարի:*

*Նրա ուղեղի տաք գալարներով*
*Չգոնությունն է հոսում օրերի:*
*Եվ իր պանծայի մաքառումներով*
*Գործող միտքն է նա այս ահեղ դարի:*

*Կյանքի ամեն մի սխրալի գործում*
*Նա կարողության իր չափը գիտե,*
*Ամեն տեղ է նա իր ուժը փորձում՝*
*Նման իր մարտը շահած ասպետի:*

*Եվ այդ նա է, որ քայլ առ քայլ մեր դեմ*
*Գալիս կանգնում է կյանքի կենտրոնում:*
*Համոզելով, որ վաղուց ինքն արդեն*
*Հայտնագործության մտքերն է շարժում:*

*Չի կարող կյանքում նա այլ կերպ լինել,*
*Երբ առանցքային ուժի պես կայուն*

*Դարը նրան է լոկ ապավինել*
*Գալիք օրերի սյուները կանգուն...*

*Եվ ոտից-գլուխ ձգտումը նրա*
*Ինքնապարպում է կոչվում, հիրավի,*
*Իր իսկ սրտով է նա չափում միայն*
*Լարվածությունը ամեն վայրկյանի:*

*Եվ նախազգացման քայլերի նման,*
*Եվ ցոլացումով հեռավոր հույսի,*
*Նա է, որ պիտի ողջը վերծանի*
*Համադրությամբ խղճի և հույզի:*

*Թող միշտ նոր լինի նրա միտքը վառ:*
*Թող զնգան օդում թևերն արտույտի.–*
*Ջահելության ուժն զգալու համար*
*Քիչ են սահմաններն այս մոլորակի..*

***1980***

## ՓԱՌԱՆՁԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

### ... ՈՐ ԱՆՈՒՆԴ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՀՆՉԻ

*Երևանի պետակա՛ն համալսարան...*

*Այս բառերն այսօր այնքա՛ն խորն են դաջվել Հայաստանի լուռ, բայց խոսուն քարերին, հոգնած, բայց կրկին հանգիստ ու անդորր գտած քարերին, ինչպես ձորերն ու անդունդները Հայաստանի:*

*Եվ այդ քարերը այնքան ամուր ու վստահ են նստել հինավուրց մեր նաիրյան հողին:*

*Եվ այնքա՛ն շատ արմատներ ու շիվեր են գցել բոլորի սրտերում այդ քարաշունչ քարերը:*

*Ու խոսում են նրանք մեր սրտերի հետ, գիշեր-ցերեկ երգ ու հեքիաթ են ասում, զմայլում են մեզ, կախարդում են մեզ, թռվում են...*

*Համալսարա՛ն... Դու կանչում ես մեզ հազար ձեռքերով, հազար ժպիտներով ու հազար սրտով:*

*Ու գալիս ենք մենք, սնվում ու զորանում ենք քո մտավոր զորությամբ բարի, զուլալվում ու պայծառանում ենք մենք:*

*Ով առանց սիրո է գալիս քեզ մոտ՝ խենթ սիրահար ես դարձնում դու նրան: Խենթ սիրահար՝ մեր հողի, մեր ջրի, մեր երկնքի, քո անվան, քո բարի, քո բերքի, մի լավ պատանու, մի լավ աղջկա, մի լավ երգի նկատմամբ:*

*Ով ճակատին քրտինք ու ձեռքերի ափերին կոշտեր չտեսած է գալիս քեզ մոտ, դու նրան աշխատանքի ու արիության ես մղում, թրծում ու բովում ես քո քուրայում: Թրծած կավը ամուր*

*է լինում, կոփված երկաթը լավ է ձև ստանում, հերկ ու ակոս տեսած հողը պտղաբեր է դառնամ,– այս է քո առաջին դասը, որ իշխում է մեր մտքի, ուժի, սրտի ու հոգու վրա:*

*Քո կենսագրության ոսկետառ շարադրանքի տողերից մեզ են նայում բազում ծերունազարդ պրոֆեսորներ, տակավին կյանքով ու ավյունով լեցուն, հայրենիքի օրհասական ժամին գնացած ու ետ չեկած սաներ, բարի ու սիրելի դասախոսներ, ջահել ու կենսախինդ ուսանողներ, ուսանողուհիներ:*

*Քո կենսագրությունը զրկանքով ու տքնությամբ են գրել, սրտով ու հոգով են գրել, արյունով ու արցունքով են սնել սերունդները: Հարգա՜նք ու պատի՛վ, փա՜ռք ու հավերժությո՛ւն քո կենսագիրներին, համալսարան:*

*Հիմա ուրիշ սիմֆոնիա է հնչում քո կամարների տակ, ուրիշ սերունդ է գրում քո կյանքի պատմությունը:*

*Համալսարա՜ն... Մենք՝ քոնը, դու՝ մերը: Դու՝ ծերունական պատկառելի խորհուրդ, դու հասակակից ու անհիշաչար ընկեր, դու ջահելի արևային ու լայն ժպիտ, դու՝ հույսի ու լույսի օվկիան, և հավերժ պատանի՜... Երևանի պետական համալսարա՜ն:*

***1966***

## *ՄԻՍԱՔ ՀՈՎԵՆՑ*

### ԵՐԳԻՍ ԲԱԳԻՆ

*Միրով՝ Երևանի պետհամալսարանին*
*Ես քննություն պիտի բռնեմ*
*Աշխարհի և մարդու առաջ,*
*Ու անցյալիս թուխպը պիտի*
*Շառագունվի իմ գալիքով:*

*Հանապազօր իմ տքնությամբ,*
*Իմ բազմատանջ անելիքով*
*Կապացուցեմ եղածս ողջ,*
*Կապացուցեմ, ի՜նչ էլ լինի:*

*Մա՛յր իմ անգին, երգիս բագի՛ն,*
*Համալսարա՛ն, քո մի կումն եմ,*
*Դժվար պահը արծվաձագի*
*Լոկ առաջին թռիչքումն է:*

*Արդ ես քեզնից թևեր առած՝*
*Քուն չի գալիս էլ իմ աչքին,*
*Բարձր լեռան ծերպին թառած՝*
*Պատրաստվում եմ մեծ թռիչքի:*

***1966***

## ԱՆԱՀԻՏ ՊԱՐՍԱՄՅԱՆ

* * *

*Դասամիջոցին*
*Աղջիկը մոտեցավ դասախոսին*
*ու ասաց. «Ախր, ինչո՞ւ...» –*
*Անտիգոնեն լավ աղջիկ էր:*
*Եվ հանկարծ լաց եղավ աղջիկը,*
*Իսկ դասախոսը քրտնեց, շփեց ճակատը,*
*Նա պատճառ չէր գտնում*
*Չարի գոյության համար:*
*Նա ինքն էլ մի ժամանակ տանջվել էր,*
*Որ գտնի պատասխանը,*
*Բայց այդպես էլ չէր գտել:*
*Հետո տարիներ անցան...*
*Առաջին կուրսեցի այն աղջիկը այնքան էլ չփոխվեց,*
*Միայն թե նա... ծիծաղում էր,*
*Երբ հանկարծ տխրում էին*
*Անտիգոնեի համար:*

* * *

*Քննությունից կտրված աղջիկը լաց էր լինում,*
*Եվ դա, ազնիվ խոսք,*
*Գերազանց ստանալուց ավելի գեղեցիկ էր:*
*Միայն թե ոչ ոք դա չէր տեսնում:*
*Աղջիկը, իհարկե, հետո*
*Կստանար «բավարար», «չորս» կամ «հինգ»,*

*Եվ թերևս նրան նկատեին*
*որպես ժպտացող ուսանողուհու:*
*Բայց միևնույնն է,*
*Քննությունից կտրված:*
*Լաց եղող աղջիկն ուրիշ է:*

* * *

*Լսարանները հավերժական գիրկ են*
*Այդ գրկի մեջ հիմա կուրախանան,*
*Կթախծեն, կհեկեկան ուրիշները:*
*Ես այստեղ չեմ լինի,*
*Եվ ստվերը կօրորվի ուրիշ պատերի մեջ,*
*Աչքերս հետզհետե կվարժվեն՝*
*Չտեսնելու այս պատկերը,*
*լուսամուտները, նստարանները:*
*Բայց մի օր*
*Բոլորովին ուրիշ տեղ գնալիս,*
*Ոտքերս անսպասելիորեն ինձ այստեղ կբերեն:*

***1969***

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Մենք քեզ մոտ եկանք*
*Պատանեկան խենթ հույզերով լեցուն,*
*Կիսաերեխա ու կիսաջահել:*
*Մենք քեզ մոտ եկանք*
*Զգուշումից փայլող մաքուր աչքերով,*
*Մի քիչ վարանոտ ու շփոթահար:*
*Եվ դու մայրացար մեր հոգիներին,*

*Մայր համալսարան,*
*Մեզ շնորհելով*
*Թե իմացության գաղտնիքներ բազում,*
*Թե սեր ու գորով:*
*Քո պատերի մեջ, քո բարի գրկում*
*Թռան խենթության տարիները մեր,*
*Եվ անգամ, ասես երազի միջով*
*Դասեր, խենթություն, քննություն ու սեր:*
*Մենք քեզ մոտ եկանք*
*Շիկնած ու շփոթ,*
*Հիմա գնում ենք հաստատ քայլերով,*
*Մենք քեզ մոտ եկանք խենթ ու միամիտ,*
*Արդ հեռանում ենք հավատի բեռով,*
*Եվ իրականում չենք էլ հեռանում,*
*Մայր համալսարան,*
*Դու պիտի մնաս մեր սրտերի մեջ*
*Որպես սրբություն...*

***1974***

## ԼՈՒՅՍԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

*Տարիներ առաջ էր, որ մենք քո դուռը եկանք, մայր համալսարան: Եկանք սրբազան երկյուղածության դողով լի, եկանք գիտելիքների անսպառ շտեմարանից վերցնելու մի-մի բուռ լույս: Բացեցիր իմացության դռները մեր առջև: Եվ սկսվեց մեր կյանքի անփոխարինելի այն շրջանը, որ հակիրճ մի բառով շատ բան է արտահայտում՝ ուսանողական: Օրեցօր, տարեցտարի մենք ուժեղացանք ու զորացանք քո տվածով, որովհետև տվածդ լույս էր, իսկ լույսը նաև հավատ է...*

*Հիշում եմ, տասը տարի առաջ էր... Ի՜նչ սիրով ու նվիրումով էինք մենք՝ ուսանողներս, մաքրում պատուհանների ապակիներն ու ապագա գրապահոցի դարակները, ընթերցասրահի սեղանները... Հետո ծառեր տնկեցինք համալսարանի շրջակայքում: Ինչ հպարտությամբ էինք ելումուտ անում մեր համալսարանի գեղակերտ սրահներում, ուրախանում նրա դահլիճով, ամեն ինչով: Եվ երբ հարցնում էին, թե որտե՞ղ ենք սովորում, արժանապատվությամբ պատասխանում էինք՝ համալսարանում: Ինչպես հիմա նույն արժանապատվությամբ պատասխանում ենք՝ ավարտել ենք համալսարանը:*

*Ավարտվեց ուսանողության անկրկնելի երազը: Մենք գնացինք մեր ընտրած ճանապարհով, գտանք մեր տեղը կյանքում: Եվ տարիների հետ նա առավել թանկանում է մեզ համար: Մինչդեռ նա իր մայրական գիրկն է ընդունում նորերին, նորերին...*

*Քո այս փառապանծ վաթսունամյակի օրը ուզում եմ իմ և սերնդակիցներիս, նաև բոլորի՜ անունից շնորհավորել քեզ և ասել.*

*Օրհնությո՜ւն քո անվախճան մայրությանը, Լույսի՜ սերմնացան...*

***1981***

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Սիրով ու ակնածանքով

*Դպրության ամրոց և ոգու խորան,*
*Մայր համալսարան, զավակներդ ենք մենք,*
*Ապրում ենք քանի և քանի դեռ կանք,*
*Քեզ պիտի օրհնենք:*

*Մեր ջահելության օրերը անցան,*
*Քո տանիքի տակ, պատերիդ ներսում,*
*Չեմ հիշում կյանքիս այլ մի ժամանակ,*
*Այդքան թանկ անուն:*
*Մենք մոգված էինք քեզանով համակ,*
*Եվ քուրմերդ էին մեզ ուսուցանում,*
*Հասունանում էր մոր հայացքիդ տակ*
*Մեր իմացության ցորյանը մաքուր:*
*Եվ հիմա հպարտ, նույնքան էլ խոնարհ,*
*Աջդ համբուրող լավ զավակի պես,*
*Մայր համալսարան, օրհնություն և փառք*
*Հունձքին քո արդար,*
*Վաստակին քո մեծ...*

***2004***

## ՖԵԼԻՔՍ ԹՈՐՈՍՅԱՆ

* * *

Նվիրում եմ ԵՊՀ-ի 80-ամյակին

*Քո սրբազան կոչմանը հավատարիմ ես եղել,*
*Մեր կույր հոգու խավարը լույսերով ես հեղեղել,*
*Խառնաշփոթ հեղհեղուկ մտքերի մութ ընդերքից*
*Անգին գանձեր լուսաշող, տաղանդ, հանճար ես պեղել:*

*Հայ հինավուրց քանքարը քեզանով է զորացել,*
*Բյուրեղի պես ջինջ, հստակ փայլ է առել, շողացել,–*
*Ութսուն տարի հմայել զավակներիդ շնորհյալ,*
*Իմացության խոր ծովում անմար փարոս ես դարձել:*

***1999***

**_ՄԻՔԱՅԵԼ ՔԱՆՔԱՆՅԱՆ_**
**_(ՔԱՐԱԳԻՐ)_**

## ԽՈՍՔ ՀՐԱԺԵՇՏԻ

*Հրաժեշտի խոսք եմ ասում, համալսարան, քո շեմին,*
*Հիշում եմ, երբ գիրկդ ընկա, ոնց գերեցիր իմ հոգին:*

*Ուսանելու տենչ ունեցա դասախոսին հայկաբան,*
*Ինչքան հարցեր ունեի, միանգամից ծովացան:*

*Այն գանձերով, որ տարիներ հարստացա գրկիդ մեջ,*
*Չեմ հավատում, թե գլուխս մեկ օր ցավի կյանքի մեջ:*

*Բախտիս նավն ես, համալսարան, դասախոսը՝ նավապետ,*
*Կա դասախոս, որի խոսքը ես կպահեմ կյանքիս հետ:*

*Քո զանգերը դարերի մեջ հավերժ պիտի ղողանջեն,*
*Գալիք իմ հայ սերունդները քեզնով պիտի ճանաչվեն:*

***1970***

## *ԱԼԻԽԱՆՆԵ ՄԱՄԵ*

### ՀՐԱԺԵՇՏԻ ՓՈԽԱՐԵՆ

*Ոգի թաքցնող հեթանոսի նման
Զանգեր եմ կախել բոլոր իրերի մեջ,
Իսկ պարանները լեզվակների
Արևի ձեռքը տվել:
Իրերին մոտիկ,
Արևին մոտիկ,
Առավել մոտիկ...
...Ոսկե զանգերի ղողանջների մեջ
Վեր է խոյանում իմ համալսարանը
Որպես էություն իրերի,
Որպես էություն արևի...
Այսպես, ամենուր:*

***1973***

## *ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏՅԱՆ*

## ԵՐԱԶՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ

*Ծարավ սրտով գալիս է սեպտեմբերը,*
*Եվ մանուկներն ապագայի հունդերն են ցանում,*
*Պատանիներն ու աղջիկները փայփայում են*
*նոր մտորումների հետքերը,*
*Իսկ փայլուն փողկապներով շրջանավարտների*
*օձիքների վրա*
*Նշմարվում է դժվարին հարցականը՝*
*Էլ ինչպե՞ս, էլ ո՞ւր և հետո՞։*
*– Տուր մեզ երազների մեր նոր թևերը,–*
*Դիմում են նրանք առասպելների կարող թագուհուն,–*
*Տո՛ւր մեզ խաչմերուկի ուղու բանալին...*
*Դոփում են պատանեկության ջահել զամբիկները,*
*վրնջում թախծոտ.*
*– Հուսա՛նք առասպելներ նոր ու իրական, – ասում են*
*նրանք,–*
*Մենք շատ ենք հոգնել, սա մեր սահմանն է։*
*Հեծե՛ք իրական ձեր նժույգները ու փոշիների միջով*
*Գնացեք հասնելու բարուն օգնության։–*
*Եվ ահա նրանք հեծնում են նժույգները,*
*Եվ պատանիները կորչում են փոշում,*
*Խաչմերուկներում բացվում են ուղիները,*
*Եվ նրանք գնում են անսահմանության միջով...*

***1975***

## ԱՍՏՂԻԿ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ

### ՈՒՂԵՐՁ

Երևանի պետական համալսարանի
75-ամյակին

*Դու՝ մեր պատմության ոգեղեն փարոս,*
*Դարերի լույսը աղերսող կամուրջ,*
*Դու՝ մեր ինքնության մարգարե անխոս,*
*Նաիրյան հույսը՝ հրաշք ու անուրջ:*

*Այրուձիերի դոփյուններին խոլ՝*
*Դու՝ Հայկի նիզակ և խենթ Դավթի թուր,*
*Մասսյաց կարոտով երկնքին նայող*
*Մեր մտքի հնոց և մեր հոգու հուր:*

*Դու՝ Բիայնայի սեպագիր հավատ,*
*Աստծո պատվիրան և նոյյան տապան,*
*Քեզ չի սասանի և ոչ մի կավատ,*
*Դու՝ լույսի խորան, մեր համալսարան:*

*Դու՝ վարդ տողերիս փնջերի տերն ես,*
*Իմ անհաս լեռն ես, քնարս ու մուսաս,*
*Դու՝ վահագնավառ Աստղկաս սերն ես*
*Եվ Աստղանուշիս համար՝ հոգու սազ:*

*Այն ո՞ր զավակն է, որ իր հոր տոնին*
*Չի ալեկոծվում հոգով առավել,*
*Եվ ես էլ հիմա տեսքով այս ձոնի*
*Իմ սրտի սերն եմ բերում քեզ նվեր։*

***1994***

## ՀԱՅԿԱԶ ԽՆԿՈՅԱՆ

## ՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Պահ է արդեն հրաժեշտի՝ հանդիսավոր և հիշարժան,*
*Մի անբարբառ թախիծ ահա եկել ու մեր սիրտն է պատում:*
*Մենք քեզնով ենք եղել լեցուն ամեն վայրկյան և ամեն ժամ,*
*Ամեն մի պահ լի ենք եղել իմաստությամբ քո անհատնում:*
*Մեր մտքերին ու մեր հոգուն քո ղողանջն ես տվել նվեր,*
*Ներշնչել ես ձգտում և ուժ՝ խոսքով քո պարզ ու մտերիմ,*
*Եվ մենք մտքով ստեղծագործ, հոգով հպարտ ու անձնվեր*
*Կապրենք կյանքում՝ քո լուսավոր պատգամներին*
*հավատարիմ:*
*Բայց ինչքան էլ նվեր բերես, այնքան շռայլ դու կմնաս,*
*Այնքան լեցուն դու կլինես բազմախորհուրդ իմաստությամբ,*
*Ու դեռ ինչքան մարդու պիտի քո խնդության կրակը տաս*
*Եվ ճանապարհ դնես նրանց գորովագութ մի խստությամբ:*
*Տարիները անցան հերթով, հեքիաթ էր դա մի իրական,*
*Քայլում էինք հայացքիդ տակ քո անունը լուռ տենչալով,*
*Բայց քայլում ենք հիմա անդարձ ու կքայլենք դեռ շատ երկար՝*
*Երազանքի մեր տաք շեմին քեզ հրաժեշտ շշնջալով:*
*Եվ ձգվում են մեր դեմ ահա ճանապարհներ աստեղային,*
*Ու անդունդներ կան խորախոր և բարձունքներ կան*
*երկնահաս,*
*Բայց մենք գիտենք մեր իսկ ձեռքով կերտել մեր բախտն ու*
*մեր ուղին*
*Եվ ամրակուռ բազուկներով քամել հողից երազ ու հաց:*

*Սակայն ժամն է հասել վերջին, հրաժեշտ ենք տալիս մենք քեզ:*
*Որդիական մեր տաք սրտով, խղճով մաքուր ու սրտաբաց,*
*Բայց դու կապրես մեր հոգու մեջ, մեր տենչերում միշտ կլինես՝*
*Անդավաճան սիրո կապով մեր բախտին իրար միաձուլած:*

***1983***

## *ՀԱԿՈԲ ՄՐԱՊՅԱՆ*

### ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

*Հայրս ասում էր.– ուսո՛ւմ առ, տղա՛ս,*
*Որ ուսումնական ու լավ մարդ դառնաս…*

*Իսկ իմ սուրբ հայրը հովիվ էր բարի,*
*Սովոր անձրևի, սարի ու քարի,*
*Քրտինք տանջանքով ապրած ողջ կյանքում,*
*«Զախորդ օրերի» մորմոքը հոգում…*

*…Նախ եղբայրներս եկան Երևան,*
*Անինչք ու անկայք ու անօթևան,*
*Բախեցին դուռը մեր մայր կաճառի,*
*Հետո օրն եկավ ավարտաճառի…*

*Հետո նաև ինձ կանչեցիր մոր պես,*
*Սնեցիր լույսով Հայոց դպրության,*
*Քիչ թե շատ հիմա, թե պոետ եմ ես՝*
*Ուրեմն քեզ եմ ես հար պարտական…*

*Պարտական ենք քեզ ազգ ու ժողովուրդ,*
*Չի դու լուսարձակ ջահ ես պարզել*
*Բյո՛ւր զավակներիդ՝ անմահ, մեծանուն,*
*Դու՝ մշտաճառագ, մութի՛ շանթարգել…*

***1984***

**ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

## ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՀԱՄԱՐ

*Ուսուցի՛չ, Բաբելոնն իսկապե՞ս մեծ քաղաք էր,*
*թե մեր տղեկությունն էր այդպես ուզում,*
*անապատում կանչել սկսողի վարքը,*
*արյունը տասնութամյա,*
*այբուբենի հանդեպ կամ բուֆետում-պարտքը...*

*Փախչող նապաստակն է գայլածագին մարզում:–*

*Տանուլ տալուց առաջ,–*
*երբ ընկնում է աչքերից վարագույրը,–*
*պիտի լինի հոգու քարանձավի պես մի տեղ,*
*ուր ինքնասպան լինելը տգեղ չէ,*
*ուր կմտնի հետո Աստեղային Քույրը*
*ու չի թողնի հոգնած աչքերդ բաց սառչեն:*

*Ուսուցի՛չ, Բաբելո՞ն էր անունը:*
*Չգիտեի՛նք:*
*Հիմա դեռ չգիտեմ:*
*Միայն զարհուրելի այդ անունը,*
*այդ անունը՝ կավե տախտակներին, անծիր*
*տարիների դարձում այդ հավիտյան նույնը՝*
*վերադարձի՛ր, օ՜, վերադարձիր...*

*Բաբելոնն իսկապե՞ս մեծ քաղաք էր,*
*դարպասները՝ ոսկի, մայթը՝ հինա:*
*Չգիտե՛մ:*
*Ընկնում էր աղաղակը,*
*և աշխարհի վերջին բաբելացին,*
*կապուտաչյա մի մարդ, վերջին ասացողը,*
*մեզ պատմում էր խռպոտ ու մոլեգնած՝*
*ինչ մի անգամ միայն կարդացել էր*
*կավե տախտակների էջաղարձին.*
*«Բաբելոնը մեծ քաղաք է, բայց տխուր եմ,*
*ու որ ցնծա իմ սիրտը՝ վերադարձի՛ր»:*

*– Սա՛ է,– ասաց վերջին բաբելացին,*
*և արցունքից նրա նոր ջրհեղեղ եղավ,*
*քշեց իրեն ու մեզ, քշեց Բաբելոնը,*
*և քո ժպիտն, իմ սե՛ր,*
*փոխվեց այնպես չքնաղ ու անիմաստ –*
*աչքերիդ պես կանաչ ալիքների վրա...*

***2003***

*ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ*

## ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր,
Ընդ եղեգան փող լո՜ւյս ելաներ...
**Դ. Վարուժան**

*Իսկ մեհենական մատենագիրը*
*Իր տեսիլքներում գալիք դարերի*
*Բարձրաձայնում է նաև քո մասին՝*
*Նշելով Հայոց վերընթաց ուղին...*

*Եվ հնադարյան դպրանոցներից՝*
*Մինչև Կեչառիս*
*Ու մինչև Տաթև,*
*Սանահին-Հաղպատ,*
*Մինչ Նարեկ-Վարագ,*
*Անի-Գլաձոր՝*
*Մեր Հարդագողի ճանապարհը նոր,*
*Չէր կարող մնալ կիսատ-անկատար,*
*Եվ այստեղ ահա՝*
*Լայնանիստ հովտում Աստվածաշնչյան՝*
*Հառնող քաղաքի սրտում վերստին*
*Վերակերտվեցիր*
*Հազար ինն հարյուր տասնինը թվին:*

*Մարմրող ջահը Հայոց դպրության*
*Հուրհրաց կրկին քո հարկի ներքո*
*Ու քեզ դարձրեց Մայր Համալսարան*
*Գիտության կաճառ*
*Համայն հայության:*
*Դա մի հանճարեղ ճիգ էր իսկապես,*
*Քո զավակների երկունքով վսեմ,*
*Եվ կրթեցիր դու սաներ իմաստուն*
*Գալիք դժվարին*
*Օրերի համար:*

*Փորձության ծանր ժամանակներում*
*Ու մինչև հիմա անցածդ ուղին*
*Սկիզբը դարձավ այն ճանապարհի,*
*Որ հաստատում է*
*Մեր հավերժության խորհուրդն անմեկին*
*Բոլոր ծագերում այս հողագնդի:*

***1990***

***ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
***(ԱՐԱՔՍ)***

## ԼՈՒՍԵ ԿԱՆԹԵՂ

*Սիրում եմ քեզ քնարաշունչ համալսարան՝*
*Սերունդների բազմահնչուն նուրբ տաղարան,*
*Գիտելիքի խորախորունկ, ծովածավալ շտեմարան,*
*Հայոց մտքի փայլատակող լուսե խորան:*

*Սիրում եմ քեզ քնարաշունչ համալսարան՝*
*Դու մեր մտքի խորախորհուրդ տաճար-օրրան,*
*Մեր պատմության դժվար ճամփին վառվող լույս-ջահ*
*Տենչանքների, ձգտումների վսեմ մի գահ:*

*Սիրում եմ քեզ քնարաշունչ համալսարան՝*
*Կրթակենտրոն աշխարհասփյուռ ողջ հայության,*
*Դու մայր կաճառ հայոց գենի ու գոյության՝*
*Լուսե կանթեղ Հայոց փառքի հավերժության:*

***1989***

## ՀԵՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

### ԸՆԴ ՎԻՄԱՑ

*Իմացության խորքն ի անհատակ,*
*կատարն ի անծիր աստիճաններ են ձգվում*
*անվերջանալի այս վեմերի տակ:*

*Ոտնահետքերի փոշին է մեծերի*
*շաղախն այս սյուների,*
*թռիչքը նրանց մտքի՝ կամարը դարերի:*

*Կանթեղն է Մաշտոցի՝ գրի խորաններում*
*վառած ի լույս վառվում,*
*մագաղաթյա արյունն ի սիրտ մղում:*

*Սերունդներն են այստեղ տառ-տառ բարբառում.*
*«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ,*
*իմանալ զբանս հանճարոյ...»*

***1989***

**ՀՌԻՓՍԻՄԵ ԲԱԴԱԼՅԱՆ**

## Ա՜Խ, ՈՐՔԱՆ ՋԵՐՄ Է ԱՅՍ ՄՈՒՏՔԸ ԲԱՐԻ

Երևանի համալսարանին

*Այս մուտքը ջերմ է՝ իրաբորբ արև,*
*Այս մուտքը քանի՞ սրտեր է այրել.*
*Իր անմար լույսով մթնած ճամփեքին*
*Քանի՞ ծիածան ու ջահ է վառել:*

*Այս մուտքը քանի՞ մեզ պես խանդավառ*
*Դեմքեր է տեսել ու նրանց փայել,*
*Մեր հայրենիքի բյուր զավակներին*
*Բոլոր կողմերից իր գիրկն է կանչել:*

*Որ գան՝ ամրանան, լցվեն, խտանան,*
*Որ նրանց միջից, ինչպես մեր նախնյաց,*
*Հսկաներ ծնվեն ու սնվեն քեզնով,*
*Որ գան ու մնան դարերի համար,*
*Հավիտյան փառքի գագաթներ դառնան...*

* * *

*Այս մուտքն ինձ համար ջերմության աղբյուր.*
*Կանչում էր իր մոտ, երբ դրսում էի,*
*Գրկի մեջ առնում իր ջերմ թևերով*
*Լուռ զգվում էր ինձ, երբ մրսում էի:*

*Սակայն հեռու էր ճամփաս նրանից,*
*Հեռու էր թվում նա ինձ անսահման,*
*Մի օր երազիս ես երազ տեսա՝*
*Թե կանչում է ինձ ու պիտի գնամ.*
*Եվ էլ ի՞նչ երազ՝ արթնացա քնից,*
*Ծաղիկներ տեսա ճամփիս անսահման...*
*Նա իմն է արդեն, էլ օտար չէ ինձ,*
*Այրվում է հոգիս խնդությամբ վառման.*

*Ես մոտեցել եմ լույսի աղբյուրին*
*Ու պիտի խմեմ՝ որքան կարենամ,*
*Այրվում էր հոգիս, պապակվում այնպես,*
*Պիտի հագեցնեմ ծարավս այնքան...*

***1987***

## ՆԱՄԱԿ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Համալսարա՜ն, լույսի օջախ,*
*Որքա՜ն մոտ ես իմ սրտին,*
*Հեռացել եմ, բայց կարոտս*
*Ինձ ձգում է քեզ մոտ կրկին:*

*Հեռացել եմ, թողել քեզ մոտ*
*Հուշե՜ր, հույզե՜ր սրտամոտ.*
*Քո գրկի մեջ տեղ գտնելու*
*Փափագելի մի կարոտ...*

*Հիշում եմ ես քեզ մոտ թողած*
*Կյանքիս այն վեց ջերմ տարին,*

*Դասախոսներ լուրջ ու խոհեմ,*
*Ուսանողներ՝ իմ կողքին...*

*Տարիներ են եկել, անցել,*
*Բայց մնում են դեռ քեզ մոտ*
*Երազներն իմ լուսե՜, վառմա՜ն,*
*Ընկերներս՝ սրտամոտ...*

*– Քո գրկի մեջ թողել եմ ես*
*Այրող հուշեր ու կարոտ,*
*Ընդունվելուս հրճվանքը պերճ՝*
*Առաջին զա՜նգ երազկոտ...*
*Դասախոսներ՝ լուրջ ու խոհեմ,*
*Իմաստուն ու պահանջկոտ,*
*Քննասենյակ՝ հույզ ու թրթիռ,*
*Ջերմ կատակնե՜ր սրտամոտ,*
*Քո գրկի մեջ տեղ գտնելու*
*Փափագելի մի կարոտ...*

*Իմաստության շունչ ես տվել*
*Քո բյուրավոր սաներին,*
*Որ քո հևքով թև են առել,*
*Հասել անգամ աստղերին,*
*Եվ աստղեր են երկնից բերել*
*Փռել քո լույս թևերին...*

*Դու նրանց հետ տվել ես ինձ*
*Նաև մտքիս բանալին,*
*Որ լույս սփռեմ քո ճամփեքին,*
*Թողնեմ գալիք դարերին...*

*Եկա՛, անցա՜ ես քո կողքով,*
*Միրտս կրկին թրթռաց,*
*Հոգիս լցվեց քո ջերմ շնչով,*
*Այրվեց, ինչպես մի կրակ...*

*Դու բյուրավոր քո սաներին*
*Առնում ես միշտ թևիդ տակ,*
*Գալիս են ու տանում կրկին*
*Քո լույս շողերն ու կրակ:*

*Տարինե՜ր են եկել, անցել,*
*Հմայվում եմ քո տեսքով,*
*Այդպես հպարտ դու կմնաս՝*
*Հավե՜րժ կանգուն դարերով...*

***1999***

**_ԱՆՆԱ ԲԱՂՄԱՆՅԱՆ_**

## ՁՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

*Համալսարա՜ն… Դու մեր պատմության ոգեղեն փարոսն ես և դարերի լույսն աղերսող կամուրջը: Հայի դաժան ճակատագրում դու հրաշք ես հիրավի, որ դարձար մեր ինքնության անխոս մարգարեն և քո մեջ ամփոփեցիր նաիրյան հույսն ու անուրջը: Դու հիմնվեցիր այնպիսի ժամանակներում, երբ հայի պատմական ճակատագիրը նորից ողբերգական ընթացք էր ստացել:*

*Իջևանցին իր հոգում ջերմություն զգաց, երբ ոտք դրեց բարձրագույն կրթության այս վերնաhարկը: Արյունով ու արցունքով շաղախված մեր ճակատագրի մեջ դու ծլարձակեցիր՝ ավետելով հոգևոր ողու վերածնունդը…*

*Մեր կրթության օրրա՜ն, թո՛ղ երբեք չխափանվի քո զանգերի ղողանջների հաջորդականությունը, հարատևե՛ս դարեր, մեր նոր ոսկեդարի հնամենի դարբնո՛ց, մեր ազգային համալսարա՜ն: Տարիների ընթացքում մենք հասակ ենք առնում, փթթում, մտքի ծփանք ու հոգևոր սնունդ ստանում քո պատերից ներս:*

*Դու եղի՛ր կանգուն՝ ի բարօրություն մեր երիտասարդության…*

***1999***

## ԳԵՂԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ
## (ԽԱՉԵՆՑ)

### ՔՈ ԼՈՒՅՍ ՃԱՄՓԵՔՈՎ

*Ես ոտք եմ դրել քո չքնաղ շեմին,*
*Անմար հույսերով քո գիրկը մտել,*
*Ինձ պես շատերին դու կյանք ես ճամփել*
*Հույսի ճամփեքով, լույսի ճամփեքով:*

*Քո մի հյուլեն էլ, տես, ես կդառնամ՝*
*Հպարտ քայլելով քո լույս ճամփեքով,*
*Եվ արդ ցնծում է իմ սիրտը վառման*
*Արցախ աշխարհիս մարտական երգով:*

*Քանի-քանիսն են քո գիրկը թողել*
*Մայր Հայրենիքիս հասել փրկության,*
*Արյուն են խառնել Արցախի հողին...*
*Ու տուն են դարձել վահանի վրա...*

*Դու եթե հանկարծ ինձ տխուր տեսնես...*
*Կամ մտամոլոր, խենթուկ երգերով,*
*Գիտցիր, այնտեղ եմ, Արցախի հողում,*
*Ուր հայոց վշտի երգեր են ձոնում:*

*Ողջո՜ւյն քեզ, մա՛յր իմ, իմ համալսարա՛ն,*
*Եվ ձեզ ողջույններ, իմ դասախոսնե՜ր,*

*Եվ քո սաներին ողջո՜ւյն արցախյան,*
*Ողջո՜ւյն քեզ, իմ մա՛յր երկիր Հայաստա՛ն:*

*Արդ ձեր գրկում եմ, բայց վաղը դարձյալ*
*Զենքով զորացած երգերն իմ սրտի,*
*Արցախ աշխարհիս փրկության համար,*
*Եթե հարկ լինի, կկռչեմ մարտի:*

***1999***

**ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Մեր հինավուրց համալսարան,*
*Մա՛յր գթառատ, Երևանում,*
*Թե՛ դասախոս, թե՛ լսարան,*
*Դյութում են հար, ձեռքով անում:*

*Մենք քո գրկում քանի՜ տարի*
*Ծվարել ենք թռչուն որպես,*
*Եվ դու քո ծով սրտով բարի*
*Մեզ սնել ես անուշ մոր պես:*

*Դու սնել ես նաև մեզ հետ*
*Թե՛ հնդիկին, թե՛ չինացուն,*
*Ու չես թողել ծարավ երբեք*
*Զավակներին քո սիրասուն:*

*Ու գնում ենք արդ մենք հպարտ*
*Քո ցույց տված անշեղ ճամփով,*
*Եվ կմնանք կյանքում անպարտ*
*Քո անվարան, ուժեղ կամքով:*

***2002***

## ***ԼԻԼԻԹ ԵՓՐԵՄՅԱՆ***

* * *

*Այսօր կապրես դու ինձանով,*
*Մեկ տարի անց կպարծենաս մի ուրիշով,*
*Ե՜վ կցնծաս, և՜ կարտասվես,*
*Ու մի օր էլ «ցտեսություն» դու ինձ կասես:*
*Բայց իմ հոգում դու մի՛շտ կապրես,*
*Ու քո զանգով զի՜լ կկանչես...*
*Բայց երբ հանկարծ ես գամ-անցնեմ,*
*Ու քեզ հպարտ կանգնած տեսնեմ,*
*Երջանկությամբ ես կգոչեմ՝*
*Գիտելիքի՜ դու իմ անհուն շտեմարան,*
*Դու իմ տո՛ւնն ես, իմ մայր բո՛ւհն ես,*
*Իմ երա՜զն ես, համալսարա՜ն:*

***2003***

# ՆՐԱՆՔ ԸՆԿԱՆ՝ ԵՐԳԸ ՇՈՒՐԹՆԵՐԻՆ

## ԳՈՒՐԳԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
## (ՄԱՍԼՈՎ)

### ՊՈԵՏԱԿԱՆ

*Մենք կրկին, ընկե՛ր, երգեր ենք գրում*
*Մեր հոգու անդուլ մաքառման մասին,*
*Արևն է վերից պայծառ հուրհրում,*
*Ու տարիներն են փոխվում երազի:*

*Արևն է բուրում որպես հուր-նարինջ,*
*Շողերը՝ նման ոսկեղեն հասկի,*
*Մեր հոգին, ընկե՛ր, լուսավոր ու ջինջ,*
*Թող ետ չմնա օրերի վազքից:*

*Թո՛ղ ետ չմնա ու ժանգ չչոքի,*
*Չդառնա երբեք խավարին գերի,*
*Անդուլ պայքարում կոփենք մեր հոգին,*
*Որ չարձագանքի օտար երգերի:*
*Չխփենք կյանքում մեր նավը քարին,*
*Չթողնենք քամին մեր սիրտը շոյե,*
*Պայծառ աչքերով նայենք աշխարհին*
*Ու լինենք մարտիկ ու լինենք պոետ:*

***1930***

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԻՄ

*Մանկությո՛ւն իմ, մանկությո՛ւն, բացվում ես իմ դեմ՝*
*Դառնաթախիծ դառնություն ու աշնան պես թեն,*
*Ու թողել ես իմ սրտում դու այնքան վերքեր,*
*Որ չգիտեմ քեզ տրտո՞ւմ, թե՞ ուրախ երգեմ:*
*Ես հիշում եմ մի մանուկ՝ աչքերը շուշան,*
*Ու աչքերում իր տամուկ խնդության նշան,*
*Սրտում արևն էր հրե իր բույրը բարդել*
*Ու խնդություն էր դրել ու արնոտ վարդեր:*
*Հնձվորին հաց էր տանում որպես անհոգ ձի,*
*Երբ ալ արևն էր հանում բաշը պղնձի:*
*Իսկ հետո ջուր էր ծախում, ծխախոտ, իրիս,*
*Փողոցում վեգ էր խաղում... նա ինչպե՜ս սիրի*
*Օրերն այն թեն, որ անցան ու չկան հիմա.*
*Որպես անցած ծիածան, ծիածանի մահ:*
*Տարիներին այն դժվար, արնոտ ու լուսե,*
*Այն օրերին մենք տվինք թովչություն ու սեր.*
*Դարձավ անիվը կյանքի ու տվեց մեզ վառ*
*Օրեր անուշ ու անգին և օրեր պայծառ:*
*Բերին նրանք մականն այդ խնդություն մի նոր,*
*Լցրին հոգին իր այնքան խնդության գինով,*
*Եվ օրերի այդ բոցում որպես մի բարդի*
*Սիրտն իր սիրով է օծվում ու վառքով վարդի:*

***1931***

## ԱՐՇԱՎԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

*Մանուկ հասակից մորս կաթի հետ ծծել եմ անհագ*
*Իմ հայրենիքի սերը կարկաչուն, ոնց զուլալ աղբյուր,*
*Մանուկ հասակից էլ ունեցել եմ մի վսեմ փափագ՝*
*Իմ հայրենիքի արթուն պաշտպանը լինել ամենուր:*

*Ինձ օրորել են հարազատներս անհուն կարոտով,*
*Սնել ինձ հացով, սառնորակ ջրով մեր մայր բնության,*
*Լեռներն են հոգուս ժպտացել անվերջ իրենց նարոտով,*
*Ու ճաշակել եմ քաղցրությունը ես լայն ազատության:*

*Հարազատներն իմ ինչե՜ր են արել, չեմ կարող թվել,*
*Հող են տարել իմ երջանիկ կյանքի, խնդության համար,*
*Աչքի լույսի պես պահպանել են ինձ, եռանդ են տվել*
*Ու պատվիրել են՝ ամենուր լինել տոկուն ու համառ:*

*Վսեմ իղձերը, ազնիվ ու մաքուր տենչերը նրանց*
*Հոգուս ծալքերում նստել են ամուր, մեղմ ու անշշուկ,*
*Ապրում եմ, հուզվում ես այդ խոհերով վառ ու հուրհրան,*
*Տեսնում եմ հեռվում լեռները մեր մով ջինջ ու վեհաշուք:*

*Արդ կրծքով անպարտ ես կպաշտպանեմ իմ և ամենքի*
*Մեծ երջանկության օրրանը սուրբ՝ հայրենիքը սեգ,*
*Երբ հորիզոնից թշնամին ելնի, հարկ լինի զենքի,*
*Ես սրով կելնեմ, որ նա մեր հողը չմտնի երբեք:*

***1940***
*Ստեփանակերտ*

* * *

*Ուզում եմ ես անվերջ ապրել,*
*Մնալ կենդանի,*
*Սիրել, զգալ ու պայքարել*
*Հոգով քաջարի:*

*Ինչ ուրախ է, լավ է արդեն*
*Աշխարհը անգին,*
*Բայց կյանքս չեմ խնայի, թե*
*Ելնի թշնամին:*

**ԵՐԳ**

*Երբ մեր գունդը թնդանոթի*
*Փողը դարձնի ոսոխի դեմ,*
*Որոտի հետ շոնդացող*
*Հզոր արկը ես կլինեմ:*

*Սավառնակը երկինք թռչի*
*Խոյանքներով բարձր ու վսեմ,*
*Օդաչուի ձեռքից թռչող*
*Ահեղռումբը ես կլինեմ:*

*Զրահ հագած տանկը ելնի*
*Ժանտ թշնամու հորդայի դեմ,*
*Ներսից խփող այն շեշտակի*
*Սուր գնդակը ես կլինեմ:*

*Ծխի, հրի, որոտների*
*Միջից ելած սիրով մի ջերմ*
*Դրոշը մեր հաղթանակի*
*Վե՛ր պարզողը ես կլինեմ:*

## ԹԵՎԱՆ ԽԱՉՅԱՆ

### ՀՐԱԺԵՇՏ

*Լուսաբաց է, նոր է արփին զարթնել քնից,*
*Ուղևորներն աղմկում են, գնում, գալիս,*
*Մի պահ հետո պիտի մեկնի կայարանից*
*Դեպի հեռուն չվող գնացքն արծաթերիզ:*

*Պիտի մեկնի մի պատանի նորակոչիկ,*
*Դեպի ազատ հայրենիքի ափերը լույս,*
*Պիտի մտնի անտառները իր երկնաձիգ՝*
*Որպես արի, արծվահայաց մի հետախույզ:*

*Ու հայրենի սեգ լեռների սերը սրտում՝*
*Հրաժեշտ է տալիս մատաղ իր սիրածին,*
*Կիսով կախված պատուհանից՝ լուռ, անտրտում,*
*Ժպտում է ջերմ արեգակնափայլ նրա դեմքին:*

*Ժպտում է լուռ և աղջիկը չնաշխարհիկ,*
*Քնքուշ շողով առկայծում են այտերը զարդ,*
*Շուրթերն, ինչպես գարնանային լուսնի մահիկ,*
*Շողշողում են հրացոլում ջինջ ու զվարթ:*

*Հայացքը պարզ, ինչպես երկնի օվկիանն անտակ,*
*Հասակը սեգ, հանց անտառի չքնաղ սոսի,*
*Սիրո բոցը հուրհրում է հոնքերի տակ*
*Ու բացում է նրա լեզուն, որ նա խոսի:*

*– Գնաս բարո՛վ,– ասում է նա իր սիրածին,–*
*Առյուծ եղի՛ր դևերի դեմ յոթգլխանի,*
*Թո՛ղ կովի մեջ Քուռկի՛կ դառնա քո կայտառ ձին,*
*Որ վառ մնան ծաղիկները մեր սահմանի:*

*Ու շարժվում է գնացքը լույս կայարանից,*
*Ձեռքը օդում ծածանվում է վարդ աղջկա,*
*Տղան խինդով նայում է բաց պատուհանից*
*Ու տանում է իր սրտի մեջ սերը նրա:*

*Գալարվում է, թռչում թեթև գնացքն արագ՝*
*Դեմքին փռած այգաբացի շողերը հուր,*
*Շիկնած դեմքով ու աչքերով կարոտահագ*
*Դեռ նայում է այն աղջիկը շիկագանգուր:*

***26 նոյեմբերի 1939***

## ԵՐԴՈՒՄ

*Այսօր պատվով ընդունեցի իմ երդումը զինվորական,*
*Ու տվեցի մի կուռ խոստում անձայրածիր հայրենիքիս,*
*Լինել դիրքում Դավթի նման՝ առյուծասիրտ ու հաղթական*
*Ու մահաբեր մրրիկներում կովել կայծակ թուրը ձեռքիս:*

*Լինել խիզախ, հպարտ, արի, լինել զգոն ու գաղտնապահ,*
*Որ ոչ մի սուր իմ բոց սրտից գաղտնիքները դուրս չհանի,*
*Հայրենիքիս սիրո համար արհամարհել տանջանք ու մահ*
*Ու մշտարթուն ընկեր դառնալ մարտիկներին մեր անվանի:*

***1940***

**ՓԱՓԱԳ**

(Մարտիկի օրագրից)

*Բացվե՛ք, իմ հոգու ոսկեձույլ դռներ*
*Ու ճամփա տվեք իմ բոց իղձերին,*
*Շանթն էլ չի կարող թռիչքս բռնել,*
*Թողեք հողմերը խաղան իմ թևին:*

*Ես ուզում եմ բիլ երկինք խոյանալ,*
*Նայել իմ երկրին աստղերի գահից,*
*Երկնքի անհայտ դռները բանալ,*
*Որ հայրենիքս սիրով գրկի ինձ:*

*Ես ուզում եմ վեհ օդաչու դառնալ,*
*Մրրիկներն անհետ փախչեն իմ ահից,*
*Որ ոսոխները մեր դարանակալ*
*Դողան շանթաշող իմ կուռ զրահից:*

*Որ ոսոխներին հարազատ երկրիս*
*Զարկ ու մահ բերեն երկնքի ծոցից,*
*Կուռ սավառնակս ամպերը ճեղքի,*
*Ու շանթեր թափվեն սրտիս հնոցից:*

## ՀՄԱՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

### ԵՐԴՈՒՄ

*Իմ հայրենի՜ք, լուսե այգի,*
*Ես քո շիվն եմ դալար,*
*Դու իմ մայրն ես մեծ ու անգին,*
*Ես՝ քո ազիզ բալան:*

*Զվարթ հոգուս արև անմար,*
*Դու ես հուր տվողը,*
*Կպաշտպանեմ դրա համար*
*Քո սրբազան հողը...*

*Քո նեղ ժամին արիավիրքի*
*Կառնեմ զինյալ թևեր,*
*Կասեմ՝ հանուն քո մեծ փառքի,*
*Ա՜ռ արյունս նվեր...*

*Երբ ղողանջի երկրով անծիր*
*Քո վտանգի փողը,*
*Երբ վրնջա Դավթի հուր ձին*
*Ու փորփրի հողը,*

*Այնժամ՝ իբրև հերոս որդի,*
*Կառնեմ զենքերս ես,*
*Կսլանամ ահեղ մարտի,*
*Սասնա Դավիթն ինչպես:*

*Չի զալարվի քաջի հոգին,*
*Երբ ցավեն վերքերը,*
*Ու կինչեն սիրով անգին*
*Հաղթության երգերը:*

## ՏՎԵ՛Ք ԻՆՁ ՍՈՒՐ, ԱՇԽԵՏ ՄԻ ՁԻ

*Եմ հայրենի լույս ափերից ռազմի երգերն ինձ հասան,*
*Բաժակն հոգուս լիքը լցվեց խոկումներով սրբազան.*
*Սրբազան ժամ... լռություն է: Կանգնել է թարթն իմ աչքի,*
*Ես ձեզ հետ եմ իմ հորդ հույզեր, ես քեզ հետ եմ իմ հոգի...*
*Արդ՝ ականջս քո լույս դռան, լսում եմ ես անձկությամբ,*
*Խրխնջամ են այնտեղ հպարտ նժույգ-ձիեր ոսկեթամբ,*
*Ծառանում են կատաղորեն, փնչում ահեղ ու դոփում,*
*Ու սուրում են հողմից արագ, լեզուներից կայծ թափում:*
*Ես նայում եմ հոգուս դռնից, ո՞ւմն է արդյոք էն հուր ձին,*
*Քուռկիկ Ջալալն է փրփրաբաշ, մեղքին՝ էն սեգ սասունցին,*
*Ու քաջերի խոյ-խոյ խմբով շանթում է թուրն հավլունի,*
*Առա՜ջ, առաջ են թոցնում ռազմի դրոշն հայրենի:*

*Սրբազան ժամ... լռություն է: Կանգնել է թարթն իմ աչքի,*
*Ես ձեզ հետ եմ, իմ հորդ հույզեր, ես քեզ հետ եմ, իմ հոգի...*

*Սիրտս՝ մագնիս, ձգում է արդ ջահել քնարն իմ առաջ,*
*Ես խփում եմ ռազմի լարին, որ որոտա շաչ-շառաչ,*
*Սակայն ջահել իմ քնարը, որ ապրել է չորս գարուն,*
*Ավա՜ղ, իր մեջ տեղ չի անում իմ հույզերին վարարուն,*
*Բարակ-բարակ առուները չեն կլանի մեծ գետեր՝*
*Ու շաչում է գետն իմ սրտի, նեղ ափերից ելնում վեր...*

*– Կտրի՛ր ձայնըդ թույլ, ո՜վ քնար,– գոչում եմ ես ահարկու,*
*Հեռո՜ւ, ինձնից, թանաք ու թուղթ, դո՛ւք չեք թարգմանն իմ*
*հոգու։*
*Տվեք ինձ թուր, աշխետ մի ձի, թռնեմ նրա սեգ լանջին,*
*Հայրենիքին իմ սիրասուն հատուցեմ պարտքս առաջին։*

*Տվե՛ք թուրն իմ, որ կռած է ոգու ցասման մեծ հրում,*
*Որի սուր-սուր երկու սայրից ազատությունն է ծորում,*
*Տվե՛ք, թռնեմ ես մարտի դաշտ որպես արծիվ սրաթև,*
*Պիտի շանթեմ թրով կայծակ՝ դարձած Դավիթ մի պարթև,*
*Թո՛ղ իմ ձի ու սմբակի տակ փոշի դառնա ժայռ ու քար,*
*Թո՛ղ շողշողա թուրն իմ ձեռքին, կտրի քառսուն ջաղացքար...*
*Այնժամ երկրիս փառքի համար՝ կրծքիս ծաղկած յոթը վերք,*
*Ազատության սուրբ մարտերում կհյուսեմ ևս ռազմի երգ...*

## ՌԱԶՄԻ ԵՐԳ

*... Մենք՝ ջահելներ, հպարտ ու վես՝*
*Անպարտների ցեղից,*
*Շփվել ենք մենք Անթեյի պես՝*
*Ուժ ենք առել հողից։*
*Մաքառումներ, գոտեմարտեր*
*Տվել են մեզ ծնունդ,*
*Մեզ հողմերն են մկրտել՝*
*Հաղթողների սերունդ։*
*Մենք՝ հայրենի քաջորդիներ,–*
*Ունենք քաջի արյուն,*
*Առյուծ էին պապերը մեր,*
*Իսկ մենք ահա՝ կորյուն։*

*Սրբազան է մեր մեծ տունը,–*
*Գանձերի ծով անափ,*
*Օտար է մեզ բռնությունը,*
*Օտար՝ շղթա ու կապ:*
*Բայց հայրենի տունը նորից*
*Սողում է նոր վտանգ,*
*Մենք արյուն ենք առել երկրից,*
*Այժմ արյուն կտանք...*
*Դե՛, արշավենք հողից, օդից,*
*Թշնամու դեմ անարգ,*
*Ոնց հայրենի հրանոթից*
*Թռչող հզոր մի արկ:*
*Հայրենի՛ք, քո պայծառ սերը*
*Մեզ զրահ է և զենք:*
*Թող գան գերման բանդաները,*
*Թող գան, որքան կուզեն:*
*Մեր հողն անգամ, ջուրը, օդը*
*Մահ և թույն կկաթեն,*
*Դաշույն պիտի դառնա խոտը,*
*Քարերդ պիտ պայթեն:*
*Գալիս ենք մենք, լույս ափերի*
*Նվիրական հող, ջուր,*
*Դե՛, շառաչի՛ր, կայծակեղեն*
*Գվարդիական մեր սուր:*
*Մենք՝ ջահելներ, հպարտ ու վես՝*
*Անպարտների ցեղից,*
*Շփվել ենք մենք Անթեյի պես,*
*Ուժ ենք առել հողից:*

* * *

*Մեր մեծ երկրի անբիծ հողում սրբազան*
*Շնչում է մեր հայրենիքը մայրագութ,*
*Նրա սահմանն այնքան է լայն ու ազատ,*
*Որ արևն է հոգնում մինչև մայրամուտ:*

*Ու փռվել է Հայրենիքը վեհությամբ,*
*Նրա հողը մի մեծ կուրծք է անպարփակ,*
*Ուր քառասուն արևների զորությամբ*
*Ժողովրդի սիրտն է խփում նրա տակ:*

*Ու ճախրում են հայրենիքի մեծ ափում*
*Մեր սրաթև բազեները լուսեղեն*
*Դյուցազնորեն մռնչում են ու դոփում*
*Ամեն մի թիզ հողում կանգնած հրեղեն:*

*Եվ չի կարող կտրել սահմանն հայրենի*
*Հավքն իր թևով, օձն իր պորտով թունաբեր,*
*Քանզի շաչում է մեր թուրը Հավլունի,*
*Քանզի ճախրում են բազեներն անվեհեր:*

## ԿԱՐՈՏ

Նվեր **Հայկազին**

*...Ա՜խ, հեռու ես. Հայրենի՛ք, հավերժական հոգուս բույն,*
*Գուրգուրիր ինձ կարոտի, ո՜վ սրբազան տխրություն...*

*Ես՝ յոթը ծով ու ցամաք տնից հեռու ծիծեռնակ՝*
*Հերվան բույնս եմ երազում՝ կտուցս առած թևիս տակ,*

*Վերհիշում եմ ամեն բան, ամեն մանրուք, ամեն շյուղ,*
*Մեր կտուրը հյուրընկալ, թոնիրներից ելնող մուխ,*
*Ամռան գիշերը պայծառ և լուսինը բոլորակ,*
*Երկնի կապույտ ջրերում ճողփող ամպերն սպիտակ,*
*Եվ սարը սեգ, ջուրը պաղ, ցոլացող հանդն ու արոտ,*
*Ու կախարդում է հոգիս նվիրական մի կարոտ...*

*...Ա՜խ, հեռու ես, Հայրենի՛ք, հավերժական հոգուս բուն,*
*Օրորիր ինձ կարոտի, ո՜վ սրբազան տխրություն...*

*Հայրենի՛ք, մա՛յր իմ անուշ, իմ մշտավառ ատրուշան,*
*Եվ ես քնարս լարած, որպես հայրն Ալիշան՝*
*Երգեմ սարերն հավերժող իմ հինավուրց Հայոց տան,*
*Քե՛զ, հայրենի աչքի ցող, իմ պաղպաջուն Հրազդան,*
*Ձե՛զ, կուսական մշուշ, մեգ, Գեղարքունյաց սարեր սեգ:*
*Քե՛զ, նիրվանա փիրուզե, քե՛զ, ո՛վ լճակ իմ լուսե,*
*Մասի՛ս, Հայոց նահապետ, որ վիճում ես երկնի հետ,*
*Սուրբ ոլորտը Արագի, իմ Արագա՛ծ երկնավետ...*

*... Ա՜խ, հեռու ես Հայրենի՛ք, հավերժական հոգուս բուն,*
*Օրորիր ինձ կարոտի, ո՜վ սրբազան տխրություն...*

***8 նոյեմբերի 1944***
***Վիսլայի արևմտյան ափ***

## ՀՈՒՇԱՐՁԱՆ

(Հատված «Կապիտան Գաստելլո» պոեմից)

... Մահ իմացեալ անմահութիւն է
**Եղիշէ**

*...Կվերջանա պատերազմը հաղթությամբ,*
*Կխորտակվեն ոսոխները ցիր ու ցան,*
*Եվ հայրենի անուշ հողին հարությամբ*
*Կբարձրանա մարմարե մի հուշարձան:*
*Հուշարձանի վրա լինի թող բազե,*
*Հաղթանակի դափնե պսակ՝ կտուցին,*
*Թևերի տակ՝ զրահ ու զենք բրոնզե,*
*Մագիլներում՝ փետրախռիվ մի սև ցին:*
*Կենտրոնում թող արև լինի, այգածագ,*
*Դյուցազնական հզոր մի դեմք՝ շողի մեջ,*
*Եվ կտուցով բազեի մի հպարտ ձագ,*
*Տակը գրված. «Նա կատարեց պարտքը մեծ»:*
*Ապա լինի ժողովրդի ոգին վառ,*
*Մարմարիոնե հուշարձանը իր ուսին,–*
*Ձեռքին՝ պսակ, վրան՝ երեք ոսկե բառ.*
*«Երախտապարտ հայրենիքից հերոսին»:*
*Եվ այնուհետ դարեր, դարեր կհոսեն,*
*Հայրենիքն էլ չի ունենա չորս ափեր,*
*Նոր սերունդներ աշխարհ կգան ու կասեն՝*
*Ինչ պապեր ենք մենք ունեցել, ինչ պապեր...*

## ԴԵՐԵՆԻԿ ՉԱՐԽՉՅԱՆ

### ԵՐԱՆԻ՜ ՆՐԱՆ

*Մի վարդն էլ բույրով, վառվռուն գույնով,*
*Գարունքին իր վառ հմայքն է տալիս,*
*Ամոթ այն մարդուն, որ աշխարհ գալիս*
*Ու հեռանում է ոչինչ չտալով:*

*Մեկը լույս կտա՝ նման երկնքի,*
*Մյուսն իր գանձի կորուստն է լալիս,*
*Երանի՜ նրան, ով կյանքն է տալիս*
*Հանուն հարազատ իր հայրենիքի:*

***1940***

### ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳ

*Իմ բարեկամնե՜ր, ընկերնե՜ր անգին,*
*Ես ձեզ եմ թողնում այս գարունը վառ,*
*Որ այնպես թովեց իմ ջահել հոգին*
*Հուր ծաղիկներով, արևով պայծառ:*

*Ես ձեզ եմ թողնում մեր կանաչ այգին,*
*Որի խնկաբույր ծառ ու ծաղկի հետ*
*Ծաղկեց իմ սերը, ծաղկեց իմ հոգին,*
*Ու սիրտս էլ դարձավ դրախտ ծաղկավետ:*

*Ես ձեզ եմ թողնում այն անուշ առուն,*
*Որ մեր փողոցից անցնում է կայտառ,*
*Որ մանկությունս տարել է հեռուն,*
*Տարել է ջահել պատկերս պայծառ:*

*Ես ձեզ եմ թողնում անուշիկ յարիս,*
*Որ միշտ կարոտով ինձ է սպասել,*
*Թողնում եմ գարնան կանաչ վարդենիս,*
*Որի ստվերում շատ եմ երազել:*

*Գնում եմ կռվի, կռիվն է վերջին,*
*Գնում եմ երկրիս իմ պարտքը տալու,*
*Հերոսի փառքով հուր կռվի միջին՝*
*Հերոսների հետ անմահանալու:*

## ԳՆՈՒՄ ԵՄ ԿՌՎԻ

*Իմ ժողովրդի հաղթության համար գնում եմ կռվի ու թեկուզ մեռնեմ,*
*Թո՛ղ ինձ մոռանան, թո՛ղ ինձ չհիշեն, թող վարդս բացվի ուրիշի համար,*
*Կմեռնեմ, սակայն հազար ծաղկանց մեջ, մանկանց սրտերում նորից կյանք կառնեմ,*
*Մի հաղթությունը միլիոն կյանք կտա և անանց գարուն, չքնաղ, ծաղկավառ:*
*Եվ նրանք, որոնք մի օր պիտի գան, թո՛ղ անվիշտ լինեն և թող չիմանան,*
*Որ իրենց պայծառ գալիքի համար ընկել է կռվում մի ջահել տղա,*

*Որի հոգու մեջ ցոլքն էր աստղերի, որ սիրում էր ծաղկունքը*
*գարնան,*
*Եվ իր հայրենի հողը սրբազան, սիրում էր, պաշտում իր*
*կյանքից ավել:*
*Սիրում էր ծաղկանց ցողի մեջ փայլող խնդուն պատկերը լույս*
*արեգակի,*
*Ծառերից կախվող աստղերը ոսկի և աստղանկար ջրի*
*հայելին:*
*Սիրում էր սրտով իր սիրած յարի դեմքին շողացող շողքը*
*լուսնյակի,*
*Եվ միշտ գերի էր ծաղկաբույր սիրո ու գարնան պայծառ*
*երկնքի փայլին:*
*Թո՛ղ ինձ չհիշեն, թո՛ղ ինձ մոռանան, թո՛ղ ջահել յարս էլ նոր*
*սիրով բացվի,*
*Միայն ի՛մ երկիր, դու ծաղկա՛ծ մնաս, նոր վարդե՛ր բացվեն*
*գարունքիդ շնչով,*
*Անթիվ ծաղկունքով, աստղերով պայծառ թող հրաշուշան*
*աշխարհը լցվի,*
*Սիրտս ծաղկի հետ հողից դուրս կգա քո հաղթանակի*
*խնդության կանչով:*

## ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

*Անմահություն է մահը հերոսի,*
*Ի՞նչ մահ, երբ նրա քաջազոհ հոգին*
*Վառվում է, ինչպես լույսը փարոսի*
*Եվ ուժ է տալիս նորից ամենքին:*

*Ի՞նչ մահ, երբ նրա թափած արյունով,*
*Հազարան կարմիր վարդեր են բացվում,*

*Եվ ազատ կյանքն է զնգում հոգեթով,*
*Եվ մարդկանց սիրտն է խնդությամբ լցվում:*

*Փա՜ռք քեզ, ով հերոս, դու ընկար կռվում:*
*Սուրբ հողի համար տվիր կյանքը քո,*
*Դու անմահացար, քո սիրտն է վառվում*
*Որպես անթառամ հրեղեն կոկոն:*

## ԹԵ ՄԱՐՏՈՒՄ ԸՆԿՆԵՄ

Կնոջս՝ **Միրուշին**

*Թե մարտում ընկնեմ, տխուր մի՛ մնա,*
*Անսեր մի՛ մնա, սիրի՛ր դու մեկին,*
*Թող ջահել սիրտդ սիրով արբենա,*
*Ափսոս է վարդը թոշնի գարունքին:*

*Ես հող կդառնամ դաշտում սիզավետ,*
*Ծաղիկ կդառնամ, անուշ կբուրեմ,*
*Դու եկ ինձ այցի նոր սիրածիդ հետ,*
*Քաղիր ինձ, որ քո ձեռքը համբուրեմ:*

*Համբույրով վերջին կարոտս առնեմ,*
*Իսկ դու իմ անուշ բույրով արբենաս,*
*Ու քո ձեռքի մեջ թող ես թառամեմ,*
*Ա՜խ, կուզեմ դա միշտ անթառամ մնաս:*

***1943***

## ԳԱԼԻՔԻ ԲԱՐԵԿԱՄԻՍ

*Հեռո՜ւ, հեռավոր գալիք օրերի իմ ջահել ընկեր,*
*Գիտեմ, դու կգաս ու ինձ պես պիտի գարունը սիրես,*
*Յարիդ հետ մեկտեղ պիտի այս դաշտում փնջես ծաղիկներ,*
*Ու յարիդ սիրով ու ծաղիկներով արբենաս ինձ պես:*
*Գիտեմ, յարիդ հետ պիտի հանդիպես այս վարդենու մոտ,*
*Ուր ես իմ յարին հրաժեշտ տվի կովի գնալիս,*
*Հրաժեշտ տվի ամռան ոսկեշող մի լույս առավոտ,*
*Ու վերջին անգամ ես տեսա նրան անուշ ժպտալիս,*
*Եվ չես գիտենա, որ քո խինդության, լույս կյանքի համար*
*Կովել եմ, կոփվել ու մարտում ընկել կյանքիս գարունքին.*
*Իմ անուշ երկրի հեռավոր ընկեր, հարազատ եղբայր,*
*Դու էլ ինձ նման միշտ պաշտպան եղիր իմ հայրենիքին:*

## ***ՍԵՐԳՅՈԺԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ***

* * *

*Արենք սուրը, եղբա՛յր, ընկե՛ր,*
*Մենք՝ պողպատից ամրակուռ.*
*Ահեղ կռվի ժամն է եկել,*
*Ելե՛ք և դուք, մայր ու քույր:*

*Ելնենք որպես փոթորկուն ծով,*
*Սուրանք մոլի հողմի պես,*
*Վերջին մարտն է, զարկենք թափով,*
*Զարդենք որպես Աքիլլես:*

*Հե՜յ, ֆաշիստնե՛ր, հերիք է դուք*
*Ռռնաք այդպես խելագար,*
*Զարկե՛նք, ընկե՛ր, հաղթ ու կտրուկ,*
*Ողջո՜ւյն քեզ կյանք ու պայքար:*

***1941***

### ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (ՎՈԼՖԱՐ)

## ՉԲԵՐՎԱԾ ԾԱՂԻԿՆԵՐ

*Այս աշխարհում ամենից շատ*
*Ծաղիկներն են ինձ գերել,*
*Սպասել եմ միշտ հուսախաբ,*
*Դու ծաղիկներ չես բերել:*

*Ես քո սիրուց կարոտակեզ,*
*Քանի՜ երգեր եմ երկնել,*
*Գարուններ եմ ուղարկել քեզ,*
*Դու ծաղիկներ չես բերել:*

*Ծնչել եմ ես լոկ քեզ համար,*
*Միայն քե՜զ եմ ես սիրել,*
*Մինչդեռ սրտիս, կանչիս օտար,*
*Դու ծաղիկներ չես բերել:*

*Չարաճճի խաղերով քո*
*Ես տարվել եմ ու ներել,*
*Բայց դու քնքուշ քո ձեռքերով*
*Ինձ ծաղիկներ չես բերել:*

*Ինձնից հիմա հեռացել ես,*
*Գիտեմ՝ կրկին չես գալու,*
*Բայց որտեղի՞ց գտնեմ ես քեզ,*
*Քեզ ծաղիկներ եմ տալու:*

***1941***

* * *

*Հայրենիքի որդին լինել, նրան զոհել կյանքը իր,*
*Ահա միտքը ազնիվ մարդու, զգացմունքներն անբասիր:*
*Երբ խաղաղ է հայրենիքը, երբ չի գործում թշնամին,*
*Աշխատանքի հերոս լինել, այն եռալու վեհ ժամին:*

*Երբ որ ելավ գոռ թշնամին, եզ հաղթելու սին հույսով,*
*Ելնել, գնալ դեմ-հանդիման, թե՛ գիշերով, թե՛ լույսով,*
*Կուրծքը բանալ՝ որպես վահան և դեմ բռնել հարվածին,*
*Խփել ուժգին ու միշտ հատու, վառ կրքերով հրածին:*

*Երբ պետք լինի այդ վեհ ժամին առաջ գնալ մահվան դեմ,*
*Գնա՛ անվախ ու աներեր, առա՛ջ գնա սիգաճեմ,*
*Չես պարտվի, այլ կհաղթես... և միշտ ձգտի՛ր, որ հաղթես,*
*Միայն արյան կաթիլներով դու ճանապարհ կհարթես:*

*Ու երբ արդեն մեր արյունով, արյուններով հարազատ,*
*Կանգուն մնա միշտ, հավիտյան մեր երկիրը ու ազատ,*
*Իմացիր որ մեր գործն արի, մեր գործը վեհ, ճշմարիտ*
*Հաղթելու է, ապրելու է որպես անգին մարգարիտ:*

***4 փետրվարի 1941***

## ԵՍ ԵՎ ՆԱ

*Հոգին քո ձուլված է,*
*Ձուլված է իմին,*
*Քո սիրտը ձուլված է*
*Իմ սիրող սրտին:*

*Քո մարմինն իմ մեջ է,*
*Իսկ իմը՝ քո մեջ,*
*Կյանքը երկսիս մեջ է,*
*Եվ սերը անշեջ:*

*Իմ կյանքը քո մեջ է,*
*Դու ես լոկ ինձ կյանք,*
*Սերս վառ՝ անշեջ է,*
*Համբույր է, գգվանք:*

*Քո կյանքը իմ մեջ է,*
*Զգում եմ քեզ ինձ մոտ,*
*Սերը քո հրշեջ է,*
*Հյուրընկալ ինձ մոտ:*

*Քո սերը իմ մեջ է,*
*Իսկ իմը՝ քո մեջ,*
*Մեր սերը շատ մեծ է,*
*Ե՜վ վառ, ո՜ անշեջ...*

***23 հունվարի 1942***

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏ

*Արյունո՜տ, արյունո՜տ, ամենն արյունո՜տ,*
*Հողը արյունոտ ու կարմիր...*
*Գետինն արյունո՜տ, կանաչն արյունո՜տ,*
*Ծառը արյունոտ, վշտակիր...*

*Դարչնագույն դարձած լայն գետն արյունո՜տ,*
*Ալիքն արյունոտ, վարարած,*

*Նրա ամեն կաթիլն, ամեն ցողն արյունո՜տ,*
*Գույնը արյունոտ, կարմրած,*

*Մարդիկ արյունո՜տ, դեմքերն արյունո՜տ,*
*Կյանքը արյունոտ և հոգին,*
*Սրտերն արյունո՜տ, խղճերն արյունո՜տ,*
*Կրքերն արյունո՜տ, մոլեգին:*

*Մեռնողների հառա՜չ, սրերի գոռ շառա՜չ,*
*Ձայներ մահականչ, նվաղող,*
*Եվ դրա հետ մեկտեղ հերոսների գոռ կանչ,*
*Պողպատի շառաչ՝ սիրտ ծակող:*

*Հոսում է արյո՜ւնը, ներկում է արյո՛ւնը,*
*Մարդկային արյունը ամեն տեղ,*
*Թափվում է արյունը, բյուր կյանքերի սյունը,*
*Հորդում է արյունը ամեն տեղ:*

*Կհոսի քո արյունը, շուտով, գայլ արքա,*
*Շատ շուտով կհոսի, կտեսնե՛ս...*

***22 հունվարի, 1942***

* * *

*Ա՜խ, ինչո՞ւ է քո հայացքը այդպես*
*Սառը, անտարբեր,*
*Ինչո՞ւ ես նայում խռովածի պես*
*Դեպի հեռուներ:*
*Ինչո՞ւ է հոգիդ այդքան անթափանց,*
*Քողապատ ու մութ,*

*Ինչո՞ւ է սիրտդ սև ագռավը քանց*
*Ե՛վ չար, և՛ անգութ։*

*Ինչո՞ւ այլևս դու չես գուրգուրում*
*Ու գրկում մեղմիկ,*
*Ինչո՞ւ այլևս ինձ չես համբուրում,*
*Ժպտում անուշիկ…*

*Ա՜խ, ես հասկացա… որովհետև ես*
*Նստել եմ այստեղ,*
*Իսկ ուրիշները, մարդիկ պարզերես,*
*Կռվում են այնտեղ…*

*Շուտով, սիրուհի՛ս, շատ շուտով ես էլ*
*Կգնամ այնտեղ,*
*Ու ցանկանում եմ մաքառել, կռվել*
*Ու մեռնել այնտեղ։*

***10 փետրվարի, 1942***

* * *

*Մենք կհաղթե՛նք, մենք կհաղթե՛նք,*
*Հավատացե՛ք դուք իմ ուխտին,*
*Երդումիս մեջ ժողովուրդն է,*
*Հավատացե՛ք ժողովրդին,*
*Արդար գործը, պայքարն արդար,*
*Միշտ կգտնեն ճամփա լուսե,*
*Խոնարհվում եմ, իմ ժողովո՛ւրդ,*
*Քո դրոշին՝ անհաղթ, վսե՜մ։*

***1943***

## ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ

### ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐ

*Քսաներորդ դար,*
*Դար ինքնագիտակցման,*
*Հողեղեն մարդը*
*Ծնկեց իր առաջ,*
*Հարցականները խավար աշխարհի*
*Բևեռեց հոգին մանրուքների մեջ,*
*Ընկավ հևալով չնչին խաղերի*
*Ետից անհայտ,*
*Որոնեց-գտավ,*
*Գտավ ու կորցրեց*
*Ու նորից գտավ...*
*Մեկուսացավ աշխարհին*
*Ու պարզվեց միայն*
*Մարդու ուղեղում...*
*Բայց քննող հոգին չբավարարվեց,*
*Պեղելով երկրի գանձերն անսպառ,*
*Երազող հոգին մագլցեց երկինք*
*Ու օտար լեզվով խոսեց լուսնի հետ,*
*Եվ տիեզերքում մեծ ու անսահման*
*Մարդն իրեն գտավ, և՝ մարգարտյա*
*Թագ կրող արքա,*
*Եվ տեր-տիրական*
*Եվ ճորտ ու ծառա:*

*Պարսից խանն իրեն այնպես չէր զգա*
*Իր մարգարտակուռ գահավորակին,*
*Ինչպես նա զգաց,*
*Երբ ոտք էր դնում*
*Երազած լուսնին...*
*Հողեղեն մարդը ծնկեց իր առաջ*
*Հարցականները խավար աշխարհի,*
*Բայց չբացատրեց իր էությունը,*
*Կնքահայր դարձավ շատ գաղտնիքների,*
*Բայց մեկը չկար, որ կնքեր իրեն...*
*Այսքան ժամանակ իրեն մոռացած,*
*Մարդը բանական*
*Վերստին հիշեց*
*Իր չբավարարված*
*Գերագույն հոգին,*
*Իրեն գտնելու և հաստատելու համար երևի*
*Թափանցեց երկնի գաղտնարանները,*
*Ուզեց հանդիպել նոր աշխարհների,*
*Մութ բավիղներում փնտրեց այն մարդուն,*
*Անծանոթ, ուրիշ օտարերկրացու,*
*Լոկ նրա համար, որ իր չպարզված*
*Բարդ էությունը*
*Նրա միջոցով կարենա պարզել։*

***1975***

## ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ ԾՆՎԱԾ ՎՐԵԺ

Մենախոսություն

Նվիրում եմ մեծ հայդուկ
**Անդրանիկ զորավարին**

*Արնոտված իմ հող, դարեր անարգված,*
*Վշտից, ցասումից խիստ կնճռոտվել ես,*
*Մռայլ է երկինքդ, արևդ միայն*
*Արյուն է ծորում, ոչ թե ջերմություն...*
*Արյուն է թքում ծիծառն առաջին,*
*Որն իր վաղեմի բույնը նորոգած*
*Գտնում է արդեն ավերակ դարձած:*
*Աշխարհը, եթե շատ-շատ փոքրացնենք,*
*Դարձնենք Հայաստան՝ փոշի կդառնա,*
*Քանզի դժվար թե գտնվի մի հող,*
*Մի բուռ, մի մասունք, մարդկանց ոտքերից*
*Ու սմբակներից այնքան շատ ծեծված,*
*Տանջված, տառապած, որքան իմ հողն է տառապել վշտից:*
*Հայի արցունքն է հեղվել հողին թուխ,*
*Արյուն է բացել բողբոջն առաջին:*
*Այրված շեներում, ծխից չորացած փլատակներում,*
*Ձորերում՝ մորթված դիակների տակ*
*Հայն է ծվարել մեն մի շապիկով՝*
*Գրկին պինդ սեղմած անուշ մանկիկին,*
*Բայց փրչոտ ձեռքը մանկանը նորից*
*Խլել է դաժան, այրել խարույկում,*
*Մաս-մաս քառատել մոր աչքի առաջ...*
*Աչքեր ճարեցեք, որ չկուրանան...*

*Ախ, երանի թե մոր աչքերի մեջ լույսը խավարեր,*
*Բայց տաք երկաթը հետո է խրվել մոր բիբերի մեջ,*
*Եվ պիղծ ձեռքերից մարմինն անարգված,*
*Նետվել է մի կողմ՝ կեղտոտ լաթի պես:*
*Օ՜, դժվար է շատ այս մեր օրերում,*
*Հողմածեծ արված մթին օրերում*
*Ծնվել ու ապրել...*

*Հանուն անարգված մեր սուրբ մայրերի,*
*Հանուն անպատված մեր կույս քույրերի,*
*Հանուն մորթոտված մեր մանուկների,*
*Հանուն մեր ազգի ու ժողովրդի*
*Ի մարտ եմ կոչում ես բոլոր նրանց,*
*Որոնց կրծքի տակ կտրիճ Վարդանի*
*Սիրտն է բաբախում:*

*Թերթիր հինավուրց մեր մատյանները,*
*Մեր հին պատմության հին վկաները,*
*Կարդա ու գիտցիր, որ երբեք-երբեք օտարի լուծը*
*Մեզ չի ընկճել,*
*Որ չենք խոնարհվել թշնամու առաջ,*
*Թշնամու առաջ ծունկի չենք իջել,*
*Այլ սուր ենք ճոճել բարբարոսի դեմ,*
*Դու էլ հետևիր քո նախնիներին,*
*Այլ սրի դիմաց երկակի սրով*
*Դու պատասխան տուր...*
*Թուք ու նախատինք այն հայ կոչվածին,*
*Որ կթերանա մեր այս սուրբ գործում,*
*Ուրեմն՝ վրեժ,*
*Արյան դեմ՝ արյուն...*

*Այդ ես չեմ ասում, այլ ձորերի մեջ մորթոտված մարդիկ,*
*Եվ երկինքը լուրթ սառը վկան է*
*Մարդկանց սպանդի, նախճիր-ոճիրի –*
*Նա է ձեզ ասում.–*
*– Լսեցեք նրանց, լսեցեք, մարդիկ,*
*Ճչացող ցավը մեր ժամանակի,*
*Լսեցեք ցավով:*
*Ու քարայրներում, խորունկ ձորերում*
*Կուչ եկած մանուկ արդարությունը*
*Բերեք լույս աշխարհ:*

***1978***

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՇԻՐԻՄԻՆ

Սիրելի **Պարույր Սևակի**
անմոռաց հիշատակին

*Մի խորհրդավոր, կծու լռություն,*
*Արևից այրված թանձր լռություն*
*Իջել է այգու պարտեզի վրա…*
*Չոր հոգու նման*
*Չոր է երկինքը,*
*Մեռած տերևներ ծառերից հոգնած*
*Թափվում են ներքև*
*Ու պարուրում են*
*Աճյունը մռայլ…*
*Սևեր է հագել մայրը պոետի,*
*Խոնարհվել որդու շիրիմի վրա…*
*Ու հավաքվել է մարդկանց*
*բազմություն,*

*Թվում է աշխարհը շատ-շատ փոքրացած,*
*Դարձած Չանախչի,*
*Իր մոտ է կանչել աշխարհի մարդկանց...*
*Եվ հոգեխռով երգերի ներքո*
*Ծունկի է իջնում մայրը պոետի,*
*Փարվում է որդու*
*Թավշե աճյունին:*
*Ցնցող տեսարան,*
*Լաց ու հեծկլտոց այս ու այն կողմից:*
*Սգավոր մայրը հպվել է հողին,*
*Լալիս է վշտից, լալիս կարոտից,*
*Կածես լալիս է մի ողջ ժողովուրդ,*
*Իսկ արցունքները թափվում են հողին,*
*Բայց հողը մեր սուրբ*
*Ուժ չունի իր մեջ*
*Առնել արցունքը՝ կարոտից ծնված,*
*Հողն էլ է լալիս...*
*Ծառերն էլ վշտից*
*Գետնին են կքվել*
*Ջարդվել, կես եղել:*
*Ծառն էլ է լալիս...*
*Լալիս են ամենքը:*
*Այս փոքրիկ օջախը*
*Եվ երկիրը մեր,*
*Եվ ժողովուրդը*
*Չրկվեցին մի մեծ*
*Ջերմացնող, այրող*
*Հարազատ սրտից:*
*Ողբա, երկիր իմ,*
*Ողբա ժողովուրդ,*

*Ողբացեք մարդիկ,*
*Քանզի կորցրիք*
*Ձեր վշտով ապրող,*
*Ձեր լավը երգող,*
*Ձեր տառապանքով*
*Տառապող մարդուն՝*
*Մարդ-բանաստեղծին:*

***20.09.1971***

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿՅԱՆՔԸ

*Կյանքում հաճախ,*
*Շատ հաճախ են լինում պահեր,*
*Երբ ճահճացած մտքերիդ մեջ,*
*Երբ բորբոսնած ուղեղիդ մեջ*
*Լույսն է խաղում իր հին խաղը,*
*Ակամայից զրկումես քեզ,*
*Զրկում ամեն մի վայելքից,*
*Գոհ չես մնում ինքդ քեզնից,*
*Եվ ապրում ես ուրիշ մի կյանք,*
*Որով, ավաղ, ոչ բոլորն են ապրել կարող...*
*Ամփոփվում ես ինքդ քո մեջ,*
*Քեզ այրում ես այն քուրայում,*
*Որից այնքան հեշտ չէ պրծնել,*
*Քեզ գամում ես այն աթոռին,*
*Որի վրա հեշտ չէ նստել:*
*Գույների մեջ գույն ես տեսնում,*
*Չգիտակցված խաղերի մեջ*
*Դու տեսնում ես խորին խորհուրդ*

*Տառապում ես քո ապրածով,*
*Դու տեսնում ես քո տեսածը վերապրելով:*
*Դու լսում ես անձայն ձայներ*
*Մարդկանց համար ոչ լսելի,*
*Նայած զարկի՝ դեղատոմս ես առաջարկում,*
*Եվ հաճախ էլ կուլ ես տալիս դառը հաբեր:*
*Դու զգում ես ռիթմը դարի,*
*Նրա սրտի զարկերը թույլ,*
*Բարձրանում ես դու քո դարից,*
*Բայց կապված ես մնում դարիդ,*
*Հալածվում ես շատ հողմերից,*
*Բայց դու երբեք հողմ չես դառնում:*
*Խոցոտվում ես շատ նետերից,*
*Բայց քո նետը երգ է դառնում,*
*Ոչ թե խոցում, այլ բուժում է վերքը սրտի,*
*Եթե վերքեր ես ստանում,*
*Դրանք դարի վերքերն են լոկ,*
*Կյանքում հաճախ, շատ հաճախ են լինում պահեր,*
*Երբ ճահճացած մտքերիդ մեջ,*
*Երբ բորբոսնած ուղեղիդ մեջ*
*Լույսն է խաղում իր հին խաղը,*
*Ու երգեր են ծնվում հոգուդ վերքերի մեջ,*
*Կրծքիդ տակ են նրանք վառվում,*
*Այրվում են ու եփ են գալիս,*
*Ու երկնքում ես դու երգում*
*Երգեր՝ ապրած ու դեռ չապրած*
*Մարդկանց կյանքից:*

***1979***

## ՓՈՔՐԻԿ ԵՐԳԵՐ

* * *

*Թող որ պատերազմ չլինի երբեք,*
*Մութ ամպերը սև չկիտվեն երբեք,*
*Թող աշխարհը մեր միշտ խաղաղ լինի,*
*Չլսվի երբեք ձայնը արկերի,*
*Եվ թող ոչ մի մայր չկորցնի որդուն:*

* * *

*Քո թևերում ուժ կա, թռի՛ր,*
*Ճախրիր ուրախ լայն աշխարհում,*
*Խորշիր մարդուց վատ, չարակամ,*
*Գգվիր մարդուն, ազնիվ, անկեղծ:*

* * *

*Մարդի՛կ, կռվեցեք առանց արյունի,*
*Սիրեցե՛ք, միայն առանց կեղծիքի,*
*Գժտվեցեք, եթե կարիք եք զգում,*
*Վախեցեք մահից, բայց կյանքից՝ նույնպես:*

* * *

*Ես խաչված չեմ, բայց կխաչվեմ,*
*Ես Նարեկ չեմ, բայց կպաշտվեմ,*
*Ես Աստված չեմ՝ կաստվածանամ:*

***1976***

## *ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆ*

## ԲՅՈՒՐԱԲԱՐԲԱՌ ԳՐԻՉ

*Ես իմ գրիչը նվեր եմ տալիս*
*Հանուն մարդկության,*
*Հանուն աշխարհի բոլոր մանկության,*
*Հանուն այն բարձր զգացմունքների,*
*Որոնք չեն դառնա ոչ վշտի,*
*Ոչ մահվան դերի:*
*Ես իմ գրիչը՝ ճերմակ, բյուրախոս,*
*Չեմ փոխի հազար...*
*Մահ ու սով սփռող սև հրթիռներով,*
*Ես իմ գրիչը՝ ճերմակ, բյուրախոս,*
*Նվեր կուղարկեմ մարդկությանը լոկ,*
*Ես իմ գրիչը, իմ սիրտը վառվող*
*Կոչեմ hանուն, hանուն մարդկության,*
*Հանուն մանկության վառ ապագայի,*
*Նրանք սիրում են ժպիտն աշխարհի,*
*Ժպտացող աշխարհ...*
*Ես իմ գրիչը, քնքշանք hոգու*
*Լուռ կբարուրեմ բարուրում մանկան,*
*Իմ աչքերի մեջ, ձեր աչքերի մեջ՝*
*Արևի կարոտ...*
*Ժպտացող աշխարհ...*
*Ժպտացող աշխարհ, քեզ՝ խաղաղություն,*
*Քեզ՝ դափնե պսակ,*

*Նորածին պոետ,*
*Քեզ՝ հավատ ու սեր,*
*Ու ծիրանի ճամփա...*

***10.10.1982***

* * *

*Քնքուշ երգերս դեռ չեն դայլայլում,*
*Քնարը սրտիս՝ մեղմիկ շնկշնկում,*
*Սրտիս մի օրը կանաչ է, սիրուն,*
*Իսկ մյուս օրը՝ սև ու ձանձրալի:*

*Քնարը սրտիս ծաղիկ է սիրում,*
*Իսկ ես տանջվում եմ,*
*Նա ինձ չի սիրում,*
*Նա ինձ չի միրում...*

*Քնքուշ երգերս լուռ դայլայլում են,*
*Քնարը հոգուս մեղմիկ շնկշնկում,*
*Սրտիս մի օրը արև է սիրում,*
*Իսկ մյուս օրը՝ կանաչ մանկություն:*

***13.04.1982***

* * *

*Իմ ճամփով մռայլ գիշերն է քայլում,*
*Սև հետք թողնելով արև ճամփեքիս,*
*Իմ ճամփին, իմ սեր, վարդի տեղ բուրող՝*
*Անհոտ փուշն է լոկ քարոտ սարերից:*

*Ու գիշերներն են մռայլ իմ ճամփին,*
*Հեղեղատները վարար գետերի,*

*Ու արևների շողը պարփակող*
*Մթին ամպերն են իմ ճամփաներին…*

*Ու կանաչ դաշտում, իմ ճամփաներին*
*Դեղնած խոտերն են խոնարհ ու մռայլ,*
*Ու նրբաբողբոջ ուռենու նման*
*Փակված դռներն են իմ ճամփաներին:*

*Ու անդունդի պես մռայլ, ահարկու,*
*Անհոգ դեմքերն են իմ ճամփաներին,*
*Ու ճամփաների արմատների պես*
*Լացող աչքերն են իմ ճամփաներին:*

***6.10.1982***

* * *

*Ես պարում էի, քամին էլ ինձ հետ,*
*Մենք կարծես մի նոր ծնունդ լինեինք,*
*Լեռներն էին դողում մեր ոտքերի տակ:*
*Մենք պարում էինք՝ ես, քամին հպարտ,*
*Մենք պարում էինք նոր պարն հայկական,*
*Մի նոր ընդոստ պար, մի նոր քոչարի,*
*Ու լեռներն հսկա ալիքվում էին,*
*Ու լեռներն հսկա լուռ դողում էին*
*Մեր ոտքերի տակ…*
*Սիրո վիթխարի կարոտից հյուսված*
*Թնդում էր պարը մեր Ազատության,*
*Մեր եղբայրական երազից հյուսված*
*Մեր միասնության կարոտն առաջին,*
*Առաջին սիրո բերկրանքը անուշ,*
*Անուշ զարունը առաջին սիրո:*

***22.02.1984***

## ԿՌՈՒՆԿ

*Ախ, դու կուգաս, կռունկ հայու,*
*Գարուն թևիդ տուն բերիր,*
*Սուրբ սարիցը պաղ ջուր առար,*
*Որ մորս տաս, սիրտն հովնա:*

*Կռունկ, մորս չքնաղ Կարսին*
*Դու գուրգուրե, որ ապրի,*
*Մոտ է օրը Ազատության,*
*Հայ հավերժիր ու ապրիր...*

*Դու էլ չի լաս, հայու կռունկ,*
*Քո բալեքը զինվոր են,*
*Նրանք ելել, կռվի կերթան,*
*Նրանց սիրտն է Եռագույն:*

* * *

*Լեռներն իմ հայոց միշտ էլ հպարտ են,*
*Հպարտ լեռները արծվի բույն են,*
*Բույն են դարերին,*
*Տուն են հայերին,*
*Սիրող սրտերին հույս են լեռները,*
*Արհավիրքի դեմ սուր են լեռները:*
*Հայերի համար տուն են լեռները,*
*Տան տանիքն ու սյունն են լեռները,*
*Արևի շող են լեռները,*
*Մայրական սիրով բարուրված մանկան*
*Անուշ ժպիտ են հայի լեռները:*
*Մոր սիրող սրտի քնքշանքից հյուսված*

*Անհուն կարոտի դեզ են լեռները,*
*Միտքն են ու խոսքն են*
*Հայոց լեռները...*

***24.02.1984***

## ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

*Դու իմ մոլոր ճամփի վրա,*
*Ինչպես գարուն, բուրող, անուշ,*
*Դու ինձ նման, դու՝ ինձ սիրող,*
*Դու հող անուշ, իմ հայրենի:*

*Դու՝ հող անուշ, իմ հայրենի,*
*Դառը վիշտս հեռու վանիր,*
*Դառը կյանքիս գեթ խինդդ տուր,*
*Գեթ մի ծաղիկ, բուրող, անուշ...*

**1979**

## ԱՐՅՈՒՆՈՏ ԵՐԳ

*Վազում էր գետ մի հորդառատ,*
*Ներկված արյունով հայ ազգի,*
*Արյունն էր հոսում լեռներից,*
*Ավազե թմբերից Դեր-Զորի:*

*Խավարն էր տնքում խոր ցավից,*
*Բիրտ էին նրանք ու վայրագ,*
*Ավազը ճնշվում էր արյունից,*

*Խորն էին վերքերը մանկանց:*
*Գիշերվա խավարում անընտել*
*Տնքում էին բյուր սրտեր տառապած,*
*Արյունը ճիչեր էր, ա՜խ, բանտել,*
*Գիշերն ինքն էլ էր տագնապած:*

*Խեղդվում էր ավազը արյունից,*
*Ողբում էր վիշտը հայ ազգի,*
*Ռռնում էր ավազը ցավերից,*
*Խորն էին վերքերը արյունի...*

*Խիղճ ուներ ավազը Դեր-Զորի*
*Սրատված սրտեր էր թաքցնում,*
*Ի՞նչ արիք, որդիներ խավարի,*
*Անեծքս ձեր սրտին եմ թափում:*

*Գետն էլ էր բարբաջում դաժան,*
*Արյուն էր կաթում ափերից,*
*Ուզում էր պայթել, անզոր էր*
*Սանձելու քոչվոր ցեղերին:*

*Եվ ուր էին ազգերը մեծամեծ,*
*Մի՞թե համր էին ու անկար,*
*Գետն էլ էր բողոքում արյան դեմ,*
*Իսկ նրանք... չկային ու չկան...*

*Ու մենաստանները դալար,*
*Չորացան հայի վշտից,*
*Վշտից՝ արյամբ ներկված,*
*Անթափանց խավար դարձան:*

*Մորթեցին ու լլկեցին*
*Խեղդեցին ու անարգեցին*
*Եվ օծելով արյամբ կարմիր*
*Թափուր գահին բազմեցին…*

* * *

*Ես կյանքն եմ սիրում, ուր մաքրություն կա,*
*Ուր կուսություն կա՝ մաքրություն սիրող,*
*Ես կյանքն եմ սիրում, ուր արբեցում կա,*
*Ուր քնքշանք կա ու արբեցում սիրո:*
*Ես կյանքն եմ սիրում՝ Արևներով ջերմ,*
*Սիրո համբույրն եմ պաշտում առավել,*
*Ես համբույրների ջերմն եմ միշտ սիրել,*
*Ու հիմա համբույրն ինձ պաղ է թվում:*
*Տարիներն անցան, ճերմակեցի ես,*
*Ու կանաչ ճամփաս մեկից ճերմակեց:*
*Տարիներն անցան, ու հիմա, սակայն,*
*Պաղ համբույրներն են իմ դուռը ծեծում…*
*Ես կյանքն եմ սիրում նույնիսկ մահվան մեջ,*
*Նույնիսկ, երբ կյանքը ինձ պաղ է թվում,*
*Տարիներ անցան համբույրների պես,*
*Բայց սերս կյանքին միշտ տաք է ու թեժ:*

* * *

*Ես երազ տեսա այս գիշեր,*
*Սպիտակ ամպերն էին իջել մազերիս,*
*Վախեցա, հանկարծ երազս քներ,*
*Մազերս մնային սպիտակ ամպերին:*
*Սև-մութ ամպի պես մութ էր իմ չորս դին,*
*Սպիտակ ամպերն էին իջել մազերիս,*

*Իմ սև սաթի պես մազերը ձնել,*
*Սպիտակ ձյուն էր իջել մազերիս:*
*Մորուքս ճերմակ փրփուր էր ծովի,*
*Ծովն էր ալեկոծ, սիրտն էր փրփրում...*
*Ես երազ տեսա, սերս էր առաջին,*
*Որ երազիս մեջ ինձ էր գուրգուրում:*
*Ինձ էր գուրգուրում, ինչպես մի մանկան,*
*Ես նրա գրկում՝ ճերմակ մազերով,*
*ճերմակ մորուքով փոքրիկ մի մանուկ,*
*Ես նրա գրկում երազ մի ճերմակ*
*Ու երազիս մեջ ինձ էի փնտրում...*

***26.03.1984***

## ՉԳԻՏԵՄ

*Մտքեր, որ ճնշում եք իմ հոգին,*
*Դարձել եք իմ հոգուն զնդան,*
*Գրքեր, որ տալիս եք դուք ինձ խինդ,*
*Կանաչ եք դուք գարնան նման:*

*Առվակներ, դուք գարնան կանաչ,*
*Որ կանաչ խինդով եք լցված,*
*Ծաղիկներ, դուք գարուն սևաչ,*
*Անուշ հողի եք դուք նման:*

*Քամիներ, դուք գարնան մեջ կանչ,*
*Կապույտ զեփյուռով լցված,*
*Ճերմակ ամպի եք նման,*
*Ամպիկներ՝ կապուտաչ, սևաչ...*
***16.11.1986***

* * *

*Արևն անուշ ինձ է շոյում,*
*Օրը գարնան տաք է ու թեժ,*
*Եվ ուրախ է այնպես հոգիս,*
*Ընտանիքիս գիրկն եմ գնում:*

*Իրիկունը մեղմ իջել է,*
*Էությունը ջինջ է այնքան,*
*Արևն՝ անուշ,*
*Օրը՝ անուշ...*

*Ընտանիքը սուրբ է, նշխարք,*
*Եվ ուրախ է հոգիս այնպես,*
*Իրիկունը իջել է մեղմ,*
*Էությունս սուրբ է այնքան:*

*Իրիկունը,*
*Էությունս,*
*Օրը՝ անուշ,*
*Ընտանիքս՝ ուրա՜խ է շատ...*

***15.11.1988***

## ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒԹՅԱՆ

* * *

*Իմ Հայաստանում գարուն է վաղուց,*
*Վարդերն են բացվում իմ Հայաստանում,*
*Իսկ ես այս հեռու աշխարհում օտար,*
*Սիբիրյան ձմռան հուշով եմ ապրում:*

* * *

*Սիրտ իմ թոթափիր տանջանքներն այդ խուլ,*
*Վանիր մեկընդմիշտ մտքերը վհատ,–*
*Հին է աշխարհում սիրո բերկրանքը*
*Որքան կյանքն է հին,*
*Նույնքան էլ հին են ցավերը սիրո:*

* * *

*Հավատում եմ՝ դեռ գարունն ինձ համար,*
*Ունի գաղտնիքներ ու անակնկալ*
*Գեղեցիկ կնոջ խնամքով պահած*
*Պերճանքների պես:*

***5.05.1985***

* * *

*Կչարչարվեմ, կտառապեմ՝*
*Տեսնել օրն այն ազատության*
*Հար ազատուած Ղարաբաղը*
*Քեզ միացած, մա՜յր Հայաստան:*

*Բայց կտեսնե՞մ*
*պայծառ օրն այն ազատության,*
*Որ մեզ նորից կյանքի կոչի*
*Գրկում մեր մայր Հայաստանի:*

*Հայ եղբայրնե՛ր իմ չարչարված,*
*Եկեք լինենք միշտ միաբան,*
*Միշտ մեր հույսին*
*Ու հավատքին մեր փառապանծ:*

*Եկեք փառք տանք*
*Աշխարհ ծնող,*
*Աշխարհ սնող,*
*Մեր արարիչ հայ Աստծուն:*
*Ապավինենք մենք միշտ նրան*
*Եվ խնդրենք Սուրբ հիսուսից*
*Տալ քավություն և թողություն,*
*Ազատություն և փրկություն:*

*Կասեմ ես ձեզ հայ եղբայրներ*
*Քույրեր իմ հեզ,*
*Ելնենք ոտքի միաբանված,*
*Փրկենք երկիրը Փոքր Սյունյաց:*

***Նոյեմբեր, 1987***
***Մարտակերտ***

* * *

*Երբ ես նայում եմ երկնքին կապույտ*
*Հիշում եմ խլված Մեծ Հայքն իմ կորած,*
*Ես երբ տեսնում եմ վեհ Արարատը,*

*Միրտս է հալչում, կարոտից մաշվում:*

*Երբ ես նայում եմ սեգ Արարատին,*
*Տեսնում եմ ասես Նոյյան Տապանը,*
*Եվ նայում եմ ես կարոտով նրան*
*Սրտի թրթիռով, լացող աչքերով...*

*Տեսնում եմ նրան շղթայված, կապված,*
*Հայ ազգից խլված, թուրքի ձեռն ընկած,*
*Նայում եմ նրա միշտ վեհ գագաթին*
*Հավետ ճերմակած և դեռ լուռ հանգած,*
*Նոյի Տապանը սրտում իր պահած:*
*Տեսնում եմ ջարդված հույսեր անհամար*
*Ու անվերջ լալիս, որ դեռ թշնամու,*
*Հախից չենք գալիս ու մռայլվում է դեմքն իմ դառնացած,*
*Սև ամպ է գալիս, Մասիսն եմ տեսնում ամպերով ծածկված:*

*Երբ նայում եմ այս հպարտ սարին,*
*Հիշում եմ հանկարծ Մասիսն իմ խլված,*
*Մասիսն եմ տեսնում ամպերով ծածկված,*
*Վերքերով պատված, Մեծ Եղեռն տեսած,*
*Բայց կանգնած հպարտ, միշտ լուռ ու անպարտ:*

***04.04.1989***

* * *

*Հավատում եմ ես, որ կգա մի օր,*
*Երբ էլ չենք լինի մենք մտամոլոր,*
*Հավատում եմ ես, որ Սիսը գրկած,*
*Մենք Մասիս կելնենք ազգովին, խմբված:*

*Հավատում եմ ես, որ մենք միացած,*
*Դեռ կպայքարենք հույսերով լցված,*
*Հավատում եմ, որ հույսերով լցված*
*Հային չի ընկճի թուրքը անիծված:*

*Հավատում եմ ես իմ քաջ հայ ազգին*
*Որ պիտի հասնի նա իր երազին,*
*Հավատում եմ ես, որ կգա մի օր,*
*Երբ էլ չենք տեսնի ազգիս սգավոր:*

*Հավատում եմ քեզ, Աստված իմ գթած,*
*Որ նոր լույս կտաս ազգիս տառապած,*
*Որ նոր լույսովդ կյանք կպարգևես,*
*Իմ տանջված ազգիս կմխիթարես:*

***04.04.1989***

## ՈւՍԱՆՈՂԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈւԹՅՈւՆՆԵՐ

***ԱՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ***
*Սոցիոլոգիայի ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս*

* * *

*Ես սովորեցրի ինքս ինձ ապրել սովոր կարոտին,*
*Որ չնահանջեմ կարոտի առաջ..*
*Որ մնամ հույսով ու լինեմ բարի, ինչ էլ չլինի:*
*Ես ընկերացա հեռուների հետ,*
*Որ չխանգարի հեռավորությունն ինձ ու քայլերիս…*
*Մտքիս ու հոգուս, որ բաժան չանի:*
*Ես սկսեցի դժվարագույնից ու էլ չհասա ամենահեշտին..*
*Ինչ էլ արեցի:*
*Ու կարոտները հեռավորության,*
*Անխուսափելի մասնիկը դարձան հոգուս էության…*
*Ու չհանգեցին…չթեթևացան….*
*Մասնիկս դարձան:*

### ՀԱՅՐԵՆԻՔ

*Հայրենիք ու ես.*
*Մեր երկուսի մեջ՝*
*Լեռնաշխարհ ու ազգ,*
*Մի ամբողջ կյանք կա*
*Մեր երկուսի մեջ:*
*Աներևույթ ցավ ու վաղվա հույս կա,*

*Ահեղ պատմություն ու հաղթանակ կա,*
*Ցավից կծկված, բայց նորից ապրած մի ժողովուրդ կա:*
*Մեր երկուսի մեջ*
*Ընդհատված կյանք կա,*
*Պատմական էջեր ու սպասում  կա:*
*Մեր երկուսի մեջ  լեռան ու հողի խորը կարոտ կա,*
*Պապական երդում, վեհ նպատակ կա մեր երկուսի մեջ..*
*Հայրենքն ու ես…*
*Մեր երկուսի մեջ*
*Ազգի պայքար ու 1 դարի պարտք կա ,*
*Արդարության ձայն ու մանկան ճիչ կա:*
*Մեր երկուսի մեջ*
*Թախծոտ ժպիտի հարատև ուժ կա,*
*Հայի մի երազ, սրտի փափագ կա..*
*Ու մի բուռ դարձած  սահմանագիծ  կա*
*Մեր երկուսի մեջ…*
*Հայաստանս կա …*

**ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ**
*Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ*

## ՈՒՂԵՐՁ ՆՊԱՏԱԿԻՍ

Երբ դադարես գոյությունդ իմ մտքերում,
Որպես հզոր մի դատաստան վեհ իղձերիս:
Կանցնես այնժամ, կանէանաս հեռուներում,
Ու հետք անգամ չթողնելով լուռ հուշերիս՝
Կսլանաս ժամանակի անհուն ուղով,
Մութ ստվերներով, ցուրտ ու խոնավ ուղիներով...
Ու կդառնաս անհիշելի մի հուշարձան,
Երազիս մեջ՝ անհպվելի, անիրական...

***15.11.2015***
***Մոնումենտ***

## ՁՈՆ ՊԱՊՈՒՍ

Պապս հոգուս մեջ տուն է կառուցել
Ու կտուր կապել սրտի հասկերից:
Արևի լույսով ներսը շաղախել
Ու որմնագրել խոհեմ հույզերից...
Կյանքից թրծված մի խենթ իմաստուն
Հեզ խրատներով ու կամքով բարի,
Խորհուրդ պարփակող  հայացքով երգուն
Անդորր հույզերով, աննկուն, արի...

Բառերը՝ շիտակ, խոր ու անեղծ են,
Երգերը՝ հոգուց բխող մաքառում:
Դեմքին նշմարված կնճիռները խիստ,
Անցած ուղին է խրթին պատկերում...
Պապս ուսուցիչ ու պապս ծնող,
Պապս իր ներսում մեր ցավը կրող...

***22.12.2015***
***Մոնումենտ***

**ՄԱՐԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ**
*Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագ.*
***2-րդ** կուրս*

## ԾՈՑԱԳՐՊԱՆԻԴ ԱՅՆ ԽՈՐ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

Ծոցագրպանիդ այն խոր անկյունում ինձ տեղ կպահես,
Որ երբ աշխարհի ցրտից ես դողամ,
Չար մարդկանց դատից մազապուրծ փախչեմ,
Երբ կորցնեմ ելքը դեպի լույս տանող
Ու անդառնալի հուսախաբ լինեմ՝
Գամ գրպանումդ թաքուն ծվարեմ:
Քո խոր գրպանում թո՛ւյլ տուր, որ ապրեմ
Ու լինեմ քեզ մոտ ու քեզ հետ լինեմ,
Որ երբ աշխարհից չարացած քամին
Փորձի դռներս մեկ առ մեկ ջարդել,
Փախչեմ ու նստեմ քո գրպանի մեջ՝
Ապահով ու տաք, լուսավոր անվերջ:
Խո՛սք տուր գրպանիդ մոռացված ծալքում
Ինձ համար պահված մի անկյուն թողնել,
Որ երբ այս կյանքից նեղացած լինեմ,
Բոլոր հույսերս ես մարած լինեմ,
Փախչեմ ցուրտ ու մութ, անգութ աշխարհից՝
Գամ գրպանումդ թաքուն ծվարեմ…

* * *

Ոչինչ չունեի, ավա՜ղ, նվիրելու ես քեզ՝
Ո՛չ անհամար գանձեր, ո՛չ կրակներ անմար,
Միայն փոքր-ինչ հոգնած զույգ երկնագույն աչքեր,
Որ ստեղծված էին հավետ քեզ նայելու համար:
Ես քեզ ո՛չ լույս տվի, ո՛չ էլ խավարն առա,
Ու չմաքրի երբեք թացությունը սրտիդ,
Լոկ գնալիս կապույտ իմ աչքերում տարա
Մենությունն ու սերդ, կախարդանքդ, հոգիդ...
Ուրիշների նման չձոնեցի երգեր,
Ուրիշների նման քեզնով տարված չեղա,
Միայն միշտ քեզ լացող զույգ երկնագույն աչքեր
Իմ լուռ նվիրումի ապացույցը եղան...
Ոչինչ չունեի, ավա՜ղ, նվիրելու ես քեզ՝
Ո՛չ աշխարհներ դյութիչ, ո՛չ խոստումներ գերող,
Միայն փոքր-ինչ խոնավ զույգ երկնագույն աչքեր,
Որ միշտ թաքուն եղան, որ միշտ եղան ներող...

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Քո վանքերի, քո քարերի, խաչքարերի արանքում
Կանգնեմ երկար,կանգնեմ անհոգ ու աղոթեմ առ
Աստված,
Որ պապերիս աղաչանքը, հառաչանքը վաղեմի,
Ջուր չլինի, հուշ չլինի, չմոռանամ ես հանկարծ:

Ես մոմ դառնամ քո վանքերի ամենանուրբ պատերին
Ու չմարեմ ու լուռ վառվեմ ու լուռ  ծխամ անդադար
Եվ քար լինեմ քո հինավուրց, դարեր ճամփած շերքերին
Ու նորոգվեմ ու կառուցվեմ, կանգուն մնամ քեզ համար:

Ես, Հայաստա՛ն, թող միշտ զավակդ կոչվեմ,
Քեզ հայր կոչեմ, քեզ մայր կոչեմ, Հայաստա՛ն,
Քո հարազատ լայն դաշտերի բույրն առնեմ
Ու փոխարեն քեզ գովերգող, քեզ միշտ երգող տաղս
տամ...

**ԷԴՈՒԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
*Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,*
***3-րդ*** *կուրս*

* * *

Միայնակ  նստած ինչպես շատ հաճախ,
Արահետ տեսա ես մի գեղեցիկ:
Գուցե գեղեցիկ չէր, ինձ միայն թվաց,
Բայցև ուզեցա ես քայլել հանկարծ:
Ու մտեծեցի. ի՞նչը վերցնեմ ինձ հետ,
Գուցե արահետը ինձ կորցնի՞ անհետ:
Ի՞նչ ունեմ հիմա ես իմ ձեռքի տակ,
Որ ինձ պետք կգար  այդ մութ ճամփեքին:
Ո՞վ ունեմ հիմա ես ինձ հարազատ,
Որ մթում կանգնի նա միշտ իմ կողքին:
Ու որոշեցի հու՛յս տանել ինձ հետ.
Ո՛չ փող եմ տալիս, ո՛չ գրավ դնում,
Գուցե հույսը միա՞կն է, որ ես մեկընդմիշտ ունեմ իմ
ձախ գրպանում,
Բայց քիչ չէ՞ երկար մի ճամփա գնալ
Ու լոկ հույսիդ   հետ ճամփեքին մնալ,
Քիչ չէ անծանոթ մի ճամփա ընկնել
Ու հույսիդ վրա  միայն հույս դնել:
Թե ունես դու հույս  քո ձախ գրպանում
Նրան միշտ ընկեր հավա՛տն է դառնում,
Թե հավատ ունես՝  Աստվա՛ծ է կողքիդ, ծնողներ ունես,
թե տե՛ր կա գլխիդ

Աստված, ծնող, մեծ հավատ ու հույս,
Պակասում է լոկ արևի մի լույս, որ ընկեր դառնա
անօրեն կյանքին ու սիրով լցնե նա միշտ քո հոգին:
Ես հիշում էի, որ ձախ գրպանում հույս ունեմ պահած,
Բայց դատարկ թվաց գրպանն ինձ հանկարծ,
Ես մտածեցի,գուցե նա էլ ինձնից հեռացավ,
Բայց մութ անտառը այդ անհույս ճամփով
Հրաշքով մի պահ լուսավոր դարձավ:
Խավարը անցավ ու այդ ձայնը սուրբ ականջիս հասավ:
Հետ նայիր մի պահ-ծնող ու ընկեր,լույսը արևի,հավատ
մի անմար,
Աստծո օրհնությամբ նրանց քեզ տալով,
Հույսը գրպանից մի օր դուրս կգա:

* * *

*Նրա տվածը նման էր լոկ սպիտակ թղթի,*
*Որ նույնիսկ եթե թանաք ունենաս,*
*Երկու ձեռքով էլ թե կառչես գրչից,*
*Թեպետ շատ ուզես ու կարողանաս*
*Գեթ մի բան գրել այդ թղթի վրա,*
*Գրել երկու տառ կամ մի ստորակետ,*
*Միևնույն է գրածդ անխոսք կմնա,*
*Ու լուռ կջնջվի թղթից այն անհետ:*
*Թե փորձես գրել, - բարև քեզ, ի՛մ սեր,-*
*Թուղթը կթողնի սերը քո անտեր,*
*Թե փորձես ներկել սերն անպատասխան,*
*Կտանի նա քեզ անշունչ տափաստան,*
*Ու եթե սիրո մի առվակ գտնես,*
*Չի թողնի այդ թուղթը առվից ջուր խմես:*
*Թե կանչես հոգուդ բարի ու լքված,*

*Որ գրի թղթին խոսքեր դեռ չասված,*
*Թե հոգիդ փորձի թղթին տալ նոր շունչ,*
*Նա էլ սրտիդ պես կդառնա անուրջ:*
*Թե կուզես կանչիր պայծառ արևին,*
*Կանչիր երկնքի աստղերին անմար,*
*Թե կուզես կանչիր քո ընկերներին,*
*Ծանոթ, անծանոթ, մարդիկ անհամար,*
*Թե կուզես ձայն տուր կապույտ երկնքին,*
*Ձայն տուր ամենին, ինչ լսում է քեզ,*
*Թող գան ու գրեն այդ սպիտակ թղթին*
*Խոսքը քո սրտի, որ կորավ ասես:*
*Կորավ ու գնաց, ինչպես քեզ նման*
*Կորավ նաև սերս, սեր՝անպատասխան,*
*Բայց թողեց գրիչս, ինչ որ բան քեզ հետ,*
*Թղթի մեջ գրիչս դրեց վերջակետ:*

# ԵՊՀ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԳԵՐ

# ՄԱՅՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խոսք և երաժշտություն՝
Էդմոնդ Մակարյանի




-թյան, հար-թե-ցիր մի նոր ու - ղի մեր կյան-քի, զո - րու - թյան: Ա րե-վի նը-ման զո -
-րեղ, հա-րա-զատ, դու քը-ռիչքն ես մեր ա - զատ:
Ա-րե-վի նը-ման զո - րեղ, հա-րա-զատ, դու քը-ռիչքն ես մեր ա -
- զատ: Ու կը - գա ա - պա -


-զան, որ կեր-տել ես մեզ հա -
-մար, հո-գու օ - թե - վան, լույ-
-սի շտե - մա - րան ան - մար, մեր Հա-մալ - սա -
mf
-րան: Սերն ու սիրտն ես հա - յե -
mf
dim.
p


-րի ու զար-թոն - քը ղըպ - րու - թյան, մենք մաս-նիկն ենք քո կյան -
-քի մեկ-դար-յա պատ - մու - թյան: Ու թող օ - րը քո վաղ - վա
հա - վեր-ժա - նա, դու փա-րոս ես գի - տու -
- թյան: Ու թող օ - րը քո վաղ -


-վա հա-վեր-ժա-նա, դու փա-րոս ես գի-տու-
-թյան: Ու կը-գա ա-պա-
-գան, որ կեր-տել ես մեզ հա-
-մար, հո-գու օ-թե-վան, լույ-


-սի շտե - մա - րան ան - մար, մեր հա-մալ - սա - րան: Ու կը -
cresc.
-զա ա - պա-գան, որ կեր -
-տել ես մեզ հա - մար, հո-
-գու օ - թե - վան, լույ - սի շտե - մա - րան, ան -




1. Դու մեր տուն՝ դարբնոց կյանքի
Եվ անսպառ ջերմության,
Հարթեցիր մի նոր ուղի
Մեր կյանքի, գոյության:
Արևի նման զորեղ, հարազատ,
Դու թռիչքն ես մեր ազատ:

*Կրկներգ.* Ու կգա ապագան,
Որ կերտել ես մեզ համար,
Հոգու օթևան,
Լույսի շտեմարան անմար,
Մե՛ր Համալսարան:

2. Սերն ու սիրտն ես հայերի
Ու զարթոնքը դպրության,
Մենք մասնիկն ենք քո կյանքի
Մեկդարյա պատմության,
Ու թող օրը քո վաղվա հավերժանա.
Դու փարոս ես գիտության:

*Կրկներգ.* Ու կգա ապագան,
Որ կերտել ես մեզ համար,
Հոգու օթևան,
Լույսի շտեմարան անմար,
Մե՛ր Համալսարան:
Դու մեր հարազատ
Մայր Համալսարան:

# ՆՎԻՐՈՒՄ ՄԱՅՐ ԲՈՒՀԻՆ

Խոսք՝ Համիկ Համբարյանի

Երաժշտություն՝ Աննա Զաքարյանի




ռիթ - մը վա - րա - կիչ սիր -տը մեր պա - տեց քիչ - քիչ և լըց -
- րեց նոր տա - րեր - քով գի - տու - թյան. Ու - սա -
- նող թե դա - սա - խոս, մի - ա - սին՝ վառ մի փա - րոս, տա - րե -
- գրեր ան - գին բու - հի՝ և՛ նոր, և՛ հին: Մեր
mf
cresc.
f


բուի հա-րա-զատ, քո շնոր-հիվ ենք ոտք դը-նում շե - մին նոր կյան-քի
և անց-նում ու-ղին ե-րա-զան - քի ու բար-ձուն-քի, որ կեր-տենք սե-րուց - քը հան-րու-
- թյան, հա-մայն հը-պար-տու-թյան: Թող նոր սե-րունդ-ներ
այս շեն-քում կըր-կին դառ-նան սիր - ված ա-նուն-ներ, հետքն ի-րենց թող-նեն քո է - ջե -
f
dim.
f


1.
-րում ու-կե-դար-յա,
քո զար-մա-նա-լի վառ պատ-մու - թյան:
2.
// - թյան:
6
p
mf
cresc.
f
mp
poco a poco cresc.


f
Թող նոր սե-րունդ-ներ
f
այս շեն-քում կըր-կին դառ-նան սիր-ված ա-նուն-ներ,
հետքն ի-րենց թող-նեն քո է-ջե-
-րում ու-կե-ղար-յա,
քո զար - մա-նա-լի վառ պատ-մու - թյան,
cresc.
ff
rit.
ff
վառ պատ - մու - թյան:
sfz

1. Երբ հոգում մեր պատանի
Սկիզբ դրվեց մի նոր կյանքի,
Եվ հնչեց նոր մի անուն՝ «ուսանող»,
Մեզ սպասում էր բուհը Մայր՝
Տիեզերքը այս անծայր,
Զարկերակ, որ բաբախում է ողջ մի դար:
Նրա ռիթմը վարակիչ
Սիրտը մեր պատեց քիչ-քիչ
Եվ լցրեց նոր տարերքով գիտության:
Ուսանող թե դասախոս,
Միասին՝ վառ մի փարոս,
Տարեգրեր անգին
Բուհի և՛ նոր, և՛ հին:

*Կրկներգ.* Մեր բուհ հարազատ,
Քո շնորհիվ ենք ոտք դնում շեմին նոր կյանքի
Եվ անցնում ուղին երազանքի ու բարձունքի,
Որ կերտենք սերուցքը հանրության,
Համայն հպարտության:
Թող նոր սերունդներ
Այս շենքում կրկին դառնան սիրված անուններ,
Հետքն իրենց թողնեն քո էջերում ոսկեղարյա,
Քո զարմանալի վառ պատմության:

2. Բանասեր թե պատմաբան,
Լրագրող, իրավաբան,
Միասին՝ մի համերաշխ ընտանիք:
Անբաժան սիրահարներ,
Պարզապես լավ ընկերներ,
Համատեղ ապրած ուրախ, խենթ տարիներ:
Մեր սրտերը միացան,
Համահունչ իրար դարձան,
Լցվեցին նոր տարերքով գիտության:
Ուսանող թե դասախոս,
Միասին՝ վառ մի փարոս,
Տարեգրեր անգին
Բուհի և՛ նոր, և՛ հին:

*Կրկներգ.* Մեր բուհ հարազատ,
Քո շնորհիվ ենք ոտք դնում շեմին նոր կյանքի
Եվ անցնում ուղին երազանքի ու բարձունքի,
Որ կերտենք սերուցքը հանրության,
Համայն հպարտության:
Թող նոր սերունդներ
Այս շենքում կրկին դառնան սիրված անուններ,
Հետքն իրենց թողնեն քո էջերում ոսկեղարյա,
Քո զարմանալի վառ պատմության:

# ՀՈԳՈՒՍ ՕՐՐԱՆ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խոսք և երաժշտություն՝
Գայանե Թադևոսյանի




rit.
a tempo
իմ սեր, Հա-մալ - սա - րան:
Հա-մալ-սա - րան,
poco cresc.
mf
դու ո-գե - դեն տա - ճարն ես իմ:
Դար-ձար լույ - սի փա-րո-սը իմ ճա-նա-պար - հին,
դարձ-րիր ա - մուր ու հաս-տա - տուն քայ-լե - րը իմ.


քեզ-նով պի - տի ան-վերջ ճախ - րի դեռ իմ հո - գին:
Դարձ-րիր ա - մուր ու հաս-տա - տուն քայ-լե - րը իմ.
քեզ-նով պի - տի ան-վերջ ճախ - րի դեռ իմ հո - գին...
Coro
mp
Ա...


Soli
mp
Դու ան - տես բը - ռիչքն ես հո - գուս թե - վե - րի, դու լույ -
mp
3
-սի աղ-բյուրն ես մըտ - քիս խա-վա - րի: Քայ - լե - րըս ե - րե - րուն
poco rit.
3
դարձ - րել ես հաս-տա-տուն: Գի-տու-թյան սուրբ օր - րան, իմ


mf
a tempo
տուն, Հա-մալ - սա - րան:
Հա-մալ-սա - րան,
Coro
mf
Ա...
poco cresc.
mf
դու ո-գե-դեն տա-ճարն ես իմ:
Դար-ձար լույ-սի փա-րո-սը իմ ճա-նա-պար-հին,


դարձ-րիր ա - մուր ու հաս-տա - տուն քայ-լե - րը իմ.
քեզ-նով պի - տի ան-վերջ ճախ - րի դեռ իմ հո - գին:
Դարձ-րիր ա - մուր ու հաս-տա - տուն քայ-լե - րը իմ.



քեզ-նով պի - տի ան-վերջ ճախ - րի դեռ իմ հո - գին:
f
dim.
Soli
p rubato
Թե - վեր ա - ռած՝ կը - զը - նամ ես այս տա - ճա - րից,
p
cresc.
Poco più mosso
ու էլ եր - բեք չեմ վա-խե - նա փակ դըռ-նե - րից:
f Coro
Հա-մալ-սա-


Soprano solo
p da lontano
Ա...
-րան, դու ո-գե - ղեն տա-ճարն ես իմ:
f
Դար-ձար լույ - սի փա-րո-սը իմ ճա-նա-պար - հին,
դարձ-րիր ա - մուր ու հաս-տա - տուն քայ-լե - րը իմ.


քեզ-նով պի-տի ան-վերջ ճախ-րի դեռ իմ հո-գին:
Դարձ-իր ա-մուր ու հաս-տա-տուն քայ-լե-րը իմ,
քեզ-նով պի-տի ան-վերջ ճախ-րի դեռ իմ հո-գին...
sempre dim.
mf




1. Դու հույսի անուրջն ես իմ ճանապարհի,
Կենարար ավյունն ես սրտիս զարկերի,
Դու սերն ես իմ արթուն,
Դարձել ես հոգուս տուն:
Գիտության սուրբ օրրան,
Իմ սեր, Համալսարան:

*Կրկներգ.* Համալսարան, դու ոգեղեն տաճարն ես իմ:
Դարձար լույսի փարոսը իմ ճանապարհին,
Դարձրիր ամուր ու հաստատուն քայլերը իմ.
Քեզնով պիտի անվերջ ճախրի դեռ իմ հոգին...

2. Դու անտես թռիչքն ես հոգուս թևերի,
Դու լույսի աղբյուրն ես մտքիս խավարի:
Քայլերս երերուն
Դարձրել ես հաստատուն:
Գիտության սուրբ օրրան,
Իմ տուն, Համալսարան:

*Կրկներգ.* Համալսարան, դու ոգեղեն տաճարն ես իմ...

Թևեր առած՝ կզնամ ես այս տաճարից,
Ու էլ երբեք չեմ վախենա փակ դռներից:

*Կրկներգ.* Համալսարան, դու ոգեղեն տաճարն ես իմ:
Դարձար լույսի փարոսը իմ ճանապարհին,
Դարձրիր ամուր ու հաստատուն քայլերը իմ.
Քեզնով պիտի անվերջ ճախրի դեռ իմ հոգին...

# ԻՄ ՈՒ ՔՈ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խոսք և երաժշտություն՝
Գոհար և Տիգրան Գրիգորյանների




-դեն մի դար կըր - քում ես շա - րու - նակ սե-րունդ - ներ բա - զում - բա -
- զում: Ես ու - նեմ աշ-խարհ մի խոր ու ընդ - ար-ձակ, գի - տե-լի -
- քի աշ-խար-հը լայ-նա-հուն ինձ հա - մար բա-ցում է
cresc.
f
նոր հո - րի - զոն - ներ գա - լի - քի պայ-ծառ մեր օ - րե - րում: Հա - մալ-սա -
cresc.
f


-րա՛ն, դու իմ տուն, Հա - մալ - սա - րա՛ն, դու իմ սյուն,
Հա - մալ - սա - րան, դար ես ապ - րում:
Հա - մալ - սա - րա՛ն, դու իմ տուն, գի - տե - լի -
-քի իմ սյուն, իմ ու քո Հա - մալ-սա - րան,


𝆌
mf
դու մեր Հա - մալ - սա - րան: Ըն-կեր-
f
sf
-ներ բա - զում, հա - սուն ու բա - նի-մաց հան-դի-պե - ցին կյան-քի իմ այս փու -
mp
-լում: Մի-ա - սին պի - տի միշտ բար-ձըր մենք պա-հենք ա - նու -
-նըդ գա - լիք նոր ս - րե - րում: Զար-կե - րակ մի պիհնդ, դու


ուժն ա - մեն հա - յի, դե զար - կի՛ր հա-վերժ դու դա - րե - րով: Գի-տե-
cresc.
-լի - քը ուժ է, զի - տենք մեր մե - ծե - րից, մեր ու - ժի դու մայր աղ -
cresc.
f
- բյուր: Հա - մալ- սա - //-րան:
f
f


mf
Հա - մալ - սա -
mf
- րա՛ն, դու իմ տուն, Հա - մալ - սա - րա՛ն, դու իմ սյուն,
Հա - մալ - սա - րան, դար ես ապ - րում:
Հա - մալ - սա - րա՛ն, դու իմ տուն, գի - տե - լի -




1. Ես ունեմ մի տուն ու մի հզոր անուն՝
Համալսարա՛ն, դու կյանքի իմ սյուն,
Որ արդեն մի դար կրթում ես շարունակ
Սերունդներ բազում-բազում:
Ես ունեմ աշխարհի մի խոր ու ընդարձակ.
Գիտելիքի աշխարհը լայնահուն
Ինձ համար բացում է նոր հորիզոններ
Գալիքի պայծառ մեր օրերում:

*Կրկներգ.* Համալսարա՛ն, դու իմ տուն,
Համալսարա՛ն, դու իմ սյուն,
Համալսարան, դար ես ապրում:
Համալսարա՛ն, դու իմ տուն,
Գիտելիքի իմ սյուն,
Իմ ու քո Համալսարան,
Դու մեր Համալսարան:

2. Ընկերներ բազում, հասուն ու բանիմաց
Հանդիպեցին կյանքի իմ այս փուլում:
Միասին պիտի միշտ բարձր մենք պահենք
Անունդ գալիք նոր օրերում:
Զարկերակ մի պինդ, դու ուժն ամեն հայի,
Դե զարկի՛ր հավերժ դու դարերով:
Գիտելիքը ուժ է, գիտենք մեր մեծերից,
Մեր ուժի դու մայր աղբյուր:

*Կրկներգ.* Համալսարա՛ն, դու իմ տուն,
Համալսարա՛ն, դու իմ սյուն,
Համալսարան, դար ես ապրում:
Համալսարա՛ն, դու իմ տուն,
Գիտելիքի իմ սյուն,
Իմ ու քո Համալսարան,
Դու մեր Համալսարան:

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խոսք և երաժշտություն՝
Տիգրան Գրիգորյանի




-քերն ան - ծայր, որ միշտ հաղ - թենք խա-վա - րը ու մը -
-նանք ան - պարտ, գի - տե - լի - քի ու - ժով ապ-րենք ողջ
կյանք: Որ միշտ հաղ թենք խա-վա - րը ու մը -
-նանք ան - պարտ, գի - տե - լի - քի ու - ժով ապ-րենք ողջ


rubato
mf
կյանք: Դու ղըպ-րու - թյուն, իմ ման-կու-թյան կան-չող ե -
cresc.
2
mf
- րազ, քո գըր-կի մեջ շատ սե-րունդ-ներ ան-մա - հա -
- ցան: Ու դեռ դա - րեր, դա-րեր ա-նու - նըդ կը-հըն-
2
- չի ան - մար, հայ ազ - գի ուժ, մեր Պե-տա-կան Հա-մալ - սա-


p
-րան: Բա-րի, ան-խոնջ, ըն-վի-րա-կան քո ավ-յու-
dim.
p
-նով հո-գի-նե-րում պարզ ու մա-քուր ծըն-վեց զա-
-րուն: Աս-տվա-ծա-յին քո կո-չու-մով ան-
2
-մա-հա-ցար, ու մեզ տա-լով վեհ ա-նուն-ներ հը-զո-րա-


cresc.
mf
- ցար: Ա - բեղ - յան ու Մա - նանդ - յան, Ղամ - բար -
sempre poco a poco cresc.
mf
- յան, Քա - լան - թար - յան... քո լույ - սից են չե - նա - ցել, ի - րենց մըտ -
cresc.
cresc.
f
- քերն պայ - ծա - ռա - ցրել: Հեր - քը հի - մա մեզ է հա - սել՝ սե - րունդ - նե -
f
- րին պատ - վով հանձ - նել, մեր Մայր բու - հի ու - կե ա - նունն հա - վերժ պա -


mf
- հել: Դու դըպ-րու - թյուն, իմ ման-կու-թյան կան-չող ե -
mf
- րազ, քո գըր-կի մեջ շատ սե-րունդ-ներ ան-մա - հա -
- ցան: Ու դեռ դա - րեր, դա-րեր ա - նու - նըդ կը-հըն-
2
- չի ան - մար, հայ ազ-գի ուժ, մեր Պե-տա-կան Հա-մալ - սա -


-րան: Ու դեռ դա - րեր, դա-րեր ա - նու - նըդ կը-հըն-
-չի ան - մար, հայ ազ-գի ուժ, մեր Պե-տա-կան Հա-մալ - սա-
poco a poco rit.
dim.
-րան: Հայ ազ - գի ուժ, մեր Պե-տա-կան Հա-մալ - սա-
mp
-րան:
p
8
Ped.
*

1. Դու դար ապրած ու ինձ հասած մտքի տաճար,
Լուսավորի՛ր մեր մեջ ապրող մտքերն անծայր,
Որ միշտ հաղթենք խավարը ու մնանք անպարտ,
Գիտելիքի ուժով ապրենք ողջ կյանք:

*Կրկներգ.* Դու դպրություն, իմ մանկության կանչող երազ,
Քո գրկի մեջ շատ սերունդներ անմահացան:
Ու դեռ դարեր, դարեր անունդ կմնա անմար,
Հայ ազգի ուժ, մեր Պետական Համալսարան:

2. Բարի, անխոնջ, նվիրական քո ավյունով,
Հոգիներում պարզ ու մաքուր ծնվեց գարուն:
Աստվածային քո կոչումով անմահավար
Ու, մեզ տալով վեհ անուններ՝ հզորացար:

3. Աբեղյան ու Ղամբարյան,
Մանանդյան, Քալանթարյան...
Քո լույսից են շենացել,
Իրենց մտքերն պայծառացրել:
Հերթը հիմա մեզ է հասել՝
Սերունդներին պատվով հանձնել,
Մեր Մայր բուհի ոսկե անունն հավերժ պահել:

*Կրկներգ.* Դու դպրություն, իմ մանկության կանչող երազ,
Քո գրկի մեջ շատ սերունդներ անմահացան:
Ու դեռ դարեր, դարեր անունդ կմնա անմար,
Հայ ազգի ուժ, մեր Պետական Համալսարան:

# ԵՍ ԵՐԳՈՒՄ ԵՄ

Խոսք՝ Արթուր Մեսրոպյանի
Երաժշտություն՝ Արեգնազ Մարտիրոսյանի




- սել, չէին հա-վա-տում, պետք էր դի - մա-դրել, մա-տու - ցող, ա - ռա - քիչ,
ծրի գործ ա- նել, ա-րան-քում չը - մը-ռա-նալ ե-րա-զել, ե-րա - զել...
Տուր ինձ ա-զա-տու-թյուն, ու ես կը-եր - գեմ, տուր ան-կա-խու-թյուն, ու ես կը-բըռ-
- չեմ, զույ - ներ տուր ինձ ու շատ ա - րև - ներ, ես


կը-ստեղ-ծեմ, ինչ եր - բեք չես տե - սել: ...Ան - քուն գի-շեր՝ դի-մա-
-նալ, ան-փող օ - րեր՝ չըն - կըճ - վել, չը - դո - ղալ, նույն շո - րը
մի քա - նի օր հագ-նել, սի - րա-հար-վել, մերժ-վել, չը - կո-տըր-վել:
Ես ու - ժեղ եմ, ես եր - գում եմ, ես կամ,


վըս-տահ եմ, ան-վերջ կը-բարձ-րա - նամ,
Գու-նա-շատ եմ, ա-ռատ
ու ա-զատ,
ես իմ ե-րազ-նե-րից մեծ կա-րող եմ դառ-նալ:
Տուր ինձ ա-զա-տու-թյուն, ու ես կը եր - գեմ,
տուր ան-կա-խու-թյուն, ու ես կը-քըռ-
- չեմ,
գույ - ներ տուր ինձ ու շատ ա - րև - ներ,
ես




Տուր ինձ ազատություն, ու ես կերգեմ,
Տուր անկախություն, ու ես կթռչեմ,
Գույներ տուր ինձ ու շատ արևներ,
Ես կստեղծեմ, ինչ երբեք չես տեսել:

Ես հետնի շարքում շատ երկար եմ սպասել,
Չէին հավատում, պետք էր դիմադրել,
Մատուցող, առաքիչ, ճրի գործ անել,
Արանքում չմոռանալ երազել, երազել...

Տուր ինձ ազատություն, ու ես կերգեմ,
Տուր անկախություն, ու ես կթռչեմ,
Գույներ տուր ինձ ու շատ արևներ,
Ես կստեղծեմ, ինչ երբեք չես տեսել:

Անքուն գիշեր՝ դիմանալ,
Անփող օրեր՝ չընկճվել, չդողալ,
Նույն շորը մի քանի օր հագնել,
Սիրահարվել, մերժվել, չկոտրվել...

Ես ուժեղ եմ, ես երգում եմ, ես կամ,
Վստահ եմ՝ անվերջ կբարձրանամ,
Գունաշատ եմ, առատ ու ազատ,
Ես իմ երազներից մեծ կարող եմ դառնալ:

Տուր ինձ ազատություն, ու ես կերգեմ,
Տուր անկախություն, ու ես կթռչեմ,
Գույներ տուր ինձ ու շատ արևներ,
Ես կստեղծեմ, ինչ երբեք չես տեսել:

**ՀԱՎԵԼՎԱԾ**

***ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ***

## ՀԻՄԱՐԱՑ՝ ՈՒՍՄԱՆ ՎՐԱ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՐԾԻՔԸ

*Ի՞նչ քո անձդ, մանուկ մատաղ, կըչարչարես նաֆիլե,*
*Հոգիդ, կյանքդ ուսման համար, որ շատ հիմար, պոշ*
*պան է.*
*Վարդապե՞տ մի կուզես ըլլալ, թե աստղաբաշխ*
*փիլիսոփա,*
*Թե կուզես որ իմաստությանդ վրա աշխարհ զարմանա:*
*Ինչո՞ւդ է պետք գրել կարդալ, որ մեկ փողի չի արժեր,*
*Գլխիդ հազար գիրք ժողովել՝ բանդ, գործդ ձգել անտեր:*
*Ի՞նչ հարկավոր միշտ ամեն օր նոր-նոր բաներ մտքեդ*
*հանել,*
*Կամ առաջվան ընկերներուդ ախմախ, հիմար, պակաս*
*կանչել:*
*Արի՛, երթանք շուտով խանութ մեր զանազան հնարքով:*
*Ապրանք ծախենք թեկուզ մեր հորը, սակայն շատ մեծ*
*օգուտով:*
*Ինձ վրա դու մեկ լավ նայե, որ չգիտեմ անունս գրել,*
*Ընդ հակառակն փողը ճիպումս՝ հազարավոր ձագ է*
*հանել:*
*Դու ե՞րբ տեսար խելոք գիտուն, որ հորերուս ատեթով*
*Աստված պաշտեր, ժամը երթար, պասը պահեր*
*հավատքով:*

*Արի՛ բա՛ց թող այդ ուսումը, դու որ այժմեն՝ չես հավան*
*Եկեղեցվո կանոնքներուն, վաղը կըլաս փրոդեստան.*
*Ո՛չ պաս գիտնաս և ո՛չ ուտիք, ո՛չ հավատքով աղոթել.*
*Ո՛չ մեղքդ լալ ջերմ արցունքով, ո՛չ աստուծո տուն մտնել:*
*Ձետըդ նայե, թե որ լի՛ք է ոսկի արծաթ փողերով,*
*Փիլիսոփա գիտնականեն դու միշտ վե՛ր ես՝ իմ խելքով՝*
*Չերև փողով ամեն բանը կըլըմընճա աշխարհիս,*
*Բայց ուսումով , գիրք կարդալով չի կըշտանալ փորերնիս:*
*Ներկա դարուս ուսումնականք ինչ մեծ գիտեն, ինչ իշխան.*
*Ազատ աստված մեզ ստեղծեց, կասեն, կելլան ման կուգան,*
*Բայց որ երթանք մենք խանութը, բարև կուտանք ամենուն*
*Եթե աղա, իշխան անձինք՝ մեզիմեն պատիվ կառնուն,*
*Փող շատ ըլլա՝ ուտենք, հագնենք, գինին խմենք ու պառկենք,*
*Եվ աս կերպով մեր օրերնիս ՝ ուրախությամբ անցընենք.*
*Մեր գիտցածը մեզի կօգնե, թե հավատքի զորությունը,*
*Եկեղեցի, ավետարան, ամուր պահենք մեր մտքումը:*

## ՀԵՐՔՈՒՄՆ ՑԻՄԱՐԱԿԱՆ ԿԱՐԾԵԱՑ, ԶՈՐ ԱՆՄԻՏՔ ՈՒՆԻՆ Ի ՎԵՐԱՅ ՈՒՍՄԱՆ

*Յէ՛ բանդագուշ ի սէր ոսկւոյ, որ զհոգիդ հանես ձօն,*
*Զաշխոյժ հոգի պարմանեկին քոյդ թակարդես ի ծուղակ.*
*Դմա թոյլ արա գարունազեղ լուսաւորիչ հոգւով օ՜ն,*

*Քան յորոգայթ ցանցեղ յիմար խենէշութեան ի վանդակ:*
*Զի՞նչ որ ուսումն ո՛չ ընձեռէ, ո՛վ դու ժպիրհ ցնդաբան,*
*Զո՞յր զկուրացեալ հոգւոյ ակունս չ'լուսաւորէ անաղօտ.*
*Զյիմարութիւնդ, յորում թխսես, նա փարատէ*
*անպայման,*
*Որում թշուառ քով վիճակաւ զանխուլ ի քէն դու կարօտ:*

*Բաբէ՜, խաւար մտացդ հոգւոյդ, սին սաղարթիւք քո*
*անձին,*
*Որ ոսկէկիր ըղձաս լինել քան գրագէտ և գիտուն.*
*Որ անկասկած զկուրութեան զմթութիւն անփարատ*
*Ի քոյդ հոգւոյ շեղջցէ ակունս յաւէժաբար հաստատուն:*

*Քո կրպակաց պատուարք, որմունք և խստապինդ մեծ*
*դրունք*
*Ի քոյդ գլուխ աւերակօք կարկառեսցին յաւիտեան,*
*Եւ քո կրիւք մտաց վարկօք զգածեալ որդիքդ և թոռունք*
*Զքարի հարցին միշտ անխնայ, իբր զծնունդ քաղդէհան:*

*Իմաստութիւնն չէ՞, որ զլուսոյ իւր ճառագայթ*
*եօթնաջահ*
*Հանգոյն արփւոյն տարածանէ հողագնտոյս ի յոլորտ.*
*Մի թէ և քեզ զկուրութեան մերկել խավար չէ ի ճահ,*
*Բանասիրացս՝ զի զշինուածս փլուզանես դու յոխորտ:*

*Թո՛ղ պատանեակդ , մինչ յառոյգ տիս մինչ զօրեսցէ*
*հաստատուն,*
*Զգայլ գիտութեան ձգել կաթին սերտ փութասցի*
*կամակար.*
*Թո՛ղ և լուսով պերճ գիտութեան հոգւոյն կացցեն ջահք*
*փայլուն,*
*Զի յաշխարհի մի՛ յիւր ընթացս դեգերեսցի վայրապար:*

*Խ՛իղճ ազդեսցէ զո՛նէ ի սիրտդ, յէ՛ անոպայ դատաւոր,*
*Արծաթ քանզի արդարանայ յատեան մտացդ քան զլոյս.*
*Զի՞նչ քո ոսկի հոգիդ զօրէ պտղաբերել բեղմնաւոր,*
*Որչափ ուսման լոյս անաղօտ յոր չիք մտաց տարակոյս:*

*Զարքայորդւոն Սողոմոնի զարդար առ այդ վճիռ լուր,*
*Որ լաւ ասէ զկոյր ակամբք, քան զկուրացեալն մտօք,*
*Ո՞ւր քո ապա ոսկւոյ անուն , ո՞ւր արծաթին, ո՜ դու*
*կոյր,*
*Յոր դանդաչես զառանցանօք, զլուսոյ բարձեալ զբողոք:*

*Նիւթ ժանգահար, որ ըստ ինքեան զիւր ո՛չ պահէ*
*մաքրութիւն,*
*Զիա՞րդ կարէ անախտ պահել զքեզ յասպարէզ*
*կենցաղոյս.*
*Այլ գիտութեան անշամանդաղ ճառագայթից զօրութիւն*
*Խաւար բանդէդ զոգիդ կարէ լուսաւորաց բերել կոյս:*

*Օ՜ն սիգաճեմ ընդ պատանւոյն ի լոյս փութա*
*գիտութեան,*
*Յաջող ի քայլ զճեմ առնուլ ի լուսեղէն ի կամար.*
*Ի բա՛ց ընկեա՜ զախտ արծաթին և որ զոսկւոյն*
*ցանկութեան,*
*Որք զքեզ յանել ի գուբ կարթեալ զհոգիդ մաշէ*
*ժանդահար:*

## ՈՒՍԱՆՈՂ ՈՒ ՄԵԾԱՏՈՒՆ

*Ուսանողաց վերա առնել դատաստան*
*Հեշտ չէ շատ, ունի անհամար պայման.*
*Նայելով նորա դուրսի ընթացքին՝*
*Ուղիղ բան ասել է անհնարին:*

*Շատերը մինչև այսօր ասած են,*
*Թե ուսանողները դատարկ մարդիկ են.*
*Նոցա պատասխան ես կասեմ այսօր,*
*Որ այդ կարծյաց տերը չէ մեր դատավոր:*

*Այդ դատավորը յուր մահճում հանգիստ*
*Երբ արշալուսո քնով ննջում է,*
*Ուսանողն զգաստ թափելով քունը*
*Գնում է շտապով համալսարանը:*

*Երբ ուսանողը դադրած, վաստակած*
*Տուն է հետ դառնում (հարկ է, թե քաղցած),*
*Դեռ իմ դատավորը տեղերում նստած՝*
*Ջերմ-ջերմ փորում է գլուխը փթած:*

*«Աղջի՛կ,– գոռում է նա յուր աղախնին,–*
*Ժամը քանի՞սն է, մո՞տ է կեսօրին»:*
*–Հրամել եք, կուզի ուղիղ մի քառորդ:–*
*«Ո՜ւֆ, ժամանակն է վեր կենալ ուղորդ»:*

*Վեր կացավ, հագավ շորերը սիրուն,*
*Թեյ ու հացեղեն մատուցին իսկույն.*
*Իհարկե, կուտեր, թե ես էլ հանգիստ*
*Քնեի նրա պես՝ կուտեի անշուշտ:*

*Մեծատան համար միայն թեյ ու հաց*
*Թե լոկ պատրաստեն՝ կմնա քաղցած,*
*Այն պատճառով էլ աղի մանր ձկներ.*
*Պանիր ու խավյար և այլ շատ բաներ,*

*Ոսկի բաժակով օղին կարապետ,*
*Ե՞րբ մաղերայից կմնա նա ետ.*

*Կերավ, ճաշակեց փառավորապես*
*Ու սիրուն գինին վերայից խմեց:*

*Երբ այս ավարտած՝ տնից էլ դուրս գալի,*
*Ուսանողն ճաշած՝ դիպչում էր օդի:*
*«Ի՜նչ փուչ մարդիկ են,– ասաց յուր մտքում,–*
*Բան ու գործ չունեն, վազում փողոցում»:*

*Որովհետև մինչ յուր գործն ուսանողը*
*Սկսավ, ավարտեց, քնած էր մեծատունը,*
*Այն պատճառով էլ ուսանողները*
*Դատարկ մարդիկ են նոցա աչքումը:*

## ՄՏԱԾՈՒԹՅՈՒՆ

*Անցան օրերս տխրությենով, չըտեսա մի բարեկամ.*
*Լիք է աշխարհ կծով-սուգով, չկա ծաղիկ անթառամ.*
*Ո՛չ ոք չասի , թե սիրտ ունիմ՝ ինձ գրաված իբրու գանձ.*
*Ո՛չ ոք չասի, թե աշխարհիքումս ես հարուստ եմ*
*գերապանծ:*

*Քաղցր ու դառը խառնըված է այն ջրումը անբաժան,*
*Որ տալիս է մեզ բնությյուն, չըկա որոշյալ պայման.*
*Կյանքի պատկերն ամենայն օր նկարում է արևը,*
*Քանի չի հասել դեռ կես օրը, ուրախ է և տխուրը:*

*Ընդհակառակ՝ կես օրից հետ, երբ արևն ի խոնարհ*
*Ուրախի էլ կոտրած է սիրտը, լինում է թույլ ու տկար,*
*«Դու ըսպասիր նորա գլխին՝ նա ուշ դնե քո ոտքին»,*
*Սովորեցնում է մեզ Մովսեսը , սա է պատգամ երկնային:*

*Այլ դու, ո՛վ մարդ, այս աշխարհքում բեռնավորված հույսերով*
*Ի՞նչ ես օրդ դատարկ անցնում՝ հառաչելով ու լալով.*
*Աշխարհքումս թշվառություն, ուրախություն, մի կերպով*
*Խիստ սուր կանցնեն, ինչպես արծիվն օդն է կտրում յուր թևով:*

*Այս կոշտ հողը շատ է եղել մեզպեսներին օթևան.*
*Երկինքը շատ թափեց անձրև, լվաց հազար գերեզման.*
*Թե որ կուզես արեգակը կյանք է, կյանքը՝ արեգակ,*
*Մին էլ կտրեց ճառագայթը, մտավ հանկարծ ամպի տակ:*

*Խոր գիշերը լռությունով՝ ծածկեց կեսը աշխարհի,*
*Էլ չի երգում սոխակն ուրախ, լսի՛ր վայերը բուի,*
*Արծաթահերն երկնից գահեն երբ ցոլացնե յուր լույսը,*
*Դու կտեսնես նորա լույսով մակագիրը արձանի:*

*«Մարդուս կյանքը սին երազ է, մահը խավար գիշեր է,*
*Թե գործ ունիս արժանավոր՝ լուսնի շողքից պայծառ է,*
*Քո դամբանը նա հավիտյան և դարերու մութի մեջ*
*Կըցոլացնե, ինչպես լուսին՝ լույս տվող միշտ ու անվերջ:*

*Ծնչում ես օդ, քանի աստղը հորիզոնում փայլում է,*
*Մտավ հանկարծ նա օվկիան՝ կյանքիդ թելը կտրած է.*
*Թե վախճան ես դու որոնում, ինչպես շատերը քեզ պես,*
*Կյանք գտանել, որ միշտ մնաս, ապրես արևու երես,*
*Լսի՛ր Քրիստոսի խոսքերին, թե անվախճան այս են կյանք,*
*Որ հավատա՛ աստված, Քրիստոս, թեև շատք չեն բավական»:*

***ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ***

## ԼԵՎՈՆԻ ՎԻՇՏԸ
(Հատված)

*Ոչ՛, մեզ պիտո են ուսումնարաններ,*
*Այլ հնար չըկա սորա փրկության,*
*Ազգային դպրոցք և պանսիոններ*
*Կը ծածկեն այդ ցեխ, այդ հոգու զնդան:*

***Ուղիղ վարժապետ, ուղիղ մտածող,***
***Դաստիարակի՜չ մանուկ սերընդի***
***Ազգի պիտույքը հոր պես հոգացող****-
*Հառաջ քան դպրոցն ա՜յդ պետք է լինի:*

*Ուսո՛ւմ և ուսո՛ւմ մեզ հարկավոր է,*
*Ուսումը լինի թո՛ղ մեր թագավոր,*
*Ուսումը հային թո՛ղ բուսուցանե*
*Մի բարի վիճակ և կյանք փառավոր:*

***Ակադեմիա*** *հոգևոր կյանքի,*
*Մի մեծ ասպարեզ, մի վերին Սիոն,*
*Որ արձակ բացվեր դռներն երկնքի,*
*Քրիստոնեության փայլե՜ր հորիզոն:*

*Ակադեմիա՛ Մայր-Էջմիածնում,*
*Նախագահ Վանքի գավթին ու դրան,*
*Ու՛ր ե՜ն է գալի այս ներկա օրում*
*Ընչասեր արյուն, ախտեր անարժան:*

*Քանի դար անցավ, և մինչև այսօր*
*Չունինք մենք դպրոց – այդ բանն առաջին,*
*Գումար կազմեցավ շատ նշանավոր,*
*Նրան սուրբ հայրերն անպտուղ արեցին:*

*Խեղճ ժողովուրդը յուր հետին լուման*
*Բերեց Աստծո գանձանակ ձգեց,*
*Հոգևոր ուսում չտվեցին նորան,*
*Նա չը մտածեց և չը բողոքեց:*

*Հասավ ժամանակ – մենք բողոքում ենք,*
*Մենք ազգի անդամ և երեսփոխան,*
*Ակադեմիա մենք պահանջում ենք,*
*Պահանջում է ազգ, թեև կիսաձայն…*

*Եվ այդ կարելի, և ո՛չ երազ այդ,*
*Միայն պիտո էր խնամք և վաստակ,*
*Կղե՛ր, ո՞ւր ես դու լարում որոգայթ,*
*Կղե՛ր, քո տունը կործա՛ն, փլատա՛կ:*

*Ո՛վ անբաղդ Լևոն, այսքան շրջեցի,*
*Ի՞նչ օգուտ կամ գործ հառաջ բերեցի:*
*Ո՛վ հայ, քո ցավով արդեն մաշեցա,*
*Ոչինչ փրկություն ցավիդ չը տեսա:*

*Բայց իրավի է, ոչինչ անապատ*
*Չէ կարող բերել պտուղ անարատ.*
*Հառաջ պիտո է նորան բարվոքել,*
*Եվ ապա առատ հունձի սպասել:*
*Որքան ցանել ես, նույնքան կը հնձես,*
*Այս մի օրենք է համաշխարհական.*

*Չո՛ր է, ցամա՛ք է հայի ասպարեզ,*
*Եվ դեռ չի ծաղկել* ***Ծառը գիտության****:*

*Ուսման սերն է, որ մեզ մշակում է*
*Մտավոր դաշտը հոգու անդաստան.*
*Եվ առանց ուսման մեր կյանքը նույնն է*
*Թե անշարժությամբ կապված գերեզման:*

*Ուրեմըն, ուսի՛ր, ուրեմըն մտածի՛ր,*
*Քննի՛ր խնդիրքըդ խորին հայացքով,*
***Իրական կյանքը*** *իմաստասիրի՛ր,*
*Ասածդ հաստատի՛ր հազար փորձերով:*

*Մեծ օգուտ ունիս և մեծ հետևանք,*
*Եթե ասածիդ գործը հառաջ է.*
***Գո՛րծ*** *այսուհետև,* ***գո՛րծ*** *և* ***աշխատանք****:*
*Ասածըդ գործը թո՛ղ վարձատրե:*

*Ես շատ խոսեցի, բայց քիչ գործեցի,*
*Գուցե խոսքերս ունայն գնացին.*
*Աստված տա, որ սիրտս նոր հույսով լցվի.*
*Այդ օրից կյանքըս կըտամ ես գործին:*

*Առատ է հունձը լուսավորության,*
*Բայց մենք մշակներ չունինք հնձելու,*
*Կրթության ցանձով լի է Եվրոպան –*
*Գա՛նձըդ մեզ պետք է առնել ձեռնտու:*

*Ա՛զգ իմ, ո՛ղջ մնաս,– և ես կաղոթեմ,*
*Որ քո բազուկներ քեզ հարուցանեն.*

*Ես **Մեծ փրկության Զատիկը կը տոնեմ**,*
*Երբ Հայերն ազա՜տ... մի օր ազա՜տ են;*

* * *

*Եվ ահա՜ Լևոն, իմ ընթերցողնե՜ր,*
*Վերջ դրեց արդեն ծանր արկածքին.*
*Նորա սիրտն լցվեց դառն մտածմունքներ,*
*Որ նա չկարաց թավալել **Զարին**:*

*Բայց ձգած է սերմ, թող ծլե՜ն, ծաղկեն*
*Այդ գաղափարքը հոյակապ գործի,*
*Թո՜ղ հային մի նոր կյանք առաջարկեն,*
*Այդ կյանքի հունձը թո՜ղ առատ լինի:*

*Նա ձեզ թողնում է երկար միջոցով,*
*Այո՜, շատ երկար... բայց ո՜չ հավիտյան.*
*Մեկնեցե՜ք ձեր ձեռն Լևոնին սիրով,*
*Ցանկացե՜ք նորան օրեր հանգստյան:*

*Թեև խանգարեց նա ձեր հանգիստը,*
*Բայց այդ խանգարումն չէր թշնամական,*
*Նա ցույց տվեց ձեզ յուր սրտի վիշտը,*
*Կամեցավ Հայիդ լույս պայծառության:*

*Նա չը գովեց ձեզ, և այդ կարող չէր.*
***Լավը միշտ լավ է, ասում էր Լևոն.***
***Ցրվեցե՜ք խավարն, որ լույս ձեզ ծագեր,***
***Այսպես թո՜ղ լինի մեր կյանքի կանոն:***

***1864***

# ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ (Սողոմոնյան, 1897-1937), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ: 1919-1921 թթ, եղել է պատմալեզվաբանական ֆակուլտետի ունկնդիր:*

*Խորհրդային կարգերի հաստատումից հետո վերակառուցված ժողովրդական համալսարանում Չարենցը՝ արդեն որպես ուսանող, ընդունվել է Հասարագիտական ֆակուլտետի պատմագրական բաժին, մեկ տարի սովորելուց հետո տեղափոխվել է Մոսկվա և ուսումնառությունը շարունակել Ծանյավսկու համալսարանում: Դրանից հետո էլ նա մինչև իր կյանքի վերջը սերտորեն կապված է եղել Երևանի համալսարանի հետ:*

*ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ (Հայաստան Եղիազարյան, 1900-1969), բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս, հասարակական գործիչ, ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր (ետմահու): 1923-27 թթ. սովորել է Հասարակագիտական ֆակուլտետի պատմագրական բաժնում:*

*ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ (Աճեմյան, 1903-1969), բանաստեղծ, արձակագիր, երգիծաբան, հրապարակախոս: 1923-27 թթ. սովորել է հասարակագիտական ֆակուլտետի պատմագրական բաժնում:*

*ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ (Մովսիսյան, 1905-1971), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ: 1926-30 թթ. սովորել է մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում:*

*ՍԱՐՄԵՆ (Արմենակ Սարգսյան, 1901-1984), բանաստեղծ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Խորհրդային Հայաստանի հիմնի հեղինակ: 1927-32 թթ. սովորել է Մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում:*

*ԱՇՈՏ ԳՐԱՇԻ (Գրիգորյան, 1910-1973), բանաստեղծ, թարգմանիչ, ծնվել է Բաքվում, որտեղ էլ ավարտել է Ալ. Մյասնիկյանի անվան*

*հայկական միջնակարգ դպրոցը, իսկ 1933 թ. ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժինը: Մինչև 1946 թ. աշխատել է Բաքվում, եղել Հանրապետական գրադարանի հայկական գրքի բաժնի վարիչ, Ադրբեջանի գրողների միության հայկական բաժանմունքի քարտուղար, «Կոմունիստ» հայերեն օրաթերթի արվեստի և գրականության բաժնի վարիչ: 1946 թ. տեղափոխվել է Երևան և այստեղ շարունակել իր ստեղծագործական աշխատանքը:*

*Ա. Գրաշին մինչև կյանքի վերջն էլ իրեն համարել է արցախցի: Նրա ծնողները ժամանակին Բաքու էին տեղափոխվել Արցախի ներկայիս Մարտակերտի շրջանի Թաղավարդ գյուղից: Նա էությամբ կապված է եղել հայրենի Թաղավարդի հետ և իր ստեղծագործություններում լայն տեղ է տվել նրան: Ա. Գրաշին ինքնուրույն ու թարգմանական մի քանի տասնյակ գրքերի հեղինակ էր: Նրա բանաստեղծությունները ևս թարգմանվել են բազմաթիվ լեզուներով և տպագրվել առանձին գրքերով, որոնց համար արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշանների:*

*ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ (Տոնոյան, 1910-1974), բանաստեղծ, թարգմանիչ, արձակագիր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների թեկնածու: 1927-32 թթ, սովորել է մանկավարժական ֆակուլտետի պատմագրական բաժնում:*

*ՎԱՀԱՆ ԱՐԱՄՈՒՆԻ (1914-1966), բանաստեղծ, արձակագիր, լրագրող, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1930-34 թթ. սովորել է պատմագրական ֆակուլտետում:*

*ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1914-2008), բանաստեղծուհի: 1931-36 թթ. սովորել է պատմագրական ֆակուլտետում:*

*ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ (Կորյուն Մկրտչյան, 1913-1984), բանաստեղծ, առակագիր, բանասիրական գիտությունների թեկնածու: 1932-37 թթ. սովորել է Պատմագրական ֆակուլտետում:*

*ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1915-1999), բանաստեղծուհի, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր: 1933-38 թթ. սովորել է լեզվագրական ֆակուլտետում:*

*ՄԻՆԱՍ ՍԱՐԵՆՑ (1915-1989), բանասեր, մանկավարժ, բանաստեղծ: 1934-39 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում:*

*ԽԱԺԱԿ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ (1918-1995), բանաստեղծ, արձակագիր, մանկագիր, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, մշակույթի վաստակավոր գործիչ: 1936-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում:*

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ (Օնիկ Կարապետյան, 1914-1984 ), բանաստեղծ, թարգմանիչ, ՀԽՍՀ պետական և ՀԳՄ Հովհ. Թումանյանի անվան մրցանակների դափնեկիր: 1936-41 թթ. սովորել է լեզվագրական ֆակուլտետում:*

*ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (Շուշեցի, 1918-1987), բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ: 1936-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում:*

*ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ (1919-2006), բանաստեղծուհի, արձակագիր, թարգմանչուհի, հրապարակախոս, ՀԽՍՀ և ՎԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ Պետական և ՀԳՄ Ավ. Իսահակյանի անվան մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: 1936-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում:*

*ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1919-1997), բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ Պետական և ՀԳՄ Ավ. Իսահակյանի անվան մրցանակների դափնեկիր, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1938-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետի ռուսական բաժնում: Հետագայում ուսումնառությունը չի շարունակել:*

*ԱԼԲԵՐՏ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ (1915-1997), մատենագետ, լրագրող, արձակագիր, բանաստեղծ, ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավար: 1939-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում, ապա զորակոչվել է բանակ: Հետագայում ուսումնառությունը շարունակել և 1956 թ. ավարտել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը:*

*ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ (Ղազարյան, ստորագրել է նաև Պարույր Արեգունի գրական կեղծանունով, 1924-1971), բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, 1941-45 թթ. սովորել է Լեզվագրա-*

*կան ֆակուլտետում:*

*ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ (1922-1996), բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ Պետական մրցանակի կրկնակի և ՀԳՄ Ե. Չարենցի անվան մրցանակի դափնեկիր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1943-48 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում:*

*ԱՐԵՎ ՇԱՏՅԱՆ (Դիանա Չոլախյան, 1926-1987), կենսաբան, բանաստեղծուհի, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ: 1944-49 թթ. սովորել է Կենսաբանական ֆակուլտետում:*

*ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ (1923-1999), գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ Պետական մրցանակի կրկնակի դափնեկիր, գիտության վաստակավոր գործիչ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1945-50 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում:*

*ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ (1924-1992), բանաստեղծ, լրագրող, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1947-52 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱՐՏԱՇԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ (1922-1997), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1948-1953 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԳՐԻԳՈՐ (ԳՐԻՇԱ) ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ (ծնվ. 1925 թ.) մանկավարժ, բանաստեղծ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1948-53 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՀԱՄՈ ՀԱՐՅԱՆ (Համլետ Հարությունյան, 1930-2008), բանաստեղծ, թարգմանիչ: 1948-53 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱՐՏԱՇԵՍ ՅԱՎՐՅԱՆ (ծնվ. 1932 թ.) բանաստեղծ: 1949-54 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի տրամաբանութեան և հոգեբանության բաժնում:*

*ԱՐԱՐԱՏ ԱՅՎԱԶՅԱՆ (1923-1967), բանաստեղծ, լրագրող, մանկավարժ: 1950-55 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՎՌԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ (1925-1971), բանաստեղծ, թարգմանիչ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: 1950-55 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժնում:*

*ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ծնվ. 1932 թ.) բանաստեղծ, թարգմանիչ, արձակագիր, ՀԳՄ Ստ. Զորյանի անվան մրցանակի դափնեկիր: 1950-55 թթ. սովորել է բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՄԵՍԻԱ ԷՍԿԻՃՅԱՆ (1933-1993), հայրենադարձ բանաստեղծ, թարգմանիչ: 1953-55 թթ. ուսանել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում, ապա տեղափոխվել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի նույնանուն ֆակուլտետը, որն ավարտել է 1957-ին:*

*ՆԱՆՍԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (1931-1999), բանաստեղծ, թարգմանիչ, երգիծաբան, մանկագիր: 1953-58 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի եվրոպական լեզուների և գրականության բաժնում, գերմաներեն:*

*ՌՈԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (Կարայան), բանաստեղծ, արձակագիր, լրագրող: 1953-58 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՀԱՄԵԼՏ ԿԱՐՃԻԿՅԱՆ (Արմեն Թորգոմյան, ծնվ. 1936 թ.), բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: 1954-59 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՍՈՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ (1934-2006), հայրենադարձ բանաստեղծուհի: 1954-59 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1925-1969), մանկավարժ, բանաստեղծ: 1954-59 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԳՐԻԳՈՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ (1937-1993), մանկավարժ, բանաստեղծ: 1954-59 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՍԵՐԳԵՅ ԱԹԱԲԵԿՅԱՆ (Բագրատունի, 1937-2000), գրականագետ, բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: 1955-60 թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, ապա ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան հայ գրականության գծով:*

*ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ծնվ. 1939 թ.), գրող, գրականագետ, լրագրող, Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: 1956-61 թթ. սովորել է բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱՐՏԱՇԵՍ ՂԱՀՐԻՅԱՆ (ծնվ. 1937 թ. ) բանաստեղծ, արձակագիր: 1956-61 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՍԵՐԳԵՅ (ՌՈՒԲԵՆ) ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (1938-1973), մանկավարժ, բանաստեղծ, թարգմանիչ: 1956-61 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի եվրոպական լեզուների և գրականության բաժնում, ֆրանսերեն:*

*ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ (հանդես է եկել նաև Արարատ Նաիրյան և Տիգրան Բակուր գրական անուններով, 1936-1995), հայրենադարձ բանաստեղծ: 1956-61 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՀՈՄԵՐ (ՀՈՎՍԵՓ) ԵՐԻՑՅԱՆ (ծնվել է 1938 թ.) ՀՀ Լոռու մարզի Սանահին գյուղում, ֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: 1961 թ. ավարտել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը, ապա ասպիրանտուրան և պաշտպանել ատենախոսություն: Մասնագիտությանը զուգընթաց կատարում է գրական-թարգմանչական աշխատանք, տպագրել է չափածոյի և արձակի ժողովածուներ: Թարգմանել է նաև մասնագիտական ուսումնական ձեռնարկներ և հետաքրքրաշարժ ու հանրամատչելի մի շարք գրքեր, որոնք լույս են տեսել տարբեր ժամանակներում: Գրքում*

*ընդգրկված բանաստեղծությունը նվիրված է ԵՊՀ 100-ամյակին:*

*ԱԼԵՔ ԽԱՉՈՒՆՑ (Ալեքսանդր Խաչատրյան, ստորագրել է նաև Ալ. Խաչյան գրական կեղծանունով, 1934-1977), բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող, մանկավարժ: 1957-62 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժնում:*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (Հովնաթան, ծնվ. 1937 թ.). բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: 1957-62 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱՐՄԵՆԱԿ ՂԱԶԻՆՅԱՆ (ծնվ. 1941 թ.) բանաստեղծ, լրագրող: 1957-62 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՍՈՒՐԵՆ ԽՈՋԱՅԱՆ (1935-2000), բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: 1957-62 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ, իրավաբան: 1957-62 թթ. սովորել է Իրավաբանական ֆակուլտետում:*

*ՎԻԳԵՆ ԲԱԲԱՅԱՆ (1940-2004), բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: 1959 թ. ընդունվել է Բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների և գրականության բաժինը: 1963 թ. Հայոց մեծ եղեռնի 50-ամյակի ոգեկոչման նախօրյակին՝ 1963 թ. ՀԽՍՀ ՊԱԿ-ի կողմից ձերբակալվել և դատապարտվել է յոթ տարվա ազատազրկության: Կալանավայրից 1968 թ. ազատվելով՝ ուսումնառությունը հեռակա ուսուցման գծով շարունակել է նույն ֆակուլտետում և 1971 թ. ավարտել Հայոց լեզվի և գրականության բաժինը:*

*ՔԵՐՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմկոմբինատի բանվոր: Տպագրված բանաստեղծությունը նվիրված է ԵՊՀ-ի 40-ամյակին, որը հեղինակը իր ողջույնի խոսքից հետո արտասանել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում, 1961 թ. հունվարի 25-ին, հանդիսավոր նիստի ժամանակ:*

*ԹԱԹՈՒԼ ԲՈԼՈՐՉՅԱՆ (Սովետ Պոլորչյան, հանդես է եկել նաև Թաթուլ Գեղապաշտ գրական անունով, ծնվ. 1933 թ.), բանաստեղծ,*

*ՀԳՄ Ավ. Իսահակյանի անվան մրցանակի դափնեկիր: 1960-65 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱԿՈԲՅԱՆ (1935-1995), բանաստեղծ, լրագրող; 1961-66 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ (ծնվ. 1937 թ.), բանաստեղծ, թարգմանիչ, մանկագիր, ՀԳՄ Ստ. Զորյանի անվան մրցանակի դափնեկիր: 1961-66 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱԼԲԵՐՏ ՕՐԴՅԱՆ (1945-2003), մաթեմատիկոս-ծրագրավորող, բանաստեղծ, շախմատի հանրապետական ֆեդերացիայի անդամ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ: 1961-66 թթ. սովորել է Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում:*

*ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ (ծնվ. 1940 թ. Երևանում), բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ Պետական և ՀՀ Նախագահի մրցանակների դափեկիր: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1958-1962 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել և 1967 թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, ապա սովորել Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո վերադարձել է Երևան և որպես դասախոս աշխատանքի անցել Արտասահմանյան գրականության, գրականության տեսության և գեղագիտության ամբիոնում, որի վարիչն է եղել 1986-2008 թթ. ընթացքում: Գրականտեսական և գեղագիտական բազմաթիվ հոդվածների ու գրքերի հեղինակ է, սակայն նա առաջին հերթին հանրահայտ բանաստեղ է ու թարգմանիչ, տասնյակ գրքերի հեղինակ, կազմել ու լույս է ընծայել մի շարք ժողովածուներ, որոնց թվում՝ «Հին Արևելքի պոեզիան», որի մեջ մտնող թարգմանությունների զգալի մասը իրենն է, և «Աստվածների ժամանակը. հին եգիպտական պոեզիա» ամբողջն իր թարգմանությամբ: Նրա ստեղծագործությունները նույնպես թարգմանվել են աշխարհի շատ լեզուներով և տպագրվել առանձին գրքերով:*

*ՎԱՀԱՆ (ՎԼԱԴԻՄԻՐ) ՄԱՂԱԼՅԱՆ (ծնվ. 1942 թ.) բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող, բանասիրական գիտությունների թեկնածու: 1960 թ. ընդունվել է Բանասիրական ֆակուլտետ, 1962-ին 2-րդ կուրսից զորակոչվել է բանակ, 1965 թ. զորացրվել և ուսումնառությունը շարունակել է նույն ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում, որն ավարտել է 1968-ին:*

*ՌՈՄԱՆՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ (1939-2015), բանաստեղծ, դեղագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: 1961-66 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՌԱԶՄԻԿ ԱՐՏԵՄՅԱՆ (ծնվ. 1941 թ.), բանաստեղծ, լրագրող: 1961-66 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐ (Խաչատրյան, ծնվ. 1940 թ.), բանաստեղծ, թարգմանիչ, երգիծաբան, մաթեմատիկոս: 1961-67 թթ. սովորել է Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնում:*

*ՓԱՌԱՆՁԵՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ (ծնվ. 1940 թ.) լրագրող, բանաստեղծուհի: 1962-66 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում:*

*ՄԻՍԱՔ ՀՈՎԵՆՑ (Հովհաննիսյան, 1938-2006), բանաստեղծ: 1963-69 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի երեկոյան ուսուցման բաժնում:*

*ԱՆԱՀԻՏ ՊԱՐՍԱՄՅԱՆ (1947-2017), բանաստեղծուհի, թարգմանչուհի, արձակագիր, հրապարակախոս, լրագրող: 1964-69 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՖԵԼԻՔՍ ԹՈՐՈՍՅԱՆ (ծնվ. 1947 թ.), մեխանիկոս-մաթեմատիկոս, բանաստեղծ: 1964-69 թթ. ուսանել է ԵՊՀ Լենինականի մասնաճյուղի մեխանիկական ֆակուլտետում, ապա ուսումը շարունակել է ՀԽՍՀ ԳԱ մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1982-ին ԵՊՀ-ում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, դոցենտ է: Տպագրված բանաստեղծությունը նվիրված է ԵՊՀ-ի 80-ամյակին:*

*ՄԻՔԱՅԵԼ ՔԱՆՔԱՆՅԱՆ (Քարագիր, 1939-1996), բանաստեղծ, քարագործ-շինարար: 1964-70 թթ. սովորել է բանասիրական ֆակուլտետի երեկոյան ուսուցման բաժնում:*

*ԱԼԻԽԱՆԵ ՄԱՄԵ (1948-2016) քուրդ բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: 1968-73 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժնում:*

*ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏՅԱՆ (ծնվ. 1950 թ.) մանկավարժ, բանաստեղծ, թարգմանիչ: 1971-77 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժնում:*

*ԱՍՏՂԻԿ ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆ (ծնվ. 1959 թ.) բանասեր-մանկավարժ, բանաստեղծուհի, երգահան-երգչուհի: 1976-80 թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: Տպագրված բանաստեղծությունը նվիրված է ԵՊՀ-ի 75-ամյակին:*

*ՀԱՅԿԱԶ ԽՆԿՈՅԱՆ (ծնվ. 1953 թ.), լրագրող, բանաստեղծ: 1977-83 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի երեկոյան ուսուցման հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՀԱԿՈԲ ՍՐԱՊՅԱՆ (ծնվ. 1956 թ.) բանաստեղծ, հրապարակախոս, լրագրող: 1978-84 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի երեկոյան ուսուցման հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆ (ծնվ. 1960 թ.) բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող: 1979-84 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ (ծնվ. 1959 թ.), գրականագետ, բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: 1980-85 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ (Արաքս, ծնվ. 1962 թ.), աշխարհագրագետ, բանաստեղծ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ: 1984-89 թթ. սովորել է աշխարհագրական ֆակուլտետում:*

*ՀԵՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ (ծնվ. 1967 թ.) մաթեմատիկոս, բանաստեղծուհի, թարգմանչուհի: 1984-89 թթ. սովորել է Մաթեմատի-*

*կայի ֆակուլտետում, զուգահեռաբար՝ նաև ՀՄՖ ժուռնալիստիկայի բաժնում:*

*ՀՌԻՓՍԻՄԵ ԲԱԴԱԼՅԱՆ (ծնվ. 1954 թ.) բանասեր, բանաստեղծուհի: 1987-93 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի երեկոյան ուսուցման բաժնում: Ավարտել է նաև ՀՄՖ ժուռնալիստիկայի և արվեստագիտության բաժինները:*

*ԱՆՆԱ ԲԱՂՄԱՆՅԱՆ (ծնվ. 1980 թ.) տնտեսագետ: 1997-2003 թթ. սովորել է ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետում:*

*ԳԵՂԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ (Խաչենց, ծնվ. 1981 թ.) բանասեր, բանաստեղծ: 1998-2004 թթ. սովորել է Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում:*

*ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ (ծնվ. 1979 թ.), պատմաբան-արվեստագետ, բանաստեղծ: 1998-2002 թթ. սովորել է Պատմության ֆակուլտետի արվեստաբանության բաժնում, իսկ 2004-ին ավարտել է Հայաստանի հարակից երկրների պատմության գծով մագիստրատուրան, ներկայումս ասպիրանտ է:*

*ԼԻԼԻԹ ԵՓՐԵՄՅԱՆ (ծնվ.1982 թ.), սոցիոլոգ-փիլիսոփա, բանաստեղծուհի: 1990-2004 թթ. սովորել է Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի բակալավրիատում, այնուհետև ուսումնառությունը շարունակել է ԱՄՆ Օրիգոն նահանգի «Փասիֆիկ» համալսարանի մագիստրատուրայում:*

*ԳՈՒՐԳԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ (Մասլով, 1909-194?), բանաստեղծ, լրագրող, գրականագետ: 1933-38 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում, 1939-ին ընդունվել է ասպիրանտուրա: 1941 թ. զորակոչվել է գործող բանակ: Հայտնի չէ, թե ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ պայմաններում է զոհվել:*

*ԱՐՇԱՎԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1912-1942), բանաստեղծ, մանկավարժ: Շուշիի մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո ընդունվել է Պատմագրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականութեան բաժինը: 1939 թ. զորակոչվել է բանակ, զոհվել է Բելոռուսիայի պաշտպանական մարտերից մեկի ժամանակ՝ 1942 թ.:*

*ԹԵՎԱՆ ԽԱՉՅԱՆ (1911-1944), բանաստեղծ, գրականագետ: 1934-39 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում, ավարտել է նաև ՀԳՄ կից երկամյա գրական ստուդիան, ապա հայ գրականության գծով ընդունվել է ասպիրանտուրա: Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից զորակոչվել է գործող բանակ, մասնակցել տարբեր ռազմաճակատների, զոհվել է 1944 թ. Կիևի ազատագրման համար մղված մարտերում:*

*ՀՄԱՅԱԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (1914-1944), բանաստեղծ, գրականագետ: 1936-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում, ապա զորակոչվել է գործող բանակ, ստացել է լեյտենանտի զինվորական կոչում, եղել է տանկիստ, զոհվել է Վիսլայի արևմտյան ափն անցնելու ժամանակ՝ 1944 թ.:*

*ԴԵՐԵՆԻԿ ՉԱՐԽՉՅԱՆ (1916-1943), բանաստեղծ: 1936-41 թթ. սովորել է Լեզվագրական ֆակուլտետում, չհանձնած վերջին պետական քննությունը՝ զորակոչվել է գործող բանակ, մասնակցել է մի շարք ռազմաճակատների, Ստալինգրադի ազատագրման համար մղված մարտերից մեկում նա ծանր վիրավորվել է և 1943 թ. հուլիսի 26-ին վախճանվել:*

*ՍԵՐՅՈԺԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ (1920-1941), բանաստեղծ: 1939-ին ընդունվել է Լեզվագրական ֆակուլտետը, 1941 թ. 2-րդ կուրսից զորակոչվել է գործող բանակ, ծառայել է սովետառումինական սահմանում, մասնակցել Ուկրաինայի սահմանների պաշտպանությանը: Զոհվել է 1941 թ. օգոստոսի 8-ին:*

*ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (Վոլֆար, 1924-1945), բանաստեղծ: 1942 թ. գերազանցությամբ ավարտելով Լենինականի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Լեզվագրական ֆակուլտետ և նույն թվականի դեկտեմբերին զորակոչվել գործող բանակ, մասնակցել է տարբեր ռազմաճակատների, զոհվել է Էստոնիայի Ազատագրման ժամանակ, 1945 թ. փետրվարի 6-ին:*

*ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ (1957-1994), լրագրող, բանաստեղծ: 1974 թ. ոսկե մեդալով ավարտելով Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղի միջնակարգ դպրոցը՝ նույն տարում էլ ընդունվել է բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1979-ին: Այնուհետև աշխատել է «Արտաշատ» շրջանային թերթի խմբագրությունում որպես գյուղբաժնի*

*վարիչ, ապա՝ պատասխանատու քարտուղար: Առաջին իսկ օրերից մասնակցել է Արցախյան ազատամարտին, զոհվել է 1994 թ. մարտի 28-ին Տավուշի շրջանի Չինարի գյուղի մատույցներում: Թաղված է հայրենի Բաղցրաշեն գյուղի գերեզմանատանը: Նրա անունով է կոչվում հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, նրա անվան լսարան կա ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետում:*

*ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆ (1965-1991), պատմաբան, բանաստեղծ: 1987 թ. ընդունվել է պատմության ֆակուլտետը, նույն թվից անդամագրվել է ԼՂՀ-ի «Միացում» հասարակական-քաղաքական կազմակերպությանը: 1990 թ. սեպտեմբերից (4-րդ կուրսից) մեկնել է Շահումյանի շրջանի Գետաշեն գյուղը, ուր պատմություն է դասավանդել միջնակարգ դպրոցում: Արցախյան ազատամարտի հենց սկզբից եղել է Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանի ինքնապաշտպանության հրամանատարը: Զոհվել է Գետաշենի հերոսամարտում, 1991 թ. ապրիլի 30-ին: Թաղված է Թալինի շրջանի հայրենի Արեգ գյուղի գերեզմանատանը, շիրմին կանգնեցված է հուշակոթող (հեղինակ՝ քանդակագործ Տ. Հակոբյան): Թ. Կրպեյանին ետմահու շնորհվել է ՀՀ ազգային հերոսի կոչում, նրա անունով են կոչվում ՀՅԴ արտասահմանյան մի շարք կազմակերպություններ, դպրոցներ՝ Հայաստանում ու Արցախում, փողոց՝ Թալինում, ԵՊՀ պատմության ֆակուլտետում նրա անվամբ սահմանվել է կրթաթոշակ, ինչպես նաև՝ բացվել ազատամարտիկների լսարան:*

*ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒԹՅԱՆ (1966-1993), լրագրող, բանաստեղծ: 1983-ին գերազանցությամբ ավարտելով ԼՂԻՄ Մարտակերտի միջնակարգ դպրոցը, 1984-86 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1987 թ. ընդունվել է բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը, որն ավարտելով՝ 1992-ին ընդունվել է հեռակա ասպիրանտուրա և մեկնել Արցախ որպես ՀՅԴ՝ կուսօրգան «Ազատամարտ» շաբաթաթերթի արցախյան թղթակից: Այդ ընթացքում մասնակցել է Մարտակերտի շրջանում տեղի ունեցող մարտական գործողություններին, զոհվել է 1993 թ. հունվարի 19-ին Առաջաձորի պաշտպանության ժամանակ, Ճիլոտ կոչվող սեղամասում: Թաղված է Մասիս քաղաքի գերեզմանատանը: Նրա անունով լսարան կա ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում:*

*ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (1829-1866), գրող, հրապարակախոս, փիլիսոփա, գրաքննադատ: Ծնվել է Նոր Նախիջևանում, կրթությունն*

*ստացել է ծննդավայրում, Գաբրիել Պատկանյանի (Ռաֆայել Պատկանյանի հոր) երկլեզվյան դպրոցում և Մոսկվայի Լազարյան ճեմարանում, հետագայում Պետերբուրգի համալսարանում քննություններ է հանձնել և ստացել հայոց լեզվի ուսուցչի որակավորում, այնուհետև ազատ ունկնդիր է եղել Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1860 թ. Պետերբուրգի համալսարանում պաշտպանել է թեզ և ստացել արևելյան բանասիրության թեկնածուի գիտական աստիճան, որից հետո հայոց լեզու է դասավանդել Լազարյան ճեմարանում՝ մասնակցելով Ստ. Նազարյանի «Հյուսիսափայլ» հանդեսի հրատարակմանը և զբաղվելով հրապարակախոսությամբ: Մ. Նալբանդյանը շրջել է մի շարք երկրներում, եղել Թուրքիայում, Իտալիայում, Հնդկաստանում, Անգլիայում և այլուր: Այցելել է Պոլիս, Հռոմ, Փարիզ: 1862 թ. մայիսին վերադառնում է Հնդկաստանից, իսկ հուլիսի 14-ին ձերբակալվում՝ մեղադրվելով Լոնդոնում ռուս հեղափոխականների հետ հաղորդակցվելու համար և արգելափակվել Պետրոպավլովյան ամրոցում: 1865 թ. նոյեմբերին թոքախտով հիվանդ աքսորվել է Կամիշին, որտեղ և վախճանվել է, աճյունը բերվել և հուղարկավորվել է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի գավթում:*

*Գրքում ներկայացված բանաստեղծությունների շարքում վերհանվում են գիտության և հատկապես համալսարանական կրթության դերն ու նշանակությունը երիտասարդ սերնդի հայրենանվեր դաստիարակության գործում:*

*ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶ (Շահազիզյանց, ծնվել է 1840 թ. Աշտարակում -վախճանվել է 1907 թ. Մոսկվայում, թաղված է տեղի հայկական գերեզմանատանը), բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս: 1860 թ. ավարտել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, իսկ 1862-ին՝ նրան կից Լիցեյը, որից հետո որպես ուսուցիչ ու վերակացու աշխատել է նույն ճեմարանում, 1873-97 թթ. այստեղ դասավանդել է «Հայոց լեզու» առարկան: 1867 թ. Պետերբուրգի համալսարանի գիտխորհուրդը նրան շնորհել է արևելյան լեզուների գծով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1861-ից աշխատակցել է «Հյուսիսափայլ» հանդեսին:*

*ԱՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ (1994), ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հասարակության հետ կապերի բաժնի մագ. 2-րդ կուրսի ուսանող: 2013 թ.-ից ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի անդամ է և անհատ կատարող: «Հաղթական բանակի հաղթական սպարապետը» միջմարզային մրցույթի 3-րդ տեղի և «Հավատում եմ քեզ զինվոր»*

*հանրապետական մրցույթի 2-րդ տեղի մրցանակակիր է: ՀՀ և ԼՂՀ անկախության 25-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ԵՊՀ ուսանողական մրցույթ-փառատոնի գրական մրցույթում արժանացել է «Լավագույն չափածո» մրցանակին:*

*ՄԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆ (1992), ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ֆակուլտետի մագ. 2-րդ կուրսի ուսանող: 2015թ.-ին լույս է տեսել ստեղծագործությունների առաջին ժողովածուն՝ «Աչքերի կապույտ խորքում» խորագրով: Ստեղծագործություններից մի քանիսը տպագրվել են «Գրական զարկերակ» և «101 աղոթք հիշատակի» խորագրով գրքերում: ՀՀ և ԼՂՀ անկախության 25-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ԵՊՀ ուսանողական մրցույթ-փառատոնի գրական մրցույթում արժանացել է «Լավագույն արձակ» մրցանակին:*

*ԷԴՈՒԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1997), ԵՊՀ միջազգային հարաբերությունների քաղաքագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող: Ասմունքի հանրապետական մրցույթների դափնեկիր է: 2014 թ. Նավասարդյան խաղերում արժանացել է ոսկե մեդալի՝ որպես լավագույն ասմունքող: 2014թ.–ից ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է: 2015-2017թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: ՀՀ և ԼՂՀ անկախության 25-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ԵՊՀ ուսանողական մրցույթ-փառատոնի գրական մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:*

*ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ (1991), ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի շրջանավարտ: 2010թ. և 2011թ. մասնակցել է «Արենի Մեկ» քարանձավի հնագիտական արշավախմբի պեղումներին: 2012-2014թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ Մարտունու զորամասում: 2016-2018թթ. աշխատել է ԵՊՀ-ում: 2017 թ.-ից աշխատում է eritasard.am կայքում որպես ֆոտոլրագրող: ՀՀ և ԼՂՀ անկախության 25-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ԵՊՀ ուսանողական մրցույթ-փառատոնի գրական մրցույթում արժանացել է «Լավագույն չափածո» մրցանակին:*

*ԷԴՄՈՆԴ ՄԱԿԱՐՅԱՆ (1987), կոմպոզիտոր, երաժիշտ: Հեղինակ է բազմաթիվ սիմֆոնիկ, կամերային ստեղծագործությունների: 2013-2018 թթ. եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության (ՀԿՄ) տեղեկատվության, իսկ 2018թ.-ից՝ կազմակերպչական բաժինների ղեկավարը: 2013թ. –ից ՀՀ կոմպոզիտորների միության անդամ է: Է. Միրզոյանի անվան պատանի կոմպոզիտորների հանրապետական մրցույթի գեղարվեստական ղեկավարն է: Հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր է: 2017 թ. պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով: ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հեղինակային երգի մրցույթի 1-ին տեղի մրցանակակիր է:*

*ԱՆՆԱ ԶԱՔԱՐՅԱՆ (1991) կոմպոզիտոր, երաժիշտ: Ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնի բակալավրն ու մագիստրատուրան (2009-2015): 2017թ.-ից ՀՀ կոմպոզիտորների միության անդամ է: «Էստրադային/հայրենասիրական» երգի մրցույթի «Հատուկ երիտասարդական» մրցանակի և ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հեղինակային երգի մրցույթի 2-րդ տեղի մրցանակակիր է: Մեծ թվով դաշնամուրային պիեսների, երգերի և սիմֆոնիկ ստեղծագործությունների հեղինակ է:*

*ԳԱՅԱՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ (1995), երգչուհի, հեղինակ կատարող: ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի շրջանավարտ է: 2012թ. եղել է «Բազիլիկ» ռոք-խմբի անդամ և գործիքավորել է հեղինակային մի քանի ստեղծագործություններ: 2014թ.-ից ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբի անդամ և մեներգիչ: Հեղինակ է մոտ 20 երգի և դաշնամուրային պիեսների, չափածո և արձակ ստեղծագործությունների: «Լույսը խավարում» գրքի համահեղինակ է: ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հեղինակային երգի մրցույթի 3-րդ տեղի մրցանակակիր է:*

*ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1989), Մաթեմատիկական գիտությունների թեկնածու: 2015թ.-ից ԵՊՀ գիտաշխատող և դասախոս է: Հեղինակ է մի քանի գիտական հոդվածների, որոնք տպագրված են հայկական և միջազգային գիտական հանդեսներում: 2010թ.-ից ԵՊՀ մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է և մեներգիչ: Շուրջ 40 երգի և դաշնամուրային պիեսների հեղինակ է, մի շարք հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկիր: ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հեղինակային երգի մրցույթում*

*արժանացել է խրախուսական մրցանակի:*

*ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1991), ԵՊՀ շրջանավարտ: 2008-2014թթ. սովորել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ակտուար մաթեմատիկայի բաժնում, իսկ մագիստրատուրան՝ ֆիզիկայի ֆակուլտետում: 2011թ.-ից ԵՊՀ մշակույթի կենտրոնի անդամ է, մեներգչուհի: Հանրապետական և միջբուհական մրցույթների դափնեկիր է: ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հեղինակային երգի մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:*

*ԱՐԵԳՆԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (1993), կոմպոզիտոր, դաշնակահար: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մագ. 2-րդ կուրսի ուսանող է: Միջազգային և հանրապետական մրցույթ-փառատոնների դափնեկիր է: 2018թ.-ից Հայաստանի կոմպոզիտորների միության երիտասարդական մասնաճյուղի, երիտասարդական ֆորումի անդամ է: 2018թ.-ից Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտ.խորհրդի անդամ է: ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հեղինակային երգի մրցույթում արժանացել է խրախուսական մրցանակի:*

## Բովանդակություն

Կազմողի կողմից....................3
**ՀԻՄՆԵՐԳԵՐ**
**Հովիկ Հովեյան, Ռոբերտ Ամիրխանյան**
ԵՊՀ հիմներգ.................... 11
**Ռազմիկ Դավոյան,Խորեն Մեյխանեջյան**
Ձոն Համալսարանին....................13
**Նանսեն Միքայելյան, Էմին Արիստակեսյան**
Ուսանողական երգ ....................15
**Լև Օշանին, Վանո Մուրադել**
Ուսանողների միջազգային միության հիմնը ....................17
Ջահականների հիմնը....................19

**ՆԵՐԲՈՂՆԵՐ, ՁՈՆԵՐԳԵՐ, ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Եղիշե Չարենց**
Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին ....................23
Տաղ՝ ձոնված գրքերին....................24
**Նաիրի Զարյան**
Շիրակի ջրանցքը ....................28
**Գուրգեն Մահարի**
Վերջինը ....................31
Աբովյան փողոցի ծառերին....................32
**Սողոմոն Տարոնցի**
Երգ Ուժի և Գեղեցկության....................33
Գովք մեր երիտասարդությանը....................34
Մեր երկրի աղջիկներին....................36
**Սարմեն**
Իմ հուշերում ....................38
**Աշոտ Գրաշի**
Ուսանողական սեր ....................39
Ուսանողական թաղամասում ....................40
**Խաչիկ Դաշտենց**
Իմ դասախոսները....................43
**Վահան Արամունի**
Լսարանում ....................45
**Արշալույս Մարգարյան**
Առաջին զանգ....................47
**Մկրտիչ Կորյուն**
Խոսք համալսարանի շրջանավարտներին....................49
**Մարո Մարգարյան**
Երեկ էր ասես ....................52
**Մինաս Սարենց**

Ուսանող ընկերոջս........................................................................55
**Խաժակ Գյուլնազարյան**
Համալսարանը ..............................................................................56
**ՀովՀաննես Շիրազ**
Երբ ես էլ մտա համալսարան.......................................................57
Համալսարանին ..........................................................................58
Իմ համալսարան ..........................................................................58
**Միքայել Հարությունյան**
**Ուսանողական երգարան**
Համալսարանի մուտքի մոտ.........................................................59
Տեսակցություն.............................................................................60
Երգ գրքի մասին...........................................................................63
Լսարաննե՛ր, լսարաննե՛ր ............................................................64
Դյութանք......................................................................................65
Ընտրություն ................................................................................66
«Հանրագիտարան» .......................................................................67
Երգ՝ գրված Երևանի հանրային գրադարանում............................68
Ժամանակը ..................................................................................69
«Հայոց պատմություն» .................................................................70
Համալսարան ..............................................................................71
Հրաժեշտ մուտքի մոտ .................................................................72
**Սիլվա Կապուտիկյան**
Գեղոն՝ Երևանի համալսարանին....................................................74
Հարազատ համալսարանիս ..........................................................77
**Հրաչյա Հովհաննիսյան**
Ուսանողական շրջանի բանաստեղծություններից
Մեռած պոետին............................................................................78
Ես երազում եմ .............................................................................80
Պատերազմ...................................................................................80
Ձոն..............................................................................................81
**Ալբերտ Շահազիզյան**
Երգ՝ գրված քննության պահին.....................................................83
**Պարույր Սևակ**
Փնտրումներ .................................................................................85
Վակխանալիա ..............................................................................88
Սոնետ .........................................................................................96
Ձղջում..........................................................................................96
Պատերազմի դաշտում զոհվածներին ..........................................98
**Վահագն Դավթյան**
Պատանութեան գիշեր .................................................................100
**Արև Շատյան**
Երգ հրաժեշտի ...........................................................................102
**Էդվարդ Ջրբաշյան**
Համալսարանի հին շենքում .......................................................104
**Վաչագան Վարդանյան**

Ստուգման գրքույկ......106
**Արտաշես Պողոսյան**
Իմ համալսարանը......108
**Գրիգոր Մանուչարյան**
Զոհված ընկերներիս......110
**Համո Հարյան**
Խոսք ուսանողական այգում......112
**Արտաշես Յավրյան**
Շրջանավարտ ընկերոջս......114
Ժամանակ չկար......114
**Արարատ Այվազյան**
Համալսարան ես եկա......116
Սրտի խոսք......117
Երրորդ դասամիջոցին......118
Ուսանողուհին......120
Շրջանավարտը......121
**Վռամ Հովսեփյան**
Ուսանողուհին......123
Ուսանողական երգ......124
Երկու քննություն......124
**Սուրեն Խաչատրյան**
Լիրիկական......126
Երգ՝ գրված Դուկասյանի այգում......127
Խոսք առաջին կուրսեցիներին......128
**Մեսիա Էսկիճյան**
Համալսարան......131
**Նանսեն Միքայելյան**
Համալսարանին......132
Զանգը......133
Դեպի գյուղ......133
Քեզ կանչում են......134
Դուկասյանի այգում......136
Խոսք համալսարանին......137
Սեպտեմբերյան առավոտ......137
Հրաժեշտի երգ......139
Գնա՜ս բարով......140
**Ռոբերտ Կարապետյան**
Մեր սերնդին......141
Իմ կրտսեր ընկերուհուն......142
**Համլետ Կարճիկյան**
Ողջո՜ւյն քեզ, համալսարան......143
Քննություն......143
Հուշ......146
Երգ ուսանող ընկերներիս......146
Դուկասյանի պուրակում......147

Համալսարանին ....................................................................148
**Մոնա Հակոբյան**
Դու հասկանում ես ..............................................................150
Ինձ մոռացե՞լ ես ..................................................................150
Արևելք մեկնող ընկերոջս ....................................................150
Ղուկաս Ղուկասյանի այգում ................................................151
**Վլադիմիր Հովհաննիսյան**
Ուսանողական ....................................................................152
**Գրիգոր Ստեփանյան**
Համալսարանին ....................................................................153
**Սերգեյ Աթաբեկյան**
Երգ՝ գրված ընթերցասրահում .............................................155
**Լյուդվիգ Կարապետյան**
Թողած աշխարհը ուսանողական .........................................157
**Արտաշես Ղահրիյան**
Համալսարան ......................................................................158
**Սերգեյ Միքայելյան**
Այս սյուների վրա ...............................................................159
**Հակոբ Հակոբյան**
Իմ ավարտող ընկերներին ....................................................160
**Հոմեր Երիցյան**
Իմ անմոռաց Համալսարան ..................................................161
**Ալեք Խաչունց**
**«Համալսարանականները խոպանում» շարքից**
Առավոտը տափաստանում ....................................................163
Երգ տափաստանում ............................................................164
Ուսանող ընկերներիս ..........................................................166
Ուսանողական ....................................................................167
**Հարություն Կարապետյան**
Խոպանից վերադարձած ընկերներիս ...................................168
Վերադարձ .........................................................................168
**Արմենակ Ղազինյան**
Վերադարձ .........................................................................170
Գրադարանում ....................................................................170
**Սուրեն Խոջայան**
Քարտաշը ...........................................................................172
Տաղ ուսանողներին .............................................................172
**Արկադի Գրիգորյան**
Երբ մտնում ես դու համալսարան ........................................175
**Վիգեն Բաբայան**
Թո՛ղ բարի՛ լինի քո ճանապարհը ..........................................176
**Քերոբ Մարգարյան**
Գիտության տաճար .............................................................177
**Թաթուլ Բոլորչյան**
Այս առավոտ ......................................................................178

Ուսանողական.....................................................................179
**Համբարձում Հակոբյան**
Կյանքի սանդուղքներով ..........................................................180
Համալսարանին ....................................................................181
Ուսանողական .....................................................................182
Երգ բարեկամության............................................................183
**Յուրի Սահակյան**
Նոր սերնդի երգը..................................................................184
**Ալբերտ Օրդյան**
Զանգի երգը........................................................................185
**Հենրիկ Էդոյան**
**Ուսանողական տարիների ստեղծագործություններից**
Գիշեր ...............................................................................186
Հին երգ ..............................................................................186
Լուսամփոփի մեջ .................................................................187
Սա քո երեկոն է ...................................................................187
Ես հաճախ գրում էի ..............................................................188
Այսքան առավոտներից հետո ..................................................188
Էլդորադո............................................................................189
**Վահան Մաղալյան**
Ես ուսանողից դարձա զինվոր ..................................................190
Հրաժեշտ կտամ շուտով ես զենքին.............................................191
Ես ուզում էի ........................................................................193
Մայր համալսարան.................................................................195
Դու միշտ եղել ես ..................................................................196
Ամեն անգամ երբ նորից............................................................198
**Ռոմանոս Սահակյան**
Զոներգ................................................................................200
**Ռազմիկ Արտեմյան**
Հայոց համալսարանին ............................................................202
**Գևորգ Խաչատուր**
Ջահելության հիմնը................................................................204
**Փառանձեմ Վարդանյան**
...Որ անունդ ավելի բարձր հնչի ...............................................206
**Միսաք Հովենց**
Երգիս բագին .......................................................................208
**Անահիտ Պարսամյան**
Դասամիջոցին .......................................................................209
Քննությունից կտրված աղջիկը.................................................209
Լսարանները հավերժական .....................................................210
Համալսարանին ....................................................................210
Լույսի սերմնացանը................................................................211
Երևանի պետական համալսարանին............................................212
**Ֆելիքս Թորոսյան**
Քո սրբազան կոչմանը հավատարիմ.............................................214

**Միքայել Քանքանյան**
Խոսք հրաժեշտի........................................................................215
**Ալիխանձ Մամե**
Հրաժեշտի փոխարեն.................................................................216
**Ալբերտ Ավետյան**
Երազների ետևից .....................................................................217
**Աստղիկ Մելիքբեկյան**
Ուղերձ.......................................................................................218
**Հայկազ Խնկոյան**
Հրաժեշտ համալսարանին..........................................................220
**Հակոբ Սրապյան**
Խոսք երախտիքի ......................................................................222
**Ներսես Աթաբեկյան**
Լևոն Ներսիսյանի համար ..........................................................223
**Սարգիս Մխիթարյան**
Հավերժության խորհուրդը .........................................................225
**Կամո Ալեքսանյան**
Լուսե կանթեղ ...........................................................................227
**Հերմինե Նավասարդյան**
Ընդ վիմաց.................................................................................228
**Հռիփսիմե Բաղալյան**
Ա՜խ, որքան ջերմ է այս մուտքը բարի..........................................229
Նամակ համալսարանին ............................................................230
**Աննա Բաղմանյան**
Ձոն համալսարանին...................................................................233
**Գեղամ Աղաջանյան**
Քո լույս ճամփեքով ....................................................................234
**Արթուր Խաչատուրյան**
Համալսարան .............................................................................236
**Լիլիթ Եփրեմյան**
Այսօր կապրես դու ինձանով .......................................................237

**ՆՐԱՆՔ ԸՆԿԱՆ՝ ԵՐԳԸ ՇՈՒՐԹՆԵՐԻՆ**
**Գուրգեն Ավետիսյան**
Պոետական................................................................................. 241
Մանկություն իմ ........................................................................242
**Արշավիր Գրիգորյան**
Հայրենասիրություն....................................................................243
Ուզում եմ...................................................................................244
Երգ............................................................................................244
**Թևան Խաչյան**
Հրաժեշտ....................................................................................245
Երդում .......................................................................................246
Փափագ......................................................................................247

**Հմայակ Նալբանդյան**
Երդում ....248
Տվե՛ք ինձ սուր, աշխետ մի ձի....249
Ռազմի երգ ....250
Մեր մեծ երկրի անբիծ հողում ....252
Կարոտ....252
Հուշարձան ....254
**Դերենիկ Չարխչյան**
Երանի՜ նրան.... 255
Հրաժեշտի երգ....255
Գնում եմ կռվի ....256
Անմահություն ....257
Թե մարտում ընկնեմ....258
Գալիքի բարեկամիս....259
**Սերյոժա Ռոստոմյան**
Սրենք սուրը ....260
**Վոլոդյա Աբրահամյան**
Չբերված ծաղիկներ .... 261
Հայրենիքի որդին լինել ....262
Ես և նա....262
Պատերազմի դաշտ ....263
Ա՜խ, ինչո՞ւ է ....264
Մենք կհաղթե՛նք....265
**Սամվել Գևորգյան**
Քսաներորդ դար ....266
Ողբերգությունից ծնված վրեժ ....268
Բանաստեղծի շիրիմին....270
Բանաստեղծի կյանքը ....272
Փոքրիկ երգեր....274
**Թաթուլ Կրպեյան**
Բյուրաբարբառ գրիչ ....275
Քնքուշ երգերս....276
Իմ ճամփով մռայլ ....276
Ես պարում էի ....277
Կռունկ ....278
Լեռներն իմ հայոց ....278
Պանդուխտի երգը....279
Արյունոտ երգ ....279
Ես կյանքն եմ սիրում ....281
Ես երազ տեսա....281
Չգիտեմ....282
Արևն անուշ ....283
**Նորայր Մարության**
Իմ Հայաստանում ....284
Կչարչարվեմ, կտառապեմ....284

Երբ ես նայում եմ ....................................................................285
Հավատում եմ ես......................................................................286
**Անկախության սերնդի ձայնը**
**Անի Քոչարյան**
Ես սովորեցրի ինքս ինձ ապրել.....................................................288
Հայրենիք ...............................................................................288
**Արմեն Սիմոնյան**
Ուղերձ նպատակիս...................................................................290
Ջոն պապուս ...........................................................................290
**Մարինա Գալստյան**
Ծոցագրպանիդ այն խոր անկյունում .............................................292
Հայաստանին ..........................................................................293
**Էդուարդ Հովհաննիսյան**
Միայնակ  նստած ինչպես...........................................................295
Նրա տվածը նման էր.................................................................. 296

**ԵՊՀ 100-ամյակին նվիրված երգեր**
**Էդմոնդ Մակարյան**
Մայր համալսարան...................................................................301
**Աննա Զաքարյան**
Նվիրում Մայր բուհին ...............................................................308
**Գայանե Թադևոսյան**
Հոգուս օրրան՝ համալսարան ........................................................314
**Տիգրան Գրիգորյան և Գոհար Գրիգորյան**
Իմ ու քո համալսարան...............................................................324
**Տիգրան Գրիգորյան**
Երևանի պետական համալսարան..................................................331
**Արեգնազ Մարտիրոսյան**
Ես երգում եմ ..........................................................................339

**ՀԱՎԵԼՎԱԾ**
**Միքայել Նալբանդյան**
Հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը ......................................344
Հերքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերաց
ուսման..................................................................................345
Ուսանող ու մեծատուն ..............................................................347
Մտածություն .........................................................................349
**Սմբատ Շահազիզ**
Լևոնի վիշտը (հատված) ............................................................351

**Համառոտ տեղեկություններ**
**հեղինակների մասին**..................................................................355

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՔՆԱՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

*Ժողովածուն նվիրված է Մայր համալսարանի 100-ամյակին*


Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Քոփի փրինթ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 10.07.2019:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 23.75:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am